ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ԵՐԵՎԱՆ - 2026

ԲԱԺԻՆ 1 ՎԱՐԿԱՅԻՆ ՊՐՈԴՈՒԿՏՆԵՐ 2
ԳԼՈՒԽ 1 ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2
ԳԼՈՒԽ 2 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 3
ԳԼՈՒԽ 3 ՎԱՐԿԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ, ՏՈԿՈՍՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՈՒ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ 4
ԳԼՈՒԽ 4 ՎԱՐԿԱՏՈՒ ԵՎ ՎԱՐԿԱՌՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 5
ԳԼՈՒԽ 5 ՎԱՐԿԱՏՈՒ ԵՎ ՎԱՐԿԱՌՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 10
ԳԼՈՒԽ 6 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐԿ 11
ԳԼՈՒԽ 7 ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿ 11
ԳԼՈՒԽ 8 ՍՊԱՌՈՂԱԿԱՆ/ՈՒՍՄԱՆ ՎԱՐԿ 14
ԳԼՈՒԽ 9 ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԱՅԻՆ ԳԻԾ 15
ԳԼՈՒԽ 10 ԱՐԱԳ ՕՎԵՐԴՐԱՖՏ 17
ԳԼՈՒԽ 11 AMERICAN EXPRESS ՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՐՏԵՐՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԱՅԻՆ ԳԻԾ 17
ԳԼՈՒԽ 12 ԲԻԶՆԵՍ ՎԱՐԿ 19
ԳԼՈՒԽ 13 ԲԻԶՆԵՍ ՎԱՐԿԱՅԻՆ ԳԻԾ/ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ԳԻԾ 19
ԳԼՈՒԽ 14 ՕՎԵՐԴՐԱՖՏ 20
ԳԼՈՒԽ 15 «ԱՊԱՌԻԿ ՏԵՂՈՒՄ» ՎԱՐԿ 20
ԳԼՈՒԽ 16 ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌԵԼԻ ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ 21
ԳԼՈՒԽ 17 ԵՐԱՇԽԻՔ 22
ԳԼՈՒԽ 18 ՖԱԿՏՈՐԻՆԳ 26
ԳԼՈՒԽ 19 ՖՈՆԴԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ 30
ԳԼՈՒԽ 20 ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ 57
ԳԼՈՒԽ 21 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ 65
ԳԼՈՒԽ 22 ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ 67
ԲԱԺԻՆ 2 ԳՐԱՎ 68
ԳԼՈՒԽ 1 ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 68
ԳԼՈՒԽ 2 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 69
ԳԼՈՒԽ 3 ԳՐԱՎԱՏՈՒ/ԳՆՈՐԴ-ԳՐԱՎԱՏՈՒ ԵՎ ԳՐԱՎԱՌՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 70
ԳԼՈՒԽ 4 ԳՐԱՎԻ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ 72
ԳԼՈՒԽ 5 ԳՐԱՎԻ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 72
ԳԼՈՒԽ 6 ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ 80
ԲԱԺԻՆ 3 ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ 81
ԳԼՈՒԽ 1 ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 81
ԳԼՈՒԽ 2 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 82
ԳԼՈՒԽ 3 ԲԱՆԿԻ ԵՎ ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 83
ԳԼՈՒԽ 4 ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ 84
ԲԱԺԻՆ 4 ՀԱՇԻՎՆԵՐ ԵՎ ԱՎԱՆԴՆԵՐ 84
ԳԼՈՒԽ 1 ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 84
ԳԼՈՒԽ 2 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 84

ԳԼՈՒԽ 3 ՀԱՇԻՎՆԵՐ 86
ԳԼՈՒԽ 4 ԱՎԱՆԴՆԵՐ 89
ՀԱՎԵԼՎԱԾ 1 ԻՆՉ ԱՆԵԼ, ԵԹԵ ԲՈՂՈՔ ՈՒՆԵՔ 94
ՀԱՎԵԼՎԱԾ 2 ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ 95
ՀԱՎԵԼՎԱԾ 3 ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԾԱՆՈՒՑՈՒՄ 96
ՀԱՎԵԼՎԱԾ 4 ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ 99

ԲԱԺԻՆ 1 ՎԱՐԿԱՅԻՆ ՊՐՈԴՈՒԿՏՆԵՐ

ԳԼՈՒԽ 1 ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գլխավոր վարկային պայմանագիր - վարկավորման պայմաններ սահմանող պայմանագիր, որի շրջանակներում կարող են տրամադրվել մեկ կամ ավելի Վարկեր

Լրացուցիչ պայմանագիր - յուրաքանչյուր Վարկի մասնավոր պայմանները սահմանող պայմանագիր

Պայմանագիր - Բանկային ծառայությունների ընդհանուր պայմանները, Գլխավոր վարկային պայմանագիրը և Լրացուցիչ պայմանագիրը միասին, իսկ Գլխավոր վարկային պայմանագրի բացակայության դեպքում՝ Բանկային ծառայությունների ընդհանուր պայմանները և յուրաքանչյուր Վարկի պայմանագիրը միասին

Վարկ - մեկ կամ մի քանի վարկ, այդ թվում՝ «Ապառիկ տեղում» վարկ, վարկային գիծ, օվերդրաֆտ, երաշխիք, ֆակտորինգ, ակրեդիտիվ

Սպառողական կրեդիտ - Ֆիզիկական անձանց մինչև 15 մլն ՀՀ դրամ (ներառյալ) տրամադրվող սպառողական/ուսման վարկ, քարտային վարկային գիծ, արագ օվերդրաֆտ, ֆիզիկական անձանց, ԱՁ-երին և գերփոքր իրավաբանական անձանց մինչև 5 մլն ՀՀ դրամ (ներառյալ) կամ համարժեք արտարժույթով տրամադրվող գյուղատնտեսական վարկ, ինչպես նաև գերփոքր ԱՁ-երին և գերփոքր իրավաբանական անձանց մինչև 5 մլն ՀՀ դրամ (ներառյալ) կամ համարժեք արտարժույթով տրամադրվող ցանկացած Վարկ

Բնակարանային հիփոթեքային կրեդիտ - «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված հիփոթեքային վարկ

Սակագներ - «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի Գլխավոր գործադիր տնօրենի կողմից 22.04.2013 թ.-ին հաստատված և «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի ինտերնետային կայքում՝ *www.acba.am* հրապարակված TC 01-03#6 Վարկային գործառնությունների սակագնի գործող խմբագրություն

Կողմեր - Վարկատու և Վարկառու, ֆակտորինգի դեպքում՝ նաև Ֆինանսական գործակալ և Հաճախորդ, երաշխիքի դեպքում՝ նաև Երաշխիք տված անձ և Պրինցիպալ

ԳԼՈՒԽ 2 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2.1. Բանկում Վարկը տրամադրվում է Գլխավոր վարկային պայմանագրի ստորագրմամբ կամ առանց Գլխավոր վարկային պայմանագրի ստորագրման,

2.2. Գխավոր վարկային պայմանագրի ստորագրման դեպքում Վարկառուին կարող է տրամադրվել Վարկ՝ Գլխավոր վարկային պայմանագրում նշված առավելագույն սահմանաչափի կամ համարժեք այլ արժույթի սահմաններում,

2.3. Գլխավոր վարկային պայմանագրում նշված առավելագույն սահմանաչափով սահմանափակվում է տրամադրված և դեռևս չվերադարձված Վարկի առավելագույն գումարը,

2.4. Գխավոր վարկային պայմանագրի շրջանակներում տրամադրվող Վարկի մարման վերջնաժամկետը չի կարող գերազանցել Գլխավոր վարկային պայմանագրի գործողության ժամկետի ավարտը,

2.5. Գլխավոր վարկային պայմանագրում մի քանի Վարկառուների առկայության դեպքում Վարկը կարող է տրամադրվել Վարկառուներից յուրաքանչյուրին առանձին և/կամ բոլորին միասին և/կամ նրանցից մի քանիսին,

2.6. Գխավոր վարկային պայմանագրի շրջանակներում Վարկը տրամադրվում է համապատասխան Լրացուցիչ պայմանագրի ստորագրմամբ, որը Գլխավոր վարկային պայմանագրի անբաժանելի մասն է համարվում, և յուրաքանչյուր անգամ Լրացուցիչ պայմանագրի ստորագրմամբ Վարկառուն վերահաստատում է սույն փաստաթղթում նշված Վարկառուի հավաստիացումները,

2.7. Գլխավոր վարկային պայմանագրի չստորագրման դեպքում վարկավորումը կատարվում է յուրաքանչյուր Վարկի տրամադրման համար առանձին Պայմանագրի ստորագրմամբ,

2.8. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում և Կողմերի համար պարտադիր է դառնում.

2.8.1. Կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով կնքվելու դեպքում՝ բոլոր Կողմերի ստորագրման պահից,

2.8.2. Էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցներով կնքման դեպքում (այսուհետ՝ էլեկտրոնային եղանակով կնքում)՝ հետևյալ կարգով.

2.8.2.1. Կողմերի էլեկտրոնային հասցեների միջև փաստաթուղթ և/կամ հաղորդագրություն փոխանակելու միջոցով կնքման դեպքում, Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Վարկատուի կողմից Վարկառուի՝ Պայմանագրում նշված էլեկտրոնային հասցեին ուղարկված օֆերտայի (առաջարկի) ակցեպտը Վարկատուի կողմից ստանալու պահից: Ընդ որում, Վարկառուն օֆերտան (առաջարկը) ընդունում (ակցեպտավորում) է Պայմանագրում նշված իր հեռախոսահամարին ուղարկված մեկանգամյա օգտագործման գաղտնաբառը մուտքագրելու և «Ստորագրել փաստաթղթերը» հրահանգն ընտրելու միջոցով,

2.8.2.2. acba digital ինտերնետ բանկինգ համակարգում փաստաթուղթ և/կամ հաղորդագրություն փոխանակելու միջոցով կնքման դեպքում, Պայմանագիրն ուժի մեջ է մտնում acba digital ինտերնետ բանկինգ համակարգում ներկայացվող օֆերտայի (առաջարկի) ակցեպտը Վարկատուի կողմից ստանալու պահից: Ընդ որում, Վարկառուն օֆերտան (առաջարկը) ընդունում (ակցեպտավորում) է acba digital ինտերնետ բանկինգ համակարգում «Հաստատել» կամ «Ստանալ» հրահանգն ընտրելու միջոցով,

2.9. Պայմանագրի փոփոխության համաձայնագիրը կարող է կնքվել ինչպես Կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով, այնպես էլ էլեկտրոնային եղանակով, ընդ որում, նշված դրույթը չի վերաբերում Պայմաններում փոփոխություններին, որոնք կատարվում են Վարկատուի կողմից միակողմանիորեն՝ Պայմանագրով սահմանված կարգով)

2.10. Կողմերը կարող են փոփոխել, վերաշարադրել կամ Կողմերի իրավահարաբերություններում չկիրառել սույն պայմանների առանձին դրույթներ՝ համապատասխան վերապահում նախատեսելով ստորագրվող Պայմանագրում կամ միմյանց միջև կնքվող փոփոխության համաձայնագրերում:

ԳԼՈՒԽ 3 ՎԱՐԿԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ, ՏՈԿՈՍՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՈՒ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Տոկոսների հաշվարկը կատարվում է օրական՝ Վարկի նվազող մնացորդի վրա, Վարկը Վարկառուին տրամադրվելու օրվանից (Վարկը Վարկառուին գործառնական օրվա ավարտից հետո տրամադրվելու դեպքում՝ հաջորդ գործառնական օրվանից), բացառությամբ բիզնես վարկային գծի, արտահանման և ներմուծման վարկային գծի, օվերդրաֆտի, «Ապառիկ տեղում» Վարկի, Երաշխիքի, որոնց դեպքում տոկոսների հաշվարկի կանոնները սահմանվում են սույն փաստաթղթում այդ վարկատեսակներին վերաբերող հատուկ կանոններում,

3.2. Վարկի վերադարձը և տոկոսների վճարումը կատարվում է Պայմանագրով սահմանված ժամկետներում,

3.3. Եթե վճարումների կատարման ժամը համընկնում է տվյալ գործառնական օրվա ավարտի հետ, ապա մարումն իրականացվում է հաջորդ գործառնական օրը, որի դեպքում մարվում են նաև տվյալ գործառնական օրվա համար հաշվարկված տոկոսագումարները: Վարկատուի գործառնական օրերը և ժամերը սահմանվում են Սակագներով,

3.4. Եթե Վարկառուն Վարկատուի հանդեպ ունի Պայմանագրից բխող չկատարված դրամային պարտավորություն, Վարկատուն իրավունք է ստանում գանձել պարտքի (այդ թվում՝ տուժանքի, տոկոսագումարի, գերածախսի, միջնորդավճարի, Վարկի) գումարը Վարկառուի՝ Վարկատուի մոտ ունեցած բոլոր բանկային, այդ թվում՝ ավանդային հաշիվներից՝ բանկային հաշիվներում դրամական միջոցների առկայության դեպքում՝ վեց ամսվա ընթացքում, իսկ բանկային հաշիվներում դրամական միջոցների բացակայության կամ անբավարարության դեպքում՝ դրամական միջոցների յուրաքանչյուր մուտքագրումից հետո վեց ամսվա ընթացքում,

3.5. Վարկի և գերածախսի (առկայության դեպքում) գումարը գանձվում է Վարկառուի այն արժույթային հաշիվներից, որով տրամադրվել է Վարկը: Տուժանքը, տոկոսագումարները և միջնորդավճարները գանձվում են Վարկառուի ՀՀ դրամով հաշիվներից: Եթե համապատասխան հաշիվներում բացակայում է անհրաժեշտ գումարը, այն գանձվում է Վարկառուի այլ բանկային հաշիվներից: Այդ պարագայում, ինչպես նաև Վարկառուի կողմից Վարկի արժույթից տարբերվող արժույթով մարում կատարելիս, արտարժույթի առքն ու վաճառքը Վարկի և գերածախսի (առկայության դեպքում) գումարի գանձման/մարման դեպքում կատարվում է տվյալ օրվա համար Վարկատուի սահմանած առքի և վաճառքի փոխարժեքով, իսկ տուժանքի, տոկոսագումարների և միջնորդավճարի գանձման/մարման դեպքում՝ նախորդ օրվա համար ՀՀ ԿԲ կողմից սահմանված միջին շուկայական փոխարժեքով,

3.6. Եթե մարումը չի համընկնում մարման գրաֆիկով նախատեսված հերթական վճարման ամսաթվի կամ հերթական վճարման ենթակա պարտավորության գումարի չափի հետ, ապա մարումը կամ համապատասխանաբար հերթական վճարման ենթակա պարտավորության գումարի չափը գերազանցող հատվածն ուղղվում է Վարկի գումարի մարմանը: Իսկ այն դեպքում, երբ մարումը համընկնում է մարման գրաֆիկով նախատեսված հերթական վճարման ամսաթվի և վճարման ենթակա պարտավորության գումարի չափի հետ կամ առկա է Վարկի հերթական մարման հանձնարարական կամ Պայմանագրի շրջանակներում առկա է ժամկետանց պարտավորություն, ապա մարումները կատարվում են ստորև ենթակետերում նկարագրված կարգով.

3.6.1. Եթե մարումը համընկնում է մարման գրաֆիկով նախատեսված հերթական վճարման ամսաթվի և վճարման ենթակա պարտավորության գումարի չափի հետ կամ առկա է Վարկի հերթական մարման հանձնարարական, ապա մարումը կատարվում է հետևյալ հերթականությամբ. առկայության դեպքում՝ քարտային հաշվի սպասարկման միջնորդավճարը, գերածախսի և դրա

տոկոսների նկատմամբ հաշվարկված տուժանքը, գերածախսի տոկոսները, գերածախսի գումարը, առկայության դեպքում՝ Վարկատուի կողմից սեփական միջոցների հաշվին Վարկառուի փոխարեն վճարված ապահովագրավճարները, առկայության դեպքում՝ սպասարկման վճարը, այնուհետև՝ Վարկի գումարի և տոկոսագումարների նկատմամբ հաշվարկված տուժանքը, ժամկետանց ամսական միջնորդավճարը (առկայության դեպքում),ժամկետանց տոկոսագումարը, ժամկետանց Վարկի գումարը, ամսական միջնորդավճարը (առկայության դեպքում), տոկոսագումարը, այնուհետև՝ Վարկի գումարը,

3.6.2.Եթե առկա է Պայմանագրի շրջանակներում ժամկետանց պարտավորություն, ապա վճարումն առաջնահերթ ուղղվում է ժամկետանց պարտավորությունների մարմանը՝ հետևյալ հերթականությամբ՝ Վարկի գումարի և տոկոսագումարների նկատմամբ հաշվարկված տուժանքը, ժամկետանց ամսական միջնորդավճարը (առկայության դեպքում),ժամկետանց տոկոսագումարը, ժամկետանց Վարկի գումարը, իսկ եթե վճարված գումարը գերազանցում է ժամկետանց պարտավորությունները, ապա գերազանցող հատվածն ուղղվում է Վարկի գումարի մարմանը:

Սույն կետը չի վերաբերում ֆակտորինգներին, որոնց դեպքում վարկերի մարման հերթականության կարգը սահմանվում է սույն փաստաթղթում այդ վարկատեսակին վերաբերող հատուկ կանոններում:

ԳԼՈՒԽ 4 ՎԱՐԿԱՏՈՒԻ ԵՎ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Վարկառուն պարտավորվում է.

4.1.1. Պայմանագրով սահմանված ժամկետներում և չափով կատարել համապատասխան վճարումները,

4.1.2. վճարել Վարկավորման ընդհանուր ծախսը, որը ներառում է Վարկի նկատմամբ հաշվարկված տարեկան տոկոսադրույքը, առկայության դեպքում՝ միջնորդավճարը (միանվագ կամ ամսական) կամ սպասարկման վճարը, գրավների առկայության դեպքում՝ Վարկի ապահովման միջոց հանդիսացող գույքերի գնահատման վճարը, Վարկի ապահովման միջոց հանդիսացող գույքերի ապահովագրության վճարը (տարեկան), Վարկի ապահովման միջոց հանդիսացող գույքերի գրավադրման պայմանագրերի կնքման հետ կապված վճարները, առկայության դեպքում՝ Վարկառուին դժբախտ պատահարներից ապահովագրության վճարը (տարեկան), կանխավճարի ապահովագրավճարը (տարեկան), քարտային վարկային գծերի դեպքում նաև քարտային հաշվի սպասարկման միջնորդավճարը և կանխիկացման միջնորդավճարը՝ Վարկատուի Գլխավոր գործադիր տնօրենի կողմից 22.04.2013թ.-ին հաստատված ՏՀ 01-05#6 Վճարային քարտերի տրամադրման և սպասարկման սակագնի տվյալ պահին գործող խմբագրությամբ սահմանված դեպքերում և չափերով, ինչպես նաև վարկավորման հետ կապված այլ վճարները, ընդ որում՝ Վարկավորման ընդհանուր ծախսի մեջ ներառվող վճարների չափը կարող է փոփոխվել Պայմանագրի գործողության ընթացքում, որի դեպքում Վարկառուն է կրում ավելացված վճարների վճարման պարտականությունը,

4.1.3. պահպանել վարկավորման սկզբունքները՝ ժամկետայնությունը, նպատակայնությունը, վերադարձելիությունը, հատուցելիությունը,

4.1.4. չփոխանցել և չզիջել երրորդ անձին կամ չգրավադրել Վարկի ստացման իր իրավունքները,

4.1.5. Վարկատուին տրամադրել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող ֆինանսական հաշվետվությունները՝ առնվազն տարին մեկ անգամ, իսկ Վարկատուի պահանջով՝ ավելի հաճախ, ինչպես նաև ցանկացած այլ ֆինանսական տեղեկատվություն՝ Վարկատուի պահանջով, վերջինիս համար ընդունելի ձևով և հաճախականությամբ,

4.1.6. Վարկատուի պահանջով ցանկացած ժամանակ Վարկատուին տրամադրել անհրաժեշտ տեղեկություն իր գույքի, եկամուտների և դրանց ստացման աղբյուրների, պարտավորությունների, Վարկի օգտագործման, գրավի առարկայի վիճակի, Վարկի վերադարձմանն առնչվող, ինչպես նաև այլ փաստերի մասին,

4.1.7. Վարկատուին տրամադրել անհրաժեշտ տեղեկություն Վարկատուի հետ, ինչպես նաև Վարկատուի՝ այլ վարկառուների, ֆակտորինգների դեպքում՝ նաև այլ պարտապանների հետ կապվածության և փոխկապակցվածության առկայությունը պարզելու համար, անհապաղ տեղեկացնել վերոհիշյալ տեղեկատվության ակնկալվող որևէ փոփոխության մասին,

4.1.8. Պայմանագրի գործողության ընթացքում թույլ չտալ Պայմանագրի կնքման պահին եղած ակտիվների նվազեցում ավելի քան 30 (երեսուն) տոկոսով,

4.1.9. առանց Վարկատուի նախնական գրավոր համաձայնության գործարքներ չկնքել նոր վարկեր կամ փոխառություններ ստանալու համար,

4.1.10. տեղեկացնել Վարկատուին իր գործունեության դադարեցման, կասեցման, գործունեության մեջ էական փոփոխությունների վերաբերյալ, եթե Վարկառուն իրավաբանական անձ կամ ԱՁ է, իր ղեկավարների, հիմնադիրների, մասնակիցների, բաժնետերերի, անդամների կազմում փոփոխությունների, իր վերակազմակերպման, լուծարման, իր կանոնադրության մեջ որևէ փոփոխության վերաբերյալ, եթե Վարկառուն իրավաբանական անձ է,

4.1.11. Վարկի ստացման համար ներկայացված փաստաթղթերում, Վարկառուի կողմից Պայմանագրով տրվող հավաստիացումներում և/կամ Պայմանագրում նշված Վարկառուի վավերապայմաններում փոփոխության դեպքում երեք օրվա ընթացքում տեղյակ պահել Վարկատուին և տրամադրել փոփոխված փաստաթղթերի պատճենները,

4.1.12. Պայմանագրի գործողության ընթացքում չխոչընդոտել Վարկատուի կողմից մոնիթորինգների իրականացմանը,

4.1.13. պահպանել ՀՀ օրենսդրությունը և իրականացնել իր գործունեությունը միջազգային պայմանագրերին/ստանդարտներին (այդ թվում՝ բնապահպանական, աշխատանքային, ֆինանսական, անվտանգության և առողջապահական ոլորտների) համապատասխան, չիրականացնել Բանկի պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ acba.am, հրապարակված «ԱԿԲԱ բանկի խմբի բնապահպանական, սոցիալական, կառավարման (ESG) բացառությունների ցանկ» փաստաթղթի Հավելված 1-ում և Հավելված 3-ում սահմանված գործունեությունները, իսկ Հավելված 2-ում սահմանված գործունեությունները իրականացնել միայն Բանկի կողմից հաստատվելու դեպքում և համապատասխանել նշված փաստաթղթով սահմանված պահանջներին, իրականացնել արտադրության թափոնների վերամշակումը և վտանգավոր նյութերի պահպանումը՝ համապատասխան ՀՀ օրենսդրության պահանջներին, ձեռնպահ մնալ՝

- օդի, ջրի և հողի աղտոտումից,

- այնպիսի նյութերի օգտագործումից կամ այնպիսի ոլորտներում գործունեության իրականացումից, որոնք գտնվում են կամ ենթակա են գտնվելու Միավորված ազգերի կազմակերպության, Եվրոպական միության կամ ֆրանսիական արգելքների /սահմանափակումների/, էմբարգոների ներքո,

- այնպիսի գործունեության իրականացումից, որը ներառում է հարկադիր և/կամ երեխաների աշխատանքի կիրառում, կապված է ապօրինի արտադրանքի արտադրության կամ առևտրի, կենդանիների, բույսերի կամ ցանկացած բնական արտադրանքի առևտրի, արտադրության, բուծման կամ տիրապետման, ինչպես նաև թափոնների անդրսահմանային առևտրի հետ *(բացառությամբ, եթե այդպիսի գործունեությունը համապատասխանում է Բազելի կոնվենցիային և դրա հիմքում ընկած կանոնակարգերին),*

- այնպիսի գործունեության իրականացումից, որն անօրինական է վերջնակետ երկրների կամ Ֆրանսիայի օրենքներով, վերջնակետ երկրներում կամ Ֆրանսիայում կիրառվող ազգային կամ միջազգային կանոնակարգերով, ինչպես նաև վերջնակետ երկրների կամ Ֆրանսիայի համար պարտավորություններ ստեղծող միջազգային կոնվենցիաներով կամ պայմանագրերով,

- ցանկացած այլ գործունեության իրականացումից, որը կարող է էական անբարենպաստ ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի, կլիմայի կամ բազմազանության, մարդու առողջության կամ անվտանգության, իրավունքների կամ հավասարության վրա,

ինչպես նաև անմիջապես գրավոր տեղեկացնել Վարկատուին բնապահպանական, աշխատանքային ֆինանսական կամ առողջապահական օրենսդրության խախտման դեպք առաջանալու դեպքում,

4.1.14. անմիջապես գրավոր ծանուցել Վարկատուին այնպիսի դեպքի կամ դժբախտ պատահարի մասին, որը խիստ անբարենպաստ հետևանքներ է առաջացրել շրջակա միջավայրի, իր աշխատողների առողջության և անվտանգության համար կամ իր գործունեության կամ Վարկի հետ վերադարձման համար: Մասնավորապես, նման անբարենպաստ հետևանքները համարվում են առաջացած, երբ. ա) գործող օրենսդրության համաձայն նման դեպքի կամ դժբախտ պատահարի մասին պետությանը ծանուցելը պարտադիր է հանդիսանում, բ) դեպքը/դժբախտ պատահարը առաջացրել է աշխատողի մահ կամ ծանր վնասվածք, որը պահանջում է հոսպիտալացում, գ) դեպքը հայտնի է դարձել հանրությանը, այդ թվում՝ ԶԼՄ-ների միջոցով, դ) դեպքը կապված է հրդեհի կամ պայթյունի հետ,

4.1.15. Պայմանագրի գործողության ընթացքում Վարկատուին գրավոր տեղեկացնել յուրաքանչյուր դատավարության կամ քրեական պատասխանատվության մասին, որի կողմ կամ ենթարկված անձ կհանդիսանան ինքը, իսկ եթե Վարկառուն իրավաբանական անձ է՝ նաև իր մոտ կամ իր դուստր ընկերություններում ղեկավար պաշտոն զբաղեցնող անձիք,

4.1.16. Այն դեպքում, երբ Վարկը տրամադրվում է որևէ Աջակցության ծրագրի շրջանակներում, ապա Վարկն օգտագործել միայն անկանխիկ եղանակով՝ բանկային փոխանցումների միջոցով,

4.1.17. Վարկն օգտագործել պատշաճ որակով, արդյունավետությամբ, տեխնիկական, տնտեսական, ֆինանսական, կառավարման, շրջակա միջավայրի պահպանման, առողջապահական և սոցիալական ստանդարտներին և Վարկատուի պահանջներին համապատասխան, ինչպես նաև Վարկը որևէ Ֆոնդի շրջանակներում տրամադրված լինելու դեպքում՝ համապատասխան վերաֆինանսավորող կառույցի կողմից սահմանված Հակակոռուպցիոն Ընթացակարգերի պահանջներին կամ տվյալ Ֆոնդի այլ պահանջներին համապատասխան,

4.1.18. Վարկը որևէ Ֆոնդի շրջանակներում տրամադրված լինելու դեպքում՝ Վարկով ապրանքների և ծառայությունների ձեռքբերումն իրականացնել համապատասխան Ֆոնդի պահանջներին համապատասխան և բացառապես համաձայնեցված ծրագրերի իրականացման նպատակով:

4.2. Վարկառուն իրավունք ունի.

4.2.1. Պայմանագրից բխող բողոք-պահանջները, ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանների բավարարման դեպքում, ներկայացնել Ֆինանսական համակարգի հաշտարարին: Ընդ որում, եթե գույքային պահանջի չափը չի գերազանցում 250 000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը և գործարքի գումարի չափը չի գերազանցում 500 000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, ապա ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները չեն կարող վիճարկվել Վարկատուի կողմից:

4.3. Վարկատուն իրավունք ունի.

4.3.1. լրիվ կամ մասնակի հրաժարվել Վարկը Վարկառուին տրամադրելուց, եթե.

ա) Վարկառուն և/կամ Պարտապանը (ֆակտորինգների դեպքում) Պայմանագրով և/կամ կապալի պայմանագրով (Համայնքների նկատմամբ ֆակտորինգի դեպքում) և Հայտ-համաձայնագրերով (ֆակտորինգների դեպքում) սահմանված ժամկետներում և չափով վճարումներ չի կատարել,

բ) Վարկառուն Վարկի գումարը վերադարձնելու պարտավորության ապահովման պարտականությունները չի կատարել, ինչպես նաև նման ապահովումը կորել է կամ դրա պայմանները վատթարացել են այնպիսի հանգամանքներում, որոնց համար Վարկատուն պատասխանատվություն չի կրում,

գ) Վարկառուն Վարկը նպատակային չի օգտագործել կամ Վարկառուն Պայմանագրով ստանձնած որևէ պարտավորություն չի կատարել կամ ոչ պատշաճ է կատարել,

դ) առաջացել է Վարկառուի և/կամ Պարտապանի (ֆակտորինգների դեպքում) կամ երաշխավորների ֆինանսական վիճակի վատթարացում կամ վատթարացման սպառնալիք կամ վերջիններիս Պայմանագրի գործողության ընթացքի ցանկացած պահին թույլ են տվել Պայմանագրի և/կամ Լրացուցիչ պայմանագրի կնքման պահին եղած ակտիվների ավելի քան 30 (երեսուն) տոկոսի նվազեցում,

ե) առաջ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք ակնհայտ վկայում են, որ Վարկառուին տրամադրված գումարը ժամկետում չի վերադարձվի կամ որոնց հետևանքով սպառնալիքի տակ է դրվում Վարկի ժամանակին մարումը կամ գրավի առարկայի իրացումը,

զ) վերակազմակերպվել են Վարկառուի և/կամ Պարտապանի (ֆակտորինգների դեպքում) հետ կապված և/կամ փոխկապակցված անձինք կամ փոփոխվել է որևէ այլ հանգամանք, որի հետևանքով տեղի է ունեցել ՀՀ ԿԲ կողմից սահմանված տնտեսական նորմատիվների խախտում,

է) Վարկառուն և/կամ Պարտապանը (ֆակտորինգների դեպքում) չի տրամադրել Պայմանագրով և/կամ Լրացուցիչ պայմանագրով նախատեսված տեղեկությունները կամ ներկայացրել է կեղծ տվյալներ կամ խոչընդոտել է վերահսկողություն իրականացնելուն,

ը) Վարկառուն և/կամ Պարտապանը (ֆակտորինգների դեպքում), Երաշխավորը, Գրավատուն չեն կատարել կամ ոչ պատշաճ են կատարել Պայմանագրով և/կամ ապահովման միջոցի համապատասխան պայմանագրերով ստանձնած պարտականությունները,

թ) Վարկատուն գրավոր ծանուցել է Վարկառուին Պայմանագրով և/կամ Լրացուցիչ պայմանագրով սահմանված կարգով Վարկի տրամադրումը ժամանակավորապես կամ անժամկետ դադարեցնելու վերաբերյալ,

ժ) Վարկատուի համապատասխան իրավասու մարմնի կողմից Վարկի տրամադրումը մերժվել է,

ժա) Պայմանագրով տրված հավաստիացումներում փոփոխություններ են կատարվել,

ժբ) իրավաբանական անձ կամ ԱՁ Վարկառուի կամ երաշխավորի գործունեությունը դադարեցվել է, կասեցվել է, գործունեության մեջ էական փոփոխություններ են կատարվել,

ժգ) իրավաբանական անձ Վարկառուի ղեկավարների, հիմնադիրների, մասնակիցների, բաժնետերերի, անդամների կազմում փոփոխություններ են կատարվել,

ժդ) իրավաբանական անձ Վարկառուն վերակազմակերպվել է, լուծարվել է կամ առանց Վարկատուի համաձայնության վերջինիս կանոնադրության մեջ որևէ փոփոխություն է կատարվել,

ժե) Վարկառուն մահացել է,

ժզ) փոխվել է Վարկառուի գործատուն կամ Վարկառուի և Վարկատուի/Վարկատուի դուստր կամ այլ փոխկապակցված կազմակերպության միջև աշխատանքային պայմանագիրը լուծվել է (աշխատանքային պայմանագրի առկայության դեպքում) կամ Վարկառուն դադարել է իր աշխատավարձը ստանալ Վարկատուի միջոցով,

ժէ) առկա է մոնիթորինգի բացասական եզրակացություն Պայմանագրի և Լրացուցիչ պայմանագրի կատարման ապահովման համար գրավադրված գույքի և/կամ գույքերի վերաբերյալ: Ընդ որում, երբ Վարկը վերաֆինանսավորվել է «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ի կողմից, ապա այդ դեպքում Վարկը կարող է չհանդիսանալ Որակավորված հիփոթեքային վարկ,

ժը) եթե Վարկը տրամադրվում է «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ի և/կամ «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում, ապա նշված կազմակերպությունների կողմից մերժվել է Վարկի վերաֆինանսավորումը կամ վերջիններիս որոշմամբ Պայմանագրով նախատեսված Վարկը չի հանդիսանում Որակավորված հիփոթեքային վարկ,

ժթ) Վարկային գծերի դեպքում՝ Վարկառուն դիմել է Վարկատուին քարտի գործողությունը դադարեցնելու կամ փոխարինելու համար կամ քարտի գործողության ժամկետի ավարտից հետո 3 ամսվա ընթացքում Վարկատուի կողմից վերաթողարկված քարտը Վարկառուն չի ստացել,

ի) Վարկառուին կամ նրան փոխկապակցված անձանց սնանկ ճանաչելու մասին պահանջ է ներկայացվել կամ Վարկառուն զրկվել է ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքից,

իա) ֆակտորինգների դեպքում պարզվի, որ.

- Վարկառուի կողմից ներկայացված տվյալները (փաստաթղթերը և այլ տեղեկատվությունը) անարժանահավատ են,

- Վարկառուն և/կամ Պարտապանն ունեն ժամկետանց և/կամ դասակարգված պարտավորություններ,

4.3.2. վերահսկել Վարկառուի ֆինանսական վիճակը, Վարկի նպատակային օգտագործումը, գրավի/գրավների որակը և պահպանվածությունը, անարգել ծանոթանալ Վարկառուի տնտեսական գործունեությանը, գույքերին, կատարել ուսումնասիրությունների համար անհրաժեշտ գործողություններ: Ընդ որում, ուսումնասիրությունների ժամանակն ու քանակը որոշում է Վարկատուն՝ առանց Վարկառուի հետ նախնական համաձայնեցման,

4.3.3. գրավի առարկայի վրա բռնագանձման պահանջ ներկայացնել, եթե Վարկառուն չի կատարում կամ ոչ պատշաճ է կատարում Պայմանագրից բխող իր պարտականությունները և/կամ պարտականություններից որևէ մեկը կամ մի քանիսը: Ընդ որում, Վարկատուն իրավունք ունի իր պահանջի բավարարման նպատակով ինչպես դատական կարգով, այնպես էլ առանց դատարան դիմելու Վարկի ապահովման նպատակով գրավ դրված գույքի վրա բռնագանձում տարածել և իրացնել այն ուղղակի վաճառքի կամ հրապարակային սակարկությունների միջոցով, ինչպես նաև Վարկի ապահովման նպատակով գրավ դրված գույքը Պայմանագրից բխող պարտավորության համապատասխան չափի դիմաց իր կամ իր նշած երրորդ անձին ի սեփականություն հանձնել (իրացման արդյունքում կարող են առաջանալ ԱԱՀ-ի և շահութահարկի գծով հարկային պարտավորություններ, իսկ իրացման հետ կապված ծախսերի մոտավոր չափը Պայմանագրի կնքման դրությամբ կազմում է իրացումից ստացվող գումարի 5 (հինգ)-ից 10 (տասը) տոկոսը),

4.3.4. ֆինանսական շուկայում իր կողմից ներգրավված և տեղաբաշխված միջոցների տոկոսադրույքների տատանումների և/կամ ֆինանսավորման տոկոսադրույքի փոփոխման և/կամ նման նախադրյալների առկայության և/կամ Վարկառուի կողմից վարկը ոչ նպատակային օգտագործելու դեպքում միակողմանիորեն փոփոխել Պայմանագրով (բացառությամբ՝ հիփոթեքային վարկի պայմանագրի) սահմանված տոկոսադրույքներն ու միջնորդավճարները՝ այդ մասին առնվազն 30 օրացուցային օր առաջ ծանուցելով Վարկառուին և/կամ Պարտապանին (ֆակտորինգների դեպքում): Փոփոխությունները կկիրառվեն ծանուցման մեջ նշված ամսաթվից սկսած,

4.3.5. Վարկառուի անձնական տվյալները և բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները տրամադրել պետական, այդ թվում՝ դատական և իրավապահ մարմիններին, Բանկի հետ համագործակցության և/կամ ծառայությունների մատուցման պայմանագիր կնքած անձանց՝ Վարկատուի կողմից իր իրավունքներն իրացնելու և պարտավորությունները կատարելու նպատակով, Վարկը որևէ Ֆոնդի կամ Աջակցության ծրագրի շրջանակներում տրամադրված լինելու դեպքում՝ համապատասխան ծրագրերով սահմանված իրավասու կառույցներին, ինչպես նաև Վարկի համար ապահովման միջոց տրամադրած անձանց: Ընդ որում, ապահովման միջոցներ տրամադրած անձանց տրամադրվում են միայն վերջիններիս կողմից ապահովված Վարկի վերաբերյալ Վարկառուի բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները,

4.3.6. Պայմանագրի գործողության ընթացքում Վարկառուի համար սահմանել Պայմանագրով նախատեսվածից ավելի բարենպաստ պայմաններ՝ այդ մասին 7 աշխատանքային օր առաջ (հիփոթեքային վարկերի դեպքում՝ 30 օր առաջ) սույն փաստաթղթով սահմանված կարգով Վարկառուին ծանուցելով: Եթե նշված ժամկետում Վարկառուն իր անհամաձայնության մասին չի հայտնում Վարկատուին՝ վերջինիս՝ Պայմանագրի վավերապայմաններում նշված էլեկտրոնային հասցեին ծանուցելու միջոցով, ապա Վարկատուի կողմից սահմանված ավելի բարենպաստ պայմանները սկսում են գործել,

4.3.7. իրականացնել Պայմանագրի կատարման ապահովման համար գրավադրված գույքի ստուգում (մոնիթորինգ) Պայմանագրի գործողության ընթացքում յուրաքանչյուր տարի, առավելագույնը 5 անգամ, այցելություն իրականացնելու կամ հեռահար եղանակով՝ փաստաթղթեր կամ լուսանկարներ պահանջելու միջոցով:

4.4. Վարկատուն պարտավորվում է՝

4.4.1. Պայմանագրով սահմանված չափով, կարգով և դեպքերում Վարկ տրամադրել Վարկառուին:

ԳԼՈՒԽ 5 ՎԱՐԿԱՏՈՒԻ ԵՎ ՎԱՐԿԱՌՈՒԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Այն դեպքում, երբ Վարկառուն ունի Պայմանագրից բխող պարտավորություն և/կամ զիջման առարկա դրամական պահանջն ամբողջությամբ կամ մասամբ իրական չէ (ֆակտորինգների դեպքում) և/կամ առկա են 4.3.1. կետով սահմանված հանգամանքներից որևիցե մեկը, ապա վերջինս սույն գլխով սահմանված կարգով կրում է պատասխանատվություն՝ անկախ իր մեղքի առկայությունից և/կամ անհաղթահարելի ուժի գործողությունից

Պատասխանատվության ձևերն են՝ տուժանք և/կամ Վարկի գումարի ու հասանելիք տոկոսների վաղաժամկետ վճարում և/կամ Վարկի տոկոսադրույքի և/կամ միջնորդավճարի (առկայության դեպքում) փոփոխություն (բացառությամբ հիփոթեքային վարկի տոկոսադրույքի փոփոխության) և/կամ Վարկի օգտագործման լրիվ կամ մասնակի դադարեցում և/կամ Վարկի գործողության վաղաժամկետ դադարեցում և/կամ Վարկի գումարի հետ վերադարձ և Պայմանագրով սահմանված չափով և կարգով հաշվարկված տոկոսագումարների վճարում (ֆակտորինգների դեպքում):

5.2. 4.3.1.կետի «ա» մասով սահմանված հանգամանքի առկայության դեպքում Վարկատուն իրավունք ունի չկատարված դրամային պարտավորությունների նկատմամբ հաշվարկել տուժանք, որը ենթակա է վճարման Վարկառուի և/կամ Պարտապանի (ֆակտորինգների դեպքում) կողմից: Տուժանքի չափը սահմանվում է Վարկատուի կողմից միակողմանիորեն, որը չի կարող գերազանցել յուրաքանչյուր օրվա համար 0.13 (զրո ամբողջ տասներեք) տոկոսը (այսուհետ՝ նաև Տուժանք),

5.3. 4.3.1.կետով սահմանված հանգամանքներից որևէ մեկն առաջանալու դեպքում Վարկատուն իրավունք է ստանում Վարկառուից պահանջել վաղաժամկետ վճարել Վարկի գումարը ու հասանելիք տոկոսները և/կամ միակողմանիորեն փոփոխել Վարկի տոկոսադրույքը և/կամ միջնորդավճարը (առկայության դեպքում) (բացառությամբ հիփոթեքային վարկի տոկոսադրույքի փոփոխության) և/կամ դադարեցնել Վարկի օգտագործումը՝ լրիվ կամ մասնակի և/կամ վաղաժամկետ դադարեցնել Վարկի գործողության ժամկետը,

5.4. Վարկի գումարի ու հասանելիք տոկոսների վաղաժամկետ վճարման պահանջը ներկայացվելու պահից Վարկատուն իրավունք ունի իր հանդեպ առկա ամբողջ դրամային պարտավորությունների նկատմամբ հաշվարկել Տուժանք, որը ենթակա է վճարման Վարկառուի կողմից,

5.5. Տուժանքի հաշվարկման պահից սկսած, այն գումարի վրա, որի նկատմամբ հաշվարկվում է Տուժանք, տոկոսների հաշվարկը դադարում է, իսկ Տուժանքի հաշվարկի դադարման դեպքում Վարկատուն իրավունք ունի վերսկսել տոկոսների հաշվարկը,

5.6. ***Վարկառուի կողմից իր պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար Վարկառուի վերաբերյալ տեղեկատվությունը ՀՀ օրենսդրությամբ և Վարկատուի ներքին իրավական ակտերով սահմանված դեպքերում տրամադրվելու է ՀՀ կենտրոնական բանկի վարկային ռեգիստրին, ինչպես նաև վարկային բյուրոյին,***

5.7. Պայմանագրից բխող պարտավորությունները Վարկառուի կողմից չկատարվելու կամ ոչ պատշաճ կատարվելու դեպքում Վարկառուն կարող է զրկվել Պայմանագրի կատարման ապահովման համար գրավադրված իրեն պատկանող գույքի նկատմամբ իր իրավունքներից:

ԳԼՈՒԽ 6 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐԿ

6.1. Վարկառուն իրավունք ունի Վարկը և հաշվարկված տոկոսագումարները ժամկետից շուտ ամբողջությամբ կամ մասնակի մարել՝ աջակցության ծրագրերի շրջանակներում տրամադրվող Վարկերի վաղաժամ մարումներին վերաբերող նախապայմանների (առկայության դեպքում) բավարարման դեպքում: Այդ դեպքում Վարկառուն պարտավորվում է վճարել Վարկի փաստացի ժամկետի համար հաշվարկված տոկոսագումարը, իսկ այն դեպքում, երբ.

6.1.1. ֆիզիկական անձ վարկառուներին տրամադրվող գյուղատնտեսական վարկերի դեպքում՝ Հավելվածով սահմանված հերթական մարումների միջև ընկած ժամանակահատվածում (Հավելվածով սահմանված նախորդ մարման օրվան հաջորդող օրվանից մինչև հերթական մարման օրը ներառյալ) կատարված մարումների հանրագումարը գերազանցում է Հավելվածով սահմանված հերթական վճարման ենթակա ընդհանուր գումարը (մայր գումար և տոկոսագումար), Վարկառուն պարտավորվում է վճարել նաև Վաղաժամկետ մարման վճար, որը հաշվարկվում է Հավելվածով սահմանված հերթական վճարման ենթակա ընդհանուր գումարը (մայր գումար և տոկոսագումար) գերազանցող մասի նկատմամբ՝ Վարկավորման հիմնական պայմանների՝ Վաղաժամկետ մարման վճար դաշտում նշված տոկոսի չափով,

6.1.2. իրավաբանական անձ և ԱՁ վարկառուներին տրամադրվող գյուղատնտեսական վարկերի դեպքում՝ Հավելվածով սահմանված հերթական մարումների միջև ընկած ժամանակահատվածում (Հավելվածով սահմանված նախորդ մարման օրվան հաջորդող օրվանից մինչև հերթական մարման օրը ներառյալ) կատարված մարումների հանրագումարը գերազանցում է Հավելվածով սահմանված հերթական վճարման ենթակա ընդհանուր գումարի (մայր գումար և տոկոսագումար) կրկնապատիկը, Վարկառուն պարտավորվում է վճարել նաև Վաղաժամկետ մարման վճար, որը հաշվարկվում է Հավելվածով սահմանված հերթական վճարման ենթակա ընդհանուր գումարի (մայր գումար և տոկոսագումար) կրկնապատիկը գերազանցող մասի նկատմամբ՝ Վարկավորման հիմնական պայմանների՝ Վաղաժամկետ մարման վճար դաշտում նշված տոկոսի չափով,

(սույն կետը կիրառելի չէ Սպառողական կրեդիտների նկատմամբ)

6.2. Վարկատուն պարտավոր է Վարկի գումարը միանվագ փոխանցել Պայմանագրում նշված Վարկառուի բանկային հաշվին, սակայն Վարկառուի կողմից Վարկատուի հանդեպ ժամկետանց պարտավորությունների առկայության դեպքում Վարկատուն իրավունք ունի Վարկի գումարը փոխանցել վարկային կոդին, որը Վարկառուի կողմից պետք է ուղղվի Վարկատուի մոտ առկա ժամկետանց պարտավորության/պարտավորությունների ամբողջական մարմանը: Business Tab հավելվածով ձևակերպվող Վարկերի դեպքում, երբ Վարկառուն ընտրում է Վարկի գումարը քարտային հաշվին փոխանցելու տարբերակը, Վարկի գումարը Վարկատուի կողմից անակցեպտ փոխանցվում է Վարկառուի կողմից նշված քարտային հաշվին:

ԳԼՈՒԽ 7 ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿ

7.1. Հիփոթեքային վարկերի ընդհանուր պայմաններ

7.1.1. Վարկառուն իրավունք ունի Վարկը և հաշվարկված տոկոսագումարները ժամկետից շուտ ամբողջությամբ կամ մասնակի մարել, որի դեպքում Վարկառուն վճարում է Վարկի փաստացի ժամկետի համար հաշվարկված տոկոսագումարը, ինչպես նաև տուգանք հետևյալ չափերով՝

առաջին տարվա ընթացքում վաղաժամկետ մարում կատարելու դեպքում՝ տվյալ պայմանագրային տարվա (Պայմանագրի կնքման ամսաթվին հաջորդող յուրաքանչյուր 12-ամսյա ժամանակահատ-ված) համար մարման ենթակա Վարկի մայր գումարից ավել վճարված գումարի 0.6 տոկոսի չափով, երկրորդ տարվա ընթացքում վաղաժամկետ մարում կատարելու դեպքում՝ տվյալ պայմանագրային տարվա համար մարման ենթակա Վարկի մայր գումարից ավել վճարված գումարի 0.4 տոկոսի չափով, երրորդ տարվա ընթացքում վաղաժամկետ մարում կատարելու դեպքում՝ տվյալ պայմանագրային տարվա համար մարման ենթակա Վարկի մայր գումարից ավել վճարված գումարի 0.2 տոկոսի չափով, իսկ Պայմանագրի գործողության մնացած ժամանակահատվածում վաղաժամկետ մարում կատարելու դեպքում՝ որևէ տուգանք չի գանձվում: Ընդ որում, երբ Լրացուցիչ պայմանագրի գործողության ցանկացած ժամանակահատվածում վաղաժամկետ մարվում է պայմանագրային տարվա համար Հավելվածով սահմանված մարման ենթակա Վարկի մայր գումարը, ապա որևէ տուգանք չի գանձվում,

7.1.2. Վարկի գումարը վաղաժամկետ մարելու դեպքում Հավելվածով սահմանված վճարման ենթակա Վարկի գումարից ավել վճարված գումարի չափով համամասնորեն նվազեցվում է Հավելվածով սահմանված վճարման ենթակա հերթական Վարկի գումարը,

7.1.3. Միանվագ միջնորդավճարի (առկայության դեպքում) վճարումը կատարվում է Վարկի տրամադրման պահին,

7.1.4. Վարկավորման հիմնական պայմաններում նշված Վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է Լրացուցիչ պայմանագիրը Վարկառուին տրամադրելու օրվա դրությամբ:

7.1.5. Վարկի գումարի և գրավի շուկայական արժեքի առավելագույն հարաբերակցությունը կազմում է 100(հարյուր) տոկոս,

7.1.6. Վարկառուի կողմից Պայմանագրով սահմանված ժամկետներում և չափով վճարումներ չկատարվելու դեպքում հաշվարկվում է Տուժանք, որը ենթակա է վճարման Վարկառուի կողմից, ընդ որում, տվյալ դեպքում Վարկատուն Տուժանքից բացի որևէ այլ վճար չի կարող գանձել Վարկառուից:

7.1.7. Վարկառուն պարտավոր է՝

7.1.7.1. Լրացուցիչ պայմանագրի գործողության ողջ ժամանակահատվածի համար հոգուտ Վարկատուի ապահովագրել իրեն դժբախտ պատահարներից՝ Վարկառուի համար ընդունելի ապահովագրական ընկերության միջոցով և Վարկատուի համար ընդունելի պայմաններով: Ապահովագրումը պետք է իրականացվի առնվազն մեկ տարի ժամկետով և մեկ տարի պարբերականությամբ, բայց ոչ ավելի երկար, քան Լրացուցիչ պայմանագրի ժամկետը, *(սույն դրույթը վերաբերում է Ֆոնդերի շրջանակներում տրամադրված Անշարժ գույքի գնման հիփոթեքային վարկերին)*

7.1.7.2. հոգուտ Վարկատուի ապահովագրել Պայմանագրով սահմանված պարտականություն-ների կատարումն ապահովելու համար գրավադրված ձեռք բերվող անշարժ գույքը հրդեհից և գույքին հասցված այլ վնասներից Վարկառուի համար ընդունելի ապահովագրական ընկերության միջոցով և Վարկատուի համար ընդունելի պայմաններով, եթե գրավատուն չի կատարել նշված գույքը ապահովագրելու իր պարտականությունը, *(սույն դրույթը վերաբերում է Անշարժ գույքի գնման հիփոթեքային վարկերին)*

7.1.7.3. Լրացուցիչ պայմանագրի կնքման ամսաթվին և յուրաքանչյուր հաջորդ տարի նույն ամսաթվին Վարկի ապահովման միջոց հանդիսացող գույքերի ապահովագրության վճարները, Վարկառուին դժբախտ պատահարներից ապահովագրության վճարները և կանխավճարի ապահովագրավճարները (Պայմանագրով համապատասխան ապահովագրավճարներ սահմանված լինելու դեպքում) վճարել իր՝ Վարկատուի մոտ բացված բանկային հաշիվներին մուտքագրելու միջոցով, որոնք Վարկատուի կողմից անակնկալ կարգով գանձվում և փոխանցվում են համապատասխան ապահովագրական ընկերություններին,

7.1.7.4.Վարկատուի կողմից սեփական միջոցների հաշվին ապահովագրավճարների վճարման դեպքում վճարման պահից 60 օրացուցային օրերի ընթացքում Վարկատուին վճարել ապահո-վագրավճարների գումարը, ընդ որում, Պայմանագրի կնքմամբ Վարկառուն հանձնարարում է Վարկատուին նշված ժամանակահատվածում իրականացվող Վարկի մարումներն առաջնահերթության կարգով ուղղել ապահովագրավճարի մարմանը:

7.1.8. Վարկառուն իրավունք ունի.

7.1.8.1.Լրացուցիչ պայմանագրի գործողության ողջ ժամանակահատվածի համար հօգուտ Վարկատուի ապահովագրել իրեն դժբախտ պատահարներից՝ Վարկառուի համար ընդունելի ապահովագրական ընկերության միջոցով և Վարկատուի համար ընդունելի պայմաններով *(սույն դրույթը չի վերաբերում Ֆոնդերի շրջանակներում տրամադրված Անշարժ գույքի գնման հիփոթեքային վարկերին)*

7.1.8.2. Լրացուցիչ պայմանագրի գործողության ողջ ժամանակահատվածի համար հօգուտ Վարկատուի ապահովագրել Պայմանագրով սահմանված պարտականությունների կատարումն ապահովելու համար գրավադրված անշարժ գույքը հրդեհից և գույքին հասցված այլ վնասներից՝ Վարկառուի համար ընդունելի ապահովագրական ընկերության միջոցով և Վարկատուի համար ընդունելի պայմաններով *(սույն դրույթը վերաբերում է վերանորոգման հիփոթեքային վարկերին)*

7.1.9. Վարկատուն պարտավոր է.

7.1.9.1.Վարկի գումարը միանվագ փոխանցել Պայմանագրում նշված Վարկառուի բանկային հաշվին, սակայն Վարկառուի կողմից Վարկատուի հանդեպ ժամկետանց պարտավորությունների առկայության դեպքում Վարկատուն իրավունք ունի Վարկի գումարը փոխանցել վարկային կոդին, որը Վարկառուի կողմից պետք է ուղղվի Վարկատուի մոտ առկա ժամկետանց պարտավորության/պարտավորությունների ամբողջական մարմանը: Վարկառուի հիփոթեքային վարկի մարման նպատակով տրամադրվող հիփոթեքային վարկերի դեպքում, Վարկատուն պարտավոր է Վարկի գումարը կամ դրա մի մասը անակցեպտ փոխանցել Վարկատուի մոտ կամ այլ ֆինանսական կազմակերպությունում Վարկառուի հիփոթեքային պարտավորությունների մարմանը:

7.1.9.2. Պայմանագրով կանխավճարի ապահովագրություն սահմանված լինելու դեպքում, Վարկառուի փոխարեն կատարել կանխավճարի ապահովագրություն Վարկառուի համար ընդունելի ապահովագրական ընկերության միջոցով և Վարկատուի համար ընդունելի պայմաններով: Ապահովագրումը իրականացվում է մեկ տարի ժամկետով և մեկ տարի պարբերականությամբ՝ մինչև Վարկի մայր գումարի մարումների գումարային մեծության և ապահովագրված կանխավճարի մեծության հավասարվելը,

7.1.10. Վարկատուն իրավունք ունի.

7.1.10.1. Պայմանագրով սահմանված ապահովագրության վճարները գանձել Վարկառուի բոլոր հաշիվներից, իսկ եթե Վարկառուի հաշիվներում բացակայում է կամ չի բավարարում անհրաժեշտ գումարը, ապահովագրության վճարը կամ դրա մի մասը վճարել սեփական միջոցների հաշվին և այդ դեպքում Պայմանագրով սահմանված կարգով ետ պահանջել վճարված գումարը:

7.2. Միայն լողացող տոկոսադրույքով հիփոթեքային վարկերին վերաբերելի պայմաններ.

7.2.1. Տարեկան անվանական լողացող տոկոսադրույքը չի փոփոխվում մինչև Հաստատուն ժամանակահատվածի ավարտին հաջորդող փետրվար կամ օգոստոս ամիսը, իսկ Հաստատուն ժամանակահատվածի ավարտից հետո յուրաքանչյուր փետրվար և օգոստոս ամիսներին տարեկան անվանական լողացող տոկոսադրույքը սահմանվում է Հաստատուն բաղադրիչին գումարած

Դրամային հիփոթեքային վարկերի դեպքում՝ 6 ամսվա համար նախատեսված պետական արժեկտրոնային պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության ցուցանիշը (ցուցանիշի աղբյուրը՝ https://www.acba.am/files/loghacogh-tokosadruyq.pdf), ընդ որում՝ փետրվար ամսվա համար հիմք է ընդունվում այդ տարվա հունվարի 1-ին նախորդող 2-րդ աշխատանքային օրը ՀՀ Կենտրոնական բանկի կայքում հրապարակված ցուցանիշը, իսկ օգոստոս ամսվա համար հիմք է ընդունվում այդ տարվա հուլիսի 1-ին նախորդող 2-րդ աշխատանքային օրը ՀՀ Կենտրոնական բանկի կայքում հրապարակված ցուցանիշը: Նշված ցուցանիշի անհասանելի դառնալու դեպքում, տարեկան անվանական լողացող տոկոսադրույքը սահմանվում է՝ Հաստատուն բաղադրիչին գումարելով ՀՀ Կենտրոնական բանկի կողմից ամսական պարբերականությամբ հրապարակվող՝ առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների միջին տոկոսադրույքից հանած 1 (մեկ) տոկոս (ցուցանիշի աղբյուրը՝ https://www.acba.am/files/loghacogh-tokosadruyq.pdf), ընդ որում՝ փետրվար ամսվա համար հիմք է ընդունվում նախորդ տարվա սեպտեմբերին ՀՀ Կենտրոնական բանկի կայքում հրապարակված ցուցանիշը, իսկ օգոստոս ամսվա համար հիմք է ընդունվում այդ տարվա մարտին ՀՀ կենտրոնական բանկի կայքում հրապարակված ցուցանիշը:

Այն դեպքում, երբ վերը նշված երկու ցուցանիշների արժեքը, տոկոսադրույքի հաշվարկման պահին, բացասական է (0-ից փոքր), ապա տոկոսադրույքի հաշվարկի մեջ այդ ցուցանիշը համարվում է 0:

Դոլարային հիփոթեքային վարկերի դեպքում՝ 6 ամիս ժամկետայնությամբ ԱՄՆ գանձապետական պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության ցուցանիշին գումարած 0.5 (զրո ամբողջ հինգ) տոկոս (ցուցանիշի աղբյուրը՝ https://www.acba.am/files/loghacogh-tokosadruyq.pdf), ընդ որում՝ փետրվար ամսվա համար հիմք է ընդունվում այդ տարվա հունվարի 1-ին նախորդող 2-րդ աշխատանքային օրվա դրությամբ գործող ցուցանիշը, իսկ օգոստոս ամսվա համար հիմք է ընդունվում այդ տարվա հուլիսի 1-ին նախորդող 2-րդ աշխատանքային օրվա դրությամբ գործող ցուցանիշը: Նշված ցուցանիշի անհասանելի դառնալու դեպքում, տարեկան անվանական լողացող տոկոսադրույքը սահմանվում է՝ Հաստատուն բաղադրիչին գումարելով ԱՄՆ դոլարի 6 ամիս ժամկետայնությամբ ժամկետային ապահովված օվերնայթ ֆոնդային տոկոսադրույքը (ցուցանիշի աղբյուրը՝ https://www.acba.am/files/loghacogh-tokosadruyq.pdf), ընդ որում՝ փետրվար ամսվա համար հիմք է ընդունվում այդ տարվա հունվարի 1-ին նախորդող 2-րդ աշխատանքային օրը Բլումբերգ համակարգի տերմինալում՝ TSFR6M, հրապարակված ցուցանիշը, իսկ օգոստոս ամսվա համար հիմք է ընդունվում այդ տարվա հուլիսի 1-ին նախորդող 2-րդ աշխատանքային օրը Բլումբերգ համակարգի տերմինալում՝ TSFR6M, հրապարակված ցուցանիշը:

Այն դեպքում, երբ վերը նշված երկու ցուցանիշների արժեքը, տոկոսադրույքի հաշվարկման պահին, բացասական է (0-ից փոքր), ապա տոկոսադրույքի հաշվարկի մեջ այդ ցուցանիշը համարվում է 0:

Եվրոյով հիփոթեքային վարկերի դեպքում՝ 6 ամսվա համար նախատեսված եվրիբոր տոկոսադրույքը (ցուցանիշի աղբյուրը՝ https://www.acba.am/files/loghacogh-tokosadruyq.pdf), ընդ որում՝ փետրվար ամսին հիմք է ընդունվում այդ տարվա հունվարի 1-ին նախորդող 2-րդ աշխատանքային օրը Բլումբերգ համակարգի տերմինալում EUR006M հղմամբ հրապարակված եվրիբոր տոկոսադրույքը՝ նախատեսված վեց ամսվա համար, իսկ օգոստոս ամսին հիմք է ընդունվում այդ տարվա հուլիսի 1-ին նախորդող 2-րդ աշխատանքային օրը Բլումբերգ համակարգի տերմինալում EUR006M հղմամբ հրապարակված եվրիբոր տոկոսադրույքը՝ նախատեսված վեց ամսվա համար:

Նշված ցուցանիշի անհասանելի դառնալու դեպքում, տարեկան անվանական լողացող տոկոսադրույքը սահմանվում է՝ Հաստատուն բաղադրիչին գումարելով Բլումբերգ համակարգի տերմինալում YCGT0016 հղմամբ հրապարակված Գերմանիայի եվրոյով պետական պարտատոմսերի եկամտաբերության կորի 6-ամսյա տոկոսադրույքը (ցուցանիշի աղբյուրը՝ https://www.acba.am/files/loghacogh-tokosadruyq.pdf), ընդ որում, փետրվար ամսվա համար հիմք է ընդունվում այդ տարվա հունվարի 1-ին նախորդող 2-րդ աշխատանքային օրվա դրությամբ գործող ցուցանիշը, իսկ օգոստոս ամսվա համար հիմք է ընդունվում այդ տարվա հուլիսի 1-ին նախորդող 2-րդ աշխատանքային օրվա դրությամբ գործող ցուցանիշը:

Այն դեպքում, երբ վերը նշված երկու ցուցանիշների արժեքը, տոկոսադրույքի հաշվարկման պահին, բացասական է (0-ից փոքր), ապա տոկոսադրույքի հաշվարկի մեջ այդ ցուցանիշը համարվում է 0:

7.2.2. Վերը նկարագրված կարգով տոկոսադրույքի փոփոխության դեպքում Վարկի վերադարձը և տոկոսների վճարումը կատարվում է տոկոսադրույքի փոփոխության արդյունքում ձևավորված նոր մարման գրաֆիկի համաձայն:

ԳԼՈՒԽ 8 ՍՊԱՌՈՂԱԿԱՆ/ՈՒՍՄԱՆ ՎԱՐԿ

8.1. Միանվագ միջնորդավճարի (առկայության դեպքում) վճարումը կատարվում է Վարկը Վարկառուին տրամադրվելու պահին,

8.2. Ամսական միջնորդավճարի (առկայության դեպքում) վճարումը կատարվում է համաձայն Հավելվածում սահմանված մարման գրաֆիկի, ընդ որում՝ եթե տոկոսների վճարումը կատարվում է եռամսյակային պարբերականությամբ, ապա Վարկի ամսական միջնորդավճարը ևս վճարվում է եռամսյակային պարբերականությամբ: Եթե Վարկի ժամկետը երկարաձգվում է, կազմվում է նոր մարման գրաֆիկ, որը Վարկառուն կարող է ձեռք բերել Վարկատուից,

8.3. Վարկատուն պարտավոր է Վարկի գումարը միանվագ փոխանցել Պայմանագրում նշված Վարկառուի բանկային հաշվին, սակայն Վարկառուի կողմից Վարկատուի հանդեպ ժամկետանց պարտավորությունների առկայության դեպքում Վարկատուն իրավունք ունի Վարկի գումարը փոխանցել վարկային կոդին, որը Վարկառուի կողմից պետք է ուղղվի Վարկատուի մոտ առկա ժամկետանց պարտավորության/պարտավորությունների ամբողջական մարմանը:

ԳԼՈՒԽ 9 ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԱՅԻՆ ԳԻԾ

9.1. Վարկային գիծը տրամադրվում է միանվագ և ակտիվացվում է Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 1 (մեկ) ամսվա ընթացքում, իսկ չվերականգնվող Վարկային գծի դեպքում՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 2 (երկու) աշխատանքային օրերի ընթացքում: Ընդ որում, չվերականգնվող Վարկային գծի վրա առկա դրամական միջոցները Վարկառուի կողմից ենթակա են օգտագործման մինչև Պայմանագրի ստորագրումից հետո տասներորդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պայմանագրում նշված Վարկի գումարը Վարկային գծի առավելագույն սահմանաչափն է,

9.2. Վարկային գծի միանվագ միջնորդավճարի վճարումը (առկայության դեպքում) կատարվում է Վարկային գծի ակտիվացման պահին: Վարկառուի հաշվին անհրաժեշտ միջոցների բացակայության կամ անբավարարության դեպքում նշված միջնորդավճարները գանձվում են չօգտագործված Վարկային գծի գումարից: Չօգտագործված վարկային գծի բացակայության կամ անբավարարության դեպքում, միջնորդավճարների գումարը հաշվվում է որպես գերածախս,

9.3. Վարկային գծի օգտագործում է համարվում կանխիկ գումարի ստացումը բանկոմատներից ու կանխիկի տրամադրման կետերից, քարտից այլ բանկային հաշիվներին փոխանցումը, վճարումը քարտով,ինչպես նաև Վարկատուին տրամադրված պարբերական վճարման հանձնարարականով կատարված գործառնությունները,

9.4. Տոկոսագումարը հաշվարկվում է յուրաքանչյուր օր.

9.4.1. ArCa, Arca Business քարտատեսակներով տրամադրվող Վարկային գծերի դեպքում՝ Վարկային գծի օգտագործված մասի նկատմամբ՝ օգտագործման գործարքը Վարկատուի մոտ ձևակերպվելու օրվանից,

9.4.2. Visa Classic, MasterCard Standard, Visa «Բարերար», MasterCard UEFA Champions League, Visa Business և UNIONPAY Business քարտերով տրամադրվող Վարկային գծերի դեպքում՝ Վարկային գծի օգտագործված մասի նկատմամբ: Ընդ որում, քարտով կատարված վճարման գործառնությունների գումարի նկատմամբ տոկոսագումարի հաշվարկը սկսվում է տվյալ գործառնությունը Վարկատուի մոտ ձևակերպվելու օրվան հաջորդող ամսվա 8-րդ օրվանից: Քարտով կատարված մյուս գործառնությունների դեպքում տոկոսագումարի հաշվարկը սկսվում է տվյալ գործառնությունը Վարկատուի մոտ ձևակերպվելու օրվանից,

9.4.3. Visa Gold, Mastercard Gold, Visa Signature, Visa Signature Limited Edition, UNIONPAY Gold, Mastercard World և Mastercard World Elite քարտերով տրամադրվող վարկային գծերի դեպքում՝ վարկային գծի օգտագործված մասի նկատմամբ: Ընդ որում, քարտով կատարված վճարման գործառնությունների գումարի նկատմամբ տոկոսագումարի հաշվարկը սկսվում է տվյալ գործառնությունը Վարկատուի մոտ ձևակերպվելու օրվան հաջորդող ամսվա 15-րդ օրվանից: Քարտով կատարված մյուս գործառնությունների դեպքում տոկոսագումարի հաշվարկը սկսվում է տվյալ գործառնությունը Վարկատուի մոտ ձևակերպվելու օրվանից:

9.5. Վերականգնվող Վարկային գծերի դեպքում.

9.5.1. Օգտագործված Վարկային գծի միջոցները և դրա նկատմամբ հաշվարկված տոկոսները, գերածախսի գումարը և դրա նկատմամբ հաշվարկված տոկոսները, ինչպես նաև քարտային հաշվի սպասարկման միջնորդավճարը ենթակա են ամբողջությամբ մարման մինչև Վարկային գծի գործողության ավարտի օրվան հաջորդող 14-րդ օրը (այսուհետ՝ Մարման վերջնաժամկետ): Սակայն, Պայմանագրում նշված բանկային հաշվին դրամական միջոցների յուրաքանչյուր մուտքագրման դեպքում՝ անկախ Մարման վերջնաժամկետից, այդ գումարներից մարվում են օգտագործված Վարկային գծի միջոցները և դրա նկատմամբ հաշվարկված տոկոսները, գերածախսի գումարը և դրա նկատմամբ հաշվարկված տոկոսները, ինչպես նաև քարտային հաշվի սպասարկման միջնորդավճարը,

9.5.2. Վարկային գիծը վճարվում է ոչ հավասարաչափ. յուրաքանչյուր ամսվա համար պարտադիր մարման ենթակա գումարը, որը հաշվարկվում է այդ ամսվա վերջի դրությամբ օգտագործված Վարկային գծի միջոցների նկատմամբ՝ Պայմանագրի՝ Վարկային գծի պարտադիր մարումների հատվածում նշված տոկոսի չափով, վճարվում է այդ ամսվա ավարտից հետո 50 օրվա ընթացքում, ընդ որում՝ պարտադիր մարման ենթակա գումարն առաջնահերթորեն ուղղվում է օգտագործված Վարկային գծի նկատմամբ հաշվարկված տոկոսագումարի, այնուհետև օգտագործված Վարկային գծի մարմանը: 50 օրյա ժամկետում նշված պարտավորությունը չկատարելու դեպքում Վարկառուն պարտավորվում է բացի պարտադիր մարման ենթակա գումարը վճարել նաև տվյալ պահին քարտային հաշվի սպասարկման համար առաջացած դրամային պարտավորությունը, առաջացած գերածախսը և գերածախսի նկատմամբ հաշվարկված տոկոսները,

9.6. Գյուղատնտեսական վարկային գծերի դեպքում Վարկառուն պարտավորվում է իրականացնել Պայմանագրի՝ Վարկավորման հիմնական պայմաններում՝ Վարկային գծի պարտադիր մարումների հատվածում նշված վճարումները, իսկ Վարկային գիծը և հաշվարկված տոկոսագումարներն ամբողջությամբ վճարվում են մինչև Վարկային գծի գործողության ավարտի օրվան հաջորդող 14-րդ (տասնչորսերորդ) օրը (այսուհետ՝ Մարման վերջնաժամկետ): Եթե Վարկառուն մինչև Մարման վերջնաժամկետը ամբողջությամբ չի մարել Վարկային գծից օգտագործված միջոցները, սակայն նշված ժամկետում որևէ օրվա դրությամբ ամբողջությամբ կատարել է պարտադիր մարումները, մարել է հաշվարկված տոկոսագումարները, տվյալ պահին քարտային հաշվի սպասարկման համար առաջացած դրամային պարտավորությունը, առաջացած գերածախսը, տույժերը և տուգանքները (առկայության դեպքում) և չունի Վարկատուի հանդեպ այլ ժամկետանց պարտավորություններ, ապա Վարկային գիծը ավտոմատ կերպով (առանց Կողմերի միջև լրացուցիչ համաձայնագրի կնքման) երկարաձգվում է Մարման վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը՝ 12 ամիս ժամկետով, որի ընթացքում Վարկառուն այլևս չի կարող օգտագործել Վարկային գծի չօգտագործված միջոցները և պարտավորվում է ամբողջությամբ մարել Վարկային գծից օգտագործված միջոցները և դրանց նկատմամբ Պայմանագրում սահմանված տոկոսադրույքի չափով հաշվարկվող տոկոսագումարները՝ հավասարաչափ եղանակով՝ Պայմանագրում և/կամ «Ճանաչիր հաճախորդիդ» հարցաթերթիկում նշված կոնտակտային տվյալներով՝ սույն փաստաթղթով սահմանված ծանուցման եղանակներից որևէ մեկով կամ առձեռն Վարկատուի կողմից Վարկառուին տրամադրված մարման գրաֆիկի համաձայն: Ընդ որում, Վարկային գծի ավտոմատ կերպով երկարաձգումից հետո տոկոսագումարների հաշվարկը կատարվում է օրական՝ պարտավորության նվազող մնացորդի վրա,

9.7. Չվերականգնվող քարտային վարկային գծի դեպքում՝ Վարկային գծի վերադարձը և տոկոսների վճարումը կատարվում է հավասարաչափ՝ համաձայն Հավելվածով սահմանված մարման գրաֆիկի: Վարկառուն պարտավորվում է Հավելվածով սահմանված պարտադիր մարման ենթակա գումարի հետ միասին վճարել նաև տվյալ պահին առաջացած գերածախսը, գերածախսի նկատմամբ հաշվարկված տոկոսները և քարտային հաշվի սպասարկման միջնորդավճարը (առկայության դեպքում): Եթե վճարման սկզբի օրվա դրությամբ փաստացի կուտակված տոկոսները և Վարկային գծի օգտագործված միջոցները նվազ են գրաֆիկում նշված գումարից, Վարկառուն պարտավորվում է մարել տվյալ պահին առկա պարտավորությունը,

9.8. Վերականգնվող և գյուղատնտեսական վարկային գծերի դեպքում՝ եթե Վարկառուի կողմից Վարկային գծի օգտագործված միջոցների մարվում են, Վարկային գիծը մարման չափով վերականգնվում է մինչև մարմանը հաջորդող աշխատանքային օրվա ժամը 18:00-ը, իսկ

չվերականգնվող Վարկային գծերի դեպքում՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո մինչև տասներորդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը Վարկային գիծը Վարկառուի կողմից Վարկային գծի օգտագործված միջոցների մարման չափով վերականգնվում է, իսկ Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո տասներորդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվանից Վարկային գիծը դառնում է չվերականգնվող և վարկային գծի օգտագործված միջոցների մարման չափով պակասում է,

9.9. Վարկային գծի գումարը մարվելիս առաջնահերթ մարվում է կանխիկացման գործառնությունների գումարը, հետո միայն վճարային գործառնությունների գումարը,

9.10. Բոլոր վճարումները կատարվում են Պայմանագրում նշված Վարկառուի բանկային հաշվին կամ վարկային կոդին,

9.11. Վարկառուն իրավունք ունի Վարկային գծի գործողության ընթացքում ամբողջությամբ կամ մասնակի մարել Վարկը և տոկոսները, ինչպես նաև դիմել Վարկատուին իր Վարկային գծի գործողությունը դադարեցնելու համար,

9.12. Վարկատուն իրավունք ունի Վարկային գծի գումարի ու հասանելիք տոկոսների վաղաժամկետ վճարման պահանջ ներկայացնել Վարկառուին, եթե վերջինս դիմել է Վարկատուին քարտի գործողությունը դադարեցնելու կամ քարտը փոխարինելու համար:

ԳԼՈՒԽ 10 ԱՐԱԳ ՕՎԵՐԴՐԱՖՏ

10.1. Արագ օվերդրաֆտը վերականգնվող քարտային վարկային գիծ է, որի նկատմամբ կիրառելի է Քարտային վարկային գծի պայմանները, եթե այլ բան սահմանված չէ սույն գլխի կանոններով:

10.2. Արագ օվերդրաֆտի գործողության ընթացքում առկա չեն պարտադիր մարումներ,

10.3. Արագ օվերդրաֆտն ակտիվացվում է Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 2 (երկու) աշխատանքային օրերի ընթացքում,

10.4. Օգտագործված արագ օվերդրաֆտի միջոցները և դրա նկատմամբ հաշվարկված տոկոսները (առկայության դեպքում), գերածախսի գումարը և դրա նկատմամբ հաշվարկված տոկոսները, ինչպես նաև քարտային հաշվի սպասարկման միջնորդավճարը ենթակա են ամբողջությամբ մարման մինչև օվերդրաֆտի գործողության ավարտի օրը (այսուհետ՝ Մարման վերջնաժամկետ): Սակայն, Պայմանագրում նշված բանկային հաշվին դրամական միջոցների յուրաքանչյուր մուտքագրման դեպքում՝ անկախ Մարման վերջնաժամկետից, այդ գումարներից մարվում են օգտագործված արագ օվերդրաֆտի միջոցները և դրա նկատմամբ հաշվարկված տոկոսները, գերածախսի գումարը և դրա նկատմամբ հաշվարկված տոկոսները, ինչպես նաև քարտային հաշվի սպասարկման միջնորդավճարը:

ԳԼՈՒԽ 11 AMERICAN EXPRESS ՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՐՏԵՐՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԱՅԻՆ ԳԻԾ

11.1. Վարկային գիծը տրամադրվում է միանվագ և ակտիվացվում է Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 1 (մեկ) ամսվա ընթացքում,

11.2.Վարկային գծի օգտագործում է համարվում կանխիկ գումարի ստացումը բանկոմատներից ու կանխիկի տրամադրման կետերից, քարտից այլ բանկային հաշիվներին փոխանցումը, վճարումը քարտով,ինչպես նաև Վարկատուին տրամադրված պարբերական վճարման հանձնարարականով կատարված գործառնությունները,

11.3. Տոկոսագումարը հաշվարկվում է յուրաքանչյուր օր՝ Վարկային գծի օգտագործված մասի նկատմամբ: Քարտով կատարված վճարման գործառնությունների գումարի նկատմամբ տոկոսագումարի հաշվարկը սկսվում է տվյալ գործառնությունը Վարկատուի մոտ ձևակերպվելու օրվան հաջորդող ամսվա 21-րդ օրվանից՝ AMERICAN EXPRESS BLUE, AMERICAN EXPRESS GOLD

քարտերի դեպքում կամ 8-րդ օրվանից՝ AMERICAN EXPRESS CASHBACK քարտերի դեպքում: Քարտով կատարված մյուս գործառնությունների դեպքում տոկոսագումարի հաշվարկը սկսվում է տվյալ գործառնությունը Վարկատուի մոտ ձևակերպվելու օրվանից,

11.4. Վարկառուի կողմից Վարկային գծի օգտագործված միջոցների մարման դեպքում, վարկային գիծը մարման չափով վերականգնվում է մինչև մարմանը հաջորդող աշխատանքային օրվա ժամը 18:00-ը,

11.5. Օգտագործված Վարկային գծի միջոցները և դրա նկատմամբ հաշվարկված տոկոսները, գերածախսի գումարը և դրա նկատմամբ հաշվարկված տոկոսները, ինչպես նաև քարտային հաշվի սպասարկման միջնորդավճարը ենթակա են ամբողջությամբ մարման մինչև Վարկային գծի գործողության ավարտի օրվան հաջորդող 14-րդ օրը (այսուհետ՝ Մարման վերջնաժամկետ): Սակայն, Պայմանագրում նշված բանկային հաշվին դրամական միջոցների յուրաքանչյուր մուտքագրման դեպքում՝ անկախ Մարման վերջնաժամկետից, այդ գումարներից մարվում են օգտագործված Վարկային գծի միջոցները և դրա նկատմամբ հաշվարկված տոկոսները, գերածախսի գումարը և դրա նկատմամբ հաշվարկված տոկոսները, ինչպես նաև քարտային հաշվի սպասարկման միջնորդավճարը,

11.6. Վարկային գիծը վճարվում է ոչ հավասարաչափ. յուրաքանչյուր ամսվա համար պարտադիր մարման ենթակա գումարը, որը հաշվարկվում է այդ ամսվա վերջի դրությամբ օգտագործված Վարկային գծի միջոցների նկատմամբ՝ Պայմանագրի՝ Վարկային գծի պարտադիր մարումների հատվածում նշված տոկոսի չափով, վճարվում է այդ ամսվա ավարտից հետո 50 օրվա ընթացքում, ընդ որում՝ պարտադիր մարման ենթակա գումարն առաջնահերթորեն ուղղվում է օգտագործված Վարկային գծի նկատմամբ հաշվարկված տոկոսագումարի, այնուհետև օգտագործված Վարկային գծի մարմանը: 50 օրյա ժամկետում նշված պարտավորությունը չկատարելու դեպքում Վարկառուն պարտավորվում է բացի պարտադիր մարման ենթակա գումարը վճարել նաև տվյալ պահին քարտային հաշվի սպասարկման համար առաջացած դրամային պարտավորությունը, առաջացած գերածախսը և գերածախսի նկատմամբ հաշվարկված տոկոսները: Իսկ քարտի գործողության ժամկետի ավարտից հետո Վարկատուի կողմից քարտը չվերաթողարկելու կամ վերաթողարկված քարտը Վարկառուի կողմից չստանալու պարագայում Վարկառուն պարտավորվում է մինչև քարտի գործողության ժամկետի ավարտից հետո 14 (տասնչորսերորդ) օրն ամբողջությամբ մարել օգտագործված Վարկային գծի գումարը, օգտագործված Վարկային գծի վրա հաշվարկված տոկոսագումարները, քարտային հաշվի սպասարկման համար առաջացած դրամային պարտավորությունը, առաջացած գերածախսը և գերածախսի նկատմամբ հաշվարկված տոկոսները,

11.7.Վարկառուն պարտավորվում է վճարել կանխիկացման միջնորդավճար՝ բանկոմատներից կամ կանխիկի տրամադրման կետերից կանխիկացման գործարքի կատարման համար միջնորդավճար սահմանված լինելու դեպքում: Հաշվին անհրաժեշտ միջոցների բացակայության կամ անբավարարության դեպքում կանխիկացման միջնորդավճարը գանձվում է չօգտագործված վարկային գծի գումարից: Չօգտագործված Վարկային գծի բացակայության կամ անբավարարության դեպքում, միջնորդավճարի գումարը հաշվվում է որպես գերածախս,

11.8. Բոլոր վճարումները կատարվում են Պայմանագրում նշված Վարկառուի բանկային հաշվին կամ վարկային կոդին,

11.9. Վարկառուն իրավունք ունի Վարկային գծի գործողության ընթացքում ամբողջությամբ կամ մասնակի մարել Վարկը և տոկոսները, ինչպես նաև դիմել Վարկատուին իր Վարկային գծի գործողությունը դադարեցնելու համար:

11.10. Վարկատուն իրավունք ունի

11.10.1. առանց Վարկառուի նախնական համաձայնության, փոխանցել Պայմանագրից բխող իր իրավունքներն ու պարտականությունները Ամերիքն Էքսպրեսսի կազմում ներառված կամ վերջինիս կողմից մատնանշված որևէ երրորդ անձի և նման փոխանցումն իրականացնելու համար անհրաժեշտ լինելու դեպքում վերջիններիս տրամադրել տեղեկատվություն Պայմանագրի վերաբերյալ,

11.10.2. ցանկացած պահի Ամերիքն Էքսպրեսսի պահանջով դադարեցնել Պայմանագիրը,

11.10.3. 4.3.1 կետով սահմանված որևէ հանգամանքի առաջացման դեպքում որպես պատասխանատվության միջոց կիրառել նաև քարտի գործողության ժամկետի դադարեցումը:

ԳԼՈՒԽ 12 ԲԻԶՆԵՍ ՎԱՐԿ

12.1.Վարկառուն իրավունք ունի վարկը և հաշվարկված տոկոսագումարները Հավելվածում նշված ժամկետից շուտ ամբողջությամբ կամ մասնակի մարել: Այդ դեպքում Վարկառուն պարտավորվում է վճարել Վարկի փաստացի ժամկետի համար հաշվարկված տոկոսագումարը, իսկ այն դեպքում, երբ Հավելվածով սահմանված հերթական մարումների միջև ընկած ժամանակահատվածում (Հավելվածով սահմանված նախորդ մարման օրվան հաջորդող օրվանից մինչև հերթական վճարման օրը ներառյալ)կատարված մարումների հանրագումարը գերազանցում է Հավելվածով սահմանված հերթական վճարման ենթակա ընդհանուր գումարի (մայր գումար և տոկոսագումար) կրկնապատիկը, Վարկառուն պարտավորվում է վճարել նաև Վաղաժամկետ մարման վճար, որը հաշվարկվում է Հավելվածով սահմանված հերթական վճարման ենթակա ընդհանուր գումարի (մայր գումար և տոկոսագումար) կրկնապատիկը գերազանցող մասի նկատմամբ՝ Վարկավորման հիմնական պայմանների՝ Վաղաժամկետ մարման վճար դաշտում նշված տոկոսի չափով,

(սույն կետը կիրառելի չէ Սպառողական կրեդիտների նկատմամբ)

12.2. Վարկատուն պարտավոր է Վարկի գումարը փոխանցել Պայմանագրում նշված Վարկառուի բանկային հաշվին:

ԳԼՈՒԽ 13 ԲԻԶՆԵՍ ՎԱՐԿԱՅԻՆ ԳԻԾ/ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ԳԻԾ

13.1. Բիզնես վարկային գիծը տրամադրվում է Պայմանագրի վավերապայմաններում նշված Վարկառուի բանկային հաշվով և բիզնես Վարկային գծի օգտագործում է համարվում Վարկառուի կողմից ներկայացված հանձնարարականի հիման վրա տվյալ բանկային հաշվից Վարկային գծի գումարի ելքագրումը, իսկ արտահանման և ներմուծման Վարկային գծի դեպքում՝ Վարկային գծի օգտագործում է համարվում Վարկառուի կողմից ապրանքների ներմուծումը կամ արտահանումը հավաստող փաստաթղթի հիման վրա Վարկատուին ներկայացված հանձնարարականի համաձայն Վարկառուի ընթացիկ հաշվին Վարկային գծի գումարի մուտքագրումը և միաժամանակ Վարկառուի ընթացիկ հաշվից Վարկային գծի գումարի անկանխիկ փոխանցումը ապրանքների ներմուծումը կամ արտահանումը հավաստող փաստաթղթում նշված կողմին: Պայմանագրում նշված Վարկի գումարը Վարկային գծի առավելագույն սահմանաչափն է,

13.2. Վարկատուն պարտավոր է Վարկային գծի գումարը Վարկառուի հանձնարարականի հիման վրա փոխանցել Պայմանագրի վավերապայմաններում նշված Վարկառուի բանկային հաշվին,

13.3. Տոկոսների հաշվարկը կատարվում է օրական՝ Վարկային գծի գումարի օգտագործված մասի նկատմամբ՝ Պայմանագրի վավերապայմաններում նշված Վարկառուի բանկային հաշվից Վարկային գծի գումարի ելքագրման պահից, իսկ արտահանման և ներմուծման Վարկային գծի դեպքում՝ Վարկառուի ընթացիկ հաշվին Վարկային գծի գումարը մուտքագրվելու պահից, չօգտագործված մասի նկատմամբ՝ Վարկային գծի գործողության ժամկետի սկզբից,

13.4. Վարկառուի կողմից Վարկային գծի օգտագործված գումարի մարման դեպքում, Վարկային գիծը մարման չափով վերականգնվում է մինչև մարմանը հաջորդող աշխատանքային օրը,

13.5. Վարկային գծի վերադարձը և տոկոսների վճարումը կատարվում է Վարկային գծի գործողության ժամկետի ավարտի օրը ներառյալ,

13.6. Վարկառուն իրավունք ունի վարկը և հաշվարկված տոկոսագումարները Պայմանագրում կամ Հավելվածում նշված ժամկետից շուտ ամբողջությամբ կամ մասնակի մարել,

13.7. Արտահանման և ներմուծման վարկային գծերի դեպքում գործում են հետևյալ առանձնահատկությունները.

13.7.1. Եթե Վարկառուն Վարկային գծի ժամկետի ավարտի օրվա դրությամբ ամբողջությամբ չի մարել Վարկային գծի գումարը, սակայն ամբողջությամբ մարել է հաշվարկված տոկոսագումարները, ապա չմարված Վարկային գծի գումարի չափով Վարկառուն համարվում է նոր վարկ ստացած հետևյալ պայմաններով՝ 12 ամիս ժամկետով և Պայմանագրով սահմանված՝ Վարկային գծի չմարման դեպքում ձևակերպվող վարկի տարեկան տոկոսադրույքով: Վարկային գծի չմարման դեպքում ձևակերպվող վարկի տոկոսների հաշվարկը կատարվում է օրական՝ այդ վարկի ստացման պահից, վարկի նվազող մնացորդի վրա, իսկ վարկի և տոկոսագումարների մարումները կատարվում են հավասարաչափ՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելվածում (այսուհետ՝ Հավելված) սահմանված մարման գրաֆիկի, որը Վարկառուին կարող է տրամադրվել առձեռն կամ ուղարկվել Պայմանագրում նշված Վարկառուի էլեկտրոնային հասցեին,

13.7.2. Վարկային գծի չմարման դեպքում ձևակերպվող Վարկը և տոկոսագումարները ժամկետից շուտ մարելու դեպքում Վարկառուն պարտավորվում է վճարել տվյալ վարկի փաստացի ժամկետի համար հաշվարկված տոկոսագումարը, իսկ այն դեպքում, երբ Հավելվածով սահմանված հերթական մարումների միջև ընկած ժամանակահատվածում (նախորդ մարման օրվան հաջորդող օրվանից մինչև հերթական վճարման օրը ներառյալ) կատարված մարումների հանրագումարը գերազանցում է Հավելվածով սահմանված մարման գրաֆիկով նախատեսված հերթական վճարման ենթակա ընդհանուր գումարի (մայր գումար և տոկոսագումար) կրկնապատիկը, Վարկառուն պարտավորվում է վճարել նաև Վաղաժամկետ մարման վճար, որը հաշվարկվում է հերթական վճարման ենթակա ընդհանուր գումարի (մայր գումար և տոկոսագումար) կրկնապատիկը գերազանցող մասի նկատմամբ՝ Վարկավորման հիմնական պայմանների՝ Վաղաժամկետ մարման վճար դաշտում նշված տոկոսի չափով:

ԳԼՈՒԽ 14 ՕՎԵՐԴՐԱՖՏ

14.1.Տոկոսների հաշվարկը կատարվում է օրական՝ Օվերդրաֆտի օգտագործված մասի նկատմամբ՝ Վարկառուի բանկային հաշվից վճարում կատարելու պահից: Պայմանագրում նշված Վարկի գումարը Օվերդրաֆտի առավելագույն սահմանաչափն է,

14.2. Յուրաքանչյուր ամսվա վերջի դրությամբ օգտագործված Օվերդրաֆտի գումարը մարվում է մինչև այդ ամսվան հաջորդող ամսվա 25-ը,

14.3. Վարկառուի կողմից Օվերդրաֆտի օգտագործված գումարի մարման դեպքում, օվերդրաֆտը մարման չափով վերականգնվում է մինչև մարմանը հաջորդող աշխատանքային օրը,

14.4. Վարկառուն մինչև Օվերդրաֆտի գործողության ժամկետի ավարտի օրը ներառյալ պետք է ամբողջությամբ վճարի Օվերդրաֆտի օգտագործված գումարը, հաշվարկված տոկոսագումարներն ու տուժանքները,

14.5. Օվերդրաֆտի գումարը վերադարձվում է, իսկ տոկոսագումարներն ու տուժանքը վճարվում են Վարկառուի՝ Պայմանագրում նշված Բանկային հաշվին կամ Պայմանագրի վավերապայմաններում նշված վարկային կոդին դրամական միջոցներ մուտքագրելու միջոցով: Վարկատուն մուտքագրված միջոցները անակցեպտ կարգով ուղում է Վարկառուի պարտավորությունների մարմանը,

14.6. Վարկառուն իրավունք ունի Օվերդրաֆտի գումարը և հաշվարկված տոկոսագումարները Պայմանագրում նշված ժամկետից շուտ ամբողջությամբ կամ մասնակի մարել:

ԳԼՈՒԽ 15 «ԱՊԱՌԻԿ ՏԵՂՈՒՄ» ՎԱՐԿ

15.1. Տարաժամկետ վճարման պայմանով ապրանքի առուվաճառքի կամ տարաժամկետ վճարման պայմանով ծառայությունների մատուցման պայմանագրից բխող Վաճառողի/Կատարողի իրավունքները դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգ) պայմանագրով Բանկին զիջվելու պահից Բանկի և Գնորդի/Պատվիրատուի հարաբերությունների նկատմամբ կիրառելի են դառնում սույն փաստաթղթով սահմանված բոլոր դրույթները,

15.2. Տոկոսների հաշվարկը կատարվում է օրական Վարկի գումարի նվազող մնացորդի վրա՝ Վարկի գումարը Վարկատուի մոտ բացված Վաճառողի կամ Կատարողի ֆակտորինգային հաշվին մուտքագրելու պահից,

15.3. Տարաժամկետ վճարման պայմանով ապրանքի առուվաճառքի պայմանագրով նախատեսված ապրանքը Գնորդին հանձնելու պահից այն համարվում է գրավադրված Վաճառողի մոտ մինչև Գնորդի կողմից նշված պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջական և պատշաճ կատարումը: Ընդ որում, Վաճառողի իրավունքները դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգ) պայմանագրով Վարկատուին զիջվելու դեպքում, զիջվում է նաև Վաճառողի գրավի իրավունքը:

15.4. Տարաժամկետ վճարման պայմանով ապրանքի առուվաճառքի պայմանագրի կնքման դեպքում Վաճառողը պարտավորվում է.

15.4.1. Պայմանագրի կնքման օրը Գնորդին հանձնել Ապրանքը՝ դրա պատկանելիքների և դրան վերաբերող փաստաթղթերի հետ միասին,

15.4.2. Իրականացնել Ապրանքի երաշխիքային սպասարկումը՝ այդպիսին նախատեսված լինելու դեպքում: Ընդ որում, Վաճառողի կողմից սույն ենթակետով սահմանված պարտականությունները չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը չի կարող Գնորդի համար հիմք հանդիսանալ Պայմանագրով իր կողմից ստանձնված պարտականությունները չկատարելու, ոչ պատշաճ կատարելու կամ հաշվանց կատարելու համար,

15.4.3. Պայմանագրով իր բոլոր իրավունքները փոխանցել Բանկին:

15.5. Տարաժամկետ վճարման պայմանով ծառայությունների մատուցման պայմանագրի կնքման դեպքում Կատարողը պարտավորվում է.

15.5.1. Պայմանագրի կնքման օրը Պատվիրատուին հանձնել Ծառայությունների մատուցման նախահաշիվ և/կամ հաշիվ-ապրանքագիր,

15.5.2. Պայմանագրով իր բոլոր իրավունքները փոխանցել Բանկին,

15.6. Տարաժամկետ վճարման պայմանով ապրանքի առուվաճառքի պայմանագրի կնքման դեպքում Գնորդը, իսկ Տարաժամկետ վճարման պայմանով ծառայությունների մատուցման պայմանագրի կնքման դեպքում՝ Պատվիրատուն պարտավորվում է.

15.6.1. Վաճառողից ընդունել Ապրանքը, իսկ Կատարողից ընդունել Ծառայությունների մատուցումը,

15.6.2. Բանկի պահանջով ներկայացնել իր վարկարժանության գնահատման համար անհրաժեշտ փաստաթղթեր,

15.7. Գնորդը/Պատվիրատուն Պայմանագրի ստորագրմամբ տալիս է իր համաձայնությունն առ այն, որ Պայմանագրի համարը հեռախոսի միջոցով Բանկին հայտնելու դեպքում վերջինիս կողմից տրամադրվի Պայմանագրի հետ կապված ցանկացած տեղեկատվություն:

ԳԼՈՒԽ 16 ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌԵԼԻ ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ

16.1. Վարկառուն իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը դրա կնքմանը հաջորդող 7 (յոթ) աշխատանքային օրերի ընթացքում: Այդ դեպքում Վարկառուն պարտավորվում է Վարկի գումարը օգտագործելու համար Վարկատուին վճարել տոկոսներ, որոնք հաշվարկվում են տարեկան փաստացի տոկոսադրույքին համապատասխան (քարտային վարկային գծի դեպքում՝ տոկոսները հաշվարկվում են Վարկային գծի օգտագործման

գործարքը Վարկատուի մոտ ձևակերպվելու պահից մինչև Պայմանագրի լուծման պահը՝ տարեկան փաստացի տոկոսադրույքին համապատասխան)

16.2. Վարկառուն իրավունք ունի Վարկը և տոկոսները ժամկետից շուտ ամբողջությամբ կամ մասնակի մարել: Ժամկետից շուտ մարելու դեպքում Վարկառուն վճարում է Վարկի փաստացի ժամկետի համար հաշվարկված տոկոսներ, իսկ Վարկավորման ընդհանուր ծախսը նվազեցվում է հետևյալ կերպ. ***Պայմանագրով սահմանված միջնորդավճարները (առկայության դեպքում) նվազեցվում են (քարտային վարկային գծերի դեպքում քարտային հաշվի սպասարկման միջնորդավճարը նվազեցվում է, եթե վարկային գիծը ամբողջական վաղաժամկետ մարելուց հետո Վարկառուի կողմից տվյալ քարտը չի օգտագործվելու), իսկ Վարկավորման ընդհանուր ծախսի մեջ ներառվող մյուս վճարները՝ նոտարական վավերացման, պետական գրանցման, գույքի գնահատման, ապահովագրության, եթե առկա են, և այլ վճարներ,որոնք չեն հանդիսանում Վարկատուի եկամուտը,նվազեցման ենթակա չեն:***

16.3. Քաղվածքը, ինչպես նաև «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքով և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով սահմանված պարտադիր ներկայացման տեղեկատվությունը ուղարկվում են Վարկառուի՝ Պայմանագրում նշված էլեկտրոնային հասցեին (առկայության դեպքում): Այն դեպքում, երբ Վարկառուն «Ճանաչիր հաճախորդիդ» հարցաթերթիկում նշում է այլ էլեկտրոնային հասցե, ապա քաղվածքը և վերը նշված պարտադիր ներկայացման տեղեկատվությունը ուղարկվում են «Ճանաչիր հաճախորդիդ» հարցաթերթիկում նշված էլեկտրոնային հասցեին:

16.4. Վարկատուի և Վարկառուի իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի է սույն փաստաթղթի Հավելված 1-ով սահմանված՝ «Ինչ անել, եթե բողոք ունեք» ձևաթուղթը: Պայմանագրի ստորագրմամբ Վարկառուն հավաստիացնում է, որ իրեն տրամադրվել է նշված ձևաթուղթը և ինքը ծանոթացել է դրա բովանդակությանը:

ԳԼՈՒԽ 17 ԵՐԱՇԽԻՔ

17.1. Երաշխիքով Երաշխիք տված անձը գրավոր պարտավորություն է ստանձնում Բենեֆիցիարի (անուղղակի Երաշխիքի դեպքում՝ Թողարկող բանկի) հանդեպ Երաշխիքով ստանձնած պարտավորության պայմաններին համապատասխան Բենեֆիցիարին (անուղղակի Երաշխիքի դեպքում՝ Թողարկող բանկին) վճարել դրամական գումար՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ներկայացնելիս:

17.2. Անուղղակի Երաշխիքի դեպքում՝ Թողարկող բանկը Երաշխիք տված անձի խնդրանքով հօգուտ Բենեֆիցիարի տրամադրում է Երաշխիք՝ Երաշխիք տված անձի կողմից սահմանված ժամկետով՝ Երաշխիք տված անձի կողմից տրամադրված Երաշխիքի վերջնաժամկետից նվազագույնը 15 (տասնհինգ) օր շուտ:

17.3. Երաշխիքի տրամադրման համար վճարվող ծառայության վճարը պետք է լինի ոչ պակաս, քան Երաշխիքի տրամադրման պահին Երաշխիք տված անձի գործող սակագներով սահմանված նվազագույն սահմանաչափը, և ոչ ավել, քան Երաշխիքի տրամադրման պահին Երաշխիք տված անձի գործող սակագներով սահմանված առավելագույն սահմանաչափը:

17.4. Պրինցիպալը Պայմանագրի կնքման պահին իր բանկային հաշվում ապահովում է Երաշխիքի տրամադրման համար վճարվող ծառայության վճարի չափով գումար, որը Պրինցիպալի համաձայնությամբ դեպոնացվում է Երաշխիք տված անձի կողմից և ենթակա է ինքնուրույն և անակցեպտ կարգով գանձման Երաշխիքի փաստացի տրամադրման պահին:

17.5. Անուղղակի Երաշխիքի դեպքում՝ Պրինցիպալը Երաշխիքի տրամադրման պահին իր բանկային հաշվում ապահովում է Երաշխիք տված անձի կողմից սահմանված չափով գումար, որը դեպոնացվում է Պրինցիպալի համաձայնությամբ՝ ի ապահովումն Թողարկող բանկի և Երաշխիքի տրամադրման և սպասարկման գործընթացին մասնակից միջնորդ բանկի(երի) (այսուհետ՝ Միջնորդ բանկ)՝ կողմից Երաշխիքի տրամադրման և սպասարկման հետ կապված ծառայությունների մատուցման միջնորդավճարների վճարման:

17.6. Պրինցիպալի կողմից Երաշխիք տված անձին Երաշխիքի տրամադրման համար վճարվող ծառայության վճարը, անկախ Երաշխիքի գործողության փաստացի ժամկետից, ենթակա չէ վերահաշվարկման և վերադարձման:

17.7. Կողմերը հավաստիացնում են, որ

17.7.1. Պայմանագրի կնքման և պատշաճ կատարման համար անհրաժեշտ չեն պետական թույլտվություններ, լիցենզիաներ, արտոնագրեր, գրանցումներ կամ այլ փաստաթղթեր,

17.7.2. Պայմանագրի կնքումը, նրա մեջ սահմանված դրույթները՝

ա) չեն խախտում ՀՀ օրենսդրությունը և այլ նորմատիվ-իրավական ակտեր,

բ) չեն խախտում այլ պայմանագրերի, համաձայնագրերի դրույթներ կամ պահանջներ, որոնց մասնակիցը հանդիսանում են Կողմերը:

17.8. Պրինցիպալը հավաստիացնում է, որ Երաշխիք տված անձի պահանջով վերջինիս կտրամադրի անհրաժեշտ արտոնագրերի և թույլտվությունների, ինչպես նաև Երաշխիք տված անձի կողմից պահանջվող այլ փաստաթղթերի պատճենները:

17.9. Երաշխիք տված անձը պարտավորվում է՝

17.9.1. Պայմանագրով սահմանված պայմաններին և Պրինցիպալի դիմումին համապատասխան տրամադրել Երաշխիք հօգուտ Բենեֆիցիարի (անուղղակի Երաշխիքի դեպքում՝ հօգուտ Թողարկող բանկի),

17.9.2. Երաշխիքի պայմաններին և Պրինցիպալի դիմումին համապատասխան դիմել Միջնորդ բանկերին (անուղղակի Երաշխիքի դեպքում՝ Թողարկող բանկին՝ հօգուտ Բենեֆիցիարի)՝ Երաշխիքի տրամադրման և սպասարկման հետ կապված ծառայությունների մատուցման խնդրանքով,

17.9.3. վճարել կամ փոխհատուցել Երաշխիքի տրամադրման և սպասարկման գործընթացին մասնակից Միջնորդ բանկի, իսկ անուղղակի Երաշխիքի դեպքում՝ նաև Թողարկող բանկի միջնորդավճարները՝ համաձայն վերջիններիս կողմից ներկայացված միջնորդավճար(ներ)ի վճարման պահանջագրերի,

17.9.4. քննարկել Երաշխիքի գումարի սահմաններում դրամական գումարի վճարման Բենեֆիցիարի (անուղղակի Երաշխիքի դեպքում՝ Թողարկող բանկի) գրավոր պահանջը և դրան կից ներկայացվող Երաշխիքում նշված փաստաթղթերը Երաշխիքում նշված ժամկետում, իսկ դրա բացակայության դեպքում՝ ողջամիտ ժամկետում, և բարեխիղճ հոգատարություն ցուցաբերել՝ պարզելու համար Բենեֆիցիարի (անուղղակի Երաշխիքի դեպքում՝ Թողարկող բանկի) պահանջի համապատասխանությունը Երաշխիքով սահմանված պայմաններին,

17.9.5. մինչև Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտը Երաշխիքի գումարի սահմաններում դրամական գումարի վճարման Բենեֆիցիարի (անուղղակի Երաշխիքի դեպքում՝ Թողարկող բանկի) գրավոր պահանջի և դրան կից ներկայացվող Երաշխիքում նշված փաստաթղթերի Երաշխիքով սահմանված պայմաններին համապատասխանության դեպքում՝ վճարել Բենեֆիցիարի (անուղղակի երաշխիքի դեպքում՝ Թողարկող բանկի) կողմից պահանջվող դրամական գումարը Երաշխիքում նշված ժամկետում, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ ողջամիտ ժամկետում,

17.9.6. մերժել Երաշխիքի գումարի սահմաններում ցանկացած դրամական գումարի վճարման Բենեֆիցիարի (անուղղակի Երաշխիքի դեպքում՝ Թողարկող բանկի) գրավոր պահանջը՝ Բենեֆիցիարին անհապաղ տեղեկացնելով մերժման մասին, եթե դրամական գումարի վճարման Բենեֆիցիարի (անուղղակի Երաշխիքի դեպքում՝ Թողարկող բանկի) գրավոր պահանջը և դրան կից ներկայացվող Երաշխիքում նշված փաստաթղթերը չեն համապատասխանում Երաշխիքով սահմանված պայմաններին կամ Երաշխիք տված անձին են ներկայացվել Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո,

17.9.7. Երաշխիք տված անձին, մինչև Բենեֆիցիարի (անուղղակի Երաշխիքի դեպքում՝ Թողարկող բանկի) պահանջը բավարարելը, Երաշխիքով ապահովված հիմնական պարտավորությունը լրիվ կամ համապատասխան մասով կատարված լինելու, այլ հիմքերով դադարելու կամ անվավեր լինելու մասին հայտնի դառնալու պարագայում՝ այդ մասին անհապաղ տեղեկացնել Բենեֆիցիարին (անուղղակի Երաշխիքի դեպքում՝ Թողարկող բանկին) և Պրինցիպալին,

17.9.8. Սույն պայմանների 17.9.7. ենթակետով սահմանված տեղեկացումից հետո Բենեֆիցիարից (անուղղակի Երաշխիքի դեպքում՝ Թողարկող բանկից) կրկնակի պահանջ ստանալու պարագայում՝ բավարարել ստացված պահանջը:

17.10. Երաշխիք տված անձը իրավունք ունի՝

17.10.1. Անկախ արժույթի տեսակից Պրինցիպալի բոլոր բանկային հաշիվներից ինքնուրույն և անակցեպտ կարգով գանձել Երաշխիքի տրամադրման և սպասարկման Երաշխիք տված անձի գործող սակագներով սահմանված, ինչպես նաև Երաշխիքի տրամադրման և սպասարկման գործընթացին մասնակից Միջնորդ բանկի (անուղղակի երաշխիքի դեպքում՝ նաև Թողարկող բանկի) կողմից մատուցվող ծառայությունների միջնորդավճարները: Ընդ որում՝

17.10.1.1. Երաշխիքի տրամադրման և սպասարկման հետ կապված Երաշխիք տված անձին վճարման ենթակա միջնորդավճարներն առաջնահերթ կարգով գանձվում են Պրինցիպալի դրամային հաշվից/հաշիվներից, իսկ Պրինցիպալի դրամային հաշվում/հաշիվներում համապատասխան միջոցների բացակայության կամ անբավարարության դեպքում՝ Պրինցիպալի արտարժութային հաշիվներից: Վերջին դեպքում արտարժույթի առքն ու վաճառքը կատարվում է տվյալ օրվա համար Երաշխիք տված անձի սահմանած փոխարժեքով,

17.10.1.2. Երաշխիքի տրամադրման և սպասարկման գործընթացին մասնակից Միջնորդ բանկի (անուղղակի Երաշխիքի դեպքում՝ նաև Թողարկող բանկի) միջնորդավճարներն առաջնահերթ կարգով գանձվում են Պրինցիպալի համապատասխան արտարժութային հաշվից/հաշիվներից, իսկ Պրինցիպալի համապատասխան արտարժութային հաշվում/հաշիվներում միջոցների բացակայության կամ անբավարարության դեպքում՝ Պրինցիպալի՝ Երաշխիք տված անձի մոտ բացված այլ հաշիվներից: Վերջին դեպքում արտարժույթի առքն ու վաճառքը կատարվում է տվյալ օրվա համար Երաշխիք տված անձի սահմանած փոխարժեքով,

17.10.2. Երաշխիք տված անձի մոտ բացված Պրինցիպալի բանկային հաշիվներում Երաշխիքի տրամադրման և սպասարկման միջնորդավճարների գանձման համար բավարար միջոցների բացակայության դեպքում Պրինցիպալին ներկայացնել Երաշխիքի պայմաններին համապատասխան Երաշխիքի տրամադրման և սպասարկման հետ կապված Երաշխիք տված անձին վճարման ենթակա միջնորդավճար(ներ)ի վճարման, ինչպես նաև Միջնորդ բանկին (անուղղակի Երաշխիքի դեպքում՝ նաև Թողարկող բանկին) Երաշխիք տված անձի կողմից վճարված միջնորդավճար(ներ)ի փոխհատուցման պահանջ,

17.10.3. Բենեֆիցիարի (անուղղակի Երաշխիքի դեպքում՝ Թողարկող բանկի) օրինական գրավոր պահանջի համաձայն վերջինիս Պայմանագրով սահմանված պահանջների պահպանմամբ Երաշխիքի գումարն ամբողջությամբ կամ մասնակիորեն վճարելու դեպքում՝ անակցեպտ կարգով գանձել Երաշխիքի վճարված գումարը, ինչպես նաև Պայմանագրով սահմանված կարգով և չափով հաշվարկված տոկոսագումարները և տուժանքը (դրանց առկայության դեպքում) Երաշխիք տված անձի մոտ բացված Պրինցիպալի բոլոր, այդ թվում՝ արտարժութային հաշիվներից: Ընդ որում, արտարժույթի առքն ու վաճառքը կատարվում է տվյալ օրվա համար Երաշխիք տված անձի սահմանած փոխարժեքով,

17.10.4. Երաշխիքի գումարի վճարումից հրաժարվելը վիճարկվելու դեպքում դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիման վրա Երաշխիք տված անձի կողմից Բենեֆիցիարին վճարված և/կամ վճարման ենթակա Երաշխիքի գումարը, ինչպես նաև Պայմանագրով սահմանված կարգով և չափով հաշվարկված տոկոսագումարները և տուժանքը (դրանց առկայության դեպքում) անակցեպտ կարգով գանձել Երաշխիք տված անձի մոտ բացված Պրինցիպալի բոլոր, այդ թվում՝ արտարժութային հաշիվներից: Ընդ որում, արտարժույթի առքն ու վաճառքը կատարվում է տվյալ օրվա համար Երաշխիք տված անձի սահմանած փոխարժեքով,

17.10.5. Պրինցիպալի բանկային հաշիվներում անհրաժեշտ միջոցների անբավարարության դեպքում Բենեֆիցիարին (անուղղակի Երաշխիքի դեպքում՝ Թողարկող բանկին) սույն պայմանների 17.10.3 և 17.10.4. ենթակետերով սահմանված կարգով Երաշխիքի վճարված և/կամ վճարման ենթակա գումարը վճարելու պահանջ ներկայացնել Պրինցիպալին՝ 14 (տասնչորս) օրացուցային օր մարման ժամկետով՝ նշված գումարը ձևակերպելով որպես Երաշխիք տված անձի հանդեպ Պրինցիպալի պարտավորություն և նշված ժամկետում Պրինցիպալի պարտավորության նկատմամբ

հաշվեգրել տոկոսներ՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկի չափով,

17.10.6. Սույն պայմանների 17.10.5 ենթակետում նշված պարտավորությունը Պրինցիպալի կողմից 14-օրյա (տասնչորսօրյա) ժամկետում չմարելու դեպքում՝ նշված գումարի նկատմամբ հաշվարկել իր կողմից միակողմանիորեն սահմանված Տուժանքը:

17.10.7. Սույն պայմանների 17.10.6 ենթակետով նախատեսված ժամկետանց պարտավորության առաջացման պահից ի ապահովումն Պայմանագրով Պրինցիպալի ստանձնած պարտավորությունների կատարման գրավ դրված գույքի վրա առանց դատարան դիմելու բռնագանձում տարածել և իրացնել այն: Եթե գրավ դրված գույքի իրացումից ստացված գումարը բավարար չէ Երաշխիք տված անձի պահանջները բավարարելու համար, պահանջի չբավարարված մասի գումարը ստանալ Պրինցիպալի այլ գույքի իրացումից,

17.10.8. Պրինցիպալի կողմից սույն պայմանների 17.12.1 ենթակետով վերապահված իրավունքից օգտվելու պարագայում Պրինցիպալից գանձել ծառայության միջնորդավճար Երաշխիք տված անձի մոտ գործող սակագներով սահմանված չափով, ինչպես նաև Միջնորդ բանկին (անուղղակի երաշխիքի դեպքում՝ նաև Թողարկող բանկին) վճարման ենթակա միջնորդավճար՝ սույն պայմանների 17.10.1 ենթակետով սահմանված կարգով,

17.11. Պրինցիպալը պարտավորվում է՝

17.11.1. ապահովել Բենեֆիցիարի հանդեպ ստանձնած և Երաշխիքով ապահովված պարտավորությունների պատշաճ, ժամանակին և ամբողջ ծավալով կատարումը,

17.11.2. վճարել Երաշխիք տված անձի կողմից Երաշխիքի գումարի սահմաններում ցանկացած դրամական գումարի Բենեֆիցիարի (անուղղակի Երաշխիքի դեպքում՝ Թողարկող բանկի) օրինական գրավոր պահանջի դիմաց Պայմանագրով սահմանված պահանջների պահպանմամբ վերջինիս վճարված Երաշխիքի գումարը, Պայմանագրով սահմանված կարգով և չափով հաշվարկված տոկոսագումարները և տուժանքը,

17.11.3. Երաշխիքի գումարի վճարումից հրաժարվելը վիճարկվելու դեպքում վճարել դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիման վրա կամ որևէ այլ իրավասու մարմնի կողմից կայացված ակտի հիման վրա Երաշխիք տված անձի կողմից Բենեֆիցիարին վճարված և/կամ վճարման ենթակա Երաշխիքի գումարը, Պայմանագրով սահմանված կարգով և չափով հաշվարկված տոկոսագումարները և տուժանքը,

17.11.4. փոխհատուցել Երաշխիքի պայմաններին համապատասխան Երաշխիքի տրամադրման և սպասարկման հետ կապված Երաշխիք տված անձի կրած բոլոր ծախսերը, ինչպես նաև Երաշխիք տված անձի կողմից Միջնորդ բանկին (անուղղակի Երաշխիքի դեպքում՝ նաև Թողարկող բանկին) վճարված միջնորդավճար(ներ)ը,

17.11.5. Պրինցիպալի դիմումի համաձայն գործող Երաշխիքի գումարի ավելացման կամ Երաշխիքի գործողության ժամկետի երկարաձգման դեպքում Երաշխիք տված անձին վճարել Երաշխիքի գործողության երկարաձգվող ժամկետի, ինչպես նաև Երաշխիքի ավելացվող գումարի նկատմամբ Պայմանագրով սահմանված տոկոսադրույքով հաշվարկված ծառայության վճարը:

17.12. Պրինցիպալը իրավունք ունի՝

17.12.1. դիմել Երաշխիք տված անձին՝ գործող Երաշխիքով սահմանված պայման(ներ)ի փոփոխության համար,

17.13. պահանջել Երաշխիք տված անձից Երաշխիքի սպասարկման գործընթացին մասնակից Միջնորդ բանկին (անուղղակի Երաշխիքի դեպքում՝ նաև Թողարկող բանկին) վճարման ենթակա միջնորդավճար(ներ)ի վճարման պահանջագրերի պատճենները:

17.14. Պրինցիպալը Երաշխիք տված անձին պարբերաբար տրամադրում է բոլոր այն փաստաթղթերը (կատարման ակտ, վճարման հանձնարարագրեր և այլն), որոնք անհրաժեշտ են Պրինցիպալի կողմից Երաշխիքով ապահովված պարտավորությունների կատարումը, գրավի առարկայի առկայությունը, որակը, քանակը, վիճակը և պահպանման պայմանները վերահսկելու համար:

17.15. Երաշխիք տված անձի՝ Երաշխիքով ստանձնած պարտավորությունը դադարում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում:

ԳԼՈՒԽ 18 ՖԱԿՏՈՐԻՆԳ

18.1. Ֆինանսավորման միջնորդավճարը հաշվարկվում է զիջվող դրամական պահանջի գումարից, իսկ Համայնքների նկատմամբ ֆակտորինգի դեպքում՝ Ֆինանսավորման միջնորդավճարը հաշվարկվում է օրական՝ Հաճախորդի և կապալառուի միջև կնքված կապալի պայմանագրում (այսուհետ՝ Կապալի պայմանագիր) նշված ֆինանսավորման մնացորդային գումարի վրա:

18.2. Ռեգրեսային ֆակտորինգի դեպքում՝ Հաճախորդը Ֆինանսական գործակալի առջև համապարտ պատասխանատվություն է կրում Պայմանագրում նշված պարտավորությունը լրիվ ծավալով կատարելու համար, ներառյալ՝ ֆինանսավորման գումարը, տոկոսները, միջնորդավճարը, տուժանքը, պարտքը բռնագանձելու կապակցությամբ դատական ծախսերը և Պարտապանի կողմից պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով առաջացած Ֆինանսական գործակալի այլ վնասները:

Ընդ որում՝ փակ ֆակտորինգի դեպքում՝ սույն դրույթի շրջանակներում, Լրացուցիչ պայմանագրի 2-րդ կետում նշված պարտավորության չկատարում կամ ոչ պատշաճ կատարում է համարվում նաև ի կատարումն Լրացուցիչ պայմանագրի 2-րդ կետում նշված պարտավորության Հաճախորդի բանկային հաշվին/հաշիվներին դրամական միջոցների չփոխանցման կամ ոչ բավարար չափով փոխանցման կամ փոխանցված գումարների՝ անակցեպտ գանձման անհնարինության արդյունքում սույն պայմանների 18.3 կետով սահմանված կարգով մարումների չիրականացումը:

18.3. Փակ ֆակտորինգի դեպքում՝ Պայմանագրով Հաճախորդը Ֆինանսական գործակալին տալիս է իր համաձայնությունը, որ Հաճախորդի բանկային հաշվին/հաշիվներին ի կատարումն Լրացուցիչ պայմանագրի 2-րդ կետում նշված պարտավորության փոխանցվող դրամական միջոցներն անակցեպտ գանձվեն Ֆինանսական գործակալի կողմից և ուղղվեն դրամական պահանջի զիջման արդյունքում Ֆինանսական գործակալի հանդեպ Լրացուցիչ պայմանագրի 2-րդ կետում նշված պարտավորության մարմանը: Ընդ որում, նշված անակցեպտ գանձումները և մարումները Ֆինանսական գործակալի կողմից կարող են կատարվել այդ պարտավորությունների կատարման վերջնաժամկետին կամ նախքան վերջնաժամկետի լրանալը:

18.4. Հաճախորդը, իսկ գյուղացիական տնտեսություն վարող ֆիզիկական անձանց ֆակտորինգի դեպքում՝ Պարտապանը Ֆինանսավորման համար պարտավորվում է ներկայացնել զիջվող դրամական պահանջի իրավունքը հավաստող փաստաթղթերը, որոնք թույլ կտան Ֆինանսական գործակալին ստուգել զիջվող պահանջի իրական լինելը.

18.4.1. Հաշիվ-ապրանքագիր՝ բնօրինակ (առկայության դեպքում),

18.4.2. տրանսպորտային բեռնագիր՝ բնօրինակ (առկայության դեպքում),

18.4.3. արտահանման բեռնամաքսային հայտարարագիր՝ պատճենը (առկայության դեպքում),

18.4.4. ապրանքի/ծառայության հանձնման-ընդունման ակտ՝ ստորագրված Պարտապանի և Հաճախորդի կողմից, որի ձևանմուշը հաստատվում է Ֆինանսական գործակալի կողմից՝ բնօրինակ և/կամ լուսապատճեն,

18.4.5. ՀԱԱԳ-ի կողմից տրված ապահովագրական վկայագիր (այսուհետ՝ Ապահովագրական վկայագիր)՝ բնօրինակ (առկայության դեպքում),

18.4.6. Համայնքների նկատմամբ ֆակտորինգի դեպքում՝ նաև էներգաուդիտի դրական եզրակացություն,

18.4.7. Ֆինանսական գործակալի պահանջով այլ փաստաթղթեր:

18.5. Ֆինանսական գործակալը սույն պայմանների 18.4. կետում նշված փաստաթղթերը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ստուգում է դրանք և հավաստիանալով, որ դրամական պահանջն իրական է՝ ֆինանսավորում կատարելու մասին որոշում է կայացնում:

18.6. Ֆինանսավորումը կատարվում է, և դրամական պահանջը Ֆինանսական գործակալին է փոխանցվում Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող ֆինանսավորման մասին Հայտ-համաձայնագրի (այսուհետ՝ Հայտ-համաձայնագիր), իսկ գյուղացիական տնտեսություն վարող ֆիզիկական անձանց ֆակտորինգի դեպքում՝ սույն պայմանների 18.4.4. ենթակետում նշված ապրանքի/ծառայության հանձնման-ընդունման ակտի հիման վրա:

18.7. Սույն պայմանների 18.5. կետով սահմանված կարգով ֆինանսավորում կատարելու մասին որոշում կայացնելուց հետո 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում Ֆինանսական գործակալը Հաճախորդի բանկային հաշվին է փոխանցում Ֆինանսավորման գումարը:

18.8. Զիջվող դրամական պահանջի և ֆինանսավորման գումարի արժույթների տարբերության դեպքում ֆինանսավորման գումարի փոխարկումն այլ արժույթի կատարվում է փաստացի ֆինանսավորման օրվա դրությամբ Ֆինանսական գործակալի կողմից սահմանված արտարժույթի վաճառքի փոխարժեքով:

18.9. Արտահանման ֆակտորինգի դեպքում՝ պարտավորության կատարման վերջնաժամկետ է համարվում Հաճախորդի և Պարտապանի միջև կնքված արտահանման պայմանագրով սահմանված պարտավորության կատարման վերջնաժամկետին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

18.10. Ֆինանսավորման գումարի վերադարձը կատարվում է Պարտապանի կողմից, իսկ Լրացուցիչ պայմանագրի 2-րդ կետում նշված չափով միջնորդավճարի և տոկոսագումարների վճարումը կատարվում է Հաճախորդի կողմից, եթե այլ բան նախատեսված չէ Հայտ-համաձայնագրով: Ընդ որում, Ֆինանսավորման գումարի վերադարձը և տոկոսագումարների վճարումը կատարվում է Պարտապանի կողմից Ֆինանսական գործակալին (փակ ֆակտորինգի դեպքում՝ Հաճախորդին) վճարված գումարներից:

18.11. Համայնքների նկատմամբ ֆակտորինգի դեպքում՝ Ֆինանսավորման գումարի վերադարձը և Լրացուցիչ պայմանագրի 2-րդ կետում նշված չափով միջնորդավճարի և տոկոսագումարների վճարումը կատարվում է Պարտապանի կողմից յուրաքանչյուր եռամսյակ՝ համաձայն Կապալի պայմանագրի: Ընդ որում, Ֆինանսավորման գումարի վաղաժամկետ մարման դեպքում միջնորդավճարը չի վերահաշվարկվում:

18.12. Պարտավորությունների կատարման վերջնաժամկետին կամ դրանից հետո մարումներ կատարելիս առաջնահերթության կարգով վճարվում են Վարկի գումարի, տոկոսագումարների և/կամ միջնորդավճարի նկատմամբ հաշվարկված տուժանքը, ժամկետանց տոկոսագումարը, ժամկետանց միջնորդավճարը, ժամկետանց Վարկի գումարը, այնուհետև՝ տոկոսագումարը, միջնորդավճարը և Վարկի գումարը, իսկ նախքան պարտավորությունների կատարման վերջնաժամկետը կատարված մարումներն ուղղվում են Վարկի գումարի նվազեցմանը, եթե առկա չէ հերթական մարման հանձնարարական կամ Պայմանագրի շրջանակներում ժամկետանց պարտավորություն (նշված դեպքերում մարումները կատարվում են վերը նկարագրված հերթականությամբ):

18.13. Զիջվող դրամական պահանջի և ֆինանսավորման գումարի արժույթների տարբերության դեպքում Ֆինանսական գործակալի հանդեպ պարտավորության կատարմանն ուղղված գումարը, ինչպես նաև Հաճախորդի բանկային հաշվին փոխանցված և Ֆինանսական գործակալի հանդեպ պարտավորության կատարմանն ուղղման ենթակա գումարը փոխարկվում է ֆինանսավորման արժույթի, որի դեպքում փոխարկումը կատարվում է տվյալ օրվա դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով: Ընդ որում, փոխարկումը կատարվում է այն չափով, որ բավարար լինի ամբողջությամբ մարելու առկա պարտավորությունը, իսկ մնացած գումարը փոխանցվում է Հաճախորդի ընթացիկ հաշվին:

18.14. Ֆինանսավորման գումարը, տուժանքը, տոկոսագումարները և/կամ միջնորդավճարը գանձվում են Պարտապանի համար Ֆինանսավորման արժույթով բացված ֆակտորինգային հաշվից: Տուժանքը, տոկոսագումարները և միջնորդավճարը գանձվում են ՀՀ դրամով, այդ պարագայում տեղի է ունենում արժույթի փոխարկում, որը կատարվում է նախորդ օրվա համար ՀՀ ԿԲ կողմից հրապարակված արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով: *(կիրառելի չէ փակ ֆակտորինգի նկատմամբ)*

18.15. Եթե Պարտապանը դրամական պարտավորության կատարմանն ուղղվող դրամական միջոցները փոխանցում է Հաճախորդի բանկային հաշվին, ապա Ֆինանսական գործակալն այդ միջոցներն անակցեպտ կարգով գանձում է Հաճախորդի բանկային հաշվից և ուղղում պարտավորության կատարմանը: Ընդ որում, Տուժանքը, տոկոսագումարները և միջնորդավճարը գանձվում են ՀՀ դրամով, ինչի պարագայում տեղի է ունենում արժույթի փոխարկում, որը

կատարվում է նախորդ օրվա համար ՀՀ ԿԲ կողմից հրապարակված արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

18.16. Ապահովագրական վկայագրի առկայության դեպքում, եթե Պարտապանը Ֆինանսական գործակալի հանդեպ ունի չկատարված դրամական պարտավորություն, և ծագել է Ապահովագրական վկայագրով սահմանված Ապահովագրական պատահարը, ապա Ֆինանսական գործակալն իրավունք է ստանում Ապահովագրական հատուցման հայտ ներկայացնել ՀԱԱԳ-ին՝ համաձայն Ապահովագրական վկայագրով սահմանված պայմանների:

18.17. Ռեգրեսային ֆակտորինգի դեպքում, եթե Ապահովագրական վկայագրով սահմանված է սպասման ժամանակահատված, որի ընթացքում ՀԱԱԳ-ն չի կրում ապահովագրական հատուցման պարտավորություն, Հաճախորդը, բացի Ապահովագրական վկայագրով սահմանված չհատուցվող գումարից, կրում է նաև սպասման ժամանակահատվածում ժամկետանց դրամական պարտավորության գումարի նկատմամբ Ֆինանսական գործակալի կողմից հաշվարկվող տուժանքի չափով կորուստները:

18.18. ՀԱԱԳ կողմից ապահովագրական հատուցման գումարը Ֆինանսական գործակալին փոխանցվելու դեպքում Ֆինանսական գործակալն այդ գումարից մարում է առկա ամբողջ պարտավորությունը, իսկ մնացորդը փոխանցում է Հաճախորդի ընթացիկ հաշվին:

18.19. Ռեգրեսային ֆակտորինգի դեպքում, եթե Պարտապանը կամ Հաճախորդը Ֆինանսական գործակալի հանդեպ ունի չկատարված կամ ոչ պատշաճ կատարված դրամական պարտավորություն ապա Ֆինանսական գործակալն իրավունք է ստանում գանձել պարտքի (այդ թվում՝ տուժանքի, տոկոսագումարի, դրամական պարտավորության) գումարը Հաճախորդի՝ Ֆինանսական գործակալի մոտ ունեցած բոլոր բանկային հաշիվներից:

18.20. Սույն պայմանների 18.19 կետով սահմանված դեպքում դրամական պարտավորության գումարը գանձվում է Հաճախորդի այն արժութային հաշիվներից, որով տրամադրվել է Ֆինանսավորումը: Տուժանքը, տոկոսագումարները և միջնորդավճարը գանձվում են Հաճախորդի ՀՀ դրամով հաշիվներից: Եթե համապատասխան հաշիվներում բացակայում է անհրաժեշտ գումարը, ապա այն գանձվում է Հաճախորդի բանկային այլ հաշիվներից, այդ թվում՝ ավանդային հաշիվներից: Այդ դեպքում արտարժույթի առքն ու վաճառքը ֆինանսավորման գումարի գանձման դեպքում կատարվում է տվյալ օրվա համար Ֆինանսական գործակալի սահմանած առք ու վաճառքի փոխարժեքով, իսկ տուժանքի, տոկոսների և միջնորդավճարի գանձման դեպքում՝ նախորդ օրվա համար ՀՀ ԿԲ կողմից հրապարակված արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

18.21. Ֆինանսական գործակալն իրավունք ունի՝

18.21.1. Հաճախորդի և Պարտապանի միջև կնքված արտահանման պայմանագրում արտահանման ֆակտորինգային գործարքի իրականացման համար անհրաժեշտ դրույթների բացակայության դեպքում, ի հավելումն արտահանման պայմանագրի, պահանջել, որ Հաճախորդը Պարտապանի հետ կնքի արտահանման պայմանագրի հավելված՝ Ֆինանսական գործակալի կողմից ընդունելի ձևանմուշի համաձայն,

18.21.2. միակողմանիորեն փոփոխել Լրացուցիչ պայմանագրի 2-րդ կետով սահմանված սահմանաչափերը՝ այդ մասին 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ձևով ծանուցելով Հաճախորդին և/կամ Պարտապանին,

18.21.3. Ապահովագրական վկայագրի առկայության դեպքում Պարտապանի կողմից Հայտ-համաձայնագրով սահմանված ժամկետում Ֆինանսական գործակալի հանդեպ պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում պարտավորության կատարման պահանջ ներկայացնել ՀԱԱԳ-ին, իսկ ռեգրեսային ֆակտորինգի դեպքում, եթե ՀԱԱԳ-ի կողմից մերժվում է Ապահովագրական հատուցումը, Հաճախորդին,

18.21.4. կատարել Պայմանագրով Ֆինանսական գործակալին զիջված և զիջվելիք դրամական պահանջների հաջորդող զիջում,

18.22. Ֆինանսական գործակալը պարտավորվում է՝

18.22.1. Հաճախորդի պահանջով նրան տեղեկություններ տրամադրել Պարտապանի կողմից պարտավորությունների կատարման ընթացքի վերաբերյալ,

18.22.2. Պարտապանի խնդրանքով ողջամիտ ժամկետով նրան ապացույց ներկայացնել այն մասին, որ դրամական պահանջի զիջումը Ֆինանսական գործակալին իրականում տեղի է ունեցել,

18.22.3. Ապահովագրական վկայագրի առկայության դեպքում Պարտապանի կողմից Ֆինանսական գործակալի հանդեպ իր դրամական պարտավորությունը չկատարելու դեպքում ապահովագրական վկայագրով սահմանված կարգով դիմել ՀԱԱԳ-ին՝ ապահովագրական հատուցման համար.

18.23. Հաճախորդն իրավունք ունի՝

18.23.1. Ֆինանսական գործակալից ստանալ Ֆինանսավորում՝ Պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով,

18.23.2. Ֆինանսական գործակալից պահանջել տեղեկություններ՝ Պարտապանի կողմից պարտավորությունների կատարման ընթացքի վերաբերյալ:

18.24. Հաճախորդը պարտավորվում է՝

18.24.1. Ֆինանսական գործակալին զիջել միայն իրական դրամական պահանջ,

18.24.2. Ֆինանսական գործակալին տրամադրել իր հիմնադիր փաստաթղթերի, պետական գրանցման վկայականի, անհրաժեշտ արտոնագրերի, լիցենզիաների և թույլատրությունների, ինչպես նաև իր գործունեությանն առնչվող այլ փաստաթղթերի պատճենները,

18.24.3. Ֆինանսական գործակալին տրամադրել Պարտապանի հիմնադիր փաստաթղթերի, պետական գրանցման վկայականի, անհրաժեշտ արտոնագրերի, լիցենզիաների և թույլատրությունների, ինչպես նաև Ֆինանսական գործակալի պահանջով Պարտապանի ինքնությունը հավաստող և վերջինիս ֆինանսական ցուցանիշները բնութագրող այլ փաստաթղթերի պատճենները՝ ապահովելով նշված տեղեկությունները և փաստաթղթերը Ֆինանսական գործակալին փոխանցելու համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր պահանջների պահպանումը,

18.24.4. անհրաժեշտության դեպքում՝ ապահովել Հայտ-համաձայնագրի ստորագրումը Պարտապանի կողմից, որով վերջինս կհաստատի Հաճախորդի կողմից դրամական պահանջի իրավունքը Ֆինանսական գործակալին զիջվելու մասին իրազեկությունը, և որում կնշվեն Պարտապանի կողմից կատարման ենթակա դրամական պահանջը, չափը, ժամկետը, հօգուտ Ֆինանսական գործակալի պարտավորության կատարման պայմաններն ու դրանց կատարման կարգը,

18.24.5. Ֆինանսական գործակալին անհապաղ տեղեկացնել իրեն հայտնի դարձած ցանկացած տեղեկություն, որը կարող է ազդել Պարտապանի վճարունակության վրա կամ որևէ այլ կերպ խոչընդոտել զիջված պահանջից բխող պարտավորությունների՝ Պարտապանի կողմից կատարմանը.

18.24.6. Փակ ֆակտորինգների դեպքում՝

18.24.6.1. ապահովել, որ Լրացուցիչ պայմանագրի 2-րդ կետում նշված պարտավորության կատարմանն ուղղվող դրամական միջոցները փոխանցվեն Հաճախորդի՝ բացառապես Ֆինանսական գործակալի մոտ բացված բանկային հաշվին,

18.24.6.2.Չտնօրինել Հաճախորդի բանկային հաշվին/հաշիվներին ի կատարումն Լրացուցիչ պայմանագրի 2-րդ կետում նշված պարտավորության փոխանցվող դրամական միջոցները՝ ապահովելով դրանց անակցեպտ գանձումը Ֆինանսական գործակալի կողմից և դրամական պահանջի զիջման արդյունքում Ֆինանսական գործակալի հանդեպ Լրացուցիչ պայմանագրի 2-րդ կետում նշված պարտավորության մարմանն ուղղելը,

18.24.6.3.Ապահովել, որ Հաճախորդի բանկային հաշվին Լրացուցիչ պայմանագրի 2-րդ կետում նշված պարտավորության կատարմանն ուղղվող բոլոր փոխանցումների նկարագրությունները ճշգրտորեն պարունակեն համապատասխան հաշիվ-ապրանքագրի թվային անհատականացնող տվյալները,

18.24.6.4.Այն դեպքում, երբ Լրացուցիչ պայմանագրի 2-րդ կետում նշված պարտավորության կատարման նպատակով դրամական միջոցներ են փոխանցվել Հաճախորդի՝ այլ բանկերում բացված հաշվին/հաշիվներին, անհապաղ փոխանցել այդ դրամական միջոցները Բանկում բացված Հաճախորդի բանկային հաշվին՝ ապահովելով Բանկի կողմից դրանց անակցեպտ գանձումը Պայմանագրով սահմանված կարգով,

18.24.6.5.Ֆինանսական գործակալին հատուցել Պարտապանի կողմից Հաճախորդի նկատմամբ իր այլ հանդիպական պահանջների հաշվանցման արդյունքում կամ պատշաճ կատարումից տարբերվող այլ հիմքի առկայության արդյունքում Լրացուցիչ պայմանագրի 2-րդ կետում նշված

պարտավորության կամ դրա մի մասի դադարման հետևանքով Ֆինանսական գործակալի կրած վնասները, ներառյալ՝ ֆինանսավորման գումարը, տոկոսները, միջնորդավճարը, տուժանքը և պարտավորության դադարման հետևանքով առաջացած Ֆինանսական գործակալի այլ վնասները:

18.25. Համայնքների նկատմամբ ֆակտորինգի դեպքում՝ Պայմանագրով Հաճախորդը տալիս է իր համաձայնությունն առ այն, որ իր մասին բանկային գաղտնիք կազմող տեղեկատվությունը տրամադրվի Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամին և/կամ ՀՀ Ֆինանսների և էներգետիկայի նախարարությանը:

18.26. Պահանջը ներկայացվում է գրավոր և ենթակա է կատարման 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում, եթե պահանջի մեջ այլ ժամկետ նշված չէ:

ԳԼՈՒԽ 19 ՖՈՆԴԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ

19.1. ԵՆԲ-ի հետ համագործակցությամբ իրականացվող «Հայաստանի տնտեսական դիմակայունություն» ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկեր

19.1.1. Պայմանագրի ստորագրմամբ Վարկատուն Վարկառուին տեղեկացնում է, որ.

19.1.1.1. Պայմանագրի շրջանակներում Վարկառուին տրամադրված վարկի միջոցները տրամադրվել են Եվրոպական ներդրումային բանկի (այսուհետ՝ ԵՆԲ) կողմից, որը հանդիսանում է Եվրոպական Միության ֆինանսական կազմակերպությունը՝ ստեղծված Եվրոպական Միության Գործունեության Պակտի 308 հոդվածով, ֆինանսական կազմակերպությունների հետ կողք կողքի մասնակցում է այն ներդրումային ծրագրերում, որոնք կազմում են Եվրոպական Միության նպատակների մաս: Վարկը բավարարում է Եվրոպական ներդրումային բանկի կողմից սահմանված ֆինանսավորման բոլոր պահանջներին: Վարկը Վարկառուին ընձեռում է ֆինանսական առավելություն, որն արտահայտված է վարկի տոկոսադրույքի մեջ: Նշված ֆինանսական առավելությունը կազմում է 100 բազիսային կետ տարեկան՝ համեմատած այն տարեկան տոկոսադրույքի, որն առաջարկվում է Վարկատուի կողմից նմանատիպ վարկերի համար առանց ԵՆԲ-ի ֆինանսավորման,

19.1.1.2. Վարկը տրամադրվել է ՀՀ Կենտրոնական Բանկի և ԵՆԲ-ի (այսուհետ՝ նաև Դոնորներ) միջև կնքված «Հայաստանի տնտեսական դիմակայունություն» վարկային պայմանագրի և դրա իրականացման նպատակով ՀՀ Կենտրոնական Բանկի և Վարկատուի միջև կնքված պայմանագրի (երկու պայմանագրերը միասին և առանձին այսուհետ՝ Ֆինանսավորման պայմանագիր) հիման վրա իրականացվող ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում,

19.1.1.3. Պայմանագրի շրջանակներում կարող է Վարկատուն կարող է պարտավորված լինել Վարկի միջոցով ֆինանսավորվող ենթանախագծի (այսուհետ՝ Ենթանախագիծ) վերաբերյալ ինֆորմացիա տրամադրել Եվրոպական Միության ցանկացած համապատասխան անձի կամ հաստատության՝ համաձայն Եվրոպական Միության օրենսդրության համապատասխան պարտադիր պահանջների,

19.1.1.4. Սույն պայմանների շրջանակներում «Արգելված վարկ», «Արգելված պրակտիկա», «ԵՆԲ խմբի ռեսուրսների և ակտիվների չարաշահում», «Պատժամիջոցներ», «Պատժամիջոցների ենթարկված անձ», «Փողերի լվացում», «Ահաբեկչության ֆինանսավորում», «Բացառված շահառու», «Բացառման քաղաքականություն», «Համապատասխան Կողմ», «Համապատասխան անձ», «Ֆինանսավորման ուղեցույց», «Ֆինանսական կարգավորում», «Գնումների ուղեցույց», «NDICI-GE կարգավորում», «ՖԱԹՖ-ի հանձնարարականներ», «ԵՆԲ շրջակա միջավայրի և սոցիալական ստանդարտներ», «Շրջակա միջավայրի և սոցիալական չափորոշիչներ» հասկացություններն ունեն նույն բովանդակությունը, ինչ Ֆինանսավորման պայմանագրում:

19.1.2. Վարկառուն պարտավորվում է՝

19.1.2.1. Վարկատուի պահանջով ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում ապահովագրական ընկերությունների (ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան, որոնք ունեն ապահովագրական գործունեություն իրականացնելու առնվազն երեք տարվա փորձ) միջոցով

իրականացնել այնպիսի ապահովագրություն, այնպիսի ռիսկերի դեմ և այնպիսի գումարներով, որոնք համահունչ են հիմնական բիզնես պրակտիկային.

19.1.2.2. Վարկատուի պահանջով ամբողջությամբ կամ մասնակի հետ վերադարձնել Վարկի գումարը, եթե չի կատարել Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները,

19.1.2.3. Վարկի միջոցներն օգտագործել ըստ նպատակի, արդյունավետությամբ, տեխնիկական, տնտեսական, ֆինանսական, կառավարման, շրջակա միջավայրի պահպանման, առողջապահական և սոցիալական ստանդարտներին և Դոնորների և Վարկատուի պահանջներին համապատասխան.

19.1.2.4. պատրաստել և Վարկատուին ու Դոնորներին տրամադրել վերջիններիս կողմից հիմնավոր կերպով պահանջվող տեղեկատվությունը.

19.1.2.5. ավարտել համապատասխան Ենթանախագիծը Պայմանագրում նշված կամ Ծրագրով սահմանված ժամանակահատվածում.

19.1.2.6. ստացված միջոցներն օգտագործել բացառապես համապատասխան Ենթանախագծի իրականացման նպատակով, ինչպես նախատեսված է Վարկի տրամադրման հայտով.

19.1.2.7. ձեռք բերել աշխատանքներ, ծառայություններ կամ ապրանքներ Ենթանախագծի համար ընդունելի գնումների ընթացակարգերով, որոնք համապատասխանում են, ի գոհունակություն ԵՆԲ-ի, վերջինիս քաղաքականությանը, ինչպես նկարագրված է Գնումների ուղեցույցում.

19.1.2.8. պահպանել, վերանորոգել, հիմնանորոգել և թարմացնել Ենթանախագծի մաս կազմող ամբողջ գույքը, ինչպես պահանջվում է այն լավ աշխատանքային վիճակում պահելու համար.

19.1.2.9. ուժի մեջ պահել օգտագործման բոլոր իրավունքները և թույլտվությունները, որոնք անհրաժեշտ են Ենթանախագծի իրականացման և շահագործման համար, ինչպես նաև համապատասխանեցնել բոլոր օրենքներին, որոնց ներքո իրականացվում են համապատասխան Ենթանախագծերը.

19.1.2.10. պատշաճ կերպով ապահովագրել համապատասխան Ենթանախագծի մաս կազմող գույքը.

19.1.2.11. Բնապահպանական և սոցիալական չափանիշների առումով.

-իրականացնել և շահագործել համապատասխան Ենթածրագիրը՝ Բնապահպանական և սոցիալական ստանդարտներին համապատասխան,

-ստանալ, պահպանել և համապատասխանել Ենթանախագծի համար անհրաժեշտ բնապահպանական կամ սոցիալական հաստատումներին,

-մշտապես հետևել էկոլոգիական և սոցիալական օրենսդրությանը,

-Երբ անհրաժեշտ է, բնապահպանական օրենքներին համապատասխան և Վարկատուի կամ Դոնորների պահանջով, ներկայացնել ապացույցներ՝ ստուգելու վերը նշված ենթակետերում ներառված պարտավորությունների կատարումը: Վարկատուն և ՀՀ Կենտրոնական Բանկը պետք է կիրառեն այդ իրավունքները ցանկացած Վարկառուի նկատմամբ՝ ԵՆԲ-ի հատուկ խնդրանքով և անմիջապես փոխանցեն ԵՆԲ-ին այդ հարցման առնչությամբ ստացված ցանկացած նյութական տեղեկատվություն:

19.1.2.12. Ներկայացնել և հայտարարել Դոնորներին, որ համապատասխան Ենթանախագծի հետ կապված Վարկատուին տրված ցանկացած տեղեկություն կամ փաստաթուղթ ճշմարիտ է և ճշգրիտ.

19.1.2.13. Պատժամիջոցների տեսանկյունից պարտավորվել ուղղակիորեն կամ անուղղակիորեն՝

-չպահպանել կամ գործարար հարաբերությունների մեջ չմտնել և/կամ ցանկացած միջոցներ և/կամ տնտեսական ռեսուրսներ չտրամադրել ի շահ ցանկացած Պատժամիջոցների ենթարկված անձի՝ կապված Վարկի կամ Ենթանախագծի հետ,

-չօգտագործել ծրագրային միջոցների ամբողջ կամ մի մասը, փոխառություն չտրամադրել, չնվիրաբերել կամ այլ կերպ հասանելի չդարձնել այն որևէ անձի, յուրաքանչյուր դեպքում, որևէ ձևով, որը կհանգեցնի իր կողմից կամ ԵՆԲ-ի կամ ՀՀ ԿԲ-ի կամ Վարկատուի կողմից կիրառվող պատժամիջոցների խախտմանը, կամ

-չֆինանսավորել Ենթավարկային պայմանագրերի շրջանակներում որևէ վճարում ամբողջությամբ կամ մասամբ՝ Պատժամիջոցների ենթարկված անձի, Պատժամիջոցները խախտող անձի հետ գործունեությունից կամ ձեռնարկատիրական գործունեությունից ստացված հասույթից կամ ցանկացած այլ ձևով, որը կհանգեցնի խախտման իր, Վարկատուի, ՀՀ ԿԲ-ի կամ ԵՆԲ-ի կողմից:

19.1.2.14. Ազնվության և փողերի լվացման տեսանկյունից.

-չներգրավվել (և չթույլատրել կամ թույլ տալ որևէ անձի, որը հանդես է գալիս իր անունից) Ենթանախագծի հետ կապված որևէ Արգելված պրակտիկայի, մրցույթի որևէ ընթացակարգի կամ Պայմանագրով կամ որևէ այլ փաստաթղթով նախատեսված որևէ գործարքի մեջ, ինչպես նաև անհապաղ տեղեկացնել Վարկատուին կամ Դոնորներին, եթե ցանկացած պահի դրությամբ տեղեկացված է լինում Ենթանախագծի հետ կապված որևէ Արգելված պրակտիկայի մասին.

-ձեռնարկել այնպիսի գործողություն, որով Վարկատուն կամ Դոնորները ողջամտորեն կպահանջեն հետաքննել կամ դադարեցնել ցանկացած Արգելված պրակտիկայի ենթադրյալ կամ կասկածելի դեպք.

-հետաքննել կամ դադարեցնել Ենթանախագծի հետ կապված որևէ Արգելված պրակտիկայի որևէ ենթադրյալ կամ կասկածելի դեպք.

-անհապաղ տեղեկացնել Վարկատուին կամ Դոնորներին իրական մեղադրանքի, բողոքի կամ տեղեկատվության մասին՝ կապված Ենթանախագծի Արգելված պրակտիկայի հետ.

-ողջամիտ ժամկետներում ձեռնարկել համապատասխան միջոցներ ցանկացած Համապատասխան անձի նկատմամբ, ով դառնում է Պատժամիջոցների ենթարկված անձ, կամ հանդիսանում է վերջնական և անդառնալի դատարանի վճռի առարկա՝ կապված Արգելված պրակտիկայի հետ, որը կատարվել է իր մասնագիտական պարտականությունների կատարման ընթացքում, որպեսզի հիմնավորվի, որ այդ Համապատասխան անձը ներգրավված չէ որևէ գործունեության մեջ՝ կապված Վարկատուի կամ Դոնորների համապատասխան Ենթավարկային պայմանագրի կամ համապատասխան Ենթանախագծի հետ.

-անհապաղ տեղեկացնել Վարկատուին կամ Դոնորներին Վարկառուի կողմից ձեռնարկված ցանկացած միջոցառման մասին՝ համաձայն նախորդ պարբերության.

-չմտնել գործարար հարաբերությունների մեջ որևէ Պատժամիջոցի ենթարկված անձի հետ կամ դրամական միջոցներ տրամադրել ուղղակիորեն կամ անուղղակիորեն, որևէ Պատժամիջոցի ենթարկված անձի և անհապաղ տեղեկացնել Վարկատուին կամ Դոնորներին ցանկացած նմանատիպ փաստի կամ իրադարձության մասին, որը հանգեցնում է (ա) իր կառավարման մարմնի որևէ անդամի կամ (բ) իր վերահսկողության ցանկացած անձի Պատժամիջոցների ենթարկված անձ լինելու փաստի մասին.

-անհապաղ տեղեկացնել Վարկատուին կամ Դոնորներին, որքանով դա թույլատրվում է օրենքով, ցանկացած էական դատավարության, արբիտրաժի, վարչական վարույթի կամ հետաքննության մասին, որն իրականացվել է դատարանի, վարչակազմի կամ համանման այլ պետական մարմնի կողմից, որը վերջիններիս տեղեկատվությամբ կամ համոզմամբ առկա է կամ նախատեսվում է Վարկառուի, նրա վերահսկիչ կազմակերպությունների կամ կառավարման մարմինների անդամների դեմ՝ կապված Վարկի կամ Ենթանախագծի Արգելված պրակտիկայի հետ.

-տրամադրել Վարկատուին կամ Դոնորներին այնպիսի լրացուցիչ տեղեկատվություն, ապացույց կամ փաստաթուղթ, որը վերաբերում է Վարկատուի կամ Դոնորների համապատասխանելիության պահանջներին ներառյալ, սակայն առանց սահմանափակման՝ «Ճանաչիր հաճախորդիդ» (KYC) պահանջները կամ նույնականացման նմանատիպ ընթացակարգեր, երբ պահանջվում է և ողջամիտ ժամկետում.

-ի գիտություն ընդունել ԵՆԲ-ի խմբային հայտարարությունը հարկային խարդախության, հարկերից խուսափելու, ագրեսիվ հարկային պլանավորման, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ (ինչպես հրապարակված է ԵՆԲ-ի կայքում) Վարկատուի կամ Դոնորների ֆինանսավորման գործունեության մեջ՝ կապված Վերջնական շահառուների հետ.

-տեղեկացնել վերջնական շահառուի սեփականության իրավունքի ցանկացած փոփոխության մասին.

-ներկայացնել Վարկատուին կամ Դոնորներին, որ

. իր տեղեկատվության համաձայն, Վարկառուի կողմից իր բաժնետիրական կապիտալում կամ Ենթանախագծում ներդրված միջոցները ապօրինի ծագում չունեն, կապված չեն փողերի լվացման

կամ ահաբեկչության ֆինանսավորման պրոդուկտների հետ, ինչպես նաև անհապաղ տեղեկացնել Վարկատուին կամ Դոնորներին, եթե ցանկացած պահի տեղեկանա նմանատիպ միջոցների ապօրինի ծագման մասին.

. ոչ Վարկառուն, նրա տնօրենների խորհուրդը, այլ կորպորատիվ մարմինները, կառավարիչները, ոչ էլ որևէ այլ անձ, որը գործում է իր կամ նրանց անունից կամ իր վերահսկողության ներքո, չի կատարել (ա) որևէ արգելված գործողություն (Արգելված պրակտիկա)՝ կապված որևէ Ենթանախագծի կամ պայմանագրով նախատեսվող որևէ գործարքի հետ, կամ (բ) ահաբեկչության ֆինանսավորման կամ փողերի լվացման հետ կապված ցանկացած անօրինական գործունեություն. և

.Ենթանախագծերից և ոչ մեկը (ներառյալ՝ առանց սահմանափակման, բանակցությունները, պայմանագրերի շնորհումը և կատարումը, որը ֆինանսավորվում կամ ֆինանսավորվելու է Վարկի միջոցով) չի ներգրավվել կամ առաջացրել որևէ Արգելված պրակտիկա:

-Համապատասխանել (ա) բոլոր օրենքներին և կանոնակարգերին, որոնց Վարկառուն կամ վերջինիս կողմից խրախուսվող Ենթանախագիծը ենթակա է, (բ) Բնապահպանական և սոցիալական ստանդարտներին և (գ) ԵՄ օրենսդրության շրջանակում այլ համապատասխան չափորոշիչներին՝ Հայաստանի Հանրապետության օրենքների շրջանակում կիրառվող կամ սահմանված ԵՆԲ-ի կողմից մինչև սույն Պայմանագրի ստորագրման օրը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենսդրությանը (ներառյալ՝ համապատասխան բնապահպանական և սոցիալական օրենքները).

-հավաստիացնել Վարկատուին կամ համապատասխան միջնորդին, առ այն, որ վերջինս չի հանդիսանում Բացառված շահառու.

-Վարկատուից կամ Դոնորներից պահանջել Ենթավարկային պայմանագրի շրջանակում կատարել ցանկացած տրամադրում կամ վճարում (ըստ կիրառման) Վարկառուի բանկային հաշվին, որը պատշաճ կերպով պահվում է Հայաստանի Հանրապետության լիազորված ֆինանսական հաստատությունում.

-(ա) պահել Ենթանախագծի հետ կապված բոլոր ֆինանսական գործարքների և ծախսերի գրանցամատյանները և գրառումները, ներառյալ Վարկով ֆինանսավորվող ցանկացած պայմանագրի պատճենը և գնումներին առնչվող ցանկացած նյութական փաստաթուղթ, Պայմանագրի ստորագրումից հետո առնվազն 6 տարվա ընթացքում, և (բ) պահանջի դեպքում տրամադրել Վարկատուին կամ Դոնորներին Վարկով ֆինանսավորվող պայմանագրերի վավերացրած պատճենները և տրամադրումներին առնչվող ծախսերի ապացույցները.

-թույլ տալ Վարկատուի, ՀՀ ԿԲ-ի, ԵՆԲ-ի, և երբ դա պահանջվում է ԵՄ օրենսդրության համապատասխան պարտադիր դրույթներով կամ համաձայն NDICI-GE կանոնակարգի կամ Ֆինանսական կանոնակարգի, ըստ կիրառման, Համապատասխան Կողմերին.

.այցելել Ենթանախագծի տարածքները, տեղակայանքները և իրականացնել ստուգումներ Ֆինանսավորման Պայմանագրի, Պայմանագրի, Համաձայնագրի և Ենթանախագծի ֆինանսավորման հետ կապված նպատակների համար.

.Հարցազրույց իրականացնել Վարկառուի ներկայացուցիչների հետ և չխոչընդոտել Ենթանախագծում ներգրավված կամ ազդեցության ենթակա որևէ այլ անձի հետ շփումներին.

.իրականացնել հետաքննություններ, ստուգումներ և աուդիտներ, ըստ ցանկության, և դիտարկել Վարկառուի գրանցամատյանները և գրառումները Ենթանախագծի իրականացման հետ կապված և կարողանալ վերցնել փաստաթղթերի պատճենները օրենքով թույլատրված կարգով.

-աջակցել ԵՆԲ-ի և Եվրոպական միության իրավասու այլ հաստատությունների կամ մարմինների հետաքննություններին՝ կապված Արգելված պրակտիկայի որևէ ենթադրյալ կամ կասկածելի դրսևորման հետ, և տրամադրել ԵՆԲ-ին կամ երաշխավորել, որ ԵՆԲ-ին կտրամադրվի ողջ անհրաժեշտ աջակցությունը սույն հոդվածում նկարագրված նպատակների համար.

-ապահովել ԵՆԲ-ին (և ցանկացած այլ Համապատասխան Կողմի) կամ երաշխավորել, որ ԵՆԲ-ին (և ցանկացած այլ Համապատասխան Կողմին) կտրամադրվի տեղեկատվության, պայմանների և փաստաթղթերի հասանելիություն, ինչպես նաև անհրաժեշտ աջակցություն՝ այս պարբերությունում նկարագրված նպատակների համար.

19.1.2.15. Վարկառուն պարտավորվում է ընդունել և համաձայնել, որ

-ԵՆԲ-ն կարող է պարտավորված լինել Վարկառուին, ֆինանսավորմանը, Պայմանագրին և/կամ Ենթանախագծին վերաբերող տեղեկատվություն և նյութեր փոխանցել Եվրոպական միության ցանկացած հաստատության կամ մարմնի, ներառյալ Եվրոպական Աուդիտորական դատարանին, Եվրոպական հանձնաժողովին, ԵՄ ցանկացած համապատասխան պատվիրակությանը, Եվրոպական խարդախության դեմ պայքարի գրասենյակին և Եվրոպական հանրային դատախազությանը, որոնք կարող են անհրաժեշտ լինել իրենց առաջադրանքների կատարման համար՝ համաձայն ԵՄ օրենքի (ներառյալ NDICI կանոնակարգը և ֆինանսական կանոնակարգը).

-ԵՆԲ-ն կարող է հրապարակել իր կայքում և/կամ սոցիալական ցանցերում և/կամ հրապարակել մամուլի հաղորդագրություններ, որոնք պարունակում են տեղեկատվություն EFSD+ DIW1 Երաշխիքի աջակցությամբ տրամադրվող ֆինանսավորման վերաբերյալ՝ ներառյալ Վարկառուի անունը, հասցեն, հիմնադրման երկիրը, ֆինանսավորման նպատակը և սույն Պայմանագրով ստացված ֆինանսական աջակցության տեսակն ու չափը:

19.1.2.16. տեղեկացնել Վարկատուին կամ Դոնորներին Ենթավարկային պայմանագրի ցանկացած խախտման մասին.

19.1.2.17. ընդունել, որ (ա) ԵՆԲ-ն և Եվրոպական Միությունը նպաստել են համապատասխան Ենթանախագծի ֆինանսավորմանը՝ հօգուտ Վարկառուի, և (բ) Վարկառուն տեղեկացված է ստացված ֆինանսական առավելությունների մասին.

19.1.2.18. ներկայացնել, որ Վարկառուն ենթակա չէ որևէ բացառման որոշման կամ ժամանակավոր կասեցման՝ համաձայն Բացառման քաղաքականության.

19.1.2.19. տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն ըստ Վարկատուի կամ Դոնորների պահանջի, որը թույլ կտա Վարկատուին կամ Դոնորներին կատարել սույն գլխով նախատեսված իր պարտավորությունները.

19.1.2.20. Պայմանագրի ներքո իր իրավունքները օգտագործել նաև ԵՆԲ-ի շահերից ելնելով.

19.1.2.21. ապահովել, որ յուրաքանչյուր ենթաֆինանսավորման փաստաթուղթ պարունակի Ֆինանսավորման Պայմանագրին համապատասխան պայմաններ.

19.1.2.22. Վարկատուին կամ Դոնորներին, ըստ պահանջի, տրամադրել ցանկացած այնպիսի տեղեկատվություն կամ լրացուցիչ փաստաթուղթ, որն անհրաժեշտ է ԵՆԲ-ին NDICI-GE կամ Ֆինանսական կանոնակարգերով նախատեսված իր պարտավորությունները կատարելու համար, որը Վարկատուն կամ միջնորդը կարող են պահանջել ողջամիտ կերպով և ժամկետում.

19.1.2.23. ապահովել ԵՄ ֆինանսական աջակցության տեսանելիությունը EFSD+-ի ներքո, մասնավորապես, երբ գովազդում կամ հաշվետվություն է ներկայացնում Վարկառուի, Վարկի, Ենթավարկային փաստաթղթերի կամ Ենթանախագծերի և դրանց արդյունքների մասին՝ տեսանելի կերպով հաղորդակցման նյութերի հիման վրա՝ կապված Վարկառուի, Պայմանագրերի կամ Ենթանախագծերի հետ, և երբ տրամադրում է համահունչ, արդյունավետ և համաչափ թիրախային տեղեկատվություն մի քանի լսարանների, ներառյալ լրատվամիջոցները և հանրությունը, պայմանով, որ հաղորդակցության նյութի բովանդակությունը նախապես համաձայնեցվել է ԵՆԲ-ի հետ.

19.1.2.24. Չխոչընդոտել Վարկատուի կողմից Վարկի նպատակային օգտագործման, ֆինանսական կամ ցանկացած այլ բնույթի մոնիթորինգի իրականացմանը.

19.1.2.25. Վարկատուի հանձնարարությամբ անհապաղ միջոցառումներ ձեռնարկել հնարավոր խախտումները կանխելու համար, ինչպես նաև անմիջապես վերացնել հայտնաբերված թերությունները և խախտումները.

19.1.2.26. Ֆինանսավորման պայմանագրի, Պայմանագրի կամ Ենթանախգծի ֆինանսավորմանն առնչվող որևէ փաստաթղթի կամ Ծրագրի ցանկացած պահանջի խախտման դեպքում Վարկատուի պահանջով վերջինիս վճարել տուգանք՝ Վարկի գումարի 1 (մեկ) տոկոսի չափով, բայց ոչ պակաս քան նվազագույն աշխատավարձի 150-ապատիկը կամ Վարկատուի կողմից Դոնորներին վճարման ենթակա տուգանքները, ինչպես նաև Վարկատուին հատուցել խախտման արդյունքում պատճառված բոլոր վնասները, այդ թվում բաց թողնված օգուտը: Խախտման փաստը հաստատված է համարվում Դոնորների և/կամ Վարկատուի կողմից խախտման առկայության վերաբերյալ դիրքորոշում արտահայտելու դեպքում:

19.1.3. Վարկառուն տալիս է իր համաձայնությունը, որ իր և իր վարկի վերաբերյալ տվյալները (այդ թվում՝ անձնական և բանկային գաղտնիք կազմող), ինչպես նաև ցանկացած հաշվետվություն և փաստաթուղթ փոխանցվեն Ծրագրի հետ կապված ցանկացած անձի կամ կառույցի, ինչպես նաև ցանկացած եղանակով հրապարակվեն Ծրագրի հետ կապված ցանկացած անձի կամ կառույցի կողմից:

19.1.4. Վարկառուն հավաստիացնում է, որ.

-Ծանոթացել է Ֆինանսավորման պայմանագրով, դրան կից հավելվածներով, այդ թվում Ֆինանսավորման ուղեցույցով, Գնումների ուղեցույցով, Ֆինանսավորման պայմանագրում սահմանված կամ Ծրագրին վերաբերող այլ փաստաթղթերով, այդ թվում Ֆինանսական կարգավորումներով, NDICI-GE կարգավորումով, ՖԱԹՖ-ի հանձնարարականներով, ԵՆԲ շրջակա միջավայրի և սոցիալական ստանդարտներով, Շրջակա միջավայրի և սոցիալական չափորոշիչներով, Բացառման քաղաքականությամբ սահմանված պահանջներին, համապատասխանում է դրանց և պարտավորվում է պահպանել սահմանված պահանջները Վարկի գործողության և Ենթանախագծի իրականացման ամբողջ ընթացքում.

-Չի հանդիսանում Բացառված շահառու, Պատժամիջոցների ենթարկված անձ, ենթակա չէ որևէ բացառման որոշման կամ ժամանակավոր կասեցման՝ համաձայն Բացառման քաղաքականության.

-իր բաժնետիրական կապիտալում կամ Ենթանախագծում ներդրված միջոցները ապօրինի ծագում չունեն, կապված չեն փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման պրոդուկտների հետ և պարտավորվում է անհապաղ տեղեկացնել Վարկատուին կամ Դոնորներին, եթե ցանկացած պահի տեղեկանա նմանատիպ միջոցների ապօրինի ծագման մասին.

-Վարկառուն, նրա տնօրենների խորհուրդը, այլ կորպորատիվ մարմինները, կառավարիչները կամ որևէ այլ անձ, որը գործում է իր կամ նրանց անունից կամ իր վերահսկողության ներքո, չի կատարել (ա) որևէ արգելված գործողություն (Արգելված պրակտիկա)՝ կապված որևէ Ենթանախագծի կամ պայմանագրով նախատեսվող որևէ գործարքի հետ, կամ (բ) ահաբեկչության ֆինանսավորման կամ փողերի լվացման հետ կապված ցանկացած անօրինական գործունեություն.

-Ենթանախագծերից և ոչ մեկը (ներառյալ՝ առանց սահմանափակման, բանակցությունները, պայմանագրերի շնորհումը և կատարումը, որը ֆինանսավորվում կամ ֆինանսավորվելու է Վարկի միջոցով) չի ներգրավվել կամ առաջացրել որևէ Արգելված պրակտիկա:

19.2. ԵՆԲ-ի հետ համագործակցությամբ իրականացվող «Հայաստանի ՄՓՄՁ-ների դիմակայունություն» ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկեր

19.2.1. Պայմանագրի ստորագրմամբ Վարկատուն Վարկառուին տեղեկացնում է, որ

- Ներդրումային ծրագրի իրականացման նպատակով (Վարկի նպատակ) Վարկատուն Վարկառուին տրամադրում է վարկային միջոցներ (վարկի գումար կամ դրա ցանկացած մաս) և ստորագրում է վարկային պայմանագիր՝ Եվրոպական ներդրումային բանկի (այսուհետ նաև՝ ԵՆԲ) ֆինանսական աջակցության ծրագրի (այսուհետ՝ նաև Ծրագիր) շրջանակներում՝ Եվրոպական միության (այսուհետ նաև՝ ԵՄ) աջակցությամբ՝ ԵՄ Երաշխիքի և Հարևանության ներդրումային հարթակի միջոցով,

- Վարկառուին տրամադրված վարկի միջոցները տրամադրվել են ԵՆԲ-ի կողմից («Հայաստանի տնտեսական դիմակայունություն» վարկային պայմանագրի (այսուհետ՝ Ֆինանսավորման պայմանագիր) հիման վրա իրականացվող ծրագրի շրջանակներում), որը հանդիսանում է ԵՄ ֆինանսական կազմակերպությունը՝ ստեղծված Եվրոպական Միության Գործունեության Պակտի 309-րդ հոդվածով, ֆինանսական կազմակերպությունների հետ կողք կողքի մասնակցում է այն ներդրումային ծրագրերում, որոնք կազմում են ԵՄ նպատակների մաս: Վարկը բավարարում է ԵՆԲ-ի կողմից սահմանված ֆինանսավորման բոլոր պահանջները: Վարկը Վարկառուին ընձեռում է ֆինանսական առավելություն, որն արտահայտված է վարկի տոկոսադրույքի մեջ: Նշված ֆինանսական առավելությունը կազմում է 25 բազիսային կետ տարեկան՝ համեմատած այն

տարեկան տոկոսադրույքի, որն առաջարկվում է Վարկատուի կողմից նմանատիպ վարկերի համար առանց ԵՆԲ-ի ֆինանսավորման:

19.2.2. Պայմանագրի ստորագրմամբ Վարկառուն հավաստիացնում է, որ ծանոթացել է ստորև թվարկվող հասկացությունների բովանդակությանը.

- **«Ենթաֆինանսավորում»** -Վարկատուի կողմից Վարկառուի հետ կնքվող վարկային պայմանագրի շրջանակներում վերջինիս տրամադրվող ֆինանսավորում (վարկ):
- **«Ենթաֆինանսավորման փաստաթուղթ»** -վարկային պայմանագիրը և ցանկացած այլ կից համաձայնագիր, գործիք կամ փաստաթուղթ, որը կնքվել է Վարկատուի և Վարկառուի միջև և վերաբերում է Ենթաֆինանսավորմանը.
- **«Ենթանախագիծ»** -ներդրում, որը ֆինանսավորվել է կամ պետք է ֆինանսավորվի վարկային պայմանագրի շրջանակներում տրամադրված վարկով՝ Բանկին հաղորդված նպատակների համար:
- **«Արգելված վարքագիծ»** նշանակում է հետևյալներից որևէ մեկը.
- **«Ահաբեկչության ֆինանսավորում».** ուղղակիորեն կամ անուղղակիորեն ցանկացած ձևով ֆինանսական միջոցների տրամադրում կամ հավաքում, որը նպատակ ունի օգտագործվելու կամ ենթադրվում է, որ դրանք պետք է ամբողջությամբ կամ մասնակի օգտագործվեն որևէ հանցագործություն իրականացնելու նպատակով, որը նշված է 2017 թվականի մարտի 15-ի Եվրոպական խորհրդի 2017/541 (ԵՄ) Հրահանգում՝ ահաբեկչության դեմ պայքարի և Խորհրդի 2002/475/JHA շրջանակային որոշումը փոխարինելու և Խորհրդի 2005/671/JHA որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին (ժամանակ առ ժամանակ փոփոխվել, փոխարինվել կամ ուժի մեջ է մտել)
- **«Փողերի լվացում».** (ա) սեփականության փոխարկում կամ փոխանցում, իմանալով, որ այդպիսի սեփականությունը բխում է քրեական գործունեությունից կամ այդպիսի գործունեությանը մասնակցությունից՝ սեփականության հանցավոր աղբյուրը թաքցնելու կամ խեղաթյուրելու կամ այնպիսի անձի օժանդակելու նպատակով, որը ներառված է այդպիսի գործունեության մեջ իր գործունեության իրավական հետևանքներից խուսափելու համար, (բ) սեփականության իրական բնույթի, աղբյուրի, գտնվելու վայրի, տնօրինման, տեղափոխման, դրա առնչությամբ իրավունքների կամ պատկանելության քողարկում կամ թաքցնում, իմանալով, որ այդպիսի սեփականությունը բխում է քրեական գործունեությունից կամ այդպիսի գործունեությանը մասնակցությունից, (գ) գույքի ձեռքբերում, տիրապետում կամ օգտագործում, իմանալով, որ այդպիսի սեփականությունը բխում է քրեական գործունեությունից կամ այդպիսի գործունեությանը մասնակցությունից, կամ (դ) վերոնշյալ կետերում նշված գործողություններից որևէ մեկին մասնակցություն, առնչություն, կատարման փորձ կամ օժանդակում, դրդում, նպաստում կամ խորհուրդ տալ:
- **«Արգելված պրակտիկա».** (ա) Հարկադիր պրակտիկա, որը նշանակում է ցանկացած կողմի կամ նրա սեփականության ուղղակի կամ անուղղակի սահմանափակում կամ վնասում կամ սահմանափակելու կամ վնասելու սպառնալիք՝ ոչ պատշաճ կերպով վերջինիս գործողությունների վրա ազդելու համար, (բ) Գաղտնի համաձայնությամբ պրակտիկա, որը նշանակում է երկու կամ ավելի կողմերի միջև համաձայնություն ոչ պատշաճ նպատակի հասնելու համար, ներառյալ՝ մյուս կողմի գործողությունների վրա ոչ պատշաճ ազդելը, (գ) Կոռումպացված պրակտիկա, որը նշանակում է որևէ կողմի կողմից որևէ արժեքավոր բան ուղղակիորեն կամ անուղղակիորեն առաջարկելը, տալը, ստանալը կամ հայցելը՝ մեկ այլ կողմի գործողությունների վրա ոչ պատշաճ ազդելու համար, (դ) Խարդախության պրակտիկա, որը նշանակում է ցանկացած գործողություն կամ անգործություն, ներառյալ՝ խեղաթյուրումը, որը գիտակցաբար կամ անգիտակցաբար մոլորեցնում կամ փորձում է մոլորեցնել կողմին՝ ֆինանսական (ներառյալ՝ հարկային) կամ այլ օգուտ ստանալու կամ պարտավորությունից խուսափելու համար, կամ (ե) Խանգարիչ պրակտիկա, որը նշանակում է Վարկի կամ Ենթանախագծի առնչությամբ Հարկադիր, Գաղտնի համաձայնությամբ, Կոռումպացված կամ Խարդախության պրակտիկաներ հետաքննության հետ կապված. (ա) հետաքննության համար ապացույց հանդիսացող նյութերի դիտավորյալ ոչնչացում, կեղծում, փոփոխում կամ թաքցնում կամ հետաքննությանը խոչընդոտելու նպատակով քննիչներին կեղծ ցուցմունքներ տալ, (բ) որևէ կողմին սպառնում, հետապնդում կամ ահաբեկում, որպեսզի վերջինս չբացահայտի հետաքննության համար կարևոր տեղեկատվությունը, կամ որպեսզի չդիմի հետաքննությանը, կամ (գ) գործողություններ, որոնք նպատակ ունեն էապես խոչընդոտելու ԵՆԲ

խմբի աուդիտի կամ ստուգման կամ տեղեկատվության մատչելիության պայմանագրային իրավունքների իրականացմանը: (զ) Հարկային հանցագործություն՝ նշանակում է բոլոր այն իրավախախտումները, ներառյալ ուղղակի և անուղղակի հարկերին վերաբերող Հայաստանի Հանրապետության ազգային օրենսդրությամբ սահմանված հարկային հանցագործությունները, որոնք պատժվում են ազատազրկությամբ կամ կալանքով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ (է) ԵՆԲ խմբի ռեսուրսների և ակտիվների չարաշահում, նկատի ունենալով ցանկացած անօրինական գործունեություն, որը կատարվել է ԵՆԲ խմբի ռեսուրսների կամ ակտիվների (ներառյալ Պայմանագրով տրամադրված միջոցները) գիտակցաբար կամ անգիտակցաբար օգտագործելով:

- **«Պատժամիջոցների ենթարկված անձ»** - ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ (կասկածից խուսափելու համար՝ «իրավաբանական անձ» տերմինը ներառում է, բայց չի սահմանափակվում, ցանկացած կառավարություն, խումբ կամ ահաբեկչական կազմակերպություն), որը նշանակված թիրախ է կամ այլ կերպ հանդիսանում է Պատժամիջոցների սուբյեկտ (ներառյալ, բայց չսահմանափակվելով, որևէ անհատ կամ կազմակերպություն, ով հանդիսանում է Պատժամիջոցների նշանակված թիրախ կամ այլ կերպ հանդիսանում է Պատժամիջոցների սուբյեկտ՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանելու կամ այլ կերպ նրա կողմից վերահսկվելու հետևանքով):

- **«Պատժամիջոցներ»** - տնտեսական կամ ֆինանսական պատժամիջոցների մասին օրենքներ, կանոնակարգեր, առևտրային էմբարգոներ կամ այլ սահմանափակող միջոցառումներ (ներառյալ, մասնավորապես, բայց չսահմանափակվելով ահաբեկչության ֆինանսավորման հետ կապված միջոցառումներ), որոնք ընդունվել, կիրառվել և/կամ ժամանակ առ ժամանակ ուժի մեջ են մտել՝ հետևյալ անձանց կողմից.

ա) Միավորված ազգերի կազմակերպությունը, ներառյալ, ի թիվս այլոց, Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհուրդը,

բ) Եվրոպական միությունը, ներառյալ, ի թիվս այլոց, Եվրոպական միության խորհուրդը և Եվրոպական հանձնաժողովը, ինչպես նաև Եվրոպական միության ցանկացած այլ իրավասու մարմին/հաստատություն կամ գործակալություն.

գ) Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարությունը և նրա ցանկացած գերատեսչություն, ստորաբաժանում, գործակալություն կամ գրասենյակ, ներառյալ, ի թիվս այլոց, Միացյալ Նահանգների Օտարերկրյա ակտիվների վերահսկման գրասենյակը (OFAC), Միացյալ Նահանգներ Պետքարտուղարություն և/կամ Միացյալ Նահանգների Առևտրի դեպարտամենտ; և

դ) Միացյալ Թագավորության կառավարությունը և ցանկացած գերատեսչություն, ստորաբաժանում, գործակալություն, գրասենյակ կամ մարմին, ներառյալ, ի թիվս այլոց, Նորին Մեծության Գանձապետարանի ֆինանսական պատժամիջոցների իրականացման գրասենյակը և Միացյալ Թագավորության միջազգային առևտրի դեպարտամենտը:

19.2.3. Սույն պայմանների շրջանակներում օգտագործվող մնացած հասկացությունները, ինչպիսիք են՝ «Արգելված պրակտիկա», «Փողերի լվացում», «Ահաբեկչության ֆինանսավորում», «Բացառման քաղաքականություն», «Համապատասխան անձ», «Գնումների ուղեցույց», «Բնապահպանական և սոցիալական ստանդարտներ», «Բնապահպանական և սոցիալական հաստատումներ», «Բնապահպանական օրենք», «Սոցիալական օրենք», «Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) ստանդարտներ», «Կից նամակ (Side letter)», «Բացառման իրավիճակ», ունեն նույն բովանդակությունը, ինչ Ֆինանսավորման պայմանագրում:

19.2.4. Վարկը և Ենթանախագիծը ֆինանսավորվում են ԵՆԲ-ի կողմից՝ Եվրոպական միության աջակցությամբ Արևելյան Գործընկերության դրամաշնորհի (EAP GRANT) միջոցով տրամադրվող ֆինանսական աջակցությունից:

19.2.5. Վարկառուն պարտավորվում է.

19.2.5.1. Ստացված միջոցներն օգտագործել բացառապես համապատասխան Ենթանախագծի իրականացման նպատակով, ինչպես նախատեսված է Վարկի տրամադրման հայտով,

19.2.5.2. Ձեռք բերել աշխատանքներ, ծառայություններ կամ ապրանքներ Ենթանախագծի համար ընդունելի գնումների ընթացակարգերով, որոնք համապատասխանում են, ի գոհունակություն ԵՆԲ-ի, վերջինիս քաղաքականությանը, ինչպես նկարագրված է Գնումների ուղեցույցում,

19.2.5.3. Պահպանել, վերանորոգել, հիմնանորոգել և թարմացնել Ենթանախագծի մաս կազմող ամբողջ գույքը, ինչպես պահանջվում է այն լավ աշխատանքային վիճակում պահելու համար,

19.2.5.4. Վարկատուի պահանջով՝ Պատշաճ կերպով ապահովագրել համապատասխան Ենթանախագծի մաս կազմող գույքը,

19.2.5.5. Ուժի մեջ պահել օգտագործման բոլոր իրավունքները և թույլտվությունները, որոնք անհրաժեշտ են Ենթանախագծի իրականացման և շահագործման համար, ինչպես նաև համապատասխանեցնել բոլոր օրենքներին, որոնց ներքո իրականացվում են համապատասխան Ենթանախագծերը,

19.2.5.6. Ներկայացնել և հայտարարել Վարկատուին և ԵՆԲ-ին, որ համապատասխան Ենթանախագծի հետ կապված Վարկատուին տրված ցանկացած տեղեկություն կամ փաստաթուղթ ճշմարիտ է և ճշգրիտ.

19.2.5.7. Բնապահպանական և սոցիալական չափանիշների առումով.

- Իրականացնել և շահագործել համապատասխան Ենթածրագիրը՝ Բնապահպանական և սոցիալական ստանդարտներին համապատասխան,
- Ստանալ, պահպանել և համապատասխանել Ենթանախագծի համար անհրաժեշտ Բնապահպանական կամ սոցիալական հաստատումներին,
- Երբ անհրաժեշտ է, Բնապահպանական օրենքներին համապատասխան և Վարկատուի կամ ԵՆԲ-ի պահանջով, ներկայացնել ապացույցներ՝ ստուգելու վերը նշված ենթակետերում ներառված պարտավորությունների կատարումը.

19.2.5.8. Բարեվարքության տեսանկյունից.

- Չներգրավվել (և չթույլատրել կամ թույլ տալ որևէ անձի, որը հանդես է գալիս իր անունից) Ենթանախագծի հետ կապված որևէ Արգելված պրակտիկայի, մրցույթի որևէ ընթացակարգի կամ Պայմանագրով կամ որևէ այլ փաստաթղթով նախատեսված որևէ գործարքի մեջ, ինչպես նաև անհապաղ տեղեկացնել Վարկատուին կամ ԵՆԲ-ին, եթե ցանկացած պահի դրությամբ տեղեկացված է լինում Ենթանախագծի հետ կապված որևէ Արգելված պրակտիկայի մասին,
- Անհապաղ տեղեկացնել Վարկատուին կամ ԵՆԲ-ին իրական մեղադրանքի, բողոքի կամ տեղեկատվության մասին՝ կապված Ենթանախագծի Արգելված պրակտիկայի հետ և ձեռնարկել այնպիսի գործողություն, որով Վարկատուն կամ ԵՆԲ-ն ողջամտորեն կպահանջեն հետաքննել կամ դադարեցնել ցանկացած Արգելված պրակտիկայի ենթադրյալ կամ կասկածելի դեպք,
- Թույլ տալ Վարկատուին կամ ԵՆԲ-ին, վերջինիս ներկայացուցիչներին, ինչպես նաև Ծրագրով կամ Ֆինանսավորման պայմանագրով նախատեսված այլ իրավասու անձանց դադարեցնել Ենթանախագծի հետ կապված որևէ Արգելված պրակտիկայի որևէ ենթադրյալ կամ կասկածելի դեպք,
- Ողջամիտ ժամկետներում ձեռնարկել համապատասխան միջոցառումներ ցանկացած Համապատասխան անձի նկատմամբ, ով դառնում է Պատժամիջոցների ենթարկված անձ, կամ հանդիսանում է վերջնական և անդառնալի դատարանի վճռի առարկա՝ կապված Արգելված պրակտիկայի հետ, որը կատարվել է իր մասնագիտական պարտականությունների կատարման ընթացքում, որպեսզի հիմնավորվի, որ այդ Համապատասխան անձը ներգրավված չէ որևէ գործունեության մեջ՝ կապված Վարկատուի կամ ԵՆԲ-ի համապատասխան Ենթավարկային պայմանագրի կամ համապատասխան Ենթանախագծի հետ,
- Անհապաղ տեղեկացնել Վարկատուին նախորդ կետում նշված Վարկառուի կողմից ձեռնարկված միջոցառումների մասին,
- Անհապաղ տեղեկացնել Վարկատուին կամ ԵՆԲ-ին, որքանով դա թույլատրվում է օրենքով, ցանկացած էական դատավարության, արբիտրաժի, վարչական վարույթի կամ հետաքննության մասին, որն իրականացվել է դատարանի, վարչակազմի կամ համանման այլ պետական մարմնի կողմից, որը վերջիններիս տեղեկատվությամբ կամ համոզմամբ առկա է կամ նախատեսվում է Վարկառուի, նրա վերահսկիչ կազմակերպությունների կամ կառավարման մարմինների անդամների

դեմ՝ կապված Վարկի կամ Ենթանախագծի Արգելված պրակտիկայի հետ: Սույն կետում նշված ցանկացած վարույթի «Էական» լինելը կորոշվի Վարկատուի կողմից՝ բարեխղճությամբ՝ հաշվի առնելով այն տեղեկատվությունը, որի մասին ԵՆԲ-ն կարող է ողջամտորեն ակնկալել ծանուցում՝ իր հեղինակության ռիսկը կառավարելու համար,

- Տրամադրել Վարկատուին կամ ԵՆԲ-ին, այնպիսի լրացուցիչ տեղեկատվություն, ապացույց կամ փաստաթուղթ, որը վերաբերում է Վարկատուի կամ ԵՆԲ-ի համապատասխանելիության պահանջներին ներառյալ, սակայն առանց սահմանափակման՝ «Ճանաչիր հաճախորդիդ» (KYC) պահանջները կամ նույնականացման նմանատիպ ընթացակարգեր, երբ պահանջվում է և ողջամիտ ժամկետում.

19.2.5.9. Ներկայացնել և երաշխավորել Վարկատուին կամ ԵՆԲ-ին, որ

- իր տեղեկատվության համաձայն, Վարկառուի կողմից իր բաժնետիրական կապիտալում կամ Ենթանախագծում ներդրված միջոցները ապօրինի ծագում չունեն, կապված չեն Փողերի լվացման կամ Ահաբեկչության ֆինանսավորման պրոդուկտների հետ, ինչպես նաև անհապաղ տեղեկացնել Վարկատուին կամ ԵՆԲ-ին, եթե ցանկացած պահի տեղեկանա նմանատիպ միջոցների ապօրինի ծագման մասին.

- ոչ Վարկառուն, նրա տնօրենների խորհուրդը, այլ կորպորատիվ մարմինները, կառավարիչները, ոչ էլ որևէ այլ անձ, որը գործում է իր կամ նրանց անունից կամ իր վերահսկողության ներքո, չի դրսևորել (ա) որևէ Արգելված վարքագիծ (Արգելված պրակտիկա)՝ կապված որևէ Ենթանախագծի կամ պայմանագրով նախատեսվող որևէ գործարքի հետ, կամ (բ) Ահաբեկչության ֆինանսավորման կամ Փողերի լվացման հետ կապված ցանկացած անօրինական գործունեություն. և

- Ենթանախագծերից և ոչ մեկը (ներառյալ՝ առանց սահմանափակման, բանակցությունները, պայմանագրերի շնորհումը և կատարումը, որը ֆինանսավորվում կամ ֆինանսավորվելու է Վարկի միջոցով) չի ներգրավվել կամ առաջացրել որևէ Արգելված պրակտիկա:

- ինքը, այդ թվում՝ իր հետ որևէ Համապատասխան անձ Պատժամիջոցների ենթարկված անձ չէ կամ չի խախտում որևէ Պատժամիջոց.

19.2.5.10. Ուղղակիորեն կամ անուղղակիորեն՝

- Չպահպանել կամ գործարար հարաբերությունների մեջ չմտնել և/կամ ցանկացած միջոցներ և/կամ տնտեսական ռեսուրսներ չտրամադրել ի շահ ցանկացած Պատժամիջոցների ենթարկված անձի՝ կապված Վարկի կամ Ենթանախագծի հետ,

- Չօգտագործել ծրագրային միջոցների ամբողջ կամ մի մասը, փոխառություն չտրամադրել, չնվիրաբերել կամ այլ կերպ հասանելի չդարձնել այն որևէ անձի, յուրաքանչյուր դեպքում, որևէ ձևով, որը կհանգեցնի իր կողմից կամ ԵՆԲ-ի կամ Վարկատուի կողմից կիրառվող Պատժամիջոցների խախտմանը, կամ

- Պայմանագրի շրջանակներում ամբողջությամբ կամ մասամբ չկատարել որևէ վճարում՝ Պատժամիջոցների ենթարկված անձի, Պատժամիջոցները խախտող անձի հետ գործունեությունից կամ ձեռնարկատիրական գործունեությունից ստացված հասույթից կամ ցանկացած այլ ձևով, որը կհանգեցնի խախտման իր, Վարկատուի կամ ԵՆԲ-ի կողմից:

19.2.5.11. Անհապաղ տեղեկացնել Վարկատուին կամ ԵՆԲ-ին ցանկացած փաստի կամ իրադարձության մասին, որը հանգեցնում է (ա) իր կառավարման մարմնի որևէ անդամի կամ (բ) իր վերահսկողության ցանկացած անձի Պատժամիջոցների ենթարկված անձ լինելու փաստի մասին,

19.2.5.12. Թույլ տալ Վարկատուին կամ ԵՆԲ-ին հետաքննել կամ դադարեցնել Ենթանախագծի հետ կապված Արգելված վարքագծի ցանկացած ենթադրյալ կամ կասկածելի դեպք,

19.2.5.13. Վարկի միջոցներով չֆինանսավորել որևէ կազմակերպության, որը պատկանում կամ կառավարվում է Վարկատուի՝ որոշումներ կայացնող մարմինների անդամ(ներ)ի կամ աշխատակազմի անդամ(ներ)ի կողմից, որոնք ներգրավված են Վարկի տրամադրման մասին համապատասխան որոշման կայացման գործընթացում, ինչպես նաև վերոնշյալ անձանց մերձավոր գործընկերներին կամ ընտանիքի անդամներին,

19.2.5.14. Վարկատուից կամ ԵՆԲ-ից պահանջել Պայմանագրի շրջանակում կատարել ցանկացած տրամադրում կամ վճարում (ըստ կիրառման) Վարկառուի բանկային հաշվին, որը պատշաճ կերպով պահվում է Հայաստանի Հանրապետության լիազորված ֆինանսական հաստատությունում,

19.2.5.15. Պահել Ենթանախագծի հետ կապված բոլոր ֆինանսական գործարքների և ծախսերի գրանցամատյանները և գրառումները, Ենթանախագծի հետ կապված ողջ տեղեկատվությունն ու փաստաթղթերը՝ Պայմանագրի ամբողջական կատարումից հետո առնվազն 7 տարիների ընթացքում,

19.2.5.16. Թույլ տալ Վարկատուին, ԵՆԲ-ին, Եվրոպական միության ցանկացած հաստատության կամ մարմնի, ներառյալ Եվրոպական Աուդիտորական դատարանին, Եվրոպական հանձնաժողովին, Եվրոպական խարդախության դեմ պայքարի գրասենյակին՝

- Այցելել Ենթանախագծի տարածքները, տեղակայանքները և իրականացնել ստուգումներ Ֆինանսավորման պայմանագրի, Պայմանագրի, Համաձայնագրի և Ենթանախագծի ֆինանսավորման հետ կապված նպատակների համար,
- Հարցազրույց իրականացնել Վարկառուի ներկայացուցիչների հետ և չխոչընդոտել Ենթանախագծում ներգրավված կամ ազդեցության ենթակա որևէ այլ անձի հետ շփումներին,
- Իրականացնել հետաքննություններ, ստուգումներ և աուդիտներ, ըստ ցանկության, և դիտարկել Վարկառուի գրանցամատյանները և գրառումները Ենթանախագծի իրականացման հետ կապված և կարողանալ վերցնել փաստաթղթերի պատճենները օրենքով թույլատրված կարգով:

19.2.5.17. Համագործակցել ԵՆԲ-ի և Եվրոպական միության ցանկացած այլ իրավասու հաստատության կամ մարմնի հետ վերջիններիս կողմից իրականացվող հետաքննությունների ժամանակ՝ կապված որևէ Արգելված վարքագծի կամ Պատժամիջոցի խախտման ենթադրյալ կամ կասկածելի դեպքի հետ և տրամադրել ԵՆԲ-ին կամ ապահովել, որ ԵՆԲ-ին տրամադրվի անհրաժեշտ օգնությունը՝ սույն կետում նշված նպատակների համար,

19.2.5.18. Ընդունել և համաձայնել, որ ԵՆԲ-ն կարող է պարտավորված լինել Վարկառուին, ֆինանսավորմանը, Պայմանագրին և/կամ Ենթանախագծին վերաբերող տեղեկատվություն և նյութեր փոխանցել Եվրոպական միության ցանկացած հաստատության կամ մարմնի, ներառյալ Եվրոպական Աուդիտորական դատարանին, Եվրոպական հանձնաժողովին, ԵՄ ցանկացած համապատասխան պատվիրակությանը, Եվրոպական խարդախության դեմ պայքարի գրասենյակին և Եվրոպական հանրային դատախազությանը, որոնք կարող են անհրաժեշտ լինել իրենց առաջադրանքների կատարման համար՝ համաձայն ԵՄ օրենքի,

19.2.5.19. Տեղեկացնել Վարկատուին կամ ԵՆԲ-ին Պայմանագրի ցանկացած խախտման մասին,

19.2.5.20. Տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն ըստ Վարկատուի կամ ԵՆԲ-ի պահանջի, որը թույլ կտա Վարկատուին կամ ԵՆԲ-ին կատարել սույն գլխով նախատեսված իր պարտավորությունները,

19.2.5.21. Բոլոր առումներով համապատասխանել բոլոր օրենքներին և կանոնակարգերին, որոնք կիրառելի են Ենթաֆինանսավորման փաստաթղթի, Ենթաֆինանսավորման կամ Ենթանախագծի նկատմամբ, այդ թվում՝ Բնապահպանական և սոցիալական ստանդարտներին, ԵՄ օրենսդրության շրջանակում այլ համապատասխան չափորոշիչներին՝ Հայաստանի Հանրապետության օրենքների շրջանակում կիրառվող կամ սահմանված ԵՆԲ-ի կողմից մինչև Պայմանագրի ստորագրման օրը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենսդրությանը (ներառյալ՝ համապատասխան բնապահպանական և սոցիալական օրենքներին),

19.2.5.22. Ներկայացնել, որ Վարկառուն ենթակա չէ որևէ բացառման որոշման կամ ժամանակավոր կասեցման՝ համաձայն Բացառման քաղաքականության,

19.2.5.23. Վարկատուի պահանջով վաղաժամ մարել Վարկը Պայմանագրով և Ֆինանսավորման պայմանագրով սահմանված պահանջներին և պայմաններին չհամապատասխանելու դեպքում,

19.2.5.24. Տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն ըստ Վարկատուի կամ ԵՆԲ-ի պահանջի, որը թույլ կտա Վարկատուին կամ ԵՆԲ-ին կատարել սույն գլխով նախատեսված իր պարտավորությունները,

19.2.5.25. Վարկատուի և ԵՆԲ-ի պահանջով (իր կամ Եվրոպական հանձնաժողովի համար) անհապաղ տրամադրել ցանկացած փաստաթուղթ կամ հաշվետվություն, որն անհրաժեշտ է ԵՆԲ-ի կողմից Եվրոպական հանձնաժողովին ներկայացվող հաշվետվությունների ժամանակին ներկայացման համար,

19.2.5.26. Համագործակցել Եվրոպական հանձնաժողովի կամ ԵՆԲ-ի կողմից Արևելյան գործընկերության դրամաշնորհի (EAP grant) տեսքով Եվրոպական միության ներդրման գնահատման հարցում, անհապաղ տրամադրել ցանկացած տեղեկատվություն (գրավոր) և այլ աջակցություն, որը պահանջվում է ԵՆԲ-ի կողմից:

19.2.5.27. եթե ԵՆԲ-ն կամ Եվրոպական Հանձնաժողովն իրականացնում է Արևելյան գործընկերության դրամաշնորհի (EAP grant) գնահատում կամ մոնիթորինգի առաքելություն, այդ դեպքում՝ Վարկառուն պետք է ԵՆԲ-ին կամ Եվրոպական հանձնաժողովի ներկայացուցիչներին կամ նրանց կողմից լիազորված անձանց տրամադրի մուտքի հասանելիություն և ցանկացած փաստաթուղթ կամ տեղեկատվություն, որը անհրաժեշտ կլինի վերոնշյալ առաքելության իրականացման համար:

19.2.5.28. Ֆինանսավորման Պայմանագրի, Պայմանագրի և Ենթանախագծի ֆինանսավորման հետ կապված նպատակների համար՝ թույլ տալ ԵՆԲ-ի և Եվրոպական հանձնաժողովի ներկայացուցիչներին կամ նրանց լիազորված անձանց և ցանկացած արտաքին աուդիտորի կամ Ծրագրով սահմանված այլ անձանց՝

- իրականացնել ստուգումներ, ուսումնասիրել փաստաթղթերի բնօրինակները, վերցնել դրանց պատճենները, ինչպես նաև՝ տրամադրել բոլոր անհրաժեշտ հասանելիությունները և աջակցությունը (պահպանելով երրորդ անձանց նկատմամբ գաղտնիությունը)՝ չհակասելով հանրային կամ Եվրոպական միության իրավունքով սահմանված պարտավորություններին, որոնց ենթակա են վերը նշված հաստատությունները կամ մարմինները և նրանց աշխատակազմը, գործակալները կամ լիազորված ներկայացուցիչները.
- իրականացնել ամբողջական աուդիտ, անհրաժեշտության դեպքում՝ հաշիվների, հաշվապահական փաստաթղթերի և ցանկացած այլ փաստաթղթի հիման վրա, որը վերաբերում է սուբսիդավորվող տեղական արժույթով ֆիքսված տոկոսադրույքով տրանշների ֆինանսավորմանը: Ընդ որում, նման ստուգումները/վերահսկողությունը/աուդիտները կարող են իրականացվել Վարկի լրիվ մարումից հետո մինչև հինգ (5) տարի ներառյալ ժամանակահատվածում:

19.2.5.29. Վարկատուին և ԵՆԲ-ին անհապաղ տեղեկացնել հետևյալ իրավիճակների մասին.

- Ցանկացած գործողություն/բողոք/առարկություն, որը նախաձեռնվել է ցանկացած երրորդ անձի կողմից կամ Վարկատուի կողմից ստացված որևէ իրական բողոք, որն էական նշանակություն ունի Ենթածրագրի վրա ազդող բնապահպանական, սոցիալական կամ այլ հարցերի հետ կապված,
- Ցանկացած բնապահպանական կամ սոցիալական պահանջ, որն արդեն իսկ ներկայացվել է կամ կարող է ներկայացվել իր դեմ,
- Ցանկացած փաստ կամ իրադարձություն, որը կարող է էապես վնասել կամ ազդել ցանկացած Ենթածրագրի կատարման կամ շահագործման պայմանների վրա,
- Ենթածրագրի հետ կապված միջադեպ կամ պատահար, որն ազդել կամ կարող է զգալի բացասական ազդեցություն ունենալ բնապահպանական կամ սոցիալական հարցերի վրա,
- Բնապահպանական և սոցիալական որևէ ստանդարտի հետ նրա ցանկացած անհամապատասխանություն,
- Ցանկացած Բնապահպանական կամ սոցիալական հաստատման ցանկացած կասեցում, չեղարկում կամ նյութական փոփոխություն,
- Վարկառուի կամ Ենթածրագրի հետ կապված ցանկացած իրական պնդում, բողոք կամ տեղեկատվություն ցանկացած Արգելված վարքագծի կամ որևէ Պատժամիջոցի վերաբերյալ:
- Տեղեկատվություն, որը հաստատում կամ առաջացնում է ողջամիտ ենթադրություն այն մասին, որ

(ա) Ենթածրագրի հետ կապված տեղի է ունեցել որևէ Արգելված վարքագիծ, կամ

(բ) Ենթածրագրում ներդրված միջոցներից որևէ մեկը ունի ապօրինի ծագում.

- իր կողմից ձեռնարկված ցանկացած միջոց՝ համաձայն 19.2.5.8 կետի 4-րդ պարբերության:

19.2.6. Վարկառուն տալիս է իր համաձայնությունը, որ իր և իր վարկի վերաբերյալ տվյալները (այդ թվում՝ անձնական և բանկային գաղտնիք կազմող), ինչպես նաև ցանկացած հաշվետվություն և փաստաթուղթ փոխանցվեն Ծրագրի հետ կապված ցանկացած անձի կամ կառույցի, Ծրագրով կամ Ֆինանսավորման պայմանագրով նախատեսված այլ իրավասու անձանց, ինչպես նաև ցանկացած եղանակով հրապարակվեն վերջիններիս կողմից:

19.2.7. Վարկառուն հավաստիացնում է, որ՝

- Համապատասխանում է Կից նամակով (Side letter) սահմանված իրավասության չափանիշներին և իր նկատմամբ կիրառելի Ֆինանսական պայմանագրի պայմաններին,

- Վարկի տրամադրման նպատակով Վարկառուի կողմից իրականացվող գնահատմանը/մոնիթորինգին նախորդող հինգ (5) տարիների ընթացքում չի եղել Բացառման իրավիճակում:

19.3. ՎԶԵԲ-ի հետ համագործակցությամբ իրականացվող գերփոքր, փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորման ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկեր

19.3.1. Պայմանագրի ստորագրմամբ Վարկատուն Վարկառուին տեղեկացնում է, որ Վարկը տրամադրվել է ՎԶԵԲ-ի (այսուհետ՝ նաև Դոնոր) հետ համագործակցությամբ իրականացվող գերփոքր, փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում:

19.3.2. Վարկառուն պարտավորվում է՝

19.3.2.1. Թույլ տալ Վարկատուին, Դոնորին, վերջիններիս ներկայացուցիչներին և Ծրագրով սահմանված այլ իրավասու անձանց անսահմանափակ քանակով և ցանկացած ժամանակ.

ա) այցելելու Վարկառուի գործունեության վայր և/կամ Վարկառուի կողմից Ծրագրի շրջանակներում ստացվող վարկի միջոցով իրականացվող ծրագրի (այսուհետ՝ Ենթածրագիր) իրականացման տարածքներ և/կամ այն տարածքներ, որտեղ պահպանվում են Վարկառուի կողմից իրականացվող Ենթածրագրի իրականացման հետ կապված փաստաթղթերը, նյութերը և սարքավորումները, ինչպես նաև նշված վայրերում իրականացնել ուսումնասիրություններ,

բ) ուսումնասիրել Վարկառուի կողմից իրականացվող Ենթածրագիրը, Վարկառուի հաշվապահական գրառումն ու հաշվառումը, ինչպես նաև հնարավորություն ունենալ պահանջել և ստանալ անհրաժեշտ փաստաթղթերը և Վարկառուին, Վարկին կամ Ենթածրագրին վերաբերող ցանկացած տեղեկություն,

19.3.2.2. ՎԶԵԲ-ի և/կամ Վարկատուի կողմից պահանջվող ցանկացած տեղեկատվություն սեղմ ժամկետում տրամադրել Վարկատուին,

19.3.2.3. Չօգտագործել Պայմանագրով ստացվող Վարկը ռազմական տեխնիկայի արտադրության կամ առևտրի, ֆինանսական հաստատությունների կամ ֆինանսական ծառայություններ մատուցող ընկերությունների. ապահովագրական բիզնեսի, ծխախոտի կամ թունդ ալկոհոլային խմիչքների /hard liquor/ արտադրության կամ արտահանման. ծխախոտի կամ թունդ ալկոհոլային խմիչքների /hard liquor/ վաճառքի (բացի այն դեպքերից, երբ ծխախոտի կամ թունդ ալկոհոլային խմիչքների վաճառքն օժանդակ է կազմակերպության հիմնական բիզնես գործունեությանը), խաղատների կամ այլ մոլախաղերի օբյեկտների, անշարժ գույքում կամ արժույթներում սպեկուլյատիվ ներդրումների կամ ցանկացած այլ սպեկուլյատիվ ներդրումային գործունեության, ցանկացած տեսակի արժեթղթերում ներդրումների, ներառյալ այլ ընկերությունների բաժնետիրական կապիտալում ներդրումների, ՎԶԵԲ-ի Բնապահպանական և սոցիալական բացառման ցանկում ներառված ցանկացած գործունեության, առանց ՎԶԵԲ-ի նախնական գրավոր համաձայնության ՎԶԵԲ-ի Բնապահպանական և սոցիալական քաղաքականության (2014թ. մայիս) Հավելված 2-ի մեջ ներառված Ա կատեգորիայի նախագծերի ցուցիչ ցանկում նշված ցանկացած գործունեության, նավթի և գազի արդյունահանման, վերամշակման (ներառյալ զտման), տրանսպորտի (փոխադրման և բաշխման), էլեկտրաէներգիայի արտադրման նպատակով պահեստավորման և արտադրության (բացառությամբ սեփական սպառման) նախագծերի ֆինանսավորման նպատակով,

19.3.2.4. Համապատասխանել ՎԶԵԲ-ի Գերփոքր և փոքր վարկերի բնապահպանական և սոցիալական ընթացակարգերին,

19.3.2.5. Պահպանել Վարկին վերաբերող համապատասխան ողջ ֆինանսական տեղեկատվությունը, գրառումները և հաշվառումները ոչ պակաս, քան հինգ տարի հետո՝

- Վարկի ամբողջական մարման ամսաթվից,

- եթե ՕԼԱՖ-ի կամ ՎԶԵԲ-ի կողմից սկսվել է աուդիտ կամ հետաքննություն Վարկի առնչությամբ, ապա այդ աուդիտի կամ հետաքննության ավարտի ամսաթվից, և դրանք ՎԶԵԲ-ի պահանջով հասանելի դարձնել ՎԶԵԲ-ի ներկայացուցիչներին,

19.3.2.6. առանց ՎԶԵԲ-ի գրավոր համաձայնության Վարկառուի իր իրավունքները և/կամ պարտականությունները չզիջել/չփոխանցել այլ անձանց:

19.3.3. Վարկառուն տալիս է իր համաձայնությունը, որ իր վերաբերյալ, իր կողմից իրականացվող Ենթածրագրի/Ենթածրագրերի վերաբերյալ տվյալները, այդ թվում՝ անձնական և բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները, ինչպես նաև ցանկացած հաշվետվություն և փաստաթուղթ փոխանցվեն ՎԶԵԲ-ին, վերջինիս ներկայացուցիչներին և վերջիններիս կողմից ներգրավված խորհրդատուներին, Ծրագրի ֆինանսավորման կամ վերահսկողության հետ առնչություն ունեցող և/կամ Ծրագրով նախատեսված ցանկացած այլ անձի: Ընդ որում, անձնական և բանկային գաղտնիք կազմող նշված տեղեկություններն ու փաստաթղթերը, այդ թվում՝ Վարկառուի անունը և հասցեն, ՎԶԵԲ-ի կողմից կարող են փոխանցվել Ծրագրով սահմանված այլ անձանց, ինչպես նաև կարող են հրապարակվել ՎԶԵԲ-ի կամ Ծրագրով սահմանված այլ անձանց պաշտոնական կայքերում:

19.3.4. Վարկառուն հավաստիացնում է, որ.

19.3.4.1. համապատասխանում է Ծրագրի պահանջներին և Ծրագրով սահմանված արգելքներին/սահմանափակումներին,

19.3.4.2. Գիտակցում է Ծրագրի իրականացման շրջանակներում Դոնորի դերը: Վարկառուն տեղյակ է Ենթածրագրին Դոնորի կողմից տրամադրվող աջակցության մասին և այդ աջակցության տրամադրման պայմաններին ու սահմանափակումներին, որոնք սահմանված են Դոնորի հետ Վարկատուի կողմից կնքվող համապատասխան ֆինանսավորման պայմանագրով կամ ֆինանսավորմանն առնչվող այլ փաստաթղթերով,

19.3.4.3. Գիտակցում է արտարժույթի փոխարժեքի փոփոխման հետևանքով առաջացող հնարավոր անբարենպաստ հետևանքները և ռիսկերը (եթե Վարկը տրամադրվել է արտարժույթով), օրինակ, եթե դոլարի փոխարժեքը 10 (տասը) տոկոսով ավելանա, ապա Վարկառուի կողմից վճարվելիք ամսական մարման գումարը՝ դրամական արտահայտությամբ, նույնպես կավելանա 10 (տասը) տոկոսով,

19.3.4.4. Վարկառուն այնպիսի անձ կամ կազմակերպություն չէ, որը ներառված է ՎԶԵԲ-ի այն անձանց կամ կազմակերպությունների ցանկում, որոնք իրավասու չեն ստանալ ֆինանսավորում ՎԶԵԲ-ի կողմից (նման անձանց ցուցակը հրապարակված է ՎԶԵԲ-ի պաշտոնական կայքում):

19.4. Արևելյան գործընկերության երկրներում Կանայք բիզնեսում (WIB) ֆինանսավորման ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկեր

19.4.1. Պայմանագրի ստորագրմամբ Վարկատուն Վարկառուին տեղեկացնում է, որ Վարկը տրամադրվել է ՎԶԵԲ-ի, ԵՄ-ի, Շվեդիայի միջազգային զարգացման համագործակցության գործակալության (SIDA), Վաղ անցումային երկրների հիմնադրամի (ETC Fund) և Փոքր բիզնեսի աջակցման ֆոնդի (SBIF) (այսուհետ՝ նաև Դոնորներ) համագործակցությամբ իրականացվող Eastern Partnership Women in Business Financing ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում:

19.4.2. Վարկառուն պարտավորվում է՝

19.4.2.1. Թույլ տալ ՎԶԵԲ-ի կողմից նշանակված անձանց և/կամ ՎԶԵԲ-ի ներկայացուցիչներին, այդ թվում վերջինիս կողմից ներգրավված ցանկացած խորհրդատուի, Վարկատուին, Դոնորներին և Ծրագրով սահմանված այլ իրավասու անձանց անսահմանափակ քանակով և ցանկացած ժամանակ.

ա) այցելելու Վարկառուի գործունեության վայր և/կամ Ծրագրի շրջանակներում ստացվող վարկի միջոցով իրականացվող ծրագրի (այսուհետ՝ Ենթածրագիր) իրականացման տարածքներ և/կամ այն տարածքներ, որտեղ պահպանվում են Ենթածրագրի իրականացման հետ կապված փաստաթղթերը, նյութերը և սարքավորումները, ինչպես նաև նշված վայրերում իրականացնել ուսումնասիրություններ,

բ) ուսումնասիրել Վարկառուի կողմից իրականացվող Ենթածրագիրը, Վարկառուի հաշվապահական գրառումն ու հաշվառումը կապված ծրագրի իրականացման հետ, ինչպես նաև օրենքով թույլատրված դեպքերում հնարավորություն ունենալ պահանջել և ստանալ անհրաժեշտ փաստաթղթերը , այդ թվում՝ Վարկառուին, Վարկին կամ Ենթածրագրին վերաբերող ցանկացած տեղեկություն,

19.4.2.2. ՎԶԵԲ-ի և/կամ Վարկատուի կողմից պահանջվող ցանկացած տեղեկատվություն սեղմ ժամկետում տրամադրել Վարկատուին,

19.4.2.3. Չօգտագործել Վարկը ռազմական տեխնիկայի արտադրության կամ առևտրի, ֆինանսական հաստատությունների կամ ֆինանսական ծառայություններ մատուցող ընկերությունների, ապահովագրական բիզնեսի, ծխախոտի կամ թունդ ալկոհոլային խմիչքների /hard liquor/ արտադրության կամ վաճառքի, խաղատների կամ այլ մոլախաղերի օբյեկտների, անշարժ գույքում կամ արժույթներում սպեկուլյատիվ ներդրումների կամ ցանկացած այլ սպեկուլյատիվ ներդրումային գործունեության, ցանկացած տեսակի արժեթղթերում ներդրումների, ներառյալ այլ ընկերությունների բաժնետիրական կապիտալում ներդրումների, ՎԶԵԲ-ի Բնապահպանական և սոցիալական բացառման ցանկում ներառված ցանկացած գործունեության, առանց ՎԶԵԲ-ի նախնական գրավոր համաձայնության ՎԶԵԲ-ի Բնապահպանական և սոցիալական քաղաքականության (2014թ. մայիս) Հավելված 2-ի մեջ ներառված Ա կատեգորիայի նախագծերի ցուցիչ ցանկում նշված ցանկացած գործունեության ֆինանսավորման նպատակով,

19.4.2.4. Պահպանել Պայմանագրով ստացվող Վարկին վերաբերող բոլոր հաշվապահական փաստաթղթերը, հաշվառումներն ու արձանագրությունները վարկի ամբողջական մարումից հետո առնվազն 5 (հինգ) տարի,

19.4.2.5. Ապահովել Ծրագրին վերաբերող նյութերի, փաստաթղթերի, արձանագրությունների, հաշվետվությունների, թվայնացված տեղեկատվության ազատ հասանելիությունը և պատշաճ պահպանումը այնպիսի եղանակով, որը հնարավոր կդարձնի դրանց ստուգումը, աուդիտի իրականացումը,

19.4.2.6. Համապատասխանել ՎԶԵԲ-ի Գերփոքր և փոքր վարկերի բնապահպանական և սոցիալական ընթացակարգերին:

19.4.3. Վարկառուն տալիս է իր համաձայնությունը, որ իր վերաբերյալ, իր կողմից իրականացվող Ենթածրագրի/Ենթածրագրերի վերաբերյալ տվյալները, այդ թվում՝ անձնական և բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները, ինչպես նաև ցանկացած հաշվետվություն և փաստաթուղթ փոխանցվեն ՎԶԵԲ-ին, Դոնորներին, վերջիններիս ներկայացուցիչներին և վերջիններիս կողմից ներգրավված խորհրդատուներին, Ծրագրի ֆինանսավորման կամ վերահսկողության հետ առնչություն ունեցող և/կամ Ծրագրով նախատեսված ցանկացած այլ անձի: Ընդ որում, անձնական և բանկային գաղտնիք կազմող նշված տեղեկություններն ու փաստաթղթերը, այդ թվում՝ Վարկառուի անունը և հասցեն, ՎԶԵԲ-ի կողմից կարող են փոխանցվել Դոնորներին, ինչպես նաև կարող են հրապարակվել ՎԶԵԲ-ի կամ Ծրագրով սահմանված այլ անձանց պաշտոնական կայքերում:

19.4.4. Վարկառուն հավաստիացնում է, որ.

19.4.4.1. համապատասխանում է Միավորված ազգերի կազմակերպության և Եվրոպական միության սանկցիաների ցուցակներին,

19.4.4.2. Համապատասխանում է Ծրագրի պահանջներին և Ծրագրով սահմանված արգելքներին/սահմանափակումներին,

19.4.4.3. Գիտակցում է Ծրագրի իրականացման շրջանակներում Դոնորների դերը: Վարկառուն տեղյակ է Ծրագրին, ինչպես նաև Ծրագրի շրջանակներում իրականացվող Ենթածրագրին Դոնորների կողմից տրամադրվող աջակցության մասին և այդ աջակցության տրամադրման պայմաններին ու սահմանափակումներին, որոնք սահմանված են ՎԶԵԲ-ի հետ կնքվող համապատասխան ֆինանսավորման պայմանագրով կամ ֆինանսավորմանն առնչվող այլ փաստաթղթերով,

19.4.4.4. Գիտակցում է արտարժույթի փոխարժեքի փոփոխման հետևանքով առաջացող հնարավոր անբարենպաստ հետևանքները և ռիսկերը (եթե վարկը տրամադրվել է արտարժույթով), օրինակ, եթե դոլարի փոխարժեքը 10 (տասը) տոկոսով ավելանա, ապա Վարկառուի կողմից

վճարվելիք ամսական մարման գումարը՝ դրամական արտահայտությամբ, նույնպես կավելանա 10 (տասը) տոկոսով,

19.4.4.5. Վարկառուն այնպիսի անձ կամ կազմակերպություն չէ, որը ներառված է ՎԶԵԲ-ի այն անձանց կամ կազմակերպությունների ցանկում, որոնք իրավասու չեն ստանալ ֆինանսավորում ՎԶԵԲ-ի կողմից /նման անձանց ցուցակը հրապարակված է ՎԶԵԲ-ի պաշտոնական կայքում/:

19.5. «ՀՀ Գյուղատնտեսության ոլորտի աջակցում» վարկային ծրագրի, «Էներգաարդյունավետություն ՓՄՁ-երի համար» վարկային ծրագրի, «ՄՓՄՁ աջակցում» վարկային ծրագրի և «ՓՄՁ ֆինանսական միջոցների հասանելիության» վարկային ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկեր

19.5.1. Պայմանագրի ստորագրմամբ Վարկառուն հավաստիացնում է, որ ծանոթացել է ստորև թվարկվող հասկացությունների բովանդակությանը.

-Ծրագիր՝ ՀՀ Կենտրոնական բանկի և Վարկատուի միջև կնքված համապատասխան Գլխավոր վարկային պայմանագրով սահմանված վարկային ծրագիր,

-**Հարկադրման պրակտիկա՝** ցանկացած անձի կամ անձի սեփականությանը ուղղակի կամ անուղղակի վնաս պատճառելը կամ վնասելու սպառնալիքը անձի գործողությունների վրա ոչ պատշաճ կերպով ազդելու նպատակով,

-Դավադրության պրակտիկա՝ ոչ պատշաճ նպատակին հասնելուն ուղղված երկու կամ ավելի անձանց միջև պայմանավորվածությունը, ներառյալ այլ անձի գործողությունների վրա ոչ պատշաճ կերպով ազդելը,

-Կոռուպցիոն պրակտիկա՝ ցանկացած անձին կամ անձի կողմից ցանկացած ապօրինի վճարումը կամ անհիմն առավելություն խոստանալը, առաջարկելը, տալը, կատարելը, պնդելը, ստանալը, ընդունելը կամ պահանջելը, ուղղակիորեն կամ անուղղակիորեն՝ նպատակ ունենալով ազդել ցանկացած անձի գործողությունների վրա կամ ստիպել ձեռնպահ մնալ որևէ գործողությունից,

-Խարդախության պրակտիկա՝ ցանկացած գործողություն կամ անգործություն, ներառյալ խեղաթյուրում, որը գիտակցաբար կամ անգիտակցաբար կերպով մոլորեցնում կամ փորձում է մոլորեցնել անձին ֆինանսական օգուտ ստանալու կամ պարտավորությունից խուսափելու համար,

-Խոչընդոտման պրակտիկա՝

(ա) հետաքննության համար ապացույցների նյութը դիտավորյալ ոչնչացնելը, կեղծելը, փոփոխելը կամ թաքցնելը կամ քննիչներին կեղծ ցուցմունքներ տալը կոռուպցիոն գործունեության, խարդախության, հարկադրման կամ դավադրության պրակտիկայի վերաբերյալ մեղադրանքների պաշտոնական հետաքննությանը էականորեն խոչընդոտելու նպատակով, կամ սպառնալ, հետապնդել կամ ահաբեկել որևէ անձի՝ կանխելու հետաքննությանն առնչվող հարցերի վերաբերյալ իր տեղեկությունների բացահայտումը կամ հետաքննության ընթացքը, կամ

(բ) գործողություններ, որոնք նպատակ ունեն էականորեն խոչընդոտել KfW-ի հասանելիությունը պայմանագրով պահանջվող տեղեկատվությանը՝ կապված կոռուպցիոն, խարդախության, հարկադրման կամ դավադրության պրակտիկայի վերաբերյալ պաշտոնական հետաքննության հետ,

-Անձ՝ ցանկացած ֆիզիկական անձ, իրավաբանական անձ, գործընկերություն կամ չգրանցված միավորում,

-Պատժամիջոցների ենթակա պրակտիկա՝ ցանկացած հարկադրման, դավադրության, կոռուպցիոն, խարդախության կամ խոչընդոտման պրակտիկա (ըստ այս փաստաթղթում տրված սահմանումների), որը

(ա) անօրինական է Գերմանիայի Դաշնության կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն և

(բ) որը առաջացնում է կամ կարող է առաջացնել նյութաիրավական կամ հեղինակության ռիսկ Վարկատուի և ՀՀ Կենտրոնական բանկի միջև կնքված վարկային պայմանագրի կամ վերջինիս իրականացման վրա,

-Պատժամիջոցներ՝ պատժամիջոցներ սահմանող ցանկացած մարմնի կողմից կիրառվող, ընդունվող/ուժի մեջ մտնող կամ պարտադրվող տնտեսական, ֆինանսական կամ առևտրային

պատժամիջոցներին վերաբերող օրենքներ, կանոնակարգեր, էմբարգոներ կամ սահմանափակող միջոցներ,

-Պատժամիջոցներ սահմանող մարմին՝ Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհուրդ կամ Եվրոպական միություն, կամ Գերմանիայի Դաշնային Հանրապետություն,

-Պատժամիջոցների ցանկ՝ Պատժամիջոցներ սահմանող մարմիններից ցանկացածի կողմից հրապարակվող հատուկ նշանակված անձանց, խմբերի կամ կազմակերպությունների ցանկացած ցանկ:

19.5.2. Վարկառուն պարտավորվում է՝

19.5.2.1. ՀՀ Կենտրոնական բանկին, Վարկատուին, ինչպես նաև ՀՀ Կենտրոնական բանկի և Վարկատուի միջև կնքված համապատասխան պայմանագրերով սահմանված այլ անձանց անհապաղ տրամադրել վերջիններիս կողմից պահանջվող բոլոր տեղեկությունները և փաստաթղթերը, որոնք վերջիններս պահանջում են՝ կանխելու ցանկացած պատժամիջոցների պրակտիկա, փողերի լվացում կամ ահաբեկչության ֆինանսավորում, ինչպես նաև գործարար հարաբերությունների շարունակական մոնիտորինգի նպատակով,

19.5.2.2. անհապաղ և ինքնակամ տեղեկացնել Վարկատուին Ծրագրին առնչվող պատժամիջոցների ցանկացած պրակտիկայի, փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման հետ կապված գործողությունների մասին,

19.5.2.3. լիարժեք համագործակցել Վարկատուի և ՀՀ Կենտրոնական բանկի հետ պատժամիջոցների ենթակա պրակտիկայի, փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման որևէ գործողության հետ կապված ցանկացած տեղեկատվության մասին իմանալու կամ կասկածի պարագայում՝ նման միջադեպի տեղի ունենալը պարզելու նպատակով: Մասնավորապես, Վարկառուն պետք է անհապաղ և ողջամիտ մանրամասնությամբ արձագանքի Վարկատուի և/կամ ՀՀ Կենտրոնական բանկի ցանկացած ծանուցմանը և որպես արձագանք տրամադրի փաստաթղթային աջակցություն Վարկատուի և/կամ ՀՀ Կենտրոնական բանկի պահանջով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող կարգով,

19.5.2.4. չմտնել Ծրագրի հետ կապված այնպիսի գործարքի մեջ կամ չծավալել որևէ այլ գործունեություն, որը կարող է հանդիսանալ պատժամիջոցների խախտում, փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորում,

19.5.2.5. Ծրագրի շրջանակում ուղղակիորեն կամ անուղղակիորեն գործարար հարաբերությունների մեջ չգտնվել կամ չմտնել պատժամիջոցի ենթարկված ցանկացած անձի հետ և/կամ որևէ դրամական միջոցներ և/կամ տնտեսական ռեսուրսներ չտրամադրել պատժամիջոցի ենթարկված ցանկացած անձի կամ ի շահ այդ անձանց,

19.5.2.6. չիրականացնել որևէ գործունեություն, այդ թվում՝ չօգտագործել վարկային միջոցները կամ Վարկառուի գործունեությունից ստացված հասույթը կամ որևէ միջոց այնպիսի եղանակով, որը կարող է հանգեցնել Վարկատուի կամ Վարկառուի կողմից պատժամիջոցների խախտման,

19.5.2.7. չիրականացնել որևէ վճարում այն միջոցներից, որոնք ստացվում են պատժամիջոցի ենթարկված անձի, պատժամիջոցները խախտող անձի հետ գործունեության արդյունքում կամ որևէ այլ ձևով, որը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել Վարկատուի կամ Վարկառուի կողմից պատժամիջոցների խախտման:

19.5.2.8. Վարկատուի և/կամ ՀՀ ԿԲ-ի և/կամ KFW-ի ներկայացուցիչների և/կամ ««Գերմանահայկական հիմնադրամ» Ծրագրի Կառավարման Գրասենյակ» հիմնարկի (այսուհետ՝ Հիմնարկ) աուդիտորների և/կամ Հիմնարկի արտաքին աուդիտորների և/կամ Ծրագրով սահմանված այլ իրավասու անձանց պահանջով տրամադրել անհրաժեշտ տեղեկություններն ու փաստաթղթերը, ինչպես նաև հնարավորություն ընձեռել վերջիններիս՝

-հարցազրույցներ իրականացնել Վարկառուի ներկայացուցիչների հետ, առանց խոչընդոտների կապեր հաստատել Պայմանագրի հիման վրա տրամադրված Վարկի միջոցներով ֆինանսավորվող գործունեության մեջ ներգրավված կամ դրան առնչվող որևէ անձի հետ,

-ուսումնասիրել Վարկառուի հաշվառումներն ու հաշիվները, պատճենահանել կամ էլեկտրոնային եղանակով ստանալ ցանկացած անհրաժեշտ փաստաթուղթ,

-անարգել ծանոթանալ իր տնտեսական գործունեությանը և կատարել ուսումնասիրությունների համար անհրաժեշտ գործողություններ, այդ թվում՝ ուսումնասիրել Վարկի միջոցներով ֆինանսավորվող Վարկառուի բիզնեսը և համապատասխան անհրաժեշտ փաստաթղթերը, Վարկառուի ֆինանսական դրությունը և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, անարգել այցելել Վարկառուի տնտեսական գործունեության վայրեր, ցանկացած պահի ստուգել Վարկի նպատակային օգտագործումը,

19.5.2.9. Չօգտագործել Վարկի միջոցները Միջազգային ֆինանսական կորպորացիայի (IFC) բացառման ցուցակում նշված որևէ գործունեության իրականացման նպատակով, ինչպես նաև համապատասխանել Հիմնարկի կողմից սահմանված Բնապահպանական և սոցիալական պահանջներին,

19.5.2.10. Չխոչընդոտել KFW-ի ներկայացուցիչների և/կամ Հիմնարկի աուդիտորների և/կամ Հիմնարկի արտաքին աուդիտորների կապերը Վարկի միջոցով ֆինանսավորվող գործունեության մեջ ներգրավված կամ դրան առնչվող որևէ անձի հետ,

19.5.2.11. Պահպանել Վարկի սահմաններում կատարված բոլոր գնումները հիմնավորող փաստաթղթերը և պահանջի դեպքում դրանք կամ դրանց պատճենները տրամադրել Վարկատուին,

19.5.2.12. Վարկատուի պահանջով ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում ապահովագրական ընկերությունների (ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան, որոնք ունեն ապահովագրական գործունեություն իրականացնելու առնվազն երեք տարվա փորձ) միջոցով իրականացնել այնպիսի ապահովագրություն, այնպիսի ռիսկերի դեմ և այնպիսի գումարներով, որոնք համահունչ են հիմնական բիզնես պրակտիկային,

19.5.2.13. Չխոչընդոտել Վարկատուի կողմից Վարկի նպատակային օգտագործմանը, ֆինանսական կամ ցանկացած այլ բնույթի մոնիթորինգի իրականացմանը:

19.5.3. Վարկառուն տալիս է իր համաձայնությունը, որ իր վերաբերյալ, Վարկի միջոցներով ֆինանսավորվող իր գործունեության վերաբերյալ տվյալները, այդ թվում՝ անձնական և բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները, ինչպես նաև ցանկացած հաշվետվություն և փաստաթուղթ փոխանցվեն ՀՀ ԿԲ-ին, KFW-ին, Հիմնարկին կամ վերջիններիս ներկայացուցիչներին, աուդիտորներին, արտաքին աուդիտորներին և վերջիններիս կողմից ներգրավված խորհրդատուներին, ինչպես նաև Վարկի տրամադրման նպատակով Վարկատուի և ՀՀ ԿԲ-ի միջև կնքված պայմանագրով սահմանված ծրագրի ֆինանսավորման կամ վերահսկողության հետ առնչություն ունեցող և/կամ Ծրագրով նախատեսված ցանկացած այլ անձի:

19.6. Green for Growth, Southeast Europe S.A., SICAV-SIF ֆոնդի շրջանակներում տրամադրվող վարկեր

19.6.1. Վարկառուն պարտավորվում է՝

19.6.1.1. Վարկատուի և/կամ ՀՀ ԿԲ-ի պահանջով տրամադրել անհրաժեշտ տեղեկություններն ու փաստաթղթերը, ինչպես նաև հնարավորություն ընձեռել վերջիններիս անարգել ծանոթանալ իր տնտեսական գործունեությանը և կատարել ուսումնասիրությունների համար անհրաժեշտ գործողություններ,

19.6.1.2. Green for Growth ֆոնդի (այսուհետ՝ Ֆոնդ) պահանջով վերջինիս տրամադրել հստակ և ամբողջական տեղեկատվություն Վարկի օգտագործման վերաբերյալ, Ֆոնդի և Վարկատուի միջև կնքված պայմանագրով (այսուհետ՝ Ֆինանսավորման պայմանագիր) սահմանված բնապահպանական կամ սոցիալական պահանջների խախտման, կատարված կամ ենթադրյալ արգելված գործողությունների վերաբերյալ, ինչպես նաև Ֆոնդի ողջամտորեն ներկայացված պահանջով՝ցանկացած լրացուցիչ տեղեկատվություն,

19.6.1.3. Իր գործունեությունը համապատասխանեցնել Ֆինանսավորման պայմանագրով սահմանված բնապահպանական կամ սոցիալական պահանջներին և ձեռնարկել անհրաժեշտ գործողություններ նշված պահանջների խախտման կամ ծանր հետևանքներ առաջացնող բնապահպանական կամ սոցիալական պատահարի հետևանքները մեղմելու կամ վերացնելու համար,

19.6.1.4. Չիրականացնել Ֆինանսավորման պայմանագրով սահմանված արգելված գործունեություն և չներգրավվել դրանում, ինչպես նաև ձեռնարկել անհրաժեշտ գործողություններ այն դադարեցնելու և հետևանքները մեղմելու կամ վերացնելու համար,

19.6.1.5. Ֆինանսավորման պայմանագրով սահմանված բնապահպանական կամ սոցիալական պահանջների խախտման, ծանր հետևանքներ առաջացնող բնապահպանական կամ սոցիալական պատահարի, արգելված գործողությունների իրականացման հանգամանքները պարզելու և դրանց հետևանքները վերացնելու նպատակով, ինչպես նաև Վարկի օգտագործման վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով համագործակցել Ֆոնդի, Ֆոնդի ներկայացուցիչների, Ֆոնդի համար ծառայություններ մատուցող անձանց, Եվրոպական հանձնաժողովի, Խարդախության դեմ պայքարի Եվրոպական գրասենյակի (OLAF), Աուդիտորների եվրոպական դատարանի, Եվրոպական ներդրումային բանկի, KFW-ի, ԳԴՀ տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության (BMZ), Գերմանիայի աուդիտորների դաշնային դատարանի, ԵՄ պաշտոնյաների, այլ իրավասու եվրոպական կառույցների և վերջիններիս ներկայացուցիչների/գործակալների (այսուհետ՝ Իրավասու մարմիններ) հետ և վերջիններիս տրամադրել աջակցություն, այդ թվում՝

- Թույլ տալ ուսումնասիրել Վարկառուի գործունեությունը և անհրաժեշտության դեպքում այցելել վերջինիս գործունեության վայրեր, տեղում իրականացնել ստուգումներ, ուսումնասիրել և պատճենել Վարկառուի գործունեությանն առնչվող փաստաթղթերը, դրանցից ստանալ քաղվածքներ,
- Թույլ տալ Վարկառուի տնտեսական գործունեության վերաբերյալ անցկացնել քննարկումներ Վարկառուի աշխատակիցների և/կամ Վարկառուի համար ծառայություններ մատուցող անձանց հետ, Իրավասու մարմինների պահանջով մասնակցել մոնիթորինգների, գնահատումների և աշխատանքների համակարգման նպատակով անցկացվող հանդիպումների,
- Կազմել և պահպանել պատշաճ հաշվապահական փաստաթղթեր և ապահովել պատշաճ փաստաթղթաշրջանառություն՝ տվյալ ոլորտում ձևավորված լավագույն փորձին համապատասխան:

19.6.2. Վարկառուն տալիս է իր համաձայնությունը, որ իր վերաբերյալ տվյալները, այդ թվում՝ անձնական և բանկային գաղտնիք կազմող տվյալները փոխանցվեն Իրավասու մարմիններին, Ֆոնդի բաժնետերերին և ներդրողներին:

19.7. The European fund for Southeast Europe S.A., SICAV-SIF Ֆոնդի շրջանակներում տրամադրվող վարկեր

19.7.1. Վարկառուն պարտավորվում է՝

19.7.1.1. Հարավարևելյան Եվրոպայի եվրոպական հիմնադրամին (THE EUROPEAN FUND FOR SOUTHEAST EUROPE S.A., SICAV-SIF) (այսուհետ՝ Ֆոնդ), Ֆոնդի ներկայացուցիչներին և/կամ աշխատակիցներին և/կամ խորհրդատուներին և/կամ Ֆոնդի համար ծառայություններ մատուցող անձանց, Եվրոպական հանձնաժողովին, Խարդախության դեմ պայքարի Եվրոպական գրասենյակին (OLAF), Աուդիտորների եվրոպական դատարանին, Եվրոպական ներդրումային բանկին, KFW-ին, ԳԴՀ տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարությանը (BMZ), Գերմանիայի աուդիտորների դաշնային դատարանին, ԵՄ պաշտոնյաներին, Ֆոնդի ոչ մասնավոր ներդրողներին և նրանց համապատասխան ներկայացուցիչներին, այլ իրավասու եվրոպական կառույցներին և վերջիններիս ներկայացուցիչներին/գործակալներին կամ հետաքննող մարմիններին, Եվրոպական միության պաշտոնատար անձանց (այսուհետ բոլորը միասին կամ առանձին նաև՝ Իրավասու մարմիններ) և/կամ Վարկատուի ու Ֆոնդի միջև կնքված համապատասխան ֆինանսավորման պայմանագրով (այսուհետ՝ Ֆինանսավորման պայմանագիր) սահմանված այլ անձանց՝

-ցանկացած պահի անվճար հասանելիություն տրամադրել իր բոլոր տարածքներին, սարքավորումներին և այլ հարմարություններին, ակտիվներին, հաշվետվություններին և ցանկացած այլ փաստաթղթերին,

-Ֆինանսական փաստաթղթերի և/կամ դրանց ֆինանսավորման աղբյուրի (ուղղակի և անուղղակի) և դրանց օգտագործման հետ կապված՝ հնարավորություն տալ իրականացնել

փաստաթղթային և տեղում ստուգումներ, մասնակցել մոնիթորինգների, գնահատումների և աշխատանքների համակարգման նպատակով անցկացվող հանդիպումների, ուսումնասիրել և պատճենել Վարկառուի գործունեությանն առնչվող փաստաթղթերը, դրանցից ստանալ քաղվածքներ,

-հնարավորություն տալ հանդիպումներ/քննարկումներ ունենալ Վարկառուի ղեկավարության և/կամ այլ աշխատակիցների հետ,

19.7.1.2. Վարկի օգտագործման, Ֆինանսավորման պայմանագրով սահմանված բնապահպանական կամ սոցիալական պահանջների խախտման, բնապահպանական կամ սոցիալական պատահարի (ներառյալ այն շտկելու եղանակի), կատարված կամ ենթադրյալ արգելված գործողությունների (ներառյալ՝ ցանկացած դատավարություն, վարույթ, բողոք կամ հետաքննություն) կապակցությամբ համագործակցել Իրավասու մարմինների հետ, Ֆոնդի պահանջով տրամադրել ցանկացած լրացուցիչ տեղեկատվություն և աջակցություն,

19.7.1.3. Կազմել և պահպանել պատշաճ հաշվապահական փաստաթղթեր և ապահովել պատշաճ փաստաթղթաշրջանառություն՝ տվյալ ոլորտում ձևավորված լավագույն փորձին համապատասխան (ներառյալ՝ վարկից ստացված շահույթի օգտագործման հետ կապված):

19.7.1.4. Իր գործունեությունը համապատասխանեցնել Ֆինանսավորման պայմանագրով սահմանված բնապահպանական կամ սոցիալական պահանջներին, չկատարել կամ չներգրավվել Ֆինանսավորման պայմանագրով սահմանված արգելված գործողությունների մեջ և ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ բնապահպանական կամ սոցիալական պահանջների ցանկացած խախտում, ինչպես նաև բնապահպանական կամ սոցիալական պատահարի հետևանքները վերացնելու, մեղմելու կամ դադարեցնելու, ինչպես նաև ցանկացած ենթադրյալ/կասկածելի արգելված գործողության փաստացի դրսևորումը մեղմելու կամ վերացնելու համար,

19.7.1.5. Իր հետ կապված Ֆինանսավորման պայմանագրով սահմանված որևէ բնապահպանական և սոցիալական պատահար տեղի ունենալու կամ բնապահպանական և սոցիալական հայց ներկայացվելու կամ բնապահպանական և սոցիալական պահանջների խախտման կամ այդ պահանջներին չհամապատասխանելու դեպքում այդ մասին անհապաղ տեղեկացնել Վարկառուին և վերջինիս պահանջով տրամադրել ցանկացած անհրաժեշտ տեղեկատվություն/փաստաթուղթ,

19.7.1.6. Ֆինանսավորման պայմանագրով սահմանված գաղտնի տեղեկատվությունը իրեն տրամադրվելու կամ այլ կերպ իրեն հայտնի դառնալու դեպքում պահպանել այդ տեղեկատվության գաղտնիությունը,

19.7.2. Վարկառուն տալիս է իր համաձայնությունը, որ իր և իր Վարկի վերաբերյալ տվյալները (այդ թվում՝ անձնական և բանկային գաղտնիք կազմող), ինչպես նաև ցանկացած հաշվետվություն և փաստաթուղթ փոխանցվեն Իրավասու մարմիններին:

19.7.3. Պայմանագրի ստորագրմամբ Վարկառուն հավաստիացնում է, որ.

-համապատասխանում է Ֆինանսավորման պայմանագրով սահմանված բնապահպանական կամ սոցիալական պահանջներին,

-իր հետ կապված որևէ բնապահպանական և սոցիալական պատահար, աշխատողների պաշտպանության խնդիրներ (առողջություն և անվտանգություն, երեխաների աշխատանք, հարկադիր աշխատանք և խտրականության պրակտիկա) տեղի չի ունեցել կամ չի շարունակվում, ինչպես նաև իր դեմ որևէ բնապահպանական և սոցիալական հայց չի ներկայացվել կամ առկա չի եղել/առկա չէ նման հայց ներկայացնելու վտանգ/սպառնալիք:

19.8. Ասիական Զարգացման Բանկի վարկի միջոցներով ֆինանսավորվող «Կանանց ձեռներեցության ոլորտի աջակցման և զարգացման» ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկեր

19.8.1. Վարկառուն պարտավորվում է Վարկատուի և/կամ ՀՀ ԿԲ-ի և/կամ Ասիական զարգացման բանկի ներկայացուցիչների և/կամ ««Գերմանահայկական հիմնադրամ» Ծրագրի Կառավարման Գրասենյակ» հիմնարկի (այսուհետ՝ Հիմնարկ) աուդիտորների և/կամ Հիմնարկի արտաքին աուդիտորների և/կամ «Կանանց ձեռներեցության ոլորտի աջակցման և զարգացման» ծրագրով

սահմանված այլ իրավասու անձանց պահանջով տրամադրել անհրաժեշտ տեղեկություններն ու փաստաթղթերը, ինչպես նաև հնարավորություն ընձեռել վերջիններիս՝

-հարցազրույցներ իրականացնել Վարկառուի ներկայացուցիչների հետ, առանց խոչընդոտների կապեր հաստատել Պայմանագրի հիման վրա տրամադրված Վարկի միջոցներով ֆինանսավորվող գործունեության մեջ ներգրավված կամ դրան առնչվող որևէ անձի հետ,

-ուսումնասիրել Վարկառուի հաշվառումներն ու հաշիվները, պատճենահանել կամ էլեկտրոնային եղանակով ստանալ ցանկացած անհրաժեշտ փաստաթուղթ,

-անարգել ծանոթանալ իր տնտեսական գործունեությանը և կատարել ուսումնասիրությունների համար անհրաժեշտ գործողություններ, այդ թվում՝ ուսումնասիրել Վարկի միջոցներով ֆինանսավորվող Վարկառուի բիզնեսը և համապատասխան անհրաժեշտ փաստաթղթերը, Վարկառուի ֆինանսական դրությունը և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, անարգել այցելել Վարկառուի տնտեսական գործունեության վայրեր, ցանկացած պահի ստուգել Վարկի նպատակային օգտագործումը,

19.8.2. Վարկառուն տալիս է իր համաձայնությունը, որ իր վերաբերյալ, Վարկի միջոցներով ֆինանսավորվող իր գործունեության վերաբերյալ տվյալները, այդ թվում՝ անձնական և բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները, ինչպես նաև ցանկացած հաշվետվություն և փաստաթուղթ փոխանցվեն ՀՀ ԿԲ-ին, Ասիական զարգացման բանկին, Հիմնարկին կամ վերջիններիս ներկայացուցիչներին, աուդիտորներին, արտաքին աուդիտորներին և վերջիններիս կողմից ներգրավված խորհրդատուներին, ինչպես նաև «Կանանց ձեռներեցության ոլորտի աջակցման և զարգացման» ծրագրով սահմանված ցանկացած այլ անձի:

19.9. «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ Ազգային Հիփոթեքային Ընկերության ստանդարտ վարկեր

19.9.1. «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ն, իր և Վարկատուի միջև կնքված պայմանագրի համաձայն, իրավունք ունի փոփոխել վարկի տոկոսադրույքը: Այդ դեպքում համամասնորեն փոփոխվում է Վարկի տոկոսադրույքը և կիրառվում է Սակագներով հիփոթեքային վարկերի համար նախատեսված տոկոսադրույքը: Փոփոխված տոկոսադրույքը սկսում է կիրառվել Վարկի մարման գրաֆիկով սահմանված Վարկի վերադարձի և/կամ տոկոսի հերթական վճարման օրվանից սկսած,

19.9.2. Եթե Վարկի գումարի կամ տոկոսի վճարումն 90 (իննսուն) օրից ավել ժամկետանց է դառնում, կամ Վարկը «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի որոշմամբ չի հանդիսանում Որակավորված հիփոթեքային վարկ, ապա տվյալ պահից սկսած Պայմանագրով սահմանված տոկոսադրույքի փոխարեն կիրառվում է Սակագներով հիփոթեքային վարկերի համար նախատեսված տոկոսադրույքը:

19.9.3. Վարկատուն իրավունք ունի՝

19.9.3.1. Վարկառուի վերաբերյալ տվյալները փոխանցել կամ բացահայտել «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ին,

19.9.3.2. Պայմանագրից բխող իր իրավունքները փոխանցել այլ անձի՝ պահպանելով պահանջը զիջելու միջոցով պարտատիրոջ իրավունքները փոխանցելու կանոնները,

19.9.4. Վարկատուն պարտավորվում է ապահովել, որ Պայմանագրի ապահովման միջոց հանդիսացող գույքերի իրացման դեպքում առաջնային բավարարվեն «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի կողմից վերաֆինանսավորված Վարկի հետ կապված պարտավորությունները:

19.10. «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ի «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկեր

19.10.1. «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ն, իր և Վարկատուի միջև կնքված պայմանագրի համաձայն, իրավունք ունի փոփոխել վարկի տոկոսադրույքը: Այդ դեպքում համամասնորեն փոփոխվում է Վարկի տոկոսադրույքը և կիրառվում է Սակագներով հիփոթեքային

վարկերի համար նախատեսված տոկոսադրույքը: Փոփոխված տոկոսադրույքը սկսում է կիրառվել Վարկի մարման գրաֆիկով սահմանված Վարկի վերադարձի և/կամ տոկոսի հերթական վճարման օրվանից սկսած,

19.10.2. Եթե Վարկի գումարի կամ տոկոսի վճարումն 90 (իննսուն) օրից ավել ժամկետանց է դառնում, կամ Վարկը «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ի որոշմամբ չի հանդիսանում Որակավորված հիփոթեքային վարկ, ապա տվյալ պահից սկսած Պայմանագրով սահմանված տոկոսադրույքի փոխարեն կիրառվում է Սակագներով հիփոթեքային վարկերի համար նախատեսված տոկոսադրույքը,

19.10.3. Վարկառուն պարտավոր է Պայմանագրի գործողության ընթացքում չխոչընդոտել Վարկատուի և «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ի կողմից մոնիթորինգների իրականացմանը,

19.10.4. Վարկատուն իրավունք ունի Վարկառուի վերաբերյալ տվյալները փոխանցել կամ բացահայտել «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ին և ՀՀ կառավարությանը՝ վերջինիս կողմից Վարկառուի վճարվելիք տոկոսագումարի սուբսիդավորման դեպքում:

19.10.5. Կողմերը համաձայնում են, որ

19.10.5.1. «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ կողմից վերաֆինանսավորման ողջ ժամանակահատվածում Գլխավոր վարկային պայմանագրի շրջանակներում այլ Վարկ չի կարող տրամադրվել՝ մինչև վերաֆինանսավորված Վարկի ամբողջական մարումը կամ վերաֆինանսավորման դադարեցումը,

19.10.5.2. Գլխավոր վարկային պայմանագրի շրջանակներում «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի շրջանակներում կարող է Վարկ տրամադրվել միայն այն դեպքում, երբ մինչ այդ Պայմանագրի շրջանակներում տրամադրված որևէ այլ գործող Վարկ (Վարկառուի այլ դրամային պարտավորություն) առկա չէ:

Նշված դրույթը Բանկի կողմից կարող է փոփոխվել՝ «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ին այդ մասին նախապես ծանուցման և համաձայնության ստացման պայմանով՝ ծանուցումից հետո եռամսյա ժամկետում:

19.11. «Հայաստանի վերականգնվող էներգիայի և էներգախնայողության» հիմնադրամի կողմից իրականացվող էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ֆինանսավորման ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկեր

19.11.1. Վարկառուն պարտավորվում է ապահովել ՀՀ Կենտրոնական բանկի, Պայմանագրով նախատեսված ծրագրի խորհրդատուի, ՀՎԷԷՀ-ի կամ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից լիազորված ցանկացած այլ անձի հասանելիությունը ծրագրի շրջանակներում վերաֆինանսավորվող վերականգնվող էներգիայի էլեկտրակայանների և տեղադրվող արևային ջրատաքացուցիչների տեղամաս առանց որևիցե սահմանափակումների կամ արգելքների:

19.11.2. Վարկատուն իրավունք ունի Տարաժամկետ վճարման պայմանով ապրանքի առուվաճառքի/ծառայությունների մատուցման պայմանագրով սահմանված իրավունքները դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգ) պայմանագրով իրեն զիջվելու դեպքում, Վարկառուից պահանջել Վարկի գումարի և հաշվարկված տոկոսագումարների վաղաժամկետ մարում Պայմանագրով նախատեսված ծրագրի շրջանակներում գործող խորհրդատուի կողմից իրականացված մոնիտորինգների արդյունքում բացահայտված վարկային միջոցների ոչ նպատակային օգտագործման, նախագծից էական շեղումների, Պայմանագրով նախատեսված ծրագրի խորհրդատուի պայմանական հաստատումը ստանալուց հետո այդ պայմանների չիրականացման, ինչպես նաև բնապահպանական և սոցիալական ռիսկերի նվազեցման միջոցառումների չիրականացման դեպքում:

19.11.3. Վարկառուն տալիս է համաձայնություն իրեն վերաբերող բանկային գաղտնիք կազմող տեղեկատվությունը տրամադրել ՀՀ Կենտրոնական բանկին, Պայմանագրով նախատեսված ծրագրի խորհրդատուին, ՀՎԷԷՀ-ի կամ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից լիազորված ցանկացած այլ անձին:

19.12. ՎԶԵԲ-ի հետ ռիսկի բաշխման ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկեր

19.12.1. Վարկառուն պարտավոր է՝

19.12.1.1. Թույլ տալ Վարկատուին՝ Վարկի գործողության ողջ ընթացքում ցանկացած ժամանակ իրականացնել Վարկի օգտագործման նկատմամբ պատշաճ ուսումնասիրություն և մոնիթորինգ, այդ թվում՝ Վարկառուի սեփականության և վերահսկողության վերաբերյալ, ինչպես նաև ՎԶԵԲ-ի հետ համագործակցությամբ իրականացվող Ռիսկի բաշխման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում ստացվող Վարկի միջոցներով ֆինանսավորվող ենթածրագրի (այսուհետ՝ Ենթածրագիր) բնապահպանական և սոցիալական տեղեկատվության բացահայտման նպատակով,

19.12.1.2. Վարկն օգտագործել ՀՀ-ում իրականացվող գործունեության ֆինանսավորման նպատակով,

19.12.1.3. Խուսափել շահերի բախումից,

19.12.1.4. Ապահովել անձնական տվյալների համապատասխան պատշաճ պաշտպանությունը,

19.12.1.5. Թույլ տալ ՎԶԵԲ-ին ցանկացած ժամանակ իրականացնել ՎԶԵԲ-ի և Վարկատուի միջև կնքված Ռիսկի բաշխման պայմանագրով սահմանված պայմաններին և/կամ չափանիշներին Վարկի համապատասխանության, ներառյալ՝ Վարկի վերաբերյալ ցանկացած տվյալների և գրառումների ստուգումներ,

19.12.1.6. Վարկի միջոցներով ֆինանսավորվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումները իրականացնել արդար շուկայական գներով և գին/որակ օպտիմալ հարաբերակցությամբ,

19.12.1.7. Կիրառելի իրավական ակտերին/կանոններին համապատասխան ունենալ և պատշաճ կերպով պահպանել իր ռիսկերի կառավարման և համապատասխանության համակարգերն ու վերահսկման շրջանակը (ներառյալ հաճախորդներին ճանաչելու (KYC) միջոցառումների հետ կապված) իր գործունեության բոլոր ոլորտների նկատմամբ,

19.12.1.8. Վարկի գործողության ընթացքում համապատասխանել Եվրոպական հանձնաժողովի 06/05/2003 թ. ԵՄ 2003/361 հանձնարարականով միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների համար սահմանված բոլոր պահանջներին,

19.12.1.9. Գործադրել ողջամիտ ջանքեր՝ հանրայնացնելու այն փաստը, որ Վարկառուն աջակցություն է ստացել ՎԶԵԲ-ից, Եվրոպական միությունից, այդ թվում՝ մամուլին տրվող հաղորդագրություններով, հարակից նյութերով, պաշտոնական ծանուցումներով, հաշվետվություններով և հրապարակումներով,

19.12.1.10. ՎԶԵԲ-ին, Եվրոպական Հանձնաժողովին, Եվրոպական Աուդիտորական Դատարանին, ՕԼԱՖ-ին կամ նրանց ներկայացուցիչներին տրամադրել տեղեկատվություն և հասանելիություն իր վերաբերյալ բոլոր փաստաթղթերին և տվյալներին և մուտք դեպի իր կայքեր և տարածքներ, թույլ տալ իրականացնել ցանկացած տեսակի ստուգումներ,

19.12.1.11. Պայմանագրի դադարեցումից և ՕԼԱՖ-ի կամ ՎԶԵԲ-ի կողմից իրականացված ցանկացած աուդիտի, ստուգման, բողոքարկման, դատավարության կամ հետաքննության ավարտից հետո առնվազն հինգ տարի պահպանել Ենթածրագրին առնչվող ողջ ֆինանսական տեղեկատվությունը, գրառումները և հաշիվները,

19.12.1.12. Պայմանագրի կնքման պահին և դրա գործողության ողջ ընթացքում համապատասխանել Ծրագրի բոլոր պահանջներին:

19.12.2. Վարկառուին արգելվում է

19.12.2.1. Նպաստել փողերի լվացմանը, ահաբեկչության ֆինանսավորմանը, հարկային պարտավորություններից խուսափելուն կամ հարկային խարդախություններին,

19.12.2.2. Վարկի միջոցներն օգտագործել գործունեության հետևյալ տեսակների/ոլորտների ֆինանսավորման նպատակով.

- ռազմական տեխնիկայի արտադրություն և/կամ առևտուր,
- ֆինանսական ծառայություններ,
- ապահովագրական բիզնես,

- ծխախոտի կամ թունդ լիկյորի արտադրություն, արտահանում կամ վաճառք (բացառությամբ, եթե նշված ապրանքների վաճառքը ածանցյալ է կազմակերպության հիմնական բիզնես գործունեությանը),
- խաղատներ կամ այլ խաղային ծառայություններ,
- անշարժ գույքի կամ արժույթի ոլորտում սպեկուլյատիվ ներդրումներ կամ ցանկացած այլ սպեկուլյատիվ ներդրումային գործունեություն,
- ներդրումներ ցանկացած տեսակի արժեթղթերում, ներառյալ՝ այլ ընկերությունների բաժնետիրական կապիտալում,
- ցանկացած գործողություն, որն ընդգրկված է ՎԶԵԲ-ի բնապահպանական և սոցիալական բացառման ցանկում,
- առանց ՎԶԵԲ-ի նախնական գրավոր համաձայնության՝ ցանկացած գործողություն, որն ընդգրկված է ՎԶԵԲ-ի բնապահպանական և սոցիալական քաղաքականության (2014թ. մայիս) հավելված 2-ով սահմանված A կատեգորիայի նախագծերի ցանկում,
- նախագծեր նավթի և գազի արդյունահանման, վերամշակման, տրանսպորտի (տեղափոխման և բաշխման), պահեստավորման և էլեկտրաէներգիայի արտադրության համար (բացառությամբ՝ սեփական սպառման համար),
- տեխնոլոգիաներ, որոնք հատուկ օգտագործվում են տորֆի և ածխածնային ինտենսիվ այրման վառելիքի այրման, փոխադրման, արդյունահանման համար, ինչպիսիք են ածուխը, ջեռուցման նավթը կամ նավթային թերթաքարերը,
- մեկանգամյա օգտագործման պլաստմասե արտադրանքի արտադրություն սպառողական կիրառման համար (ոչ բժշկական նպատակներով),
- վառելիքով աշխատող չվերականգնվող կաթսաներ, գազի ենթակառուցվածքներ և սարքավորումներ:

19.12.3. Վարկառուն տալիս է իր համաձայնությունը, որ իր վերաբերյալ ցանկացած, այդ թվում՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկատվությունը, ներառյալ՝ բնապահպանական, առողջապահական, անվտանգության և սոցիալական ոլորտները կարգավորող ցանկացած փաստաթուղթ և գնահատում տրամադրի ՎԶԵԲ-ին և Ծրագրով սահմանված այլ իրավասու անձանց, ինչպես նաև գիտակցում է, որ նշված տեղեկատվությունը ՎԶԵԲ-ը կարող է փոխանցել Եվրոպական միությանը:

19.12.4. Վարկառուն հավաստիացնում է, որ ստացել է բոլոր անհրաժեշտ թույլտվությունները/լիցենզիաները/հաստատումները, համապատասխանում է բնապահպանական, սոցիալական, առողջապահական և անվտանգության ոլորտների վերաբերյալ ՀՀ գործող օրենսդրությանը:

19.13. Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալությունից (JICA) ֆինանսական միջոցների ներգրավման ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկեր

19.13.1. Վարկառուն պարտավոր է՝

19.13.1.1. իր գործունեությունն իրականացնել կիրառելի օրենսդրությանը (ՀՀ բոլոր օրենքներ, ենթաօրենսդրական ակտեր, այլ իրավական ակտեր (ներառյալ, բայց չսահմանափակվելով փողերի լվացման ևահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի հետ կապված օրենսդրական կարգավորումներին)), ինչպես նաև բնապահպանական, սոցիալական, աշխատանքային, առողջապահական ոլորտներում կիրառելի ստանդարտներին համապատասխան ,

19.13.1.2. Վարկով ֆինանսավորվող ծրագիրը (այսուհետ՝ Ենթածրագիր) իրականացնել JICA-ի Բնապահպանական և սոցիալական նկատառումների ուղեցույցներին (ինչպես հրապարակված է JICA-ի կայքում՝ https://www.jica.go.jp/english/about/policy/environment/guideline/__icsFiles/afieldfile/2023/12/25/kankyoEN_1.pdf) համապատասխան (այսուհետ՝ Ուղեցույցներ) և ապահովել, որ Պայմանագրի գործողության ընթացքում և դրանից հետո այն չներառվի Ուղեցույցներում նկարագրված A կամ B կատեգորիաներում,

19.13.1.3. Վարկով ֆինանսավորվող ծառայությունների/աշխատանքների/ապրանքների գնումը իրականացնել՝ ըստ գնումների բնագավառում ձևավորված նորմալ գործարար պրակտիկայի և պահպանել գնումների վերաբերյալ բոլոր գործող օրենսդրական կարգավորումները,

19.13.1.4. Վարկատուի պահանջով թույլ տալ JICA-ի աշխատակիցներին, ներկայացուցիչներին, ինչպես նաև JICA-ի և Վարկատուի միջև կնքված պայմանագրով սահմանված այլ իրավասու անձանց իրականացնել այցելություններ Վարկառուի գործունեության վայր/վայրեր և ստուգումներ իրականացնել,

19.13.1.5. Վարկատուի պահանջով JICA-ի ներկայացուցիչներին, ինչպես նաև JICA-ի և Վարկատուի միջև կնքված պայմանագրով սահմանված այլ իրավասու անձանց տրամադրել վերջիններիս կողմից պահանջվող տեղեկություններն ու փաստաթղթերը (այդ թվում՝ անձնական և բանկային գաղտնիք կազմող):

19.13.2. Պայմանագրի ստորագրմամբ Վարկառուն հավաստիացնում է, որ.

19.13.2.1. համապատասխանում է Ուղեցույցներին, ինչպես նաև Ենթածրագիրը ևս համապատասխանում է Ուղեցույցներին և դրանցում նկարագրված A կամ B կատեգորիաներում չի ներառվում,

19.13.2.2. ծանոթացել է և համապատասխանում է JICA-ի հետ համագործակցության մնացած պահանջներին և համագործակցության շրջանակներում սահմանված արգելքներին/սահմանափակումներին,

19.13.2.3. գիտակցում է արտարժույթի փոխարժեքի փոփոխման հետևանքով առաջացող հնարավոր անբարենպաստ հետևանքները և ռիսկերը (եթե Վարկը տրամադրվել է արտարժույթով) և այն, որ արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ Վարկի մարումների վրա, օրինակ, եթե դոլարի փոխարժեքը 10 (տասը) տոկոսով ավելանա, ապա Վարկառուի կողմից վճարվելիք ամսական մարման գումարը՝ դրամական արտահայտությամբ, նույնպես կավելանա 10 (տասը) տոկոսով:

19.13.3. Պայմանագրի ստորագրմամբ Վարկառուն տալիս է իր համաձայնությունը, որ իր և իր կողմից ստացված Վարկի վերաբերյալ տվյալները (այդ թվում՝ անձնական և բանկային գաղտնիք կազմող), ինչպես նաև ցանկացած հաշվետվություն և փաստաթուղթ փոխանցվեն JICA-ին, վերջինիս ցանկացած ներկայացուցչի և աշխատակցի, համագործակցության շրջանակներում JICA-ի և Վարկատուի միջև կնքված պայմանագրով սահմանված այլ իրավասու անձանց, ինչպես նաև ցանկացած եղանակով հրապարակվեն վերջիններիս կողմից, այդ թվում՝ հրապարակվեն JICA-ի պաշտոնական կայքէջում:

19.14. «ԱՄՆ Միջազգային զարգացման ֆինանսական կորպորացիայի» (DFC) հետ համագործակցությամբ իրականացվող թիվ/9000116303 ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկեր

19.14.1. Վարկառուն պարտավոր է հնարավորություն տալ DFC-ի ցանկացած ներկայացուցչի, ինչպես նաև Վարկատուի և DFC-ի միջև կնքված ֆինանսավորման պայմանագրով (այսուհետ՝ Ֆինանսավորման պայմանագիր) սահմանված այլ իրավասու անձանց՝ այցելել իր բիզնես տարածքներ, ուսումնասիրել իր ֆինանսական և այլ գործառնությունների հետ կապված ցանկացած փաստաթղթեր և գրառումներ, պատճենել և քաղվածքներ անել դրանցից, ստուգել/զննել ցանկացած գույք և/կամ օբյեկտ, ինչպես նաև շփվել և հաղորդակցվել աշխատակիցների, գործակալների, գործընկերների և այլ անձանց հետ, ովքեր ունեն կամ կարող են ունենալ տեղեկատվություն՝ DFC-ին հետաքրքրող հարցերի վերաբերյալ:

19.14.2. Վարկառուին արգելվում է առանց Վարկատուի և DFC-ի նախնական գրավոր համաձայնության՝ Վարկի միջոցները օգտագործել՝ սկսելու կամ ընդլայնելու

(ա) արտահանումները դեպի Ամերիկայի միացյալ նահանգներ, կամ

(բ) մասնագիտական ծառայությունները, որոնք տրամադրվում են ԱՄՆ-ում ապրող/գործունեություն ծավալող հաճախորդներին:

19.14.3. Պայմանագրի ստորագրմամբ Վարկառուն տալիս է իր համաձայնությունը, որ իր և իր կողմից ստացված Վարկի վերաբերյալ տվյալները (այդ թվում՝ անձնական և բանկային գաղտնիք

կազմող), ինչպես նաև Ֆինանսավորման պայմանագրից բխող ցանկացած այլ տեղեկատվություն, հաշվետվություն և փաստաթուղթ փոխանցվեն DFC-ին և Ֆինանսավորման պայմանագրի շրջանակներում՝ ցանկացած այլ անձի:

19.15. ՎԶԵԲ-ի հետ համագործակցությամբ իրականացվող «Երիտասարդները բիզնեսում» Ֆինանսավորման ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկեր

19.15.1. Պայմանագրի ստորագրմամբ՝ Վարկատուն Վարկառուին տեղեկացնում է, որ Վարկը տրամադրվել է ՎԶԵԲ-ի հետ համագործակցությամբ իրականացվող «Երիտասարդները բիզնեսում» ֆինանսավորման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում: Սույնով Վարկառուն հավաստիացնում է, որ գիտակցում է Վարկի ֆինանսավորման և Ծրագրի իրականացման շրջանակներում ՎԶԵԲ-ի (այդ թվում՝ վերջինիս բաժնետերերի հատուկ հիմնադրամի) և Եվրոպական Միության (այսուհետ՝ երկուսը միասին նաև Դոնոր) դերը: Վարկառուն տեղյակ է իր կողմից Ծրագրի շրջանակներում ստացվող վարկի միջոցով իրականացվող ծրագրին (այսուհետ՝ Ենթածրագիր) Դոնորի կողմից տրամադրվող աջակցության մասին և այդ աջակցության տրամադրման պայմաններին ու սահմանափակումներին, որոնք սահմանված են ՎԶԵԲ-ի հետ Վարկատուի կողմից կնքվող համապատասխան ֆինանսավորման պայմանագրով կամ ֆինանսավորմանն առնչվող այլ փաստաթղթերով:

19.15.2. Վարկառուն պարտավորվում է՝

19.15.2.1. Թույլ տալ Վարկատուին, Դոնորին, Եվրոպական հանձնաժողովին, Եվրոպական աուդիտորների դատարանին, ՕԼԱՖ-ին, վերջիններիս ներկայացուցիչներին և Ծրագրով սահմանված այլ իրավասու անձանց անսահմանափակ քանակով և ցանկացած ժամանակ.

ա) այցելելու Վարկառուի գործունեության վայր և/կամ Ենթածրագրի իրականացման տարածքներ և/կամ այն տարածքներ, որտեղ պահպանվում են Վարկառուի կողմից իրականացվող Ենթածրագրի իրականացման հետ կապված փաստաթղթերը, նյութերը և սարքավորումները, ինչպես նաև նշված վայրերում իրականացնել ուսումնասիրություններ,

բ) ուսումնասիրել և ստուգել (այդ թվում՝ աուդիտ իրականացնել) Վարկառուի կողմից իրականացվող Ենթածրագիրը, Վարկառուի հաշվապահական գրառումն ու հաշվառումը, համակարգչային տվյալները, ինչպես նաև հնարավորություն ունենալ պահանջել և ստանալ անհրաժեշտ փաստաթղթերը և Վարկառուին, Վարկին կամ Ենթածրագրին վերաբերող ցանկացած տեղեկություն,

19.15.2.2. Դոնորի և/կամ Վարկատուի կողմից պահանջվող ցանկացած տեղեկատվություն անհապաղ տրամադրել Վարկատուին: Ընդ որում, Վարկատուն իրավասու է այդ տեղեկատվությունը փոխանցել Դոնորին,

19.15.2.3. Չօգտագործել Պայմանագրով ստացվող Վարկը զենքի կամ ռազմական տեխնիկայի արտադրության կամ առևտրի, ֆինանսական հաստատությունների կամ ֆինանսական ծառայություններ մատուցող ընկերությունների, ապահովագրական բիզնեսի, ծխախոտի կամ թունդ ալկոհոլային խմիչքների /hard liquor/ արտադրության կամ արտահանման, ծխախոտի կամ թունդ ալկոհոլային խմիչքների /hard liquor/ վաճառքի (բացի այն դեպքերից, երբ ծխախոտի կամ թունդ ալկոհոլային խմիչքների վաճառքն օժանդակ է կազմակերպության հիմնական բիզնես գործունեությանը), խաղատների կամ այլ մոլախաղերի օբյեկտների, անշարժ գույքում կամ արժույթներում սպեկուլյատիվ ներդրումների կամ ցանկացած այլ սպեկուլյատիվ ներդրումային գործունեության, ցանկացած տեսակի արժեթղթերում ներդրումների, ներառյալ այլ ընկերությունների բաժնետիրական կապիտալում ներդրումների, ՎԶԵԲ-ի Բնապահպանական և սոցիալական բացառման ցանկում ներառված ցանկացած գործունեության, առանց ՎԶԵԲ-ի նախնական գրավոր համաձայնության՝ ՎԶԵԲ-ի Բնապահպանական և սոցիալական քաղաքականության Հավելված Բ-ի մեջ ներառված Ա կատեգորիայի նախագծերի ցուցիչ ցանկում նշված ցանկացած գործունեության, նավթի և գազի արդյունահանման, վերամշակման (ներառյալ զտման), տրանսպորտի (փոխադրման և բաշխման), էլեկտրաէներգիայի արտադրման նպատակով պահեստավորման և արտադրության, սպառողական կիրառման համար միանգամյա օգտագործման պլաստիկե արտադրանքի արտադրության (ոչ բժշկական նպատակներով),

Ֆիզիկական ակտիվների կամ դրանց հետ կապված օբյեկտների հետ կապված նախագծերի ֆինանսավորման նպատակով,

19.15.2.4. Համապատասխանել ՎԶԵԲ-ի Գերփոքր և փոքր վարկերի բնապահպանական և սոցիալական ընթացակարգերին,

19.15.2.5. Պահպանել Վարկին վերաբերող համապատասխան ողջ ֆինանսական տեղեկատվությունը, գրառումները և հաշվառումները ոչ պակաս, քան հինգ տարի հետո՝

ա) Վարկի ամբողջական մարման ամսաթվից,

բ) եթե ՕԼԱՖ-ի կամ ՎԶԵԲ-ի կողմից սկսվել է աուդիտ կամ հետաքննություն Վարկի առնչությամբ, ապա այդ աուդիտի կամ հետաքննության ավարտի ամսաթվից, և դրանք ՎԶԵԲ-ի պահանջով հասանելի դարձնել ՎԶԵԲ-ի ներկայացուցիչներին,

19.15.2.6. առանց ՎԶԵԲ-ի գրավոր համաձայնության Վարկառուի իր իրավունքները և/կամ պարտականությունները չզիջել/չփոխանցել այլ անձանց,

19.15.2.7. ապահովել անձնական տվյալների պաշտպանությունը՝ բոլոր կիրառելի օրենքների և կանոնակարգերի, ինչպես նաև անձնական տվյալների օգտագործմանը և պաշտպանությանը վերաբերող այլ իրավական ակտերի համաձայն:

19.15.3. Վարկառուին արգելվում է՝

19.15.3.1. Վարկի միջոցներն օգտագործել փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման, հարկերից խուսափելու կամ հարկային խարդախությունների կամ դրանց իրականացմանը նպաստելու համար:

19.15.3.2. իրականացնել ցանկացած գործունեություն, որը կարող է վտանգել Պայմանագրով իր պարտավորությունները կատարող ցանկացած անձի գործառույթների անաչառ և օբյեկտիվ կատարումը:

19.15.4. Վարկառուն տալիս է իր համաձայնությունը, որ իր վերաբերյալ, իր կողմից իրականացվող Ենթածրագրի/Ենթածրագրերի վերաբերյալ տվյալները, այդ թվում՝ անձնական և բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները, ինչպես նաև ցանկացած հաշվետվություն և փաստաթուղթ փոխանցվեն ՎԶԵԲ-ին, վերջինիս ներկայացուցիչներին և վերջիններիս կողմից ներգրավված խորհրդատուներին, Ծրագրի ֆինանսավորման կամ վերահսկողության հետ առնչություն ունեցող և/կամ Ծրագրով նախատեսված ցանկացած այլ անձի: Ընդ որում, անձնական և բանկային գաղտնիք կազմող նշված տեղեկություններն ու փաստաթղթերը, այդ թվում՝ Վարկառուի անունը և հասցեն, ՎԶԵԲ-ի կողմից կարող են փոխանցվել Ծրագրով սահմանված այլ անձանց, ինչպես նաև կարող են հրապարակվել ՎԶԵԲ-ի կամ Ծրագրով սահմանված այլ անձանց պաշտոնական կայքերում:

19.15.5. Վարկառուն հավաստիացնում է, որ.

19.15.5.1. Համապատասխանում է Ծրագրի պահանջներին և Ծրագրով սահմանված արգելքներին/սահմանափակումներին,

19.15.5.2. Գիտակցում է արտարժույթի փոխարժեքի փոփոխման հետևանքով առաջացող հնարավոր անբարենպաստ հետևանքները և ռիսկերը (եթե Վարկը տրամադրվել է արտարժույթով), օրինակ, եթե դոլարի փոխարժեքը 10 (տասը) տոկոսով ավելանա, ապա Վարկառուի կողմից վճարվելիք ամսական մարման գումարը՝ դրամական արտահայտությամբ, նույնպես կավելանա 10 (տասը) տոկոսով,

19.15.5.3. Վարկառուն այնպիսի անձ կամ կազմակերպություն չէ, որը ներառված է ՎԶԵԲ-ի այն անձանց կամ կազմակերպությունների ցանկում, որոնք իրավասու չեն ստանալ ֆինանսավորում ՎԶԵԲ-ի կողմից (նման անձանց ցուցակը հրապարակված է ՎԶԵԲ-ի պաշտոնական կայքում),

19.15.5.4. Գիտակցում է, որ ՎԶԵԲ-ը կարող է իր բացառիկ հայեցողությամբ բացառել ցանկացած Վարկ՝ Ծրագրի շրջանակներում ֆինանսավորվող Վարկերի պորտֆելից,

19.15.5.5. Գիտակցում է, որ Պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում՝ Վարկատուն իրավասու է կասեցնել/դադարեցնել հետագա ֆինանսավորումը, իսկ Վարկառուն նման դեպքում պարտավոր է անմիջապես Վարկի վաղաժամկետ մարում կատարել,

19.15.5.6. Ընդունում է և համաձայն է, որ Վարկատուն, իր և ՎԶԵԲ-ի միջև կնքված համապատասխան ֆինանսավորման պայմանագրով կամ ֆինանսավորմանն առնչվող այլ

փաստաթղթերով սահմանված դեպքերում, պահանջի, որ Ենթածրագիրը իրականացվի Վարկատուի կողմից նշված երկրում:

ԳԼՈՒԽ 20 ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ

20.1. Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկեր

20.1.1. Վարկի տոկոսադրույքը կարող է սուբսիդավորվել Պայմանագրով սահմանված Սուբսիդավորվող տոկոսադրույքի չափով՝ հիմք ընդունելով Վարկատուի և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցի (այսուհետ՝ Գործակալ) միջև կնքված պայմանագիրը (այսուհետ՝ Սուբսիդավորման պայմանագիր): Սուբսիդավորումն իրականացվում է Գործակալի կողմից Սուբսիդավորման պայմանագրին համաձայն, ընդ որում՝ տոկոսադրույքի սուբսիդավորումն սկսվում է ՀՀ Կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 201-Լ որոշման 28-րդ կետի 2-րդ և 5-րդ ենթակետերով սահմանված տեղեկատվությունը Վարկատուի կողմից Գործակալին տրամադրվելուց հետո:

20.1.2. Սուբսիդավորման ենթակա տոկոսավճարի չափը հաշվարկվում է Վարկի մնացորդի նկատմամբ: Վարկի գումարը (չափը) պետք է համապատասխանի ՀՀ Կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 201-Լ որոշման 23-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջներին:

20.1.3. Պայմանագրով սահմանված տուժանքները սուբսիդավորման ենթակա չեն:

20.1.4. Վարկառուն տալիս է իր համաձայնությունը, որպեսզի Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարությունը և/կամ Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության կողմից սահմանված անձինք և/կամ Գործակալն իրականացնեն Վարկի նպատակային օգտագործման համապատասխանության, իր գործունեության, Պայմանագրի և Սուբսիդավորման պայմանագրի պայմանների համապատասխանության ստուգումներ սուբսիդավորվող տոկոսադրույքի գումարի վճարման ողջ ժամանակահատվածում: Ստուգումների ընթացքում Գործակալը և/կամ Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարությունը և/կամ Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության կողմից սահմանված անձինք կարող են Վարկառուից պահանջել ցանկացած լրացուցիչ տեղեկատվություն և փաստաթղթեր, որոնք ենթակա են տրամադրման Վարկառուի կողմից:

20.1.5. Վերոնշյալ դրույթը չի սահմանափակում Վարկատուի՝ Վարկառուի մոտ վարկերի մոնիտորինգի և այլ ստուգումների իրականացման Պայմանագրով սահմանված իրավունքը:

20.1.6. Սուբսիդավորվող տոկոսադրույքի գումարի վճարումը դադարեցվում է.

-Վարկատուի հանդեպ տվյալ վարկի մասով նախորդ 12 ամիսների կտրվածքով հանրագումարային 90 օրվանից ավել ժամկետանց պարտավորությունների առկայության դեպքում,

-տվյալ Վարկի մասով Վարկատուի հանդեպ ժամկետանց պարտավորությունների հետևանքով վարկը ստանդարտ դասով դասակարգված չլինելու դեպքում,

-Վարկը ոչ նպատակային օգտագործելու դեպքում,

-Վարկառուի կողմից ներկայացված տեղեկություններում կեղծիքների հայտնաբերման դեպքում,

-Վարկը սուբսիդավորման պայմաններին ոչ համապատասխան օգտագործելու դեպքում,

-20.1.9 կետում նշված տեղեկատվությունը Վարկառուի կողմից չներկայացնելու դեպքում

20.1.7. Սուբսիդավորումը դադարեցվում է վարկի մարման ժամանակացույցով սահմանված նախորդ մարման օրվանից սկսած:

20.1.8. Վարկի ոչ նպատակային օգտագործման և/կամ սուբսիդավորման պայմաններին ոչ համապատասխան Վարկն օգտագործելու և/կամ 20.1.9 կետում նշված պարտավորությունները

չկատարելու հետևանքով սուբսիդավորվող տոկոսադրույքի գումարի վճարումը դադարեցվելու դեպքում արդեն վճարված սուբսիդավորվող տոկոսադրույքների գումարները ենթակա են վերադարձման Վարկառուի կողմից: Մնացած հիմքերով սուբսիդավորման դադարեցման դեպքում արդեն վճարված սուբսիդավորվող տոկոսադրույքների գումարները ենթակա են վերադարձման Վարկառուի կողմից ՝ Վարկատուի կողմից նման պահանջ ներկայացվելու դեպքում,

20.1.9. Վարկառուն պարտավորվում է Վարկատուի համար ընդունելի տարբերակով յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացում ներկայացնել տեղեկատվություն՝ թողարկված և իրացված պատրաստի արտադրանքի ծավալների մասին՝ համապատասխան տարվա ընթացիկ գներով: Վարկառուն պարտավորվում է նաև Վարկատուի պահանջով տրամադրել հումքի գնման և վաճառողների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն, ինչպես նաև ստորագրել Գործակալին և/կամ Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարությանը փոխանցվող փաստաթղթերը,

20.1.10. Սուբսիդավորման դադարեցման դեպքում Վարկատուն իրավունք ունի սուբսիդավորման դադարեցման օրվանից միակողմանիորեն փոփոխել Վարկի տոկոսադրույքը և ցանկացած պահից կիրառել տվյալ պահին Վարկատուի կողմից տվյալ վարկատեսակի համար սահմանված ավելի բարձր տոկոսադրույք, ընդ որում՝ նշված հիմքով տոկոսադրույքի փոփոխման դեպքում Պայմանագրով սահմանված՝ առնվազն 30 օր առաջ Վարկառուին ծանուցելու վերաբերյալ կարգավորումները չեն կիրառվում,

20.1.11. Վարկառուն Վարկատուին տալիս է համաձայնություն Գործակալին և/կամ Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարությանը և/կամ Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության կողմից սահմանված անձանց և/կամ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը և/կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին և/կամ Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին տրամադրելու իրեն վերաբերող բանկային գաղտնիք կազմող տեղեկատվություն,

20.1.12. Վարկատուն պարտավոր է Վարկի գումարը Պայմանագրի կնքման օրվանից տասը աշխատանքային օրվա ընթացքում բերքի կամ հումքի գնումը հավաստող փաստաթղթերի հիման փոխանցել բերքի կամ հումքի գնման պայմանագր(եր)ում նշված կամ Վարկառուի կողմից Վարկատուին լրացուցիչ տրամադրված վաճառող(ներ)ի կողմից տրամադրված բանկային հաշվին(հաշիվներին),

20.1.13. Պայմանագրով չկարգավորված հարցերը կարգավորվում են Սուբսիդավորման պայմանագրով նախատեսված աջակցության ծրագրի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշմամբ (այսուհետ՝ Որոշում), ընդ որում, վերջիններիս միջև հակասությունների դեպքում գերակայում է Որոշումը:

20.2. Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկեր

20.2.1. Վարկի տոկոսադրույքը կարող է սուբսիդավորվել Պայմանագրով սահմանված Սուբսիդավորվող տոկոսադրույքի չափով՝ հիմք ընդունելով Վարկատուի և Հայաստանի Հանրապետության Կառավարության (այսուհետ՝ Գործակալ) միջև կնքված Գյուղատնտեսության ոլորտին տրամադրված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման վերաբերյալ պայմանագիրը (այսուհետ՝ Սուբսիդավորման պայմանագիր): Սուբսիդավորումն իրականացվում է Գործակալի կողմից Սուբսիդավորման պայմանագրին համաձայն,

20.2.2. Սուբսիդավորման ենթակա տոկոսավճարի չափը հաշվարկվում է Վարկի մնացորդի նկատմամբ,

20.2.3. Պայմանագրով սահմանված տուժանքները սուբսիդավորման ենթակա չեն,

20.2.4. Վարկառուն տալիս է իր համաձայնությունը, որպեսզի Գործակալն իրականացնի վարկի նպատակային օգտագործման համապատասխանության, իր գործունեության, վարկային պայմանագրի և Սուբսիդավորման պայմանագրի պայմանների համապատասխանության ստուգումներ սուբսիդավորվող տոկոսադրույքի գումարի վճարման ողջ ժամանակահատվածում,

20.2.5.Վերոնշյալ դրույթը չի սահմանափակում Վարկատուի՝ Վարկառուի մոտ վարկերի մոնիտորինգի և այլ ստուգումների իրականացման Պայմանագրով սահմանված իրավունքը:

20.2.6.Սուբսիդավորվող տոկոսադրույքի գումարի վճարումը դադարեցվում է.

-Վարկատուի հանդեպ տվյալ վարկի մասով նախորդ 12 ամիսների կտրվածքով հանրագումարային 60 օրվանից ավել ժամկետանց պարտավորությունների առկայության դեպքում,

-տվյալ վարկի մասով Վարկատուի հանդեպ ժամկետանց պարտավորությունների հետևանքով վարկը ստանդարտ դասով դասակարգված չլինելու դեպքում,

-Վարկը ոչ նպատակային օգտագործելու դեպքում, ընդ որում, վարկի ոչ նպատակային օգտագործում է դիտարկվում Պայմանագրում նշված նպատակային ուղղությունից (ուղղություններից) դուրս վարկային միջոցների ներդրումը,

-Վարկառուի կողմից ներկայացված տեղեկություններում կեղծիքների և/կամ անհամապատասխանության հայտնաբերման դեպքում,

-Սուբսիդավորման պայմանագիրը վաղաժամկետ լուծելու դեպքում,

-Գյուղատնտեսության ապահովագրության պայմանագրի պատճենը չներկայացնելու դեպքում:

20.2.7.Սուբսիդավորումը դադարեցվում է Վարկի մարման ժամանակացույցով սահմանված նախորդ մարման օրվանից սկսած:

20.2.8.Վարկի ոչ նպատակային օգտագործման և/կամ Վարկառուի կողմից ներկայացված տեղեկություններում կեղծիքների հայտնաբերման հետևանքով սուբսիդավորվող տոկոսադրույքի գումարի վճարումը դադարեցվելու դեպքում արդեն վճարված սուբսիդավորվող տոկոսադրույքների գումարները ենթակա են վերադարձման Վարկառուի կողմից:

Մնացած հիմքերով սուբսիդավորման դադարեցման դեպքում արդեն վճարված սուբսիդավորվող տոկոսադրույքների գումարները ենթակա են վերադարձման Վարկառուի կողմից ՝ Վարկատուի կողմից նման պահանջ ներկայացվելու դեպքում:

20.2.9. Վարկառուն պարտավորվում է Պայմանագրի կնքումից հետո Վարկատուին ներկայացնել տվյալ կամ առաջիկա գյուղատնտեսական տարվա համար ապահովագրական ընկերության հետ կնքված գյուղատնտեսության ապահովագրության պայմանագրի պատճենը, եթե վարկը տրամադրվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 24-ի N 1485-Լ որոշմամբ հաստատված «Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցության ծրագրի» շրջանակում ապահովագրվող մշակաբույսերի ցանկում ներառված պրոդուկտների մշակության նպատակով:

20.2.10. Սուբսիդավորման դադարեցման դեպքում Վարկատուն իրավունք ունի սուբսիդավորման դադարեցման օրվանից միակողմանիորեն փոփոխել Վարկի տոկոսադրույքը և ցանկացած պահից կիրառել տվյալ պահին Սակագներով սուբսիդավորման դադարեցման համար սահմանված տոկոսադրույքը, ընդ որում՝ նշված հիմքով տոկոսադրույքի փոփոխման դեպքում Պայմանագրով սահմանված՝ առնվազն 30 օր առաջ Վարկառուին ծանուցելու վերաբերյալ կարգավորումները չեն կիրառվում,

20.2.11. Վարկառուն Վարկատուին տալիս է համաձայնություն Գործակալին տրամադրելու իրեն վերաբերող բանկային գաղտնիք կազմող տեղեկատվություն,

20.2.12. Պայմանագրով չկարգավորված հարցերը կարգավորվում են Սուբսիդավորման պայմանագրով նախատեսված աջակցության ծրագրի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշմամբ (այսուհետ՝ Որոշում), ընդ որում, վերջիններիս միջև հակասությունների դեպքում գերակայում է Որոշումը:

20.3. Հայաստանի Հանրապետությունում 2025-2029 թվականների տավարաբուծության զարգացման ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկեր

20.3.1.Վարկի տոկոսադրույքը կարող է սուբսիդավորվել Պայմանագրով սահմանված Սուբսիդավորվող տոկոսադրույքի չափով՝ հիմք ընդունելով Վարկատուի և Հայաստանի Հանրապետության Կառավարության (այսուհետ՝ Գործակալ) միջև կնքված ՀՀ-ում տավարաբուծության զարգացման նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների

սուբսիդավորման վերաբերյալ պայմանագիրը (այսուհետ՝ Սուբսիդավորման պայմանագիր): Սուբսիդավորումն իրականացվում է Գործակալի կողմից Սուբսիդավորման պայմանագրին համաձայն:

20.3.2.Սուբսիդավորման ենթակա տոկոսավճարի չափը հաշվարկվում է Վարկի մնացորդի նկատմամբ:

20.3.3.Պայմանագրով սահմանված տուժանքները սուբսիդավորման ենթակա չեն:

20.3.4.Վարկառուն տալիս է իր համաձայնությունը, որպեսզի Գործակալն իրականացնի Վարկի նպատակային օգտագործման համապատասխանության, իր գործունեության, Պայմանագրի և Սուբսիդավորման պայմանագրի պայմանների համապատասխանության ստուգումներ սուբսիդավորվող տոկոսադրույքի գումարի վճարման ողջ ժամանակահատվածում:

20.3.5.Վերոնշյալ դրույթը չի սահմանափակում Վարկատուի՝ Վարկառուի մոտ վարկերի մոնիտորինգի և այլ ստուգումների իրականացման Պայմանագրով սահմանված իրավունքը:

20.3.6. Սուբսիդավորվող տոկոսադրույքի գումարի վճարումը դադարեցվում է.

-Վարկատուի հանդեպ տվյալ վարկի մասով նախորդ 12 ամիսների կտրվածքով հանրագումարային 60 օրվանից ավել ժամկետանց պարտավորությունների առկայության դեպքում,

-տվյալ վարկի մասով Վարկատուի հանդեպ ժամկետանց պարտավորությունների հետևանքով վարկը ստանդարտ դասով դասակարգված չլինելու դեպքում,

-Վարկը ոչ նպատակային օգտագործելու դեպքում, ընդ որում, վարկի ոչ նպատակային օգտագործում է դիտարկվում Պայմանագրում նշված նպատակային ուղղությունից (ուղղություններից) դուրս վարկային միջոցների ներդրումը,

-Վարկառուի կողմից ներկայացված տեղեկություններում կեղծիքների և/կամ անհամապատասխանության հայտնաբերման դեպքում,

-Սուբսիդավորման պայմանագիրը վաղաժամկետ լուծելու դեպքում,

- Տոհմային կենդանիների ձեռքբերման ժամկետները չպահպանելու դեպքում,

-Ձեռք բերվող տոհմային խոշոր եղջերավոր կենդանիները առնվազն երեք տարի ՀՀ-ում տավարի նախրի վերարտադրության համար չօգտագործելու դեպքում:

20.3.7.Սուբսիդավորումը դադարեցվում է Վարկի մարման ժամանակացույցով սահմանված նախորդ մարման օրվանից սկսած:

20.3.8. Վարկի ոչ նպատակային օգտագործման և/կամ Վարկառուի կողմից ներկայացված տեղեկություններում կեղծիքների հայտնաբերման հետևանքով և/կամ սուբսիդավորվող տոկոսադրույքի գումարի վճարումը դադարեցվելու դեպքում արդեն վճարված սուբսիդավորվող տոկոսադրույքների գումարները ենթակա են վերադարձման Վարկառուի կողմից: Մնացած հիմքերով սուբսիդավորման դադարեցման դեպքում արդեն վճարված սուբսիդավորվող տոկոսադրույքների գումարները ենթակա են վերադարձման Վարկառուի կողմից՝ Վարկատուի կողմից նման պահանջ ներկայացվելու դեպքում:

20.3.9. Վարկառուն պարտավորվում է Վարկատուին և Գործակալին գրավոր պարտավորագիր ներկայացնել՝ ձեռք բերվող տոհմային խոշոր եղջերավոր կենդանիները առնվազն երեք տարի ՀՀ-ում տավարի նախրի վերարտադրության համար օգտագործելու վերաբերյալ:

20.3.10. Սուբսիդավորման դադարեցման դեպքում Վարկատուն իրավունք ունի սուբսիդավորման դադարեցման օրվանից միակողմանիորեն փոփոխել վարկի տոկոսադրույքը և ցանկացած պահից կիրառել տվյալ պահին Սակագներով սուբսիդավորման դադարեցման համար սահմանված տոկոսադրույքը, ընդ որում՝ նշված հիմքով տոկոսադրույքի փոփոխման դեպքում Պայմանագրով սահմանված՝ առնվազն 30 օր առաջ Վարկառուին ծանուցելու վերաբերյալ կարգավորումները չեն կիրառվում,

20.3.11. Վարկառուն Վարկատուին տալիս է համաձայնություն Գործակալին տրամադրելու իրեն վերաբերող բանկային գաղտնիք կազմող տեղեկատվություն:

20.3.12. Պայմանագրով չկարգավորված հարցերը կարգավորվում են Սուբսիդավորման պայմանագրով նախատեսված աջակցության ծրագրի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշմամբ (այսուհետ՝ Որոշում), ընդ որում, վերջիններիս միջև հակասությունների դեպքում գերակայում է Որոշումը:

20.4. Հայաստանի Հանրապետությունում ջերմատնային տնտեսությունների զարգացման աջակցության ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկեր

20.4.1. Վարկի տոկոսադրույքը կարող է սուբսիդավորվել Պայմանագրով սահմանված Սուբսիդավորվող տոկոսադրույքի չափով՝ հիմք ընդունելով Վարկատուի և Հայաստանի Հանրապետության Կառավարության (այսուհետ՝ Գործակալ) միջև կնքված Հայաստանի Հանրապետությունում ջերմատնային տնտեսությունների զարգացման աջակցության վերաբերյալ պայմանագիրը (այսուհետ՝ Սուբսիդավորման պայմանագիր): Սուբսիդավորումն իրականացվում է Գործակալի կողմից Սուբսիդավորման պայմանագրին համաձայն:

20.4.2. Սուբսիդավորման ենթակա տոկոսավճարի չափը հաշվարկվում է Վարկի մնացորդի նկատմամբ:

20.4.3. Պայմանագրով սահմանված տուժանքները սուբսիդավորման ենթակա չեն:

20.4.4. Վարկառուն տալիս է իր համաձայնությունը, որպեսզի Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարությունը և/կամ Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության կողմից սահմանված անձինք և/կամ «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ ՊՈԱԿ) և/կամ «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցը (այսուհետ՝ ԳՖԿ) և/կամ Գործակալն իրականացնեն Վարկի նպատակային օգտագործման համապատասխանության, իր գործունեության, Պայմանագրի և Սուբսիդավորման պայմանագրի պայմանների համապատասխանության ստուգումներ սուբսիդավորվող տոկոսադրույքի գումարի վճարման ողջ ժամանակահատվածում: Ստուգումների ընթացքում Գործակալը և/կամ Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարությունը և/կամ Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության կողմից սահմանված անձինք կարող են Վարկառուից պահանջել ցանկացած լրացուցիչ տեղեկատվություն և փաստաթղթեր, որոնք ենթակա են տրամադրման Վարկառուի կողմից,

20.4.5. Վերոնշյալ դրույթը չի սահմանափակում Վարկատուի՝ Վարկառուի մոտ վարկերի մոնիտորինգի և այլ ստուգումների իրականացման Պայմանագրով սահմանված իրավունքը:

20.4.6. Սուբսիդավորվող տոկոսադրույքի գումարի վճարումը դադարեցվում է.

-Վարկատուի հանդեպ տվյալ վարկի մասով նախորդ 12 ամիսների կտրվածքով հանրագումարային 60 օրվանից ավել ժամկետանց պարտավորությունների առկայության դեպքում,

-տվյալ Վարկի մասով Վարկատուի հանդեպ ժամկետանց պարտավորությունների հետևանքով վարկը օբյեկտիվ և սուբյեկտիվ չափանիշներով ստանդարտ դասով դասակարգված չլինելու դեպքում,

-ՀՀ Կառավարության համապատասխան որոշմամբ հաստատված ջերմատնային տնտեսությունների զարգացման աջակցության ծրագրով (այսուհետ՝ նաև Ծրագիր) կամ Սուբսիդավորման պայմանագրով սահմանված պահանջների չպահպանման և/կամ մոնիթորինգի արդյունքում նշված պահանջների խախտման հայտնաբերման դեպքում,

-Վարկը ոչ նպատակային օգտագործելու դեպքում,

-կառուցված ջերմատունը ոչ նպատակային օգտագործելու դեպքում,

-Վարկառուի կողմից ներկայացված տեղեկություններում կեղծիքների և/կամ անհամապատասխանության հայտնաբերման դեպքում,

-Սուբսիդավորման պայմանագիրը և/կամ Պայմանագիրը վաղաժամկետ լուծվելու դեպքում:

20.4.7. Սուբսիդավորումը դադարեցվում է Վարկի մարման ժամանակացույցով սահմանված նախորդ մարման օրվանից սկսած:

20.4.8. Վարկի ոչ նպատակային օգտագործման (ներառյալ Վարկառուի նախաձեռնությամբ վարկային պայմանագիրը վաղաժամկետ լուծելու և Ծրագրով նախատեսված աշխատանքներն ավարտին չհասցնելու դեպքերի), կառուցված ջերմատունը ոչ նպատակային օգտագործելու, Ծրագրի պահանջների չպահպանման կամ ակնհայտ կեղծ տեղեկատվություն տրամադրելու դեպքերում մինչ այդ պահը արդեն վճարված սուբսիդավորվող տոկոսադրույքների գումարները

ենթակա են վերադարձման Վարկառուի կողմից՝ Վարկատուի կողմից ներկայացված պահանջում սահմանված ժամկետներում: Մնացած հիմքերով սուբսիդավորման դադարեցման դեպքում արդեն վճարված սուբսիդավորվող տոկոսադրույքների գումարները ենթակա են վերադարձման Վարկառուի կողմից՝ Վարկատուի կողմից նման պահանջ ներկայացվելու դեպքում:

20.4.9.Վարկառուն պարտավորվում է պահպանել Ծրագրով և Սուբսիդավորման պայմանագրով սահմանված պահանջները, ինչպես նաև ներկայացնել դրանցով պահանջվող տեղեկություններն ու փաստաթղթերը:

20.4.10. Սուբսիդավորման դադարեցման դեպքում Վարկատուն իրավունք ունի միակողմանիորեն փոփոխել Վարկի տոկոսադրույքը և ցանկացած պահից կիրառել տվյալ պահին Վարկատուի կողմից տվյալ վարկատեսակի համար սահմանված ավելի բարձր տոկոսադրույք, ընդ որում՝ նշված հիմքով տոկոսադրույքի փոփոխման դեպքում Պայմանագրով սահմանված՝ առնվազն 30 օր առաջ Վարկառուին ծանուցելու վերաբերյալ կարգավորումները չեն կիրառվում,

20.4.11. Վարկառուն Վարկատուին տալիս է համաձայնություն Գործակալին և/կամ Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարությանը և/կամ «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցին (այսուհետ՝ ԳՖԿ) և/կամ Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության կողմից սահմանված անձանց և/կամ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը և/կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին և/կամ Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին/ ՊՈԱԿ-ին տրամադրելու իրեն վերաբերող բանկային գաղտնիք կազմող տեղեկատվություն:

20.4.12. Պայմանագրով չկարգավորված հարցերը կարգավորվում են Սուբսիդավորման պայմանագրով նախատեսված աջակցության ծրագրի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշմամբ (այսուհետ՝ Որոշում), ընդ որում, վերջիններիս միջև հակասությունների դեպքում գերակայում է Որոշումը:

20.5. ՀՀ-ում ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկեր

20.5.1. Վարկի տոկոսադրույքը կարող է սուբսիդավորվել Պայմանագրով սահմանված Սուբսիդավորվող տոկոսադրույքի չափով՝ հիմք ընդունելով Վարկատուի և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցի (այսուհետ՝ Գործակալ) միջև կնքված Հայաստանի Հանրապետությունում ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման վերաբերյալ պայմանագիրը (այսուհետ՝ Սուբսիդավորման պայմանագիր): Սուբսիդավորումն իրականացվում է Գործակալի կողմից Սուբսիդավորման պայմանագրին համաձայն: Պայմանագրով չկարգավորված հարցերը կարգավորվում են Սուբսիդավորման պայմանագրով նախատեսված պետական աջակցության ծրագրի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշմամբ (այսուհետ՝ Որոշում), ընդ որում, վերջիններիս միջև հակասությունների դեպքում գերակայում է Որոշումը:

20.5.2.Սուբսիդավորման ենթակա տոկոսավճարի չափը հաշվարկվում է վարկի մնացորդի նկատմամբ:

20.5.3.Պայմանագրով սահմանված տուժանքները սուբսիդավորման ենթակա չեն:

20.5.4.Վարկառուն տալիս է իր համաձայնությունը որպեսզի Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարությունը և/կամ Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության կողմից սահմանված անձինք և/կամ Գործակալն և/կամ Որոշմամբ սահմանված այլ անձինք իրականացնեն վարկի նպատակային օգտագործման համապատասխանության, իր գործունեության, Պայմանագրի և Սուբսիդավորման պայմանագրի պայմանների

համապատասխանության ստուգումներ սուբսիդավորվող տոկոսադրույքի գումարի վճարման ողջ ժամանակահատվածում: Ստուգումների ընթացքում Գործակալը և/կամ Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարությունը և/կամ Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության կողմից սահմանված անձինք և/կամ Որոշմամբ սահմանված այլ անձինք կարող են Վարկառուից պահանջել ցանկացած լրացուցիչ տեղեկատվություն և փաստաթղթեր, որոնք ենթակա են տրամադրման Վարկառուի կողմից:

20.5.5. 20.5.4. կետում նշված դրույթը չի սահմանափակում Վարկատուի՝ Վարկառուի մոտ վարկերի մոնիտորինգի և այլ ստուգումների իրականացման Պայմանագրով սահմանված իրավունքը:

20.5.6. Սուբսիդավորվող տոկոսադրույքի գումարի վճարումը դադարեցվում է.

- Վարկատուի հանդեպ տվյալ վարկի մասով նախորդ 12 ամիսների կտրվածքով հանրագումարային 60 օրվանից ավել ժամկետանց պարտավորությունների առկայության դեպքում,
- տվյալ վարկի մասով Վարկատուի հանդեպ ժամկետանց պարտավորությունների հետևանքով վարկը ստանդարտ դասով դասակարգված չլինելու դեպքում,
- Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021 թվականի հունիսի 3-ի թիվ 927-Լ որոշմամբ կամ Սուբսիդավորման պայմանագրով սահմանված պահանջների չպահպանման, այդ թվում՝ Որոշման համաձայն՝ հայտնաբերված թերությունները սահմանված ժամկետներում չվերացնելու և/կամ մոնիթորինգի արդյունքում նշված պահանջների խախտման հայտնաբերման դեպքում,
- Վարկը ոչ նպատակային օգտագործելու դեպքում,
- Վարկառուի կողմից ներկայացված տեղեկություններում կեղծիքների և/կամ անհամապատասխանության հայտնաբերման դեպքում,
- Սուբսիդավորման պայմանագիրը և/կամ Պայմանագիրը վաղաժամկետ լուծվելու դեպքում,

20.5.7.Սուբսիդավորումը դադարեցվում է Վարկի մարման ժամանակացույցով սահմանված նախորդ մարման օրվանից սկսած:

20.5.8. Վարկի ոչ նպատակային օգտագործման (ներառյալ վարկառուի նախաձեռնությամբ Պայմանագիրը վաղաժամկետ լուծելու և ծրագրով նախատեսված աշխատանքներն ավարտին չհասցնելու դեպքերի) և/կամ Վարկառուի կողմից ներկայացված տեղեկություններում կեղծիքների հայտնաբերման հետևանքով սուբսիդավորվող տոկոսադրույքի գումարի վճարումը դադարեցվելու, արդեն վճարված սուբսիդավորվող տոկոսադրույքների գումարները ենթակա են վերադարձման Վարկառուի կողմից:

20.5.9. Մնացած հիմքերով սուբսիդավորման դադարեցման դեպքում արդեն վճարված սուբսիդավորվող տոկոսադրույքների գումարները ենթակա են վերադարձման Վարկառուի կողմից՝ Վարկատուի կողմից նման պահանջ ներկայացվելու դեպքում:

20.5.10. Վարկառուն պարտավորվում է այգեհիմնումը իրականացնել Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021 թվականի հունիսի 3-ի թիվ 927-Լ որոշմամբ և Սուբսիդավորման պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան, ինչպես նաև կատարել Որոշմամբ և Սուբսիդավորման պայմանագրով սահմանված այլ անհրաժեշտ գործողություններ, ներկայացնել դրանցով պահանջվող տեղեկություններն ու փաստաթղթերը: Ընդ որում, Վարկառուն պարտավորվում է այգեհիմնումն ավարտել Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից առավելագույնը 2 տարվա ընթացքում (գարնանն այգետնկումը պետք է կատարվի մինչև հունիսի 1-ը, իսկ աշնանը՝ մինչև դեկտեմբերի 1-ը):

20.5.11. Վարկառուն պարտավորվում է նաև.

- խորհրդատվական ծառայություն մատուցողի հետ կնքել համապատասխան պայմանագիր այգեհիմնման ժամանակահատվածում և հաջորդող 3 տարիների համար և այն ներկայացնել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն և (կամ) Վարկատուին: Սույն կետում նշված պայմանագիրը լուծվելու դեպքում Վարկառուն պարտավորվում է 10 աշխատանքային օրվա ընթացքում այլ խորհրդատվական ծառայություն մատուցողի հետ կնքել նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում դա ներկայացնել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն և (կամ) Վարկատուին: Ընդ որում,

խորհրդատվական ծառայություն մատուցողը պետք է ունենա բարձրագույն ագրոնոմիական կրթություն և համապատասխան ոլորտի աշխատանքային փորձ, կամ գործունեության տվյալ տեսակով զբաղվելու իրավունքը հավաստող միջազգային կամ այլ փաստաթղթեր,

- այգեհիմնմանը հաջորդող 3 տարիների համար վարել գրանցամատյան (Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության կայքում հրապարակվող գրանցամատյանի օրինակելի ձևով), որտեղ գրանցվում է խորհրդատուի կողմից առաջարկվող և Վարկառուի կողմից իրականացվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն:
- այգեհիմնման աշխատանքների ավարտից հետո առնվազն 5 տարի չօտարել ու նպատակային օգտագործել այգին (անշարժ գույքը) և առանց Էկոնոմիկայի նախարարության համաձայնության չծանրաբեռնել այլ իրավունքներով.
- այգեհիմնման դեպքում պտղատեսակի կամ տնկման սխեմայի փոփոխություն (ներառյալ հետներդրումային 1-2 տարվա ընթացքում) իրականացնել բավարար հիմնավորումների առկայության դեպքում միայն Էկոնոմիկայի նախարարության համաձայնությամբ.
- այգեհիմնումից հետո պայմանագրի գործողության ընթացքում ապահովել տնկիների առնվազն 75 % կպչողականություն,
- այգեհիմնումն իրականացնել ցածրաճ (թզուկային և կիսաթզուկային, թույլ աճող) պատվաստակալների վրա պատվաստված սորտերի տնկիներով (խաղողի, թզենու և նռնենու այգիների դեպքում այս պահանջը պարտադիր չէ, իսկ պիստակենու դեպքում տնկիները պետք է պատվաստել վարկային կամ փոխհատուցման պայմանագիրը կնքելուց հետո 4 տարվա ընթացքում),
- Վարկի գումարը օգտագործել բացառապես կապալառուներին փոխանցելու միջոցով:

20.5.12. Սուբսիդավորման դադարեցման դեպքում Վարկատուն իրավունք ունի սուբսիդավորման դադարեցման օրվանից միակողմանիորեն փոփոխել վարկի տոկոսադրույքը և ցանկացած պահից կիրառել տվյալ պահին Վարկատուի գործող սակագներով սուբսիդավորման դադարեցման համար սահմանված տոկոսադրույքը, ընդ որում՝ նշված հիմքով տոկոսադրույքի փոփոխման դեպքում Պայմանագրով սահմանված՝ առնվազն 30 օր առաջ Վարկառուին ծանուցելու վերաբերյալ կարգավորումները չեն կիրառվում:

20.5.13. Վարկառուն Վարկատուին տալիս է համաձայնություն Գործակալին և/կամ Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարությանը և/կամ Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության կողմից սահմանված անձանց և/կամ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը և/կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին և/կամ Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին, ինչպես նաև Որոշմամբ սահմանված այլ անձանց և այլ պետական մարմիններին տրամադրելու իրեն վերաբերող բանկային գաղտնիք կազմող տեղեկատվություն:

20.5.14. Վարկի մայր գումարի և տոկոսադրույքի ամբողջական վաղաժամկետ մարում կարող է իրականացվել Վարկատուի մոնիթորինգի և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից սահմանված կարգով իրականացված մոնիթորինգի դրական եզրակացությունից հետո:

20.6. Ագրոպարենային ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկեր

20.6.1. Վարկի տոկոսադրույքը կարող է սուբսիդավորվել Պայմանագրով սահմանված Սուբսիդավորվող տոկոսադրույքի չափով՝ հիմք ընդունելով Վարկատուի և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության Տնտեսական զարգացման և ֆինանսավորման կառույց /ՀՀ ԷՆ ՏԶՖԿ/ (այսուհետ՝ Գործակալ) միջև կնքված պայմանագիրը (այսուհետ՝ Սուբսիդավորման պայմանագիր): Սուբսիդավորումն իրականացվում է Գործակալի կողմից Սուբսիդավորման պայմանագրին համաձայն:

20.6.2. Տույժերը և (կամ) տուգանքները սուբսիդավորման ենթակա չեն:

20.6.3. Վարկի վաղաժամկետ վճարման դեպքում տույժեր և տուգանքներ չեն սահմանվում:

20.6.4. Սուբսիդավորման ենթակա տոկոսադրույքը հաշվարկվում է Վարկի մնացորդի նկատմամբ: Վարկի տոկոսադրույքի սուբսիդավորումն իրականացվում է Վարկի մայր գումարի փաստացի մարումների հիման վրա:

20.6.5. Վարկառուն տալիս է իր համաձայնությունը, որպեսզի Գործակալն իրականացնի Վարկի նպատակային օգտագործման համապատասխանության, իր գործունեության, Վարկի պայմանագրի և Սուբսիդավորման պայմանագրի պայմանների համապատասխանության ստուգումներ սուբսիդավորվող տոկոսադրույքի գումարի վճարման ողջ ժամանակահատվածում:

20.6.6. Վերոնշյալ դրույթը չի սահմանափակում Վարկատուի՝ Վարկառուի մոտ վարկերի մոնիթորինգի և այլ ստուգումների իրականացման Պայմանագրով սահմանված իրավունքը:

20.6.7. Վարկառուն սույնով հավաստում է, որ տեղեկացված է ծրագրի պահանջների և դրանց խախտման հետևանքների մասին:

20.6.8. Վարկառուն Վարկատուին տալիս է համաձայնություն Գործակալին, ՀՀ Էկոնոմիկայի նախարարությանը և ցանկացած այլ պետական մարմնին տրամադրելու իրեն վերաբերող բանկային գաղտնիք կազմող, անձնական տվյալ հանդիսացող և ցանկացած այլ տեղեկատվություն և/կամ փաստաթուղթ:

20.6.9. Տրամադրված Վարկի տոկոսադրույքի սուբսիդավորումը դադարեցվում է՝

– եթե չեն պահպանվել ծրագրով սահմանված պահանջները, Վարկը նպատակային չի օգտագործվել (վարկի օգտագործումը համարվում է ոչ նպատակային, եթե վարկային միջոցները չեն օգտագործվել ագրոպարենային ոլորտում՝ գյուղատնտեսության և ագրովերամշակման),

– եթե Վարկառուի կողմից տրամադրվել է ակնհայտ կեղծ տեղեկատվություն, և կեղծ տեղեկատվության տրամադրման փաստը բացահայտվել է Վարկի տրամադրումից հետո,

– եթե առկա են տվյալ Վարկի մասով Վարկառուի մեկ տարվա (նախորդ 12 ամիսներ) կտրվածքով հանրագումարային 90 օրվանից ավելի ժամկետանց պարտավորություններ կամ Վարկատուի հանդեպ ունեցած ժամկետանց պարտավորությունների հետևանքով՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի վարկն օբյեկտիվ չափանիշներով ստանդարտ դասով դասակարգված չէ,

– Վարկառուի և Վարկատուի միջև կնքված Պայմանագիրը վաղաժամկետ լուծելու դեպքում:

20.6.10. Վարկառուի կողմից Վարկի ոչ նպատակային օգտագործելու (ներառյալ Վարկառուի նախաձեռնությամբ Պայմանագիրը վաղաժամկետ լուծելու և աշխատանքներն ավարտին չհասցնելու դեպքերի) կամ կեղծ տեղեկատվություն տրամադրելու դեպքերում մինչև այդ պահը տրամադրված սուբսիդավորման գումարը ենթակա է վերադարձման:

20.6.11. Վարկի սուբսիդավորումը դադարեցվում է տվյալ Վարկի մարման ժամանակացույցով սահմանված Վարկի նախորդ մարման օրվանից սկսած:

20.6.12. Պայմանագրով չկարգավորված հարցերը կարգավորվում են Սուբսիդավորման պայմանագրով նախատեսված աջակցության ծրագրի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշմամբ, ընդ որում, վերջիններիս միջև հակասությունների դեպքում գերակայում է Որոշումը:

ԳԼՈՒԽ 21 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ

21.1. Միջազգային ֆինանսական կորպորացիայի (այսուհետ՝ ՄՖԿ) հետ համագործակցությամբ իրականացվող ռիսկերի բաշխման ծրագրի (այսուհետ՝ ՄՖԿ ռիսկերի բաշխման ծրագիր) շրջանակներում տրամադրվող վարկեր

21.1.1. Պայմանագրի ստորագրմամբ Վարկառուն հավաստիացնում է, որ.

21.1.1.1. համապատասխանում է Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերով սահմանված և Եվրոպական Միության սանկցիաների ցուցակներին,

21.1.1.2. համապատասխանում է ՄՖԿ ռիսկերի բաշխման ծրագրի պահանջներին և ՄՖԿ ռիսկերի բաշխման ծրագրով սահմանված արգելքներին/սահմանափակումներին,

21.1.1.3. համապատասխանում է Բնապահպանական և սոցիալական չափանիշներին (այսուհետ՝ Չափանիշներ), մասնավորապես՝

- ՄՖԿ բացառման ցանկին (այսուհետ՝ Ցանկ) (ինչպես հրապարակված է ՄՖԿ-ի կայքում՝ https://www.ifc.org/en/what-we-do/sector-expertise/sustainability/ifc-exclusion-list-2007),
- Կիրառելի Բնապահպանական և սոցիալական օրենքներին (ՀՀ բոլոր իրավական ակտեր, օրենքներ, ենթաօրենսդրական ակտեր, կանոնակարգեր (ներառյալ, բայց չսահմանափակվելով որևէ լիցենզիայով, թույլտվությամբ կամ պետական այլ լիազորությամբ), որոնցով սահմանվում են պարտավորություններ կամ չափանիշներ՝ կապված ցանկացած տեսակի բնապահպանական, սոցիալական, աշխատանքային, առողջապահական և այլ ռիսկերի հետ),
- Վարկառուների համար սահմանված ցանկացած այլ սահմանափակումներին,
- Վարկատուի կողմից սահմանված բնապահպանական և սոցիալական այլ պահանջներին:

21.1.2. Վարկառուն պարտավոր է՝

21.1.2.1. համապատասխանել ՀՀ օրենքներին և ներառյալ, բայց չսահմանափակվելով փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման հետ կապված օրենսդրական կարգավորումներին:

21.1.2.2. չիրականացնել Ցանկում նշված, ինչպես նաև հետևյալ ոլորտներում գործունեություն.

-Հիդրոէլեկտրակայանների գործունեություն,

-Ածխի հետ կապված գործունեություններ,

-Արևային ֆոտովոլտային (ՖՎ) կայաններ, բացառությամբ սեփական սպառման համար նախատեսվածների:

21.1.2.3. անհապաղ և ինքնակամ տեղեկացնել Վարկատուին ՀՀ օրենսդրության ցանկացած խախտման փաստի, ՄՖԿ ռիսկերի բաշխման ծրագրին առնչվող պատժամիջոցների ցանկացած պրակտիկայի, փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման ոլորտում ցանկացած խախտումների մասին:

21.1.2.4. Վարկատուի պահանջով վերջինիս տրամադրել Վարկատուի կողմից ՄՖԿ-ին ամենամյա հաշվետվությունների ձևով տրամադրվող գրավոր հաշվետվության մեջ ներառվող, նախորդ ֆինանսական տարվա վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն, որը վերաբերում է Վարկառուների՝ Չափանիշներին համապատասխանությանը:

21.1.2.5. համապատասխանել Չափանիշներին, ներառյալ՝ ձեռք բերել վերջիններիս ներքո պահանջվող բոլոր անհրաժեշտ թույլտվությունները:

21.1.2.6. վարկային պայմանագրով սահմանված իր հետ կապված որևէ էական բնապահպանական և սոցիալական պատահար տեղի ունենալու կամ բնապահպանական և սոցիալական բնույթի հայց ներկայացվելու կամ Չափանիշների խախտման կամ դրանց չհամապատասխանելու դեպքում այդ մասին անհապաղ տեղեկացնել Վարկատուին և վերջինիս պահանջով տրամադրել ցանկացած անհրաժեշտ տեղեկատվություն/փաստաթուղթ:

21.1.2.7. Վարկատուին անհապաղ տեղեկացնել ցանկացած պատահարի կամ հանգամանքի մասին, որը նախաձեռնվել է ցանկացած երրորդ անձի կողմից և, որը կարող է էական նշանակություն ունենալ Վարկառուի՝ Չափանիշներին համապատասխանելու տեսանկյունից՝ յուրաքանչյուր դեպքում նշելով պատահարի կամ հանգամանքի բնույթը և ազդեցությունը, որը առաջացել է կամ կարող է առաջանալ:

21.1.2.8. Վարկատուի պահանջով ձեռնարկել Չափանիշների ցանկացած խախտման վերացմանն ուղղված գործողություններ և հատուցել խախտումների արդյունքում առաջացած վնասներ:

21.1.3. Վարկառուն տալիս է իր համաձայնությունը, որ իր և ՄՖԿ ռիսկերի բաշխման ծրագրի շրջանակում իր կողմից ստացված ֆինանսավորման վերաբերյալ տվյալները (այդ թվում՝ անձնական և բանկային գաղտնիք կազմող), ինչպես նաև ցանկացած հաշվետվություն և փաստաթուղթ փոխանցվեն ՄՖԿ-ին, վերջինիս Համապատասխանության հարցերով խորհրդատու Օմբուդսմենին, ՄՖԿ-ի արտաքին խորհրդականին, ԵՀ-ին, աուդիտորներին և վարկանիշային գործակալություններին, ինչպես նաև ՄՖԿ ռիսկերի բաշխման ծրագրի շրջանակում ՄՖԿ-ի և

Վարկատուի միջև կնքված պայմանագրով սահմանված իրավասու համապատասխան մարմիններին:

ԳԼՈՒԽ 22 ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

22.1. Գրավի առարկաները, բացառությամբ՝ գրավականի և դրամական միջոցների, չեն անցնում Վարկատուի տիրապետմանը:

22.2. Պայմանագրով սահմանված պարտականությունները Վարկառուի կողմից չկատարվելու կամ ոչ պատշաճ կատարվելու դեպքում գրավի առարկաները կարող են բռնագանձվել:

22.3. Վարկի գումարի և գրավի հարաբերակցությունը կարող է փոփոխվել հետևյալ դեպքերում՝ վարկի մայր գումարի մարման, գրավի վերագնահատման, գրավն արգելանքից ազատելու, նոր գրավի ավելացման, վարկի տոկոսագումարի կապիտալացման, արտարժութային փոխարժեքի տատանման, եթե վարկը տրամադրվել է արտարժույթով: Այդ մասին Վարկատուն Վարկառուին հայտնում է վերջինիս հարցման դեպքում՝ բանավոր կերպով, 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

22.4. Պայմանագրից բխող վեճ առաջանալու դեպքում, Վարկատուն իրավասու է իր հայեցողությամբ միակողմանիորեն ընտրել, թե որ դատարանին է ընդդատյա տվյալ գործի քննությունը:

22.5. Պայմանագրից բխող վեճերի լուծման կամ իրավունքների ու պարտականությունների իրականացման ժամանակ կողմերից յուրաքանչյուրը համարվում է պատշաճ ծանուցված, եթե ծանուցումն ուղարկվում է Կողմերի Պայմանագրի վավերապայմաններում և/կամ «Ճանաչիր հաճախորդիդ» հարցաթերթիկում նշված հասցեին կամ հեռախոսահամարին կամ էլեկտրոնային հասցեին՝ անկախ այն ստացողի կողմից փաստացի ստանալու հանգամանքից:

22.6. Պայմանագրի ստորագրմամբ Վարկառուն հավաստիացնում է, որ.

22.6.1. ունի անհրաժեշտ իրավունակություն և գործունակություն Պայմանագիրը և դրա հավելվածները կնքելու համար,

22.6.2. չունի չկատարված պարտավորություններ, որոնց չկատարման համար ճանաչվել է սնանկ, իրեն սնանկ ճանաչելու կամ սնանկության վտանգի հայցով դատարան դիմում չի ներկայացվել, և եթե Վարկառուն իրավաբանական անձ է՝ չի գտնվում վերակազմակերպման գործընթացում,

22.6.3. Պայմանագիրը կնքելիս չի գտնվում մոլորության, խաբեության, բռնության, սպառնալիքի ազդեցության, չարամիտ համաձայնության կամ դժվար կացության մեջ, լիովին հասկանում է իր գործողությունների նշանակությունը,

22.6.4. եթե Վարկառուն իրավաբանական անձ է՝ առկա է իրավասու կառավարման մարմնի որոշումը Պայմանագիրը կնքելու համար,

22.6.5. ինքը, իսկ եթե Վարկառուն իրավաբանական անձ է, նաև՝ իր ղեկավար մարմինները և դուստր ընկերությունները Պայմանագրի գործողության ընթացքում կգործեն ՀՀ օրենսդրության (այդ թվում՝ հարկային, առողջապահական, անվտանգության, աշխատանքային և էկոլոգիական ոլորտների) համաձայն,

22.6.6. գիտակցում է արտարժույթի փոխարժեքի փոփոխման հետևանքով առաջացող հնարավոր անբարենպաստ հետևանքները, եթե Վարկը ստանում է արտարժույթով, և այն, որ արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ Վարկի մարումների վրա,

22.6.7. եթե Վարկառուն իրավաբանական անձ է՝ ՀՀ օրենսդրության և Վարկառուի կանոնադրության համաձայն՝ տնօրենը, որպես իր բացառիկ իրավասություն, իրավասու է Վարկառուի անունից կնքել Պայմանագիրը,

22.6.8. Վարկառուի գույքի (ակտիվների) նկատմամբ որևէ սահմանափակումներ առկա չեն և չեն կանխատեսվում,

22.6.9. մինչև Պայմանագրի և/կամ Լրացուցիչ պայմանագրի կնքումը և/կամ կատարումը Վարկառուի կողմից կնքված այլ պայմանագրերի շրջանակներում որևէ համաձայնության ստացման կամ ծանուցումների ներկայացման անհրաժեշտություն չկա,

22.6.10. Վարկառուի կնքած պայմանագրերը չեն նախատեսում պարտավորությունների կատարման ստորադասում,

22.6.11. Վարկառուի մասնակցությամբ մինչ Պայմանագրի և Լրացուցիչ պայմանագրի կնքումը հարուցված կամ ավարտված քրեական, քաղաքացիական, աշխատանքային կամ վարչական գործեր չկան, որոնք էականորեն սպառնում են Վարկառուի ակտիվներին, գործարքների վավերությանը կամ դրանցից բխող պարտավորությունների կատարմանը,

22.6.12. մինչ Պայմանագրի և Լրացուցիչ պայմանագրի կնքումը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների (հարկային, մաքսային, լիցենզատու, սոցիալական ապահովագրության, բնապահպանական, հրշեջ, քաղաքապետարան, թաղապետարան և այլն) Վարկառուին վերաբերող որոշումները եզրակացությունները, հանձնարարագրերը և այլ բնույթի այլ իրավական ակտերը (այդ թվում պատասխանատվության միջոցների կիրառման մասին) չեն կարող ազդել Վարկառուի կողմից Պայմանագրից և Լրացուցիչ պայմանագրից բխող իր պարտավորությունները պատշաճ և ժամանակին կատարելու վրա,

22.6.13. Վարկառուն իրավասու է զբաղվել այնպիսի գործունեությամբ, որով զբաղվում է,

22.7. Պայմանագրի ստորագրմամբ Վարկատուի կողմից Վարկառուին տրամադրվում է անձնական տվյալների մշակման վերաբերյալ ծանուցում՝ սույն պայմանների Հավելված 3-ում նշված բովանդակությամբ, և Վարկառուն համաձայնում է այդ պայմաններով անձնական տվյալների մշակմանը,

22.8. Վարկառուն չի կարող կատարել Պայմանագրով սահմանված պարտավորությունները Վարկատուի հանդեպ ունեցած պահանջի հաշվանցով,

22.9. Վարկի վերադարձը և տոկոսների վճարումը ժամկետից շուտ կատարվելու դեպքում, այդ պահից տարեկան փաստացի տոկոսադրույքը կարող է միակողմանիորեն փոփոխվել, իսկ վարկային գծերի դեպքում տարեկան փաստացի տոկոսադրույքը կարող է միակողմանիորեն փոփոխվել կախված վարկային գծի ակտիվացման ժամանակից, վարկային գծի օգտագործված և մարված գումարների չափից, վարկային գծի օգտագործման և մարումների ժամկետներից՝ նշված հանգամանքների առաջացման պահից:

22.10. Պայմանագրով և դրա հավելվածներով նախատեսված հաշվարկների համար տարին հաշվվում է 365 օր,

22.11. Սույն փաստաթղթում սահմանված ընդհանուր կանոնների և յուրաքանչյուր վարկատեսակին վերաբերող գլխով սահմանված կանոնների (Հատուկ կանոններ) միջև հակասությունների դեպքում գերակայում են Հատուկ կանոնները,

22.12. Հավելված 1-ը, Հավելված 2-ը և Հավելված 3-ը Պայմանագրի անբաժանելի մասն են կազմում:

ԲԱԺԻՆ 2 ԳՐԱՎ

ԳԼՈՒԽ 1 ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պայմանագիր կամ Գրավի պայմանագիր - Բանկային ծառայությունների ընդհանուր պայմանները (Պայմաններ) և Կողմերի միջև կնքված համապատասխան գրավի պայմանագիրը (այդ թվում՝ Հիփոթեքի, Անշարժ գույքի առուվաճառքի ու Հիփոթեքի, Անշարժ գույք գնելու իրավունքի առուվաճառքի ու Հիփոթեքի/, Դրամական միջոցների գրավի և հաջորդող դրամական միջոցների գրավի խառը պայմանագիրը) միասին,

Գրավի առարկա – Կողմերի միջև կնքված համապատասխան գրավի պայմանագրի 2-րդ կետով սահմանված և ի ապահովումն Գլխավոր վարկային պայմանագրով կամ համապատասխան

Վարկի պայմանագրով սահմանված պարտավորությունների գրավադրված գույք, այդ թվում՝ գույքային իրավունք, (Հիփոթեքի, Անշարժ գույքի առուվաճառքի ու Հիփոթեքի, Անշարժ գույք գնելու իրավունքի առուվաճառքի ու Հիփոթեքի/, Դրամական միջոցների գրավի և հաջորդող դրամական միջոցների գրավի խառը պայմանագրի դեպքում Գրավի առարկան անվանվում է նաև Հիփոթեքի առարկա կամ Անշարժ գույք),

Կողմեր - Գրավատու և Գրավառու, Հիփոթեքի պայմանագրի դեպքում՝ Գրավառու, Գրավատու և Վարկառու, Անշարժ գույքի առուվաճառքի ու հիփոթեքի, Անշարժ գույք գնելու իրավունքի առուվաճառքի ու հիփոթեքի/, Դրամական միջոցների գրավի և հաջորդող դրամական միջոցների գրավի խառը պայմանագրի դեպքում՝ Գրավառու, Գնորդ-գրավատու, Վաճառող և Վարկառու:

Բաժին 2-ում կիրառվող, սակայն սույն գլխում, ինչպես նաև Կողմերի միջև կնքված համապատասխան գրավատեսակի պայմանագրում չսահմանված մյուս բոլոր հասկացություններն ունեն Բաժին 1-ում սահմանված նշանակությունները:

ԳԼՈՒԽ 2 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2.1. Բանկում Գրավի պայմանագիրը կնքվում է ի ապահովումն Գլխավոր վարկային պայմանագրով Վարկառուի ստանձնած պարտավորությունների կատարման: Գլխավոր վարկային պայմանագրի բացակայության դեպքում Գրավի պայմանագիրը կնքվում է ի ապահովումն առանձին Վարկի պայմանագրով/պայմանագրերով Վարկառուի ստանձնած պարտավորությունների կատարման,

2.2. Գլխավոր վարկային պայմանագրի շրջանակներում յուրաքանչյուր Վարկի մասնավոր պայմանները սահմանելիս Կողմերը պետք է առաջնորդվեն նաև Գրավառուի սակագներով և ներքին իրավական ակտերով, որոնք Գրավառուի կողմից կարող են միակողմանիորեն փոփոխվել: Ընդ որում, նշված փաստաթղթերի և Գլխավոր վարկային պայմանագրի սահմաններում Վարկի մասնավոր պայմանների որոշման վերջնական իրավունքը վերապահված է Գրավառուին,

2.3. Գրավի պայմանագրի ստորագրմամբ Գրավատուն/Գնորդ-գրավատուն հավաստում է, որ ծանոթացել է և համաձայնում է Գլխավոր վարկային պայմանագրին, Լրացուցիչ պայմանագրին/պայմանագրերին, իսկ Գլխավոր վարկային պայմանագրի բացակայության դեպքում՝ համապատասխան Վարկի պայմանագրին, ինչպես նաև սույն պայմանների Բաժին 1-ում (Վարկային պրոդուկտներ) նկարագրված դրույթներին, այդ թվում՝ վարկավորման ընդհանուր դրույթներին, Վարկատուի և Վարկառուի փոխադարձ իրավունքներին ու պարտականություններին, առանձին վարկատեսակների վերաբերյալ սույն պայմանների համապատասխան գլուխներով սահմանված դրույթներին, ինչպես նաև համապատասխան Ֆոնդերի և/կամ Աջակցության ծրագրերի և/կամ Համագործակցության ծրագրերի պայմաններին,

2.4. Վարկատուն և Վարկառուն կարող են փոխադարձ համաձայնությամբ փոփոխել Վարկի առավելագույն սահմանաչափը և Գլխավոր վարկային պայմանագրի գործողության ժամկետը, սակայն այդ դեպքում Պայմանագրով կապահովվի միայն Պայմանագրում նշված Վարկի առավելագույն սահմանաչափի սահմաններում և Գլխավոր վարկային պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում տրամադրված Վարկերը, եթե Գրավառուն և Գրավատուն/Գնորդ-գրավատուն այլ բան չեն պայմանավորվել,

2.5. Գրավն ապահովում է Գրավառուի պահանջն այն ծավալով, որն առկա է փաստացի բավարարման պահին: Այդ պահանջը, մասնավորապես, ներառում է տոկոսները, տուժանքը, կատարման ժամկետի կետանցով պատճառված վնասները, ինչպես նաև Գրավի առարկան պահելու, պահպանելու, դրա վրա բռնագանձում տարածելու և իրացնելու համար Գրավառուի կատարած կամ կատարվելիք ծախսերի հատուցումը,

2.6. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում, իսկ գրավի իրավունքը ծագում է.

-Կողմերի ստորագրությամբ փաստաթուղթ կազմելու միջոցով կնքվելու դեպքում՝ բոլոր Կողմերի ստորագրման պահից, բացառությամբ տրանսպորտային միջոցների Գրավի պայմանագրի և բաժնեմասի Գրավի պայմանագրի, որոնց դեպքում գրավի իրավունքը ծագում է պետական գրանցման պահից, բաժնետոմսի Գրավի պայմանագրի, որի դեպքում գրավի իրավունքը ծագում է բաժնետոմսերի սեփականատերերի ռեեստրը վարող մասնագիտացված կազմակերպությունում գրանցման պահից, Հիփոթեքի, Անշարժ գույքի առուվաճառքի և հիփոթեքի, Անշարժ գույք գնելու իրավունքի առուվաճառքի ու հիփոթեքի/Դրամական միջոցների գրավի և հաջորդող դրամական միջոցների գրավի խառը պայմանագրերի, որոնց դեպքում Պայմանագիրն ուժի մեջ է մտնում, և գրավի իրավունքը ծագում է նոտարական վավերացման և Պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման պահից.

2.6.1. Էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցներով կնքման դեպքում՝ (այսուհետ՝ էլեկտրոնային եղանակով կնքում) հետևյալ կարգով.

2.6.1.1. Կողմերի էլեկտրոնային հասցեների միջև փաստաթուղթ և/կամ հաղորդագրություն փոխանակելու միջոցով կնքման դեպքում, Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գրավառուի կողմից Գրավատուի ՝ Պայմանագրում նշված էլեկտրոնային հասցեին ուղարկված օֆերտայի (առաջարկի) ակցեպտը Գրավառուի կողմից ստանալու պահից: Ընդ որում, Գրավատուն օֆերտան (առաջարկը) ընդունում (ակցեպտավորում) է Պայմանագրում նշված իր հեռախոսահամարին ուղարկված մեկանգամյա օգտագործման գաղտնաբառը մուտքագրելու և «Ստորագրել փաստաթղթերը» հրահանգն ընտրելու միջոցով,

2.6.1.2. acba digital ինտերնետ բանկինգ համակարգում փաստաթուղթ և/կամ հաղորդագրություն փոխանակելու միջոցով կնքման դեպքում, Պայմանագիրն ուժի մեջ է մտնում acba digital ինտերնետ բանկինգ համակարգում ներկայացվող օֆերտայի (առաջարկի) ակցեպտը Գրավառուի կողմից ստանալու պահից: Ընդ որում, Գրավատուն օֆերտան (առաջարկը) ընդունում (ակցեպտավորում) է acba digital ինտերնետ բանկինգ համակարգում «Հաստատել» կամ «Ստանալ» հրահանգն ընտրելու միջոցով,

2.7. Պայմանագրի փոփոխության համաձայնագիրը կարող է կնքվել ինչպես Կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով, այնպես էլ էլեկտրոնային եղանակով, բացառությամբ Հիփոթեքի, Անշարժ գույքի առուվաճառքի և հիփոթեքի, Անշարժ գույք գնելու իրավունքի առուվաճառքի ու հիփոթեքի/Դրամական միջոցների գրավի և հաջորդող դրամական միջոցների գրավի խառը պայմանագրերի, որոնց դեպքում Հիփոթեքի առարկայով ապահովված պարտավորության ծավալի, կատարման ժամկետի և Հիփոթեքի առարկայի նկարագրի հետ կապված փոփոխության գրավոր համաձայնագրերը ենթակա են նոտարական վավերացման, դրանցից ծագող իրավունքները՝ պետական գրանցման, իսկ թվարկված պայմանագրերի մնացած փոփոխությունները կատարվում են Կողմերի միջև հասարակ գրավոր համաձայնագրի կնքման միջոցով:

Ընդ որում, նշված դրույթը չի վերաբերում Պայմաններում փոփոխություններին, որոնք կատարվում են Գրավառուի կողմից միակողմանիորեն՝ Պայմանագրով սահմանված կարգով:

2.8. Կողմերը կարող են փոփոխել, վերաշարադրել կամ Կողմերի իրավահարաբերություններում չկիրառել Պայմանների առանձին դրույթներ՝ համապատասխան վերապահում նախատեսելով ստորագրվող Պայմանագրում կամ միմյանց միջև կնքվող փոփոխության համաձայնագրերում,

2.9. Պայմանագիրը դադարում է գրավով ապահովված պարտավորությունների ամբողջ ծավալով կատարմամբ կամ օրենքով նախատեսված այլ դեպքերում:

ԳԼՈՒԽ 3 ԳՐԱՎԱՏՈՒԻ/ԳՆՈՐԴ-ԳՐԱՎԱՏՈՒԻ ԵՎ ԳՐԱՎԱՌՈՒԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Գրավառուն իրավունք ունի.

3.1.1. Գրավի պայմանագրով ապահովված պարտավորությունը չկատարվելու դեպքում՝ Գրավատուի/Գնորդ-Գրավատուի մյուս պարտատերերի հանդեպ Գրավի առարկայի արժեքից նախապատվության կարգով բավարարում ստանալ,

3.1.2. Վերը նշված սկզբունքով ստանալ բավարարում Գրավի առարկայի կորստի կամ վնասվածքների ապահովագրական հատուցումից, անկախ այն բանից, թե այն ում օգտին է ապահովագրված, եթե նման կորուստը կամ վնասվածքը չեն ծագել այնպիսի պատճառներից, որոնց համար պատասխանատու է Գրավառուն,

3.1.3. գրանցել Գրավի առարկայի նկատմամբ ապահովված իրավունքը,

3.1.4. Գրավի պայմանագրից բխող իր իրավունքները փոխանցել այլ անձի՝ պահպանելով պահանջը զիջելու միջոցով պարտատիրոջ իրավունքները փոխանցելու կանոնները,

3.1.5. փաստաթղթերով ու փաստացի ստուգել Գրավատուի/Գնորդ-Գրավատուի մոտ գտնվող Գրավի առարկայի առկայությունը, քանակը, վիճակը և պահպանման պայմանները, ընդ որում, ստուգումների ժամանակն ու քանակը որոշվում են Գրավառուի կողմից՝ առանց նախապես համաձայնեցնելով Գրավատուի/Գնորդ-Գրավատուի հետ,

3.1.6. Գրավատուի/Գնորդ-Գրավատուի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները տրամադրել պետական, այդ թվում՝ դատական և իրավապահ մարմիններին՝ իր իրավունքներն իրացնելու և պարտավորությունները կատարելու նպատակով:

3.1.7. Գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելուց հետո Հայաստանի Հանրապետության՝ վաճառքի պահին գործող օրենսդրությամբ թույլատրված ցանկացած եղանակով վաճառել Գրավի առարկան:

3.2. Գրավատուն/Գնորդ-Գրավատուն իրավունք ունի.

3.2.1. օգտվել Գրավի առարկայից դրա նշանակությանը համապատասխան, այդ թվում՝ դրանից ստանալ պտուղներ և եկամուտներ (բացառությամբ դրամական միջոցների գրավի),

3.2.2. Պայմանագրից բխող բողոք-պահանջները, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմանների բավարարման դեպքում, ներկայացնել Ֆինանսական համակարգի հաշտարարին: Ընդ որում, եթե գույքային պահանջի չափը չի գերազանցում 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթը և գործարքի գումարի չափը չի գերազանցում 500 000 (հինգ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, ապա ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները չեն կարող վիճարկվել Գրավառուի կողմից:

3.3. Գրավատուն/Գնորդ-գրավատուն պարտավոր է.

3.3.1. Գրավառուի պահանջով Գրավի առարկան լրիվ արժեքով ապահովագրել կորստյան և վնասվածքի ռիսկերից, իսկ եթե դրա լրիվ արժեքը գերազանցում է գրավով ապահովված պահանջի չափը՝ դրանից ոչ պակաս գումարով *(սույն դրույթը կիրառելի չէ Հիփոթեքի, Անշարժ գույքի առուվաճառքի ու Հիփոթեքի, Անշարժ գույք գնելու իրավունքի առուվաճառքի ու Հիփոթեքի/, Դրամական միջոցների գրավի և հաջորդող դրամական միջոցների գրավի խառը պայմանագրերի դեպքում, որոնց համար կիրառելի են Գլուխ 5-ով սահմանված առանձին կանոնները),*

3.3.2. առանց Գրավառուի գրավոր համաձայնության Գրավի առարկան չօտարել կամ այլ կերպ չտնօրինել այն՝ բացառությամբ այն գրավադրելուց (բացառությամբ շրջանառության մեջ գտնվող ապրանքների գրավի),

3.3.3. առանց Գրավառուի գրավոր համաձայնության չձևափոխել Գրավի առարկան,

3.3.4. անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել Գրավի առարկան պահպանելու՝ ներառյալ այն երրորդ անձանց ոտնձգություններից և պահանջներից պաշտպանելու համար,

3.3.5. Գրավառուին անհապաղ տեղեկացնել Գրավի առարկայի կորստյան, վնասվածքի կամ նման սպառնալիքի ծագման մասին,

3.3.6. տասնօրյա ժամկետում վերականգնել Գրավի առարկան կամ այն փոխարինել այլ հավասարարժեք գույքով, եթե Գրավի առարկան ոչնչացել կամ վնասվել է կամ դրա նկատմամբ սեփականության իրավունքը դադարել է,

3.3.7. գրավադրման համար ներկայացված փաստաթղթերում, Գրավատուի/Գնորդ-Գրավատուի կողմից Պայմանագրով տրվող հավաստիացումներում և/կամ Պայմանագրում նշված Գրավատուի/Գնորդ-Գրավատուի վավերապայմաններում փոփոխության դեպքում երեք օրվա

ընթացքում տեղյակ պահել Գրավառուին և տրամադրել փոփոխված փաստաթղթերի պատճենները:

ԳԼՈՒԽ 4 ԳՐԱՎԻ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Գրավառուն իր պահանջի բավարարման նպատակով իրավունք ունի առանց դատարան դիմելու Գրավի առարկայի վրա բռնագանձում տարածել և իրացնել այն ուղղակի վաճառքի կամ հրապարակային սակարկությունների միջոցով, ինչպես նաև Գրավի առարկան հիմնական պարտավորության համապատասխան չափի դիմաց Գրավառուին կամ Գրավառուի նշած երրորդ անձին ի սեփականություն հանձնել,

4.2. Գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Գրավառուն գրավոր ձևով ծանուցում է Գրավատուին/Գնորդ-Գրավատուին առանց դատարան դիմելու Գրավի առարկայի բռնագանձման մասին (բռնագանձման ծանուցում): Բռնագանձման ծանուցումը Գրավատուին/Գնորդ-Գրավատուին հանձնելուց երկու ամիս հետո Գրավառուն իրավունք ունի բռնագանձում տարածել Գրավի առարկայի վրա և իրացնել այն,

4.3. Որպես Գրավի առարկայի իրացման գին կամ լոտի մեկնարկային արժեք հիմք է վերցվում Գրավառուի կողմից նշանակված անկախ գնահատողի կողմից Գրավի առարկայի օտարման պահին առավելագույնը մեկ ամիս վաղեմությամբ գնահատված Գրավի առարկայի լիկվիդացիոն արժեքը կամ դրանից բարձր գինը:

ԳԼՈՒԽ 5 ԳՐԱՎԻ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿՈՇՏ ԳՐԱՎ

5.1. Գրավի պայմանագրի գործողության ընթացքում Գրավի առարկայի վիճակը, հաշվի առնելով բնական մաշվածությունը, չպետք է լինի ավելի վատ, քան դա արձանագրվել է Կողմերի միջև կնքված Գրավի առարկայի վիճակի վերաբերյալ ակտում,

5.2. Գրավատուն պարտավոր է

5.2.1. առանց Գրավառուի գրավոր համաձայնության չձևափոխել Գրավի առարկան,

5.2.2. Տրանսպորտային միջոցների Գրավի պայմանագրից ծագող իրավունքները գրանցել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունում Պայմանագրի ստորագրման օրվանից հետո 5-օրյա ժամկետում:

ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՐԱՎ

5.3. Գրավատուի կողմից օտարված Գրավի առարկան ձեռք բերողի սեփականությանն անցնելու պահից դադարում է Գրավի առարկա լինել, իսկ Գրավատուի ձեռք բերված՝ Գրավի պայմանագրում նշված ապրանքները դառնում են Գրավի առարկա՝ Գրավատուի մոտ դրանց նկատմամբ սեփականության իրավունքի ծագման պահից,

5.4. Գրավատուն իրավունք ունի.

5.4.1. փոխել Գրավի առարկայի կազմը և բնական ձևը՝ պայմանով, որ դրա արժեքը չնվազի Գրավի պայմանագրում նշված՝ Գրավի առարկայի ընդհանուր գնահատված արժեքից,

5.4.2. նվազեցնել Գրավի առարկայի արժեքը պարտավորության կատարված մասին համաչափ միայն Գրավառուի գրավոր համաձայնությամբ:

5.5. Գրավառուն իրավունք ունի.

5.5.1. Գրավի պայմանագրի պայմանների խախտման դեպքում Գրավի առարկայի վրա իր նշանները դնելու միջոցով կասեցնել դրանց հետ կատարվող գործառնությունները մինչև խախտման վերացումը,

5.5.2. անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել Գրավի առարկան պահպանելու՝ ներառյալ այն երրորդ անձանց ոտնձգություններից և պահանջներից պաշտպանելու համար: Ընդ որում, Գրավի պայմանագրի գործողության ընթացքում Գրավի առարկայի վիճակը, հաշվի առնելով բնական մաշվածությունը, չպետք է լինի ավելի վատ, քան դա արձանագրվել է Կողմերի միջև կնքված Գրավի առարկայի վիճակի վերաբերյալ ակտում.

5.6. Գրավատուն պարտավոր է վարել Գրավի առարկայի գրառման գիրք, որի մեջ գրառումներ են կատարվում վերջին գործառնության օրվա դրությամբ Գրավի առարկայի պայմանների և Գրավի առարկայի կազմը կամ բնական ձևը փոփոխող բոլոր գործառնությունների մասին՝ ներառյալ դրանց վերամշակումը:

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՐԱՎ

5.7. Գրավառուն իրավունք ունի

5.7.1. Վարկային պայմանագրով ապահովված պարտավորությունը չկատարվելու կամ ոչ պատշաճ կատարվելու դեպքում Գրավի առարկան անակցեպտ կարգով ուղղել Վարկային պայմանագրով սահմանված պարտավորությունների (այդ թվում՝ տուժանքի, տոկոսագումարի, մայր գումարի) կատարմանը,

5.7.2. Գրավի առարկան չապահովագրել կորստյան և վնասվածքի ռիսկերից:

ԲԱԺՆԵՏՈՄՍԻ ԳՐԱՎ

5.8. Գրավատուն պարտավոր է.

5.8.1. Գրավի պայմանագրից ծագող իրավունքները գրանցել ընկերության թողարկած բաժնետոմսերի սեփականատերերի ռեեստրը վարող մասնագիտացված կազմակերպությունում և վճարել գրանցման հետ կապված ծախսերը,

5.8.2. առանց Գրավառուի գրավոր համաձայնության չթողարկել նոր բաժնետոմսեր:

ԲԱԺՆԵՄԱՍԻ ԳՐԱՎ

5.9. Գրավատուն պարտավոր է Գրավի պայմանագրից ծագող իրավունքները գրանցել Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում և վճարել գրանցման հետ կապված ծախսերը,

5.10. Բաժնեմասի գրավի դեպքում սույն բաժնի Գլուխ 4-ով սահմանված կարգավորումները չեն կիրառվում:

ՀԻՓՈԹԵՔ

5.11. Գրավատուն պարտավոր է.

5.11.1. վճարել Պայմանագրի նոտարական վավերացման և Պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը,

5.11.2. Պայմանագրից ծագող իրավունքները գրանցել Կադաստրի կոմիտեում ոչ ուշ, քան Պայմանագրի նոտարական վավերացման օրվանից սկսած՝ 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում,

5.11.3. Գրավառուի կողմից գրավն իրացնելու մտադրության մասին ծանուցումը ստանալուց հետո 30 (երեսուն) օրվա ընթացքում Անշարժ գույքն ազատել իր և մյուս զբաղեցնողների տիրապետումից,

5.11.4. Գրավառուի պահանջով ապահովել, որպեսզի իր ընտանիքի անդամները, վարձակալները և Անշարժ գույքը զբաղեցնող այլ անձինք ստորագրեն նոտարի կողմից հաստատված համաձայնություններ, որոնցով կընդունեն, որ Անշարժ գույքի տարածքում մնալու իրենց իրավունքը դադարում է այն դեպքում, երբ Պայմանագրով սահմանված, ինչպես նաև ապահովված պարտավորությունները չեն կատարվում կամ ոչ պատշաճ են կատարվում,

5.11.5. Գրավառուի պահանջով Հիփոթեքի առարկան ապահովագրել կորստյան և վնասվածքի ռիսկերից Գրավառուի հետ համաձայնեցված ապահովագրական ընկերության միջոցով և Գրավառուի համար ընդունելի պայմաններով: Հիփոթեքի առարկան պետք է ապահովագրվի լրիվ արժեքով, իսկ եթե դրա լրիվ արժեքը գերազանցում է գրավով ապահովված պահանջի չափը՝ դրանից ոչ պակաս գումարով. *(սույն դրույթը կիրառելի չէ «Ազգային հիփոթեքային ընկերություն» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության կողմից վերաֆինանսավորման ծրագրի շրջանակներում կնքվող պայմանագրերի դեպքում)*

5.11.6. Գրավառուի պահանջով Հիփոթեքի առարկան ապահովագրել կորստյան և վնասվածքի ռիսկերից՝ Վարկի մնացորդի չափով՝ Գրավառուի հետ համաձայնեցված ապահովագրական ընկերության միջոցով և Գրավառուի համար ընդունելի պայմաններով: *(սույն դրույթը կիրառելի է «Ազգային հիփոթեքային ընկերություն» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության կողմից վերաֆինանսավորման ծրագրի շրջանակներում կնքվող պայմանագրերի դեպքում)*

5.12. Գրավառուն իրավունք ունի Գրավատուի անձնական տվյալները և բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները տրամադրել Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարությանը (Նախարարություն) և/կամ Նախարարության կողմից լիազորված անձանց՝ 2020 թվականի մայիսի 14-ի N 968-Լ որոշմամբ սահմանված աջակցության ծրագրերի շրջանակներում: *(սույն դրույթը կիրառելի է «Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության» պետական աջակցության ծրագրի շրջանակներում Վարկառուի կամ Գրավատուի կողմից աջակցության ստացման դեպքում)*

5.13. Գրավատուն և Վարկառուն Պայմանագրի ստորագրմամբ.

5.13.1. հավաստիացնում են, որ տեղեկացված են հիփոթեքային վարկի պայմանագրի գործողության ընթացքում Հիփոթեքի առարկան օտարելու դեպքում Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարության կողմից փոխանցված պետական աջակցության գումարը պետական բյուջե վերադարձնելու պահանջի մասին, *(սույն դրույթը կիրառելի է «Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության» պետական աջակցության ծրագրի շրջանակներում Վարկառուի կամ Գրավատուի կողմից աջակցության ստացման դեպքում)*

5.13.2. համաձայնում են, որ իրենց բանկային հաշվին/հաշիվներին Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարության կողմից սխալմամբ փոխանցված պետական աջակցության գումարը Գրավառուի կողմից վերադարձվի Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ վերը նշված նախարարության կողմից համապատասխան կարգադրություն ներկայացնելու դեպքում *(սույն դրույթը կիրառելի է «Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության» պետական աջակցության ծրագրի շրջանակներում Վարկառուի կամ Գրավատուի կողմից աջակցության ստացման դեպքում):*

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔ ԵՎ ՀԻՓՈԹԵՔ

Գնորդ-գրավատուի և Վաճառողի փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները

5.14. Վաճառողն իրավունք ունի իր ընտրությամբ պահանջել վճարելու Հիփոթեքի առարկայի համար կամ հրաժարվել Պայմանագիրը կատարելուց, եթե Հիփոթեքի առարկայի համար Պայմանագրով սահմանված կարգով և չափով չի վճարվել:

5.15. Վաճառողը պարտավոր է.

5.15.1. Հիփոթեքի առարկան հանձնելու հետ միաժամանակ Գնորդ-գրավատուին հանձնել դրա պատկանելիքները, ինչպես նաև դրան վերաբերող փաստաթղթերը,

5.15.2. ապահովել, որ Հիփոթեքի առարկան Գնորդ-գրավատուին հանձնելիս դրա նկատմամբ առկա չլինեն գրանցված գրավի իրավունքներ կամ այլ սահմանափակումներ, բացառությամբ Գրավառուի գրավի իրավունքի:

5.16. Գնորդ-գրավատուն պարտավոր է.

5.16.1. վճարել Պայմանագրի նոտարական վավերացման և Պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը,

5.16.2. Պայմանագրից ծագող իրավունքները գրանցել Կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանումում ոչ ուշ, քան Պայմանագրի նոտարական վավերացման օրվանից սկսած՝ 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում,

Գնորդ-գրավատուի և Գրավառուի փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները

5.17. Գրավառուն իրավունք ունի Գնորդ-Գրավատուի անձնական տվյալները և բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները տրամադրել Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարությանը (Նախարարություն) և/կամ Նախարարության կողմից լիազորված անձանց՝ 2020 թվականի մայիսի 14-ի N 968-Լ որոշմամբ սահմանված աջակցության ծրագրերի շրջանակներում: *(սույն դրույթը կիրառելի է «Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության» պետական աջակցության ծրագրի շրջանակներում Վարկառուի կամ Գնորդ-Գրավատուի կողմից աջակցության ստացման դեպքում)*

5.18. Գնորդ-գրավատուն պարտավոր է

5.18.1. Գրավառուի կողմից գրավն իրացնելու մտադրության մասին ծանուցումը ստանալուց հետո 30 (երեսուն) օրվա ընթացքում Անշարժ գույքն ազատել իր և մյուս զբաղեցնողների տիրապետումից,

5.18.2. Գրավառուի պահանջով ապահովել, որպեսզի իր ընտանիքի անդամները, վարձակալները և Անշարժ գույքն զբաղեցնող այլ անձինք ստորագրեն նոտարի կողմից հաստատված համաձայնություններ, որոնցով կընդունեն, որ Անշարժ գույքի տարածքում մնալու իրենց իրավունքը դադարում է այն դեպքում, երբ Պայմանագրով սահմանված, ինչպես նաև ապահովված պարտավորությունները չեն կատարվում կամ ոչ պատշաճ են կատարվում,

5.18.3. Հիփոթեքի առարկան ապահովագրել կորստյան և վնասվածքի ռիսկերից Գրավառուի հետ համաձայնեցված ապահովագրական ընկերության միջոցով և Գրավառուի համար ընդունելի պայմաններով, եթե դա սահմանված է Գրավառուի ինտերնետային կայքում՝ www.acba.am, հրապարկվող Գլխավոր վարկային պայմանագրի շրջանակներում տրամադրվող վարկի պայմաններում և/կամ Գրավառուի ներքին իրավական ակտերում: Ապահովագրումը պետք է իրականացվի առնվազն մեկ տարի ժամկետով և մեկ տարի պարբերականությամբ, բայց ոչ ավելի երկար, քան Պայմանագրի ժամկետը: Հիփոթեքի առարկան պետք է ապահովագրվի լրիվ արժեքով, <u>իսկ եթե դրա լրիվ արժեքը գերազանցում է գրավով ապահովված պահանջի չափը՝ դրանից ոչ պակաս գումարով.</u> *(ընդգծված հատվածը կիրառելի չէ «Բնակարան երիտասարդներին» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության կողմից վերաֆինանսավորման շրջանակներում կնքվող պայմանագրերի դեպքում)*

5.18.4. Հիփոթեքի առարկան ապահովագրել կորստյան և վնասվածքի ռիսկերից՝ Վարկի գումարի մնացորդի չափով՝ Գրավառուի հետ համաձայնեցված ապահովագրական ընկերության միջոցով և Գրավառուի համար ընդունելի պայմաններով: Ապահովագրումը պետք է իրականացվի առնվազն մեկ տարի ժամկետով և մեկ տարի պարբերականությամբ, բայց ոչ ավելի երկար, քան Պայմանագրի ժամկետը: *(սույն դրույթը կիրառելի է միայն «Ազգային հիփոթեքային ընկերություն» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական*

ընկերության կողմից վերաֆինանսավորման ծրագրի շրջանակներում կնքվող պայմանագրերի դեպքում)

Այլ դրույթներ.

5.19. Վաճառողը Պայմանագրի ստորագրմամբ հավաստիացնում և երաշխավորում է, որ.

5.19.1. Պայմանագրի կնքման պահին կատարել է Անշարժ գույքի հետ կապված բոլոր պարտավորությունները, այդ թվում՝ վճարել է բոլոր հարկերն ու տուրքերը:

5.19.2. Գնորդ-գրավատուին վաճառում է իր սեփականությունը հանդիսացող Անշարժ գույքը, և, եթե Անշարժ գույքն ունի այլ սեփականատեր/եր, ապա առկա են բոլոր համասեփականատերերի գրավոր համաձայնությունը.

5.19.3. Անշարժ գույքը չունի որևէ վնասվածք կամ թերություն, որոնց մասին Կողմերը գրավոր չեն տեղեկացվել.

5.20. Պայմանագրի կնքման պահին Անշարժ գույքն ազատ է երրորդ անձանց իրավունքներից (արգելանքի տակ չէ, գրավ չի դրված, չի տիրապետվում երրորդ անձի կողմից և ազատ է երրորդ անձանց որևէ պահանջներից, դրա վրա բռնագանձում տարածված չէ, ինչպես նաև այն որևէ այլ կերպ հանված չէ շրջանառությունից), բացի Պայմանագրում նախատեսված սահմանափակումներից (առկայության դեպքում).

5.21. Գնորդ-գրավատուն և Վարկառուն Պայմանագրի ստորագրմամբ.

5.21.1. հավաստիացնում են, որ տեղեկացված են հիփոթեքային վարկի պայմանագրի գործողության ընթացքում Հիփոթեքի առարկան օտարելու դեպքում Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարության կողմից փոխանցված պետական աջակցության գումարը պետական բյուջե վերադարձնելու պահանջի մասին, *(սույն դրույթը կիրառելի է «Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության» պետական աջակցության ծրագրի շրջանակներում Վարկառուի կամ Գնորդ-Գրավատուի կողմից աջակցության ստացման դեպքում)*

5.21.2. համաձայնում են, որ իրենց բանկային հաշվին/հաշիվներին Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարության կողմից սխալմամբ փոխանցված պետական աջակցության գումարը Գրավառուի կողմից վերադարձվի Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ վերը նշված նախարարության կողմից համապատասխան կարգադրություն ներկայացնելու դեպքում *(սույն դրույթը կիրառելի է «Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության» պետական աջակցության ծրագրի շրջանակներում Վարկառուի կամ Գնորդ-Գրավատուի կողմից աջակցության ստացման դեպքում):*

5.22. Կողմերը Պայմանագրի ստորագրմամբ համաձայնում են, որ մինչև Հիփոթեքի առարկայի Վաճառքի գնի ամբողջական վճարումը Վաճառողին, Հիփոթեքի առարկան չի համարվում Վաճառողի մոտ գրավադրված:

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ԳՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔ ԵՎ ՀԻՓՈԹԵՔԻ, ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՐԱՎԻ ԵՎ ՀԱՋՈՐԴՈՂ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՐԱՎ

Դրամական միջոցների/հաջորդող դրամական միջոցների գրավին վերաբերող կանոններ.

5.23. Հաջորդող դրամական միջոցների գրավն ապահովում է Գրավառուի պահանջն այն ծավալով, որն առկա է փաստացի բավարարման պահին: Այդ պահանջը, մասնավորապես, ներառում է տոկոսները, տուժանքը, կատարման ժամկետի կետանցով պատճառված վնասները, ինչպես նաև Հիփոթեքի առարկան պահելու, պահպանելու, դրա վրա բռնագանձում տարածելու և իրացնելու համար Գրավառուի կատարած կամ կատարվելիք ծախսերի հատուցումը,

5.24. Շենքի/Համալիրի ավարտական ակտը և շահագործման թույլտվությունը ստանալուց հետո սեփականության իրավունքի փոխանցման ակտով Գնորդ-գրավատուին Հիփոթեքի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցման դեպքում՝ գրավադրված դրամական միջոցների նկատմամբ Գնորդ-գրավատուի գրավի իրավունքը դադարում է (բացառությամբ

Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 570.1. և 928.6. հոդվածներով նախատեսված սահմանափակումների), իսկ հաջորդող գրավն ամբողջությամբ դադարում է Շենքի/Համալիրի ավարտական ակտը, շահագործման թույլտվությունը, Անշարժ գույքի փոխանցման ակտը, Հիփոթեքի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքի վկայականը, կառուցված անշարժ գույքի նկատմամբ միայն Գրավառուի գրավի իրավունքի գրանցումը և այլ սահմանափակումների բացակայությունը հիմնավորող համապատասխան փաստաթղթեր Կադաստրի կոմիտեից Գրավառուին ներկայացնելու դեպքում,

5.25. Կողմերը համաձայնում են, որ Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 570.1. և 928.6. հոդվածներով նախատեսված՝ գրավադրված դրամական միջոցների 5 (հինգ) տոկոսի նկատմամբ գրավի իրավունքի դադարման վերաբերյալ սահմանափակումը կիրառվելու դեպքում՝ նշված դրամական միջոցների նկատմամբ գրավի իրավունքը դադարում է սեփականության իրավունքի վկայականը (սեփականության իրավունքի փոխանցման ակտը) հանձնելուց 1 (մեկ) տարվա ընթացքում, եթե նշված ժամանակահատվածում Գնորդ-գրավատուն Գրավառուին գրավոր հավաստում է, որ Շենքի/Համալիրի կամ Հիփոթեքի առարկայի շահագործման ընթացքում ի հայտ չեն եկել թերություններ և/կամ ի հայտ եկած թերությունները վերացվել են Վաճառողի կողմից:

5.26. Գրավառուն իրավունք ունի՝

5.26.1. հաջորդող դրամական միջոցների գրավով ապահովված պարտավորությունը չկատարվելու կամ ոչ պատշաճ կատարվելու և/կամ Վարկի վաղաժամկետ վճարման պահանջը 20 (քսան) աշխատանքային օրվա ընթացքում չկատարելու դեպքում՝ հաջորդող դրամական միջոցների գրավի առարկան անակցեպտ կարգով ուղղել դրանով ապահովված պարտավորությունների (այդ թվում՝ տուժանքի, տոկոսագումարի, մայր գումարի) կատարմանը,

5.26.2. հաջորդող դրամական միջոցների գրավի առարկան չապահովագրել կորստյան և վնասվածքի ռիսկերից,

5.27. Գրավառուն պարտավոր է՝

5.27.1. անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել հաջորդող դրամական միջոցների գրավի առարկան պահպանելու՝ ներառյալ այն երրորդ անձանց ոտնձգություններից և պահանջներից պաշտպանելու համար,

5.27.2. Պայմանագրով սահմանված կարգով և դեպքերում դադարեցնել դրամական միջոցների նկատմամբ Գրավառուի հաջորդող գրավի իրավունքը՝ այդ դրամական միջոցներն անակցեպտ կարգով ուղղելով Գրավառուի և Վաճառողի միջև կնքված կամ կնքվելիք գլխավոր վարկային պայմանագրի շրջանակներում առկա պարտավորությունների մարմանը:

5.28. Պայմանագրի կնքմամբ Գնորդ-գրավատուն և Գրավառուն համաձայնվում են, որ հօգուտ իրենց Պայմանագրով գրավադրված դրամական միջոցների բռնագանձման դեպքում առաջնահերթության կարգով բավարարվեն Գրավառուի պահանջները:

Գնորդ-գրավատուի և Վաճառողի փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները.

5.29. Գնորդ-գրավատուն պարտավոր է.

5.29.1. Պայմանագրից ծագող իրավունքները գրանցել Կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանումում ոչ ուշ, քան Պայմանագրի նոտարական վավերացման օրվանից սկսած՝ 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում,

5.29.2. Կողմերի միջև կնքված Պայմանագրով սահմանված առուվաճառքի գնի և Պայմանագրով սահմանված կարգով վերահաշվարկված գնի միջև դրական տարբերություն առաջանալու դեպքում՝ լրավճարել այն՝ դրա մասին Վաճառողի կողմից ծանուցվելուց հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում, իսկ բացասական տարբերություն առաջանալու դեպքում Վաճառողն այն վերադարձնում է Գնորդ-գրավատուին՝ Գնորդ-գրավատուի պահանջը ստանալուց հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում,

5.29.3. Փոխանցման ակտը ստորագրելու պատրաստակամության մասին ծանուցում ստանալուց հետո, 30 (երեսուն) օրացուցային օրվա ընթացքում իր բոլոր վճարման պարտավորությունները Վաճառողի նկատմամբ կատարելուց հետո նոտարական կարգով կնքել փոխանցման ակտը,

5.29.4.Շինարարության շահագործման հանձնման ակտը կազմելուց հետո առավելագույնը 60 օրում ապահովել Հիփոթեքի առարկայի սեփականության և գրավի իրավունքների պետական գրանցումը,

5.29.5.Վառարաններից և խոհանոցային օջախներից, էլեկտրական, գազային և այլ սարքավորումներից օգտվելու դեպքում՝ պահպանել հակահրդեհային անվտանգության կանոնները, չթույլատրել ինքնաշեն ապահովիչ խցանների տեղադրումը, չիրականացնել միջանցքների, անցումների, աստիճանավանդակների, պահեստային ելքերի ծանրաբեռնում պահարաններով կամ այլ ինքնաշեն կառույցներով, պահպանել հակահրդեհային անվտանգության բոլոր պահանջները,

5.29.6. Առանց Վաճառողի գրավոր թույլտվության՝ չկատարել այն շենքի/համալիրի, որում գտնվում է Հիփոթեքի առարկան (այսուհետ՝ Շենք/Համալիր), արտաքին տեսքի ցանկացած փոփոխություն, ընդհանուր օգտագործման տարածքների, պատշգամբների, կրող պատերի և ինստրուկցիաների վերակառուցում կամ վերապլանավորում, սանիտարատեխնիկական և այլ սարքավորումներ վերատեղադրում կամ լրացուցիչ տեղադրում, Շենքի/Համալիրի արտաքին տեսքի ցանկացած փոփոխություն,

5.29.7. Օդորակիչները տեղադրել միայն Վաճառողի հետ նախապես համաձայնեցված տեղերում, ինչպես նաև չտեղադրել ալեհավաքներ և հագուստի չորացման արտաքին հարմարանքներ,

5.29.8. Շենքի/Համալիրի կառուցումից հետո ընդունել Հիփոթեքի առարկա հանդիսացող անշարժ գույքը,

5.29.9. Հիփոթեքի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք բերելուց հետո Շենքում/Համալիրում՝ մյուս սեփականատերերի հետ միասին, մասնակցել Շենքի/Համալիրի պահպանման և շահագործման ծախսերի ֆինանսավորմանը ընդհանուր հիմունքներով՝ «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» և «Համատիրության մասին» օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով,

5.29.10. Վաճառողի պահանջով կատարել Հիփոթեքի առարկայի հանրային ծառայությունների մատուցման ցանցերին/էլեկտրական էներգիա, գազ, ջուր/ միացման վճարները:

5.29.11. Հիփոթեքի առարկան երրորդ անձի օտարելու դեպքում՝ վերջինիս տեղեկացնել Պայմանագրով Գնորդ-գրավատուի ստանձնած բոլոր պարտավորությունների մասին և ծանուցել Վաճառողին գրավոր կարգով:

5.29.12. Պայմանագրի գինը սահմանված ժամկետում չվճարելու դեպքում Վաճառողին վճարել տույժ՝ վճարման ենթակա ուշացրած գումարի 0.01 (զրո ամբողջ մեկ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ յուրաքանչյուր ուշացած օրվա համար:

5.30. Գնորդ-գրավատուն իրավունք ունի.

5.30.1. Պայմանագրում նշված, Հիփոթեքի առարկա հանդիսացող անշարժ գույքը հանձնելու ժամկետը Վաճառողի կողմից խախտելու դեպքում՝ Վաճառողից պահանջելու, որպեսզի վերջինս վճարի տույժ՝ Պայմանագրի գնի 0.01 (զրո ամբողջ մեկ հարյուրերորդական) տոկոսի չափով, կետանցի յուրաքանչյուր օրվա համար:

5.31. Վաճառողն իրավունք ունի՝

5.31.1. Մինչև Շենքի/Համալիրի կառուցման ավարտը՝ Շենքի/Համալիրի ճարտարապետաշինարարական նախագծի փոփոխություններ կատարելու հարցերում բոլոր տեսակի որոշումներն ընդունել և համապատասխան գործողությունները կատարել առանց Գնորդ-գրավատուի նախնական կամ հետագա համաձայնությունը ստանալու, բացառությամբ այն փոփոխությունների, որոնք անմիջականորեն վերաբերում են Հիփոթեքի առարկային:

5.31.2. Հիփոթեքի առարկայի նկատմամբ Գնորդ-գրավատուի սեփականության իրավունքի գրանցման պահից մինչև «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով Շենքի/Համալիրի կառավարման մարմինների ձևավորումը Շենքի/Համալիրի օդափոխության, ջեռուցման, այլ կոմունիկացիոն, պահպանության և հակահրդեհային անվտանգության համակարգերի տեղակայման, փոփոխության, շահագործման մեջ դնելու կամ շահագործումից հանելու հարցերում բոլոր տեսակի որոշումները ընդունել և համապատասխան գործողությունները կատարել առանց Գնորդ-գրավատուի նախնական կամ

հետագա համաձայնությունը ստանալու, բացառությամբ այն որոշումների, որոնք անմիջականորեն վերաբերում են Գրավի առարկային:

5.32. Վաճառողը պարտավոր է՝

5.32.1. Պայմանագրի լուծման կամ անվավեր ճանաչվելու դեպքում կառուցապատման հատուկ հաշվին առկա Հիփոթեքի առարկայի առուվաճառքի գումարը կամ դրա մի մասը փոխանցել բացառապես Գրավառուի մոտ առկա Գնորդ-գրավատուի բանկային հաշիվներին,

5.32.2. Հիփոթեքի առարկան հանձնելու հետ միաժամանակ Գնորդ-գրավատուին հանձնել դրա պատկանելիքները, ինչպես նաև դրան վերաբերող փաստաթղթերը,

5.32.3. Հիփոթեքի առարկայի նկատմամբ երրորդ անձանց իրավունքների առկայության դեպքում ապահովել այդ իրավունքների գրանցման դադարեցումը մինչև փոխանցման ակտի կնքումը,

5.32.4. Ապահովել, որպեսզի կառուցապատման աշխատանքների ժամանակացույցի յուրաքանչյուր փուլից, ինչպես նաև կառուցապատման աշխատանքների վերջնաժամկետից շեղումը չգերազանցի 180 օրը, *(սույն դրույթը վերաբերում է «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի վերաֆինանսավորման ծրագրի շրջանակներում կնքվող Պայմանագրերին)*

5.32.5. Պայմանագրով նախատեսված դեպքում Գրավառուի պահանջով վերադարձնել Անշարժ գույքի գնման նպատակով կառուցապատողի հատուկ հաշվին փոխանցված կանխավճարը և վարկի գումարը: *(սույն դրույթը վերաբերում է «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի վերաֆինանսավորման ծրագրի շրջանակներում կնքվող Պայմանագրերին)*

Գնորդ-գրավատուի և Գրավառուի փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները

5.33. Գնորդ-գրավատուն պարտավոր է.

5.33.1. Կատարել Հիփոթեքի առարկայի նկատմամբ իրավունքների պետական գրանցման նոր վկայականների ստացման և փոխանցման ակտի կնքման, իսկ փոխանցման ակտի կնքումից հետո՝ Հիփոթեքի առարկայի նկատմամբ սեփականության և գրավի իրավունքի գրանցման ծախսերը և այլ վճարային պարտավորությունները,

5.33.2. Հիփոթեքի առարկան ապահովագրել կորստյան և վնասվածքի ռիսկերից Գրավառուի հետ համաձայնեցված ապահովագրական ընկերության միջոցով և Գրավառուի համար ընդունելի պայմաններով, եթե դա սահմանված է Գրավառուի ինտերնետային կայքում՝ www.acba.am, հրապարկվող Գլխավոր վարկային պայմանագրի շրջանակներում տրամադրվող Վարկի պայմաններում և/կամ Գրավառուի ներքին իրավական ակտերում: Ապահովագրումը պետք է իրականացվի Շենքի ավարտական ակտի ստացումից հետո մինչև Վարկի գործողության վերջնաժամկետը՝ տարեկան կտրվածքով՝ Վարկի մնացորդային գումարի նկատմամբ: Ապահովագրումը պետք է իրականացվի առնվազն մեկ տարի ժամկետով և մեկ տարի պարբերականությամբ, բայց ոչ ավելի երկար, քան Պայմանագրի ժամկետը:

5.33.3. Գրավառուի կողմից գրավն իրացնելու մտադրության մասին ծանուցումը ստանալուց հետո 30 (երեսուն) օրվա ընթացքում Անշարժ գույքն ազատել իր և մյուս զբաղեցնողների տիրապետումից,

5.33.4. Գրավառուի պահանջով ապահովել, որպեսզի իր ընտանիքի անդամները, վարձակալները և Անշարժ գույքն զբաղեցնող այլ անձինք ստորագրեն նոտարի կողմից հաստատված համաձայնություններ, որոնցով կընդունեն, որ Անշարժ գույքի տարածքում մնալու իրենց իրավունքը դադարում է այն դեպքում, երբ Պայմանագրով սահմանված, ինչպես նաև ապահովված պարտավորությունները չեն կատարվում կամ ոչ պատշաճ են կատարվում:

5.34. Գրավառուն իրավունք ունի.

5.34.1. Կառուցապատման հատուկ հաշվին առկա Անշարժ գույքի առուվաճառքի գումարը կամ դրա մի մասը Գնորդ-գրավատուի բանկային հաշիվներին փոխանցվելու դեպքում անակցեպտ կարգով գանձել և ուղղել հիփոթեքով ապահովված պարտավորությունների մարմանը:

5.34.2. Գնորդ-Գրավատուի անձնական տվյալները և բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները տրամադրել Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարությանը (Նախարարություն) և/կամ Նախարարության կողմից լիազորված

անձանց՝ 2020 թվականի մայիսի 14-ի N 968-Լ որոշմամբ սահմանված աջակցության ծրագրերի շրջանակներում: *(սույն դրույթը կիրառելի է «Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության» պետական աջակցության ծրագրի շրջանակներում Վարկառուի կամ Գնորդ-Գրավատուի կողմից աջակցության ստացման դեպքում)*

Այլ դրույթներ.

5.35. Պայմանագրի կնքմամբ Կողմերը հավաստիացնում են, որ Պայմանագրի կնքման պահին Վաճառողը ներկայացրել է շինարարական աշխատանքների սկզբից մինչև շահագործման հանձնման ակտի կազմումը կառուցապատման աշխատանքների ժամանակացույց, որը պարունակում է աշխատանքների կատարման առնվազն 5 փուլ, *(սույն դրույթը վերաբերում է «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի վերաֆինանսավորման ծրագրի շրջանակներում կնքվող Պայմանագրերին)*

5.36. Մինչև Հիփոթեքի առարկայի փոխանցման ակտի կնքումը Պայմանագիրը լուծված է համարվում և Պայմանագրից ծագող գնելու իրավունքի և/կամ սեփականության իրավունքի և/կամ գրավի իրավունքի պետական գրանցումը ենթակա է դադարեցման Կադաստրի կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանման կողմից, երբ Գրավառուն Վաճառողին, Վարկառուին և Գնորդ-գրավատուին ծանուցում է պատվիրված նամակով Պայմանագրի վավերապայմաններում նշված հասցե/ներին, իսկ դրա անհնարինության դեպքում Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում ծանուցումը տեղադրելու միջոցով (որի դեպքում տանսհինգերորդ օրն անձը համարվում է ծանուցված) հետևյալ դեպքերում.

-եթե Վարկառուն/Գնորդ-գրավատուն ունի 90 (իննսուն) օր կամ ավել ժամկետանց պարտավորություն

-եթե Գրավառուն ունի հիմնավոր կասկածներ, որ Շենքի/Համալիրի կառուցումը չի ավարտվի

-եթե Շենքի/Համալիրի կառուցումը ուշանում է 6 (վեց) ամիս և ավել ժամկետով,

-Եթե Վաճառողը խախտել է Պայմանների 5.32.4 և 5.32.5 կետերով նախատեսված պարտականությունները:

5.37. Գնորդ-գրավատուն և Վարկառուն Պայմանագրի ստորագրմամբ.

5.37.1. հավաստիացնում են, որ տեղեկացված են հիփոթեքային վարկի պայմանագրի գործողության ընթացքում Հիփոթեքի առարկան օտարելու դեպքում Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարության կողմից փոխանցված պետական աջակցության գումարը պետական բյուջե վերադարձնելու պահանջի մասին, (սույն դրույթը կիրառելի է «Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության» պետական աջակցության ծրագրի շրջանակներում Վարկառուի կամ Գնորդ-Գրավատուի կողմից աջակցության ստացման դեպքում),

5.37.2. համաձայնում են, որ իրենց բանկային հաշվին/հաշիվներին Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարության կողմից սխալմամբ փոխանցված պետական աջակցության գումարը Գրավառուի կողմից վերադարձվի Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ վերը նշված նախարարության կողմից համապատասխան կարգադրություն ներկայացնելու դեպքում (սույն դրույթը կիրառելի է «Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության» պետական աջակցության ծրագրի շրջանակներում Վարկառուի կամ Գնորդ-Գրավատուի կողմից աջակցության ստացման դեպքում):

ԳԼՈՒԽ 6 ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

6.1. Պայմանագրի ստորագրմամբ Գրավատուն/Գնորդ-գրավատուն հավաստիացնում և երաշխավորում է, որ.

6.1.1. գիտակցում է, որ Գլխավոր վարկային պայմանագրի առկայության դեպքում դրա հիման վրա և դրանում սահմանված պայմաններով կարող են տրամադրվել մեկից ավելի Վարկեր, որոնց կատարումն ապահովված է Գրավի պայմանագրով,

6.1.2. Պայմանագրի կնքման համար առկա է բոլոր համասեփականատերերի գրավոր համաձայնությունը (եթե այդպիսիք կան)

6.1.3. Գրավի առարկան հանված չէ շրջանառությունից, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանափակված չէ Գրավատուի իրավունքը գրավադրելու Գրավի առարկան, Գրավի առարկայի նկատմամբ չկան որևէ այլ գույքային իրավունքներ, այն արգելադրված չէ, դրա վրա բռնագանձում տարածված չէ, ազատ է այլ իրավունքներից և պահանջներից (բացի այն սահմանափակումներից, որոնք նշված են Պայմանագրում),

6.1.4. Գրավի առարկան չունի որևէ վնասվածք կամ թերություն, որոնց մասին Գրավառուին գրավոր չի տեղեկացրել (կարգավորումը կիրառելի չէ դրամական միջոցների գրավի դեպքում),

6.1.5. որպես հայցվոր, պատասխանող կամ երրորդ անձ չի մասնակցում որևէ դատաքննության, որի մասին նա չի տեղեկացրել Գրավառուին, և որը սպառնում է Գրավի առարկային,

6.1.6. Պայմանագիրը կնքելիս չի գտնվում մոլորության, խաբեության, բռնության, սպառնալիքի, չարամիտ համաձայնության կամ դժվար կացության մեջ, լիովին հասկանում է իր գործողությունների նշանակությունը,

6.1.7. իր մասնակցությամբ մինչ Պայմանագրի կնքումը հարուցված կամ ավարտված քրեական, քաղաքացիական, աշխատանքային կամ վարչական գործեր չկան, որոնք էականորեն սպառնում են իր ակտիվներին, գործարքների վավերությանը կամ դրանցից բխող պարտավորությունների կատարմանը,

6.1.8. որպես հայցվոր, պատասխանող կամ երրորդ անձ չի մասնակցում որևէ դատաքննության, որի մասին նա չի տեղեկացրել Գրավառուին, և որը սպառնում է Գրավի առարկային.

6.2. Պայմանագրի ստորագրմամբ Կողմերը համաձայնում են, որ Պայմանագրից բխող վեճ առաջանալու դեպքում, Գրավառուն իրավասու է իր հայեցողությամբ միակողմանիորեն ընտրել, թե որ դատարանին է ընդդատյա տվյալ գործի քննությունը,

6.3. Պայմանագրից բխող վեճերի լուծման կամ իրավունքների ու պարտականությունների իրականացման ժամանակ կողմերից յուրաքանչյուրը համարվում է պատշաճ ծանուցված, եթե ծանուցումն ուղարկվում է Կողմերի՝ Պայմանագրի վավերապայմաններում նշված հասցեին կամ հեռախոսահամարին կամ էլեկտրոնային հասցեին՝ անկախ այն ստացողի կողմից փաստացի ստանալու հանգամանքից,

6.4. Պայմանագրի ստորագրմամբ Գրավառուի կողմից Գրավատուին/Գնորդ-գրավատուին, իսկ Անշարժ գույքի առուվաճառքի և հիփոթեքի, Անշարժ գույք գնելու իրավունքի առուվաճառքի ու հիփոթեքի/Դրամական միջոցների գրավի և հաջորդող դրամական միջոցների գրավի խառը պայմանագրերի դեպքում՝ նաև Վաճառողին տրամադրվում է անձնական տվյալների մշակման վերաբերյալ ծանուցում՝ Պայմանների Հավելված 3-ում նշված բովանդակությամբ, և վերջիններս համաձայնում են այդ պայմաններով անձնական տվյալների մշակմանը,

6.5. Հավելված 2-ը և Հավելված 3-ը Պայմանագրի անբաժանելի մասն են կազմում:

ԲԱԺԻՆ 3 ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1 ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երաշխավոր - ֆիզիկական անձ, ԱՁ կամ իրավաբանական անձ, ով Պարտատիրոջ առջև պարտավորվում է կրել պատասխանատվություն՝ Պարտապանի ստանձնած պարտավորությունները լրիվ կատարելու համար,

Պայմանագիր կամ Երաշխավորության պայմանագիր - Բանկային ծառայությունների ընդհանուր պայմանները (Պայմաններ) և ի ապահովումն Վարկի պայմանագրի Կողմերի միջև կնքված երաշխավորության պայմանագիրը միասին,

Կողմեր - Պարտատեր և Երաշխավոր,

Բաժին 3-ում կիրառվող, սակայն սույն գլխում, ինչպես նաև Կողմերի միջև երկկողմանի կնքված պայմանագրում չսահմանված մյուս բոլոր հասկացություններն ունեն Բաժին 1-ում սահմանված նշանակությունները:

ԳԼՈՒԽ 2 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2.1. Բանկում Երաշխավորության պայմանագիրը կնքվում է ի ապահովումն Պարտապանի ստանձնած պարտավորությունների կատարման,

2.2. Երաշխավորության պայմանագրի ստորագրմամբ Երաշխավորը հավաստում է, որ ծանոթացել է և համաձայնում է Վարկի պայմանագրին, ինչպես նաև Պայմանների Բաժին 1-ում (Վարկային պրոդուկտներ) նկարագրված դրույթներին, այդ թվում՝ վարկավորման ընդհանուր դրույթներին, Վարկատուի և Վարկառուի փոխադարձ իրավունքներին ու պարտականություններին, առանձին վարկատեսակների վերաբերյալ սույն պայմանների համապատասխան գլուխներով սահմանված դրույթներին, ինչպես նաև համապատասխան Ֆոնդերի և/կամ Աջակցության ծրագրերի և/կամ Համագործակցության ծրագրերի պայմաններին: Ընդ որում, ի ապահովումն Արտահանման և ներմուծման վարկային գծի երաշխավորության պայմանագրի ստորագրման դեպքում, Արտահանման և ներմուծման վարկային գծի չմարման դեպքում ձևակերպվող Վարկի շրջանակներում Վարկառուի կողմից իր պարտականությունների պատշաճ և ամբողջական կատարումը ևս ապահովվում է տվյալ երաշխավորությամբ:

2.3. Վարկառուի կողմից Վարկի պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում Բանկն իրավունք է ձեռք բերում Երաշխավորին ներկայացնել պարտավորությունները կատարելու պահանջ,

2.4. Պահանջը Երաշխավորի կողմից ենթակա է լրիվ ծավալով կատարման այն ստանալու պահից 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում, եթե պահանջի մեջ այլ ժամկետ նշված չէ: Պարտավորությունները կատարվում են Վարկի պայմանագրով սահմանված չափով և կարգով,

2.5. Եթե Երաշխավորը Բանկի հանդեպ ունի Պայմանագրից բխող չկատարված դրամային պարտավորություն, Բանկն իրավունք է ստանում գանձել պարտավորության գումարը Երաշխավորի՝ Բանկում ունեցած բոլոր բանկային, այդ թվում՝ ավանդային հաշիվներից,

2.6. Պարտավորությունը կատարած Երաշխավորին են անցնում այդ պարտավորությամբ Բանկի իրավունքները և Բանկի՝ որպես գրավառուի պատկանող իրավունքներն այն ծավալով, որով Երաշխավորը բավարարել է Բանկի պահանջը: Երաշխավորն իրավունք ունի նաև Պարտապանից պահանջել հատուցելու Բանկին վճարած գումարի տոկոսներն ու Վարկառուի փոխարեն պատասխանատվությունը կրելու կապակցությամբ, իր կրած այլ վնասները,

2.7. Երաշխավորության պայմանագիրն ուժի մեջ է մտնում.

2.7.1. Կողմերի ստորագրությամբ փաստաթուղթ կազմելու միջոցով կնքվելու դեպքում՝ բոլոր Կողմերի ստորագրման պահից,

2.7.2. Էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցներով կնքման դեպքում՝ (այսուհետ՝ էլեկտրոնային եղանակով կնքում) հետևյալ կարգով.

2.7.2.1. Կողմերի էլեկտրոնային հասցեների միջև փաստաթուղթ և/կամ հաղորդագրություն փոխանակելու միջոցով կնքման դեպքում, Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Բանկի կողմից Երաշխավորի՝ Պայմանագրում նշված էլեկտրոնային հասցեին ուղարկված օֆերտայի (առաջարկի) ակցեպտը Բանկի կողմից ստանալու պահից: Ընդ որում, Երաշխավորը օֆերտան (առաջարկը) ընդունում (ակցեպտավորում) է Պայմանագրում նշված իր հեռախոսահամարին ուղարկված մեկանգամյա օգտագործման գաղտնաբառը մուտքագրելու և «Ստորագրել փաստաթղթերը» հրահանգն ընտրելու միջոցով,

2.7.2.2. acba digital ինտերնետ բանկինգ համակարգում փաստաթուղթ և/կամ հաղորդագրություն փոխանակելու միջոցով կնքման դեպքում, Պայմանագիրն ուժի մեջ է մտնում acba digital ինտերնետ բանկինգ համակարգում ներկայացվող օֆերտայի (առաջարկի) ակցեպտը Բանկի կողմից ստանալու պահից: Ընդ որում, Երաշխավորը օֆերտան (առաջարկը) ընդունում (ակցեպտավորում) է acba digital ինտերնետ բանկինգ համակարգում «Հաստատել» կամ «Ստանալ» հրահանգն ընտրելու միջոցով,

2.8. Երաշխավորության պայմանագիրը գործում է մինչև Վարկի պայմանագրով սահմանված Վարկի ժամկետի ավարտին հաջորդող 10-րդ տարին, իսկ ի ապահովումն Ֆակտորինգի պայմանագրի կնքված երաշխավորության դեպքում՝ այն գործում է մինչև Ֆակտորինգի պայմանագրով սահմանված ֆինանսավորման վերջնաժամկետին հաջորդող 10-րդ տարին,

2.9. Պայմանագրի փոփոխության համաձայնագիրը կարող է կնքվել ինչպես Կողմերի ստորագրությամբ փաստաթուղթ կազմելու միջոցով, այնպես էլ էլեկտրոնային եղանակով,

2.10. Կողմերը կարող են փոփոխել, վերաշարադրել կամ Կողմերի իրավահարաբերություններում չկիրառել Պայմանների առանձին դրույթներ՝ համապատասխան վերապահում նախատեսելով ստորագրվող Պայմանագրում կամ միմյանց միջև կնքվող փոփոխության համաձայնագրերում:

ԳԼՈՒԽ 3 ԲԱՆԿԻ ԵՎ ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Բանկն իրավունք ունի՝

3.1.1. Պայմանագրով ձեռք բերած իր պահանջի իրավունքը փոխանցել այլ անձի, որի դեպքում Երաշխավորը պարտավորվում է Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները կատարել նոր պարտատիրոջ առջև,

3.1.2. Երաշխավորի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկատվությունը տրամադրել պետական, այդ թվում՝ դատական և իրավապահ մարմիններին՝ իր իրավունքներն իրացնելու և պարտավորությունները կատարելու նպատակով:

3.2. Բանկը պարտավոր է՝

3.2.1. Երաշխավորի կողմից պարտավորությունը ամբողջությամբ կատարելուց հետո Երաշխավորին հանձնել Պարտապանի դեմ ունեցած իր պահանջը հավաստող փաստաթղթերը և փոխանցել այդ պահանջն ապահովող իրավունքները:

3.3. Երաշխավորը պարտավոր է՝

3.3.1. Բանկի պահանջով ցանկացած ժամանակ տրամադրել անհրաժեշտ տեղեկություն իր գույքի, եկամուտների և դրանց ստացման աղբյուրների, պարտավորությունների և իր ֆինանսական վիճակը բնութագրող այլ փաստերի մասին,

3.3.2. Պայմանագրի գործողության ընթացքում թույլ չտալ Պայմանագրի կնքման պահին եղած ակտիվների նվազեցում ավելի քան 30 (երեսուն) տոկոսով,

3.3.3. Պայմանագրի կնքման համար ներկայացված փաստաթղթերում, Երաշխավորի կողմից Պայմանագրով տրվող հավաստիացումներում և/կամ Պայմանագրում նշված Երաշխավորի վավերապայմաններում փոփոխության դեպքում երեք օրվա ընթացքում տեղյակ պահել Բանկին և տրամադրել փոփոխված փաստաթղթերի պատճենները:

3.3.4. Բանկի կողմից պահանջի իրավունքի զիջման և/կամ Պարտապանի կողմից պարտավորության փոխանցման և/կամ Կողմերի իրավահաջորդության դեպքում պատասխանատվություն կրել նոր պարտատիրոջ առջև և/կամ նոր պարտապանի համար,

3.3.5. պատասխանատվություն կրել պարտավորության փոփոխման դեպքում, որը կարող է հանգեցնել իր պարտավորության մեծացմանը կամ իր համար այլ անբարենպաստ հետևանքների,

3.4. Երաշխավորն իրավունք ունի.

3.4.1. Պայմանագրից բխող բողոք-պահանջները, ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանների բավարարման դեպքում, ներկայացնել Ֆինանսական համակարգի հաշտարարին: Ընդ որում, եթե գույքային պահանջի չափը չի գերազանցում 250 000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը և գործարքի գումարի չափը չի գերազանցում 500 000 ՀՀ դրամը կամ դրան

համարժեք արտարժույթը, ապա ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները չեն կարող վիճարկվել Բանկի կողմից:

ԳԼՈՒԽ 4 ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

4.1. Պայմանագրի ստորագրմամբ Երաշխավորը հավաստիացնում է, որ

4.1.1. Բանկին լրիվ և ճշգրիտ տեղեկատվություն է տրամադրել իր գույքային վիճակի մասին,

4.1.2. իր գույքն ազատ է այլ անձանց պահանջներից, կալանքի կամ արգելանքի տակ չի գտնվում,

4.1.3. ստացել է Վարկի պայմանագրի մեկ օրինակը և Երաշխավորի տեղեկացվածության թերթիկը:

4.2. Բանկն իրավունք ունի գրանցել Երաշխավորի շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքը:

4.3. Պայմանագրի ստորագրմամբ Կողմերը համաձայնում են, որ Պայմանագրից բխող վեճ առաջանալու դեպքում, Բանկն իրավասու է իր հայեցողությամբ միակողմանիորեն ընտրել, թե որ դատարանին է ընդդատյա տվյալ գործի քննությունը,

4.4. Պայմանագրից բխող վեճերի լուծման կամ իրավունքների ու պարտականությունների իրականացման ժամանակ կողմերից յուրաքանչյուրը համարվում է պատշաճ ծանուցված, եթե ծանուցումն ուղարկվում է Կողմերի՝ Պայմանագրի վավերապայմաններում նշված հասցեին կամ հեռախոսահամարին կամ էլեկտրոնային հասցեին՝ անկախ այն ստացողի կողմից փաստացի ստանալու հանգամանքից,

4.5. Հավելված 2-ը և Հավելված 3-ը Պայմանագրի անբաժանելի մասն է կազմում,

4.6. Պայմանագրի ստորագրմամբ Բանկի կողմից Երաշխավորին տրամադրվում է անձնական տվյալների մշակման վերաբերյալ ծանուցում՝ սույն պայմանների Հավելված 3-ում նշված բովանդակությամբ, և Երաշխավորը համաձայնում է այդ պայմաններով անձնական տվյալների մշակմանը:

ԲԱԺԻՆ 4 ՀԱՇԻՎՆԵՐ ԵՎ ԱՎԱՆԴՆԵՐ

ԳԼՈՒԽ 1 ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պայմանագիր - Բանկային ծառայությունների ընդհանուր պայմանները (Պայմաններ) և Կողմերի միջև կնքված հաշվի և/կամ ավանդի պայմանագիրը միասին

Բանկ - «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ

Կողմեր - հաշվի պայմանագրի դեպքում՝ Բանկ և Հաճախորդ, ավանդի պայմանագրի դեպքում՝ Բանկ և Ավանդատու

Սակագներ - Բանկի Գլխավոր գործադիր տնօրենի կողմից 22.04.2013թ.-ին հաստատված և Բանկի ինտերնետային կայքում՝ www.acba.am հրապարակված ՏՀ 01-01#6 Հաշվարկադրամարկղային գործառնությունների (հաշվի պայմանագրի դեպքում) և ՏՀ 01-02#6 Ժամկետային ավանդների (ավանդի պայմանագրի դեպքում) սակագնի տվյալ պահին գործող խմբագրությունը

ԳԼՈՒԽ 2 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2.1. Սույն փաստաթղթի մյուս բաժինների դրույթները տարածվում են հաշիվների և ավանդների վրա այնքանով, որքանով դրանք կիրառելի են հաշիվների և ավանդների նկատմամբ և վերաբերում են դրանց: Ընդ որում, սույն փաստաթղթի մյուս բաժինների և սույն բաժնում սահմանված

դրույթների միջև հակասությունների դեպքում՝ հաշվի և ավանդի պայմանագրի նկատմամբ գերակայում են սույն բաժնի դրույթները:

2.2. Հավելված 1-ը, Հավելված 2-ը, Հավելված 3-ը և Հավելված 4-ը Պայմանագրի անբաժանելի մասն են կազմում:

2.3. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում և Կողմերի համար պարտադիր է դառնում.

2.3.1. Կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով կնքվելու դեպքում՝ հաշվի պայմանագիրը ուժի մեջ է մտնում բոլոր Կողմերի ստորագրման պահից, իսկ ավանդի պայմանագիրը՝ բոլոր Կողմերի ստորագրման և ավանդային հաշվին ավանդի գումարի մուտքագրման պահից:

2.3.2. Էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցներով կնքման դեպքում (այսուհետ՝ էլեկտրոնային եղանակով կնքում)՝ հետևյալ կարգով.

• Կողմերի էլեկտրոնային հասցեների միջև փաստաթուղթ և/կամ հաղորդագրություն փոխանակելու միջոցով կնքման դեպքում՝ հաշվի պայմանագիրը ուժի մեջ է մտնում Բանկի կողմից Հաճախորդի՝ Պայմանագրում նշված էլեկտրոնային հասցեին ուղարկված օֆերտայի (առաջարկի) ակցեպտը Հաճախորդի կողմից ստանալու պահից, իսկ ավանդի պայմանագիրը՝ Բանկի կողմից Ավանդատուի՝ Պայմանագրում նշված էլեկտրոնային հասցեին ուղարկված օֆերտայի (առաջարկի) ակցեպտը Ավանդատուի կողմից ստանալու և ավանդային հաշվին ավանդի գումարի մուտքագրման պահից:

Ընդ որում, Հաճախորդը/Ավանդատուն օֆերտան (առաջարկը) ընդունում (ակցեպտավորում) է Պայմանագրում նշված իր հեռախոսահամարին ուղարկված մեկանգամյա օգտագործման գաղտնաբառը մուտքագրելու և «Ստորագրել փաստաթղթերը» հրահանգն ընտրելու միջոցով,

• acba digital ինտերնետ բանկինգ համակարգում փաստաթուղթ և/կամ հաղորդագրություն փոխանակելու միջոցով կնքման դեպքում՝ հաշվի պայմանագիրը ուժի մեջ է մտնում acba digital ինտերնետ բանկինգ համակարգում ներկայացվող օֆերտայի (առաջարկի) ակցեպտը Բանկի կողմից ստանալու պահից, իսկ ավանդի պայմանագիրը՝ acba digital ինտերնետ բանկինգ համակարգում ներկայացվող օֆերտայի (առաջարկի) ակցեպտը Բանկի կողմից ստանալու և ավանդային հաշվին ավանդի գումարի մուտքագրման պահից:

Ընդ որում, Հաճախորդը/Ավանդատուն օֆերտան (առաջարկը) ընդունում (ակցեպտավորում) է acba digital ինտերնետ բանկինգ համակարգում «Հաստատել» կամ «Ստանալ» հրահանգն ընտրելու միջոցով:

2.4. Պայմանագրի փոփոխության համաձայնագիրը կարող է կնքվել ինչպես Կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով, այնպես էլ էլեկտրոնային եղանակով, ընդ որում՝ նշված դրույթը չի վերաբերում սույն պայմաններում փոփոխություններին, որոնք կատարվում են Բանկի կողմից միակողմանիորեն՝ Պայմանագրով սահմանված կարգով:

2.5. Կողմերը կարող են փոփոխել, վերաշարադրել կամ Կողմերի իրավահարաբերություններում չկիրառել սույն պայմանների առանձին դրույթներ՝ համապատասխան վերապահում նախատեսելով ստորագրվող Պայմանագրում կամ միմյանց միջև կնքվող փոփոխության համաձայնագրերում:

2.6. Բանկն իրավունք ունի միակողմանիորեն լուծել Պայմանագիրը՝ Պայմանագրով սահմանված կարգով Հաճախորդին/Ավանդատուին ծանուցելով: Ընթացիկ հաշվում դրամական միջոցների առկայության դեպքում, Բանկը դրանք փոխանցում է Բանկի համապատասխան հաշվապահական հաշվին՝ Հաճախորդի կողմից այդ դրամական միջոցների ստացման նպատակով, բացառությամբ՝ սոցիալական փաթեթի հաշիվների, իսկ ավանդի դեպքում՝ ավանդի գումարը և մինչև Պայմանագրի միակողմանի լուծման օրվան նախորդող օրը Պայմանագրով սահմանված կարգով հաշվեգրված տոկոսագումարները Բանկի կողմից փոխանցվում են Ավանդատուի ընթացիկ հաշվին: Ընդ որում, Պայմանագրի միակողմանի լուծման դեպքում՝ Ավանդատուին բոնուս չի վճարվում:

2.7. Պայմանագրից բխող վեճ առաջանալու դեպքում, Բանկը իրավասու է իր հայեցողությամբ միակողմանիորեն ընտրել, թե որ դատարանին է ընդդատյա տվյալ գործի քննությունը:

2.8. Պայմանագրից ծագած տարաձայնությունները և վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների արդյունքում համաձայնության չգալու պարագայում ծագած տարաձայնություններն ու վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.9. Պայմանագրից բխող վեճերի լուծման կամ իրավունքների ու պարտականությունների իրականացման ժամանակ կողմերից յուրաքանչյուրը համարվում է պատշաճ ծանուցված, եթե ծանուցումն ուղարկվում է Կողմերի՝ Պայմանագրում և/կամ «Ճանաչիր հաճախորդիդ» հարցաթերթիկում նշված հասցեին կամ հեռախոսահամարին կամ էլեկտրոնային հասցեին՝ անկախ այն ստացողի կողմից փաստացի ստանալու հանգամանքից:

ԳԼՈՒԽ 3 ՀԱՇԻՎՆԵՐ

<u>Ընդհանուր դրույթներ.</u>

3.1. Սույն գլխում սահմանված ընդհանուր դրույթները կիրառելի են հաշիվների բոլոր տեսակների նկատմամբ, եթե այլ բան սահմանված չէ հաշվի յուրաքանչյուր տեսակին վերաբերող հատուկ դրույթներում: Սույն գլխում սահմանված ընդհանուր և հատուկ դրույթների միջև հակասությունների դեպքում՝ գերակայում են հատուկ դրույթները:

3.2. Ընթացիկ հաշվի նվազագույն մնացորդի չափը, Ընթացիկ հաշվի սպասարկման և հաշվով կատարվող գործառնությունների համար գանձվող միջնորդավճարների չափերը, Ընթացիկ հաշվի մնացորդի նկատմամբ հաշվարկվող տոկոսների չափը և վճարման կարգը, ինչպես նաև Բանկի այլ ծառայությունների պայմանները սահմանվում են Սակագներում:

3.3. Ընթացիկ հաշվի տնօրինումը Բանկի կողմից կարող է սահմանափակվել, եթե սահմանափակումը նախատեսված է Սակագներով և/կամ եթե սահմանափակումը բխում է Բանկի նկատմամբ կիրառելի իրավական կարգավորումներից/սահմանափակումներից և/կամ եթե Բանկի գնահատմամբ սահմանափակումը անհրաժեշտ է նշված իրավական կարգավորումներից/սահմանափակումներից բխող Բանկի ռիսկերի զսպման նպատակով:

3.4. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած են ճանաչվում Կողմերի միջև նախկինում կնքված Ընթացիկ հաշվի բացման և սպասարկման բոլոր պայմանագրերը (եթե այդպիսիք առկա են):

3.5. Հաճախորդն իրավունք ունի՝

3.5.1. Ընթացիկ հաշվով կատարել օրենքով, դրան համապատասխան սահմանված բանկային կանոններով և բանկային գործունեության մեջ կիրառվող գործարար շրջանառության սովորույթներով նախատեսված գործառնություններ, իսկ GEL, Յուան (CNY) և Դիրհամ (AED) արժույթով ընթացիկ հաշվի դեպքում՝ Ընթացիկ հաշվով կատարել միայն անկանխիկ մուտքային և անկանխիկ ելքային գործառնություններ,

3.5.2. ցանկացած ժամանակ լուծել Պայմանագիրը՝ կատարելով Բանկի հանդեպ առկա պարտավորությունները,

3.5.3. Պայմանագրից բխող բողոք-պահանջները ներկայացնել Ֆինանսական համակարգի հաշտարարին: Ընդ որում, եթե գույքային պահանջի չափը չի գերազանցում 250 000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը և գործարքի գումարի չափը չի գերազանցում 500 000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, ապա ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները չեն կարող վիճարկվել Բանկի կողմից:

3.6. Հաճախորդը պարտավոր է՝

3.6.1. ապահովել Ընթացիկ հաշվի համար սահմանված նվազագույն մնացորդը՝ Բանկի կողմից այդպիսին սահմանված լինելու դեպքում,

3.6.2. նախքան Բանկի համապատասխան ծառայությունից օգտվելը՝ ծանոթանալ Սակագներով սահմանված պայմաններին,

3.6.3. կատարել Բանկի ծառայությունների համար վճարները՝ Սակագներով սահմանված պայմաններով:

3.7. Բանկն իրավունք ունի՝

3.7.1. Ընթացիկ հաշվում եղած դրամական միջոցներն օգտագործել՝ երաշխավորելով Հաճախորդի՝ այդ միջոցներն անխոչընդոտ տնօրինելու իրավունքը,

3.7.2. եթե Հաճախորդը Բանկի հանդեպ ունի կատարման ենթակա դրամային պարտավորություն, գանձել պարտքի գումարը Հաճախորդի՝ Բանկում ունեցած բոլոր ընթացիկ հաշիվներից՝ նախ դրամային, ապա արտարժութային, իսկ եթե ընթացիկ հաշիվներում բացակայում է անհրաժեշտ գումարը, ապա բոլոր քարտային հաշիվներից՝ նախ դրամային, ապա արտարժութային, իսկ եթե քարտային հաշիվներում բացակայում է անհրաժեշտ գումարը, ապա բոլոր խնայողական հաշիվներից՝ առկայության դեպքում՝ նախ դրամային, ապա արտարժութային: Արտարժութային հաշիվներից պարտքի գումարի գանձման դեպքում արտարժույթի առքն ու վաճառքը կատարվում է ՀՀ ԿԲ կողմից հրապարակած արժութային շուկայում ձևավորված վերջին միջին շուկայական փոխարժեքով,

3.7.3. Հաճախորդի կողմից յուրաքանչյուր գործառնություն կատարելիս և Բանկի համապատասխան ծառայությունից օգտվելիս՝ Սակագներով սահմանված վճարներն անակցեպտ կարգով գանձել Հաճախորդի դրամային ընթացիկ հաշիվներում եղած միջոցներից, իսկ դրամային ընթացիկ հաշիվներում միջոցների բացակայության կամ անբավարարության դեպքում՝ Հաճախորդի արտարժութային ընթացիկ հաշիվներից, որի դեպքում արտարժույթի առքը կատարվում է ՀՀ ԿԲ կողմից հրապարակած արժութային շուկայում ձևավորված վերջին միջին շուկայական փոխարժեքով,

3.7.4. հրաժարվել կատարել ցանկացած գործառնություն, եթե Ընթացիկ հաշվում առկա միջոցները բավարար չեն Բանկի ծառայությունների դիմաց վճարելու համար,

3.7.5. համաձայն ՀՀ օրենսդրության՝ Հաճախորդից պահանջել իր և իր կողմից կատարվող գործառնության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ և փաստաթղթեր,

3.7.6. ՀՀ, օտարերկրյա և միջազգային օրենսդրություններով սահմանված դեպքերում և կարգով Հաճախորդի մասին բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները հրապարակել երրորդ անձանց,

3.7.7. առանց Հաճախորդի համաձայնության՝ ուղղել Ընթացիկ հաշվով գործառնություններ իրականացնելիս իր կողմից թույլ տրված սխալները,

3.7.8. միակողմանիորեն լուծել Պայմանագիրը, եթե Ընթացիկ հաշվում բացակայում են դրամական միջոցներ և հաշվով մեկ տարվա ընթացքում գործառնություն չի իրականացվել:

3.8. Բանկը պարտավորվում է՝

3.8.1. Ընթացիկ հաշվին մուտք եղած դրամական միջոցները մուտքագրել և հաշվից դրամական միջոցներ տալ կամ փոխանցել ոչ ուշ, քան համապատասխան վճարային փաստաթուղթը Բանկ մուտք լինելու հաջորդ բանկային օրը, իսկ GEL, Յուան (CNY) և Դիրհամ (AED) արժույթով ընթացիկ հաշվի դեպքում՝ Ընթացիկ հաշվին փոխանցված դրամական միջոցները մուտքագրել և հաշվից դրամական միջոցներ փոխանցել ոչ ուշ, քան համապատասխան վճարային փաստաթուղթը Բանկ մուտք լինելու հաջորդ բանկային օրը,

3.8.2. հաճախորդի վճարային փաստաթղթերում կամ լիազորագրերում հիմնավորված կասկած հայտնաբերելու դեպքում՝ անմիջապես կասեցնել գործառնության կատարումը՝ այդ մասին տեղեկացնելով Հաճախորդին, և վերսկսել հաշվով կատարվող գործառնությունները՝ Հաճախորդի կողմից հավաստագիր տրամադրվելուց կամ խախտումը վերացվելուց հետո՝ ոչ ուշ, քան հաջորդ բանկային օրը,

3.8.3. առնվազն երեսնօրյա պարբերականությամբ Հաճախորդին տրամադրել Ընթացիկ հաշվից քաղվածք, բացառությամբ այն դեպքերի, երբ հաշվետու ժամանակաշրջանում Բանկը տվյալ հաշիվը չի դեբետագրել կամ կրեդիտագրել,

3.8.4. Ֆիզիկական անձ հաճախորդների դեպքում՝ Հաճախորդի պահանջով հնգօրյա ժամկետում Հաճախորդին տրամադրել Ընթացիկ հաշվից քաղվածք՝ Բանկի հայտարարած սակագներով,

3.8.5. պահպանել Ընթացիկ հաշվի, հաշվով գործառնությունների ու Հաճախորդի մասին տեղեկությունների գաղտնիությունը:

3.9. Համատեղ ընթացիկ հաշվի դեպքում՝ Պայմանագրով Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը, որ իրենցից յուրաքանչյուրը կարող է միանձնյա սեփական հայեցողությամբ կնքել Ընթացիկ հաշիվը տնօրինելու ցանկացած գործարք:

3.10. Իրավաբանական անձ և Ա/Ձ հաճախորդները Պայմանագրով տալիս են իրենց համաձայնությունը, որ

ա) ստորագրությունների նմուշի քարտով հաստատված առաջին կարգի ստորագրության իրավունք ունեցող անձը կամ անձինք, եթե առկա չէ երկրորդ կարգի ստորագրության իրավունք ունեցող անձ կամ անձինք, կարող է/են սեփական հայեցողությամբ կնքել Ընթացիկ հաշիվը տնօրինելու ցանկացած գործարք,

բ) ստորագրությունների նմուշի քարտով հաստատված առաջին և երկրորդ կարգի ստորագրության իրավունք ունեցող անձինք կարող են համատեղ (մեկ առաջին կարգի և մեկ երկրորդ կարգի ստորագրության իրավունք ունեցող անձինք միասին) կնքել Ընթացիկ հաշիվը տնօրինելու ցանկացած գործարք:

3.11. Հօգուտ երրորդ անձի ընթացիկ հաշվի դեպքում՝ երրորդ անձը Պայմանագրով Հաճախորդի իրավունքներ է ձեռք բերում, իսկ Հաճախորդը կորցնում է այդ իրավունքները, երբ Երրորդ անձը դառնում է 18 տարեկան և Պայմանագրով սահմանված իրավունքներից օգտվելու գրավոր հայտարարություն է ներկայացնում Բանկին:

3.12. <u>Խնայողական հաշվին վերաբերող հատուկ դրույթներ.</u>

3.12.1. Ընթացիկ հաշվի մնացորդի նկատմամբ հաշվարկված տոկոսագումարները փոխանցվում են տվյալ ամսվան հաջորդող ամսվա առաջին աշխատանքային օրը՝ Հաճախորդի բանկային հաշվին: Տվյալ օրացույցային ամսվա ընթացքում Պայմանագրի գործողության դադարման և Ընթացիկ հաշվի փակման դեպքում՝ տվյալ օրացույցային ամսվա ընթացքում կուտակված տոկոսագումարները ենթակա չեն վճարման:

3.13. <u>Սոցիալական փաթեթի հաշվին վերաբերող հատուկ դրույթներ.</u>

3.13.1. Ընթացիկ հաշիվը բացվում է բացառապես ՀՀ կառավարության 27 դեկտեմբերի 2012թ. N 1691-Ն որոշմամբ (այսուհետ սույն կետում՝ Որոշում) սահմանված սոցիալական փաթեթի գումարները սպասարկելու նպատակով, և այն կարող է օգտագործվել Որոշմամբ և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

3.13.2. Ընթացիկ հաշվով կարող են կատարվել միայն Որոշմամբ սահմանված գործառնություններ:

3.13.3. Ընթացիկ հաշվից կանխիկացում չի թույլատրվում, բացառությամբ՝ Որոշմամբ սահմանված դեպքերի:

3.13.4. Ընթացիկ հաշվի վրա կարող են ընդունվել և մուտքագրվել Որոշմամբ սահմանված սոցիալական փաթեթի գումարներ:

3.13.5. Ընթացիկ հաշվից գումարը փոխանցվում է բացառապես Որոշմամբ սահմանված կարգով հաստատված չափորոշիչներին համապատասխանող և (կամ) համապատասխան ցանկում ընդգրկված կազմակերպությունների բանկային հաշվին կամ Առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամին՝ Որոշմամբ սահմանված կարգով և հերթականությամբ:

3.13.6. Պայմանագրի դրույթների և Որոշման միջև հակասությունների դեպքում գործում են Որոշման դրույթները:

3.13.7. Բանկն իրավունք ունի Հաճախորդի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները տրամադրել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը (այսուհետ սույն կետում՝ Նախարարություն), ինչպես նաև Որոշման և/կամ Բանկի և Նախարարության միջև կնքված Սոցիալական փաթեթի հատկացումն ապահովելու մասին պայմանագրի կատարման շրջանակներում այլ իրավասու անձանց, այդ թվում՝ Հաճախորդի գործատուին:

3.13.8. Բանկն իրավունք ունի միակողմանիորեն լուծել Պայմանագիրը՝ նաև հետևյալ դեպքերում.

- եթե Հաճախորդն ազատվել է աշխատանքից կամ այլ պատճառով սոցիալական փաթեթից օգտվելու իրավունքը դադարել է, իսկ Ընթացիկ հաշվում բացակայում են դրամական միջոցներ,
- Բանկի և Նախարարության միջև կնքված Սոցիալական փաթեթի հատկացումն ապահովելու մասին պայմանագիրը լուծվել է:

3.14. <u>Սոցիալական ապահովության հաշվին վերաբերող հատուկ դրույթներ.</u>

3.14.1. Հաճախորդն իրավունք ունի տնօրինել Ընթացիկ Հաշվում առկա՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ սույն

կետում՝ Նախարարություն) կողմից փոխանցված վճարները՝ Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքով, Նախարարության կողմից փոխանցվող ՀՀ Կառավարության 2020 թվականի մարտի 12-ի 284-Ն որոշմամբ և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով (այսուհետ սույն կետում՝ Որոշում), ինչպես նաև Բանկի և Նախարարության միջև կնքված Սոցիալական ապահովության հաշվի պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում:

3.14.2. Բանկն իրավունք ունի՝

3.14.2.1. Հաճախորդի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները տրամադրել Նախարարությանը, ինչպես նաև Որոշման և/կամ Բանկի և Նախարարության միջև կնքված Սոցիալական ապահովության հաշվի պայմանագրի կատարման շրջանակներում այլ իրավասու անձանց:

3.14.2.2.առանց Հաճախորդի համաձայնության Ընթացիկ հաշվում առկա դրամական միջոցները հետ փոխանցել Նախարարությանը՝ վերջինիս կողմից Բանկին համապատասխան կարգադրություն ներկայացնելու դեպքում:

3.14.3. Բանկը պարտավոր է Ընթացիկ հաշվին մուտք եղած դրամական միջոցները մուտքագրել և հաշվից դրամական միջոցներ տալ կամ փոխանցել Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքով, Որոշմամբ, ինչպես նաև Բանկի և Նախարարության միջև կնքված Սոցիալական ապահովության հաշվի պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում:

3.14.4. Պայմանագրի դրույթների և Որոշման միջև հակասությունների դեպքում գործում են Որոշման դրույթները:

ԳԼՈՒԽ 4 ԱՎԱՆԴՆԵՐ

<u>Ընդհանուր դրույթներ.</u>

4.1. Սույն գլխում սահմանված ընդհանուր դրույթները կիրառելի են բոլոր ավանդատեսակների նկատմամբ, եթե այլ բան սահմանված չէ յուրաքանչյուր ավանդատեսակին վերաբերող հատուկ դրույթներում: Ընդհանուր և հատուկ դրույթների միջև հակասությունների դեպքում՝ գերակայում են հատուկ դրույթները:

4.2. Պայմանագրով Ավանդատուն տալիս է իր հանձնարարականը Բանկին Պայմանագրում նշված ավանդի գումարը իր ընթացիկ հաշվից իր ավանդային հաշվին փոխանցելու վերաբերյալ:

4.3. Ավանդի գումարի վրա տոկոսները հավելագրվում են ավանդը Բանկ մուտք լինելու օրվանից մինչև այն Ավանդատուին վերադարձնելու կամ Ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրը:

4.4. Ավանդի տոկոսագումարները Ավանդատուին վճարվում են Պայմանագրում նշված ժամկետի ավարտի օրը՝ ավանդի գումարի հետ միասին, բացառությամբ՝ Ամենամսյա ավանդի:

4.5. Պայմանագրի գործողության ժամկետի ավարտին ավանդի գումարը և դրա նկատմամբ հաշվեգրված տոկոսները/բոնուսները՝ փոխանցվում են Ավանդատուի՝ իր կողմից ընտրված բանկային հաշվին/հաշիվներին, բացառությամբ՝ Ամենամսյա ավանդի:

4.6. Ավանդատուն իրավունք ունի Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում ավանդային հաշվին մուտքագրել գումարներ, եթե նման հնարավորություն նախատեսված է Սակագներով: Ընդ որում, ավանդային հաշվին գումարների մուտքագրման կարգը, չափը և պարբերականությունը, ինչպես նաև ավանդային հաշվին փոխանցված, սակայն մուտքագրման ոչ ենթակա գումարների տնօրինման կարգը սահմանվում են Սակագներով: Ավանդային հաշվին գումարների մուտքագրման հնարավորությունը Բանկի կողմից կարող է սահմանափակվել, եթե սահմանափակումը նախատեսված է Սակագներով և/կամ եթե սահմանափակումը բխում է Բանկի նկատմամբ կիրառելի իրավական կարգավորումներից/սահմանափակումներից և/կամ եթե Բանկի գնահատմամբ սահմանափակումը անհրաժեշտ է նշված իրավական կարգավորումներից/սահմանափակումներից բխող Բանկի ռիսկերի զսպման նպատակով: Մուտքագրված գումարի նկատմամբ տոկոսագումարների հաշվարկը կատարվում է մուտքագրման օրվանից: *(կիրառելի չէ բիզնես ավանդների դեպքում):*

4.7. Հօգուտ երրորդ անձի, Ամենամսյա և Կուտակվող ժամկետային ավանդների դեպքում՝ Ավանդատուին վճարվում է նաև բոնուս՝ Սակագներով սահմանված կարգով, չափով և պարբերականությամբ, եթե Սակագներով նախատեսված է բոնուս ստանալու հնարավորություն:

4.8. Երկարաձգման հնարավորությամբ ավանդների դեպքում՝ Պայմանագրի գործողության ժամկետի ավարտին Ավանդատուի կողմից ավանդի գումարը հետ չպահանջելու դեպքում՝ Պայմանագիրն երկարաձգվում է տվյալ ավանդատեսակի համար Սակագներով սահմանված պայմաններով: Պայմանագրի երկարաձգման դեպքում օրերի և ավանդի դիմաց տոկոսների հաշվարկը սկսվում է երկարաձգման օրվանից:

4.9. Եթե Պայմանագրի հետ կապված ցանկացած գործարքի և/կամ գործառնության կատարման օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվան, ապա տվյալ գործարքը և/կամ գործառնությունն իրականացվում է հաջորդ աշխատանքային օրը:

4.10. Ավանդի վերադարձն ապահովված է Բանկին սեփականության իրավունքով պատկանող գույքով, իսկ ֆիզիկական անձ և Ա/Ձ Ավանդատուների դեպքում՝ նաև երաշխավորված է «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

4.11.ֆիզիկական անձ և Ա/Ձ Ավանդատուների դեպքում՝ Պայմանագիրը կնքելիս Բանկն Ավանդատուին հանձնում է «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքով նախատեսված գրավոր ծանուցումը՝ ավանդների հատուցման երաշխավորման պայմանների և կարգի մասին:

4.12. Եթե ավանդը Բանկում ներդրվում է արտարժույթով, ապա Ավանդատուն Պայմանագրի ստորագրման և/կամ կնքման փաստով հավաստում է, որ գիտակցում է արտարժույթի փոխարժեքի փոփոխման հետևանքով առաջացող հնարավոր անբարենպաստ հետևանքները և նախընտրում է ավանդը ներդնել արտարժույթով:

4.13. Պայմանագրում նշված ամիսների տևողությունը սահմանվում է օրերով՝ ըստ Սակագների:

4.14. Համատեղ ավանդների դեպքում՝ Պայմանագրով Ավանդատուն տալիս է իր համաձայնությունը, որ իրենցից յուրաքանչյուրը կարող է միանձնյա սեփական հայեցողությամբ կնքել ավանդը տնօրինելու ցանկացած գործարք:

4.15. Ավանդատուն իրավունք ունի՝

4.15.1. Պայմանագրից բխող բողոք-պահանջները ներկայացնել Ֆինանսական համակարգի հաշտարարին: Ընդ որում, եթե գույքային պահանջի չափը չի գերազանցում 250 000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը և գործարքի գումարի չափը չի գերազանցում 500 000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, ապա ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները չեն կարող վիճարկվել Բանկի կողմից:

4.15.2. Պայմանագրում նախատեսված ժամկետից շուտ ավանդը հետ պահանջել՝ նախօրոք գրավոր ձևով Բանկին դիմելով:

4.15.3. պահանջել Բանկից ավանդի վերադարձ և հաշվեգրված տոկոսների վճարում Պայմանագրով սահմանված կարգով, չափով և ժամկետներում:

4.16. Բանկն իրավունք ունի՝

4.16.1. նախքան ավանդը և դրա վրա հաշվեգրված տոկոսները վճարելը՝ Ավանդատուից պահանջել ներկայացնելու իր կամ իր լիազորված անձի անձը հաստատող փաստաթուղթը,

4.16.2. Ավանդատուի կողմից Բանկի հանդեպ չկատարված դրամային պարտավորություն ունենալու դեպքում՝ նվազեցնել ավանդի գումարն առանց Պայմանագիրը դադարեցնելու, եթե ավանդի գումարի նվազեցման արդյունքում ավանդի մնացորդը բավարարում է տվյալ տեսակի ավանդի համար Սակագներով սահմանված նվազագույն սահմանաչափին,

4.16.3. Եթե Ավանդատուն Բանկի հանդեպ ունի Պայմանագրից բխող կատարման ենթակա դրամային պարտավորություն, գանձել պարտքի գումարը Ավանդատուի՝ Բանկում ունեցած բոլոր ընթացիկ հաշիվներից, իսկ եթե ընթացիկ հաշիվներում բացակայում է անհրաժեշտ գումարը, ապա բոլոր քարտային հաշիվներից, ընդ որում, Պայմանագրից բխող կատարման ենթակա դրամային պարտավորությունը Ավանդատուի արտարժութային հաշիվներից գանձման դեպքում արտարժույթի առքն ու վաճառքը կատարվում է ՀՀ ԿԲ կողմից հրապարակած արժութային շուկայում ձևավորված վերջին միջին շուկայական փոխարժեքով:

4.17. Բանկը պարտավորվում է՝

4.17.1. ապահովել Ավանդատուին սպասարկելու կապակցությամբ իրեն հայտնի դարձած տեղեկությունների գաղտնիությունը, որոնք, համաձայն «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի պահանջների, հանդիսանում են բանկային գաղտնիք,

4.17.2. ավանդը և դրա նկատմամբ հաշվեգրվող տոկոսագումարները վերադարձնել ամբողջությամբ՝ Պայմանագրով նախատեսված ժամկետին,

4.17.3. Ավանդատուի կողմից ավանդը Պայմանագրում նախատեսված ժամկետից շուտ պահանջելու դեպքում մեկ բանկային օրվա ընթացքում, իսկ իրավաբանական անձանց դեպքում՝ երեսուն բանկային օրվա ընթացքում (բացառությամբ՝ վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ապահովագրական ընկերությունների, բանկերի, բանկերի մասնաճյուղերի, այլ ֆինանսական կազմակերպությունների և Կենտրոնական բանկի) վճարել ավանդի գումարը և մինչև ավանդի դադարեցման օրվան նախորդող օրերի համար չվճարված տոկոսագումարները՝ հաշվարկված ավանդը ժամկետից շուտ պահանջելու համար Սակագներով սահմանված տոկոսադրույքով: Ընդ որում, հօգուտ երրորդ անձի ավանդի դեպքում, Ավանդատուի կողմից ավանդը Պայմանագրում նախատեսված ժամկետից շուտ պահանջելու դեպքում՝ Ավանդատուին բոնուս չի վճարվում:

4.17.4. Պայմանագրի ժամկետը լրանալուց հետո վերադարձնել Ավանդատուին ավանդը այն արժույթով, որով ներգրավվել է,

4.17.5. ավանդն անկանխիկ ներդնելու դեպքում (չեկով, վճարման հանձնարարականով, այլ վճարային գործիքով), տրամադրել քաղվածք՝ հավաստելով ավանդի մուտքագրումը: Վերջինս տրամադրվում է Ավանդատուին ոչ ուշ, քան ավանդի հաշվի վրա ավանդի գումարի մուտքագրմանը հաջորդող 30 (երեսուն) բանկային օրերի ընթացքում,

4.17.6. Ավանդային հաշվից անկանխիկ ելքագրումների իրականացման դեպքում Ավանդատուին տրամադրել Պայմանագրում նշված քաղվածքը՝ Պայմանագրով սահմանված կարգով և քաղվածքի ստացման համար Ավանդատուի կողմից ընտրված եղանակով,

4.17.7. ավանդը կանխիկ ներդնելու դեպքում՝ տրամադրել ավանդի մուտքագրումը հավաստող փաստաթուղթ (ստորագրված և դրոշմակնքված դրամարկղի մուտքի անդորրագիր), իսկ ավանդը կանխիկ ստանալու դեպքում՝ ավանդի ելքագրումը հավաստող փաստաթուղթ (ստորագրված և դրոշմակնքված կանխիկ գումարի ստացման տեղեկանք),

4.17.8. Պայմանագրում նշված ժամկետում տոկոսները չվճարելու և ավանդը վերադարձնելու իր ստանձնած պարտականությունները խախտելու դեպքում Ավանդատուին վճարել տույժ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի չափով,

4.17.9. Ֆիզիկական անձ Ավանդատուների դեպքում՝ ավանդի դիմաց հաշվարկված և փաստացի վճարված տոկոսագումարներից պահել (գանձել) և ՀՀ պետական բյուջե վճարել եկամտային հարկ՝ ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված ձևով և չափով,

4.17.10. Ֆիզիկական անձ Ավանդատուների դեպքում՝ Ավանդատուի պահանջով հնգօրյա ժամկետում Ավանդատուին տրամադրել հաշվի քաղվածք՝ Բանկի հայտարարած սակագներով:

4.18. Ավանդատուն պարտավորվում է՝

4.18.1. Պայմանագիրը կորցնելու, հասցեի փոփոխության, անձը հաստատող փաստաթղթի կորստի կամ փոփոխության, իսկ իրավաբանական անձանց դեպքում նաև՝ անվանման փոփոխության, վերակազմակերպման դեպքում, անհապաղ ներկայանալ Բանկ կամ այդ մասին անհապաղ տեղեկացնել Բանկին կապի բոլոր հնարավոր միջոցներով:

4.18.2. ավանդը և դրա վրա հաշվեգրված տոկոսները ստանալիս՝ Բանկ ներկայանալ իր կամ իր լիազորված անձի անձը հաստատող փաստաթղթով:

4.19. <u>Հօգուտ երրորդ անձի ավանդին վերաբերող հատուկ դրույթներ.</u>

4.19.1. Պայմանագրի գործողության ընթացքում ավանդի դիմաց հաշվեգրված տոկոսագումարները մուտքագրվում են Ավանդատուի ավանդային հաշվին ավանդի ներդրման ամսաթվին հաջորդող յուրաքանչյուր տարվա նույն ամսաթվին: Մուտքագրված տոկոսագումարների նկատմամբ տոկոսագումարների հաշվարկը կատարվում է մուտքագրման օրվանից:

4.19.2. Ավանդի ներդրման ամսաթվին հաջորդող յուրաքանչյուր տարվա նույն ամսաթվին Պայմանագրում նշված տարեկան տոկոսադրույքը փոփոխվում է և կիրառվում Սակագների՝ «Ավանդ երեխաների համար» ավանդատեսակի համար նախատեսված տոկոսադրույքը:

4.19.3. երրորդ անձը Պայմանագրով Ավանդատուի իրավունքներ է ձեռք բերում, իսկ Ավանդատուն կորցնում է այդ իրավունքները, երբ Երրորդ անձը դառնում է 18 տարեկան և Պայմանագրով սահմանված իրավունքներից օգտվելու գրավոր հայտարարություն է ներկայացնում Բանկին:

4.20. <u>Ամենամսյա ավանդին վերաբերող հատուկ դրույթներ.</u>

4.20.1. Ավանդի տոկոսագումարների վճարումը կատարվում է յուրաքանչյուր ամիս՝ Սակագներով սահմանված չափերով: Ընդ որում՝ երկկողմանի ստորագրված ավանդի պայմանագրի 2-րդ կետում նշված տարեկան տոկոսադրույքը ամենամսյա ավանդի տոկոսադրույքի հնարավոր առավելագույն չափն է, որի կիրառումը սկսում է Սակագներում նշված համապատասխան ամսից, իսկ մինչ այդ՝ կիրառման ենթակա է տոկոսագումարի՝ Սակագներում համապատասխան ամսվա համար սահմանված չափը:

4.20.2. Ավանդի գումարի նկատմամբ հաշվեգրված տոկոսները/բոնուսները փոխանցվում են յուրաքանչյուր ամիս, իսկ ավանդի գումարը՝ Պայմանագրի գործողության ժամկետի ավարտին՝ Ավանդատուի՝ իր կողմից ընտրված բանկային հաշվին/հաշիվներին:

4.21. <u>Կուտակվող ժամկետային ավանդին վերաբերող հատուկ դրույթներ.</u>

4.21.1. Պայմանագրի գործողության ընթացքում ավանդի գումարի նկատմամբ յուրաքանչյուր լրացած ամսվա համար հաշվեգրված տոկոսագումարը Ավանդատուի ավանդային հաշվին է մուտքագրվում տվյալ ամսվա վերջին, բացառությամբ առաջին վեց ամիսների համար հաշվեգրված տոկոսագումարների, որոնք մուտքագրվում են վեցերորդ ամսվա վերջին: Մուտքագրված տոկոսագումարների նկատմամբ տոկոսագումարների հաշվարկը կատարվում է մուտքագրման օրվանից:

4.22. <u>Բիզնես ավանդին վերաբերող հատուկ դրույթներ.</u>

4.22.1. Բիզնես ավանդի դեպքում, երբ Ավանդատուն ընտրում է տոկոսների կուտակման տարբերակը, Պայմանագրի գործողության ընթացքում ավանդի գումարի նկատմամբ յուրաքանչյուր լրացած ամսվա համար հաշվեգրված տոկոսագումարը Ավանդատուի ավանդային հաշվին է մուտքագրվում տվյալ ամսվա վերջում, ընդ որում առաջին վեց ամսվա համար հաշվեգրված տոկոսագումարները Ավանդատուի ավանդային հաշվին են մուտքագրվում վեցերորդ ամսվա վերջում: Մուտքագրված տոկոսագումարների նկատմամբ տոկոսագումարների հաշվարկը կատարվում է մուտքագրման օրվանից:

4.22.2. Բիզնես ավանդի դեպքում, երբ Ավանդատուն ընտրում է տոկոսների վճարման ամսական տարբերակը, ավանդի տոկոսագումարների վճարումը կատարվում է յուրաքանչյուր ամիս:

4.22.3. Բիզնես ավանդի դեպքում, երբ Ավանդատուն ընտրում է Պայմանագրի ժամկետի ավարտի օրը տոկոսների վճարման տարբերակը, Ավանդի տոկոսագումարները Ավանդատուին վճարվում են Պայմանագրում նշված ժամկետի ավարտի օրը՝ ավանդի գումարի հետ միասին:

4.22.4. Բիզնես ավանդի դեպքում, երբ Ավանդատուն ընտրում է Պայմանագրի ժամկետի ավարտի օրը տոկոսների վճարման տարբերակը կամ տոկոսների կուտակման տարբերակը, Պայմանագրի գործողության ժամկետի ավարտին ավանդի գումարը և դրա նկատմամբ հաշվեգրված տոկոսները/բոնուսները՝ փոխանցվում են Ավանդատուի՝ իր կողմից ընտրված բանկային հաշվին/հաշիվներին:

4.22.5. Բիզնես ավանդի դեպքում, երբ Ավանդատուն ընտրում է ավանդի նվազեցման տարբերակը, Ավանդատուն իրավունք ունի Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում, բացառությամբ վերջին երեք ամիսների, ավանդային հաշվին մուտքագրել գումարներ՝ առավելագույնը Պայմանագրում նշված ավանդի գումարի, իսկ ավանդի երկարաձգման դեպքում՝ երկարաձգման պահի դրությամբ ավանդի գումարի 100 (հարյուր) տոկոսի չափով, եթե այլ բան նախատեսված չէ Սակագներով, և եթե ավանդային հաշվին գումարների մուտքագրման հնարավորությունը չի սահմանափակվել Բանկի կողմից, ընդ որում, ավանդային հաշվին գումարների մուտքագրման հնարավորությունը կարող է սահմանափակվել Բանկի կողմից, եթե սահմանափակումը բխում է Բանկի նկատմամբ կիրառելի իրավական

կարգավորումներից/սահմանափակումներից և/կամ եթե Բանկի գնահատմամբ սահմանափակումը անհրաժեշտ է նշված իրավական կարգավորումներից/սահմանափակումներից բխող Բանկի ռիսկերի զսպման նպատակով: Մուտքագրված գումարի նկատմամբ տոկոսագումարների հաշվարկը կատարվում է մուտքագրման օրվանից: Այն դեպքում, երբ Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում, բացառությամբ առաջին երեք ամիսների, Ավանդատուի կողմից ավանդային հաշվից ելքագրվում են գումարներ՝ առավելագույնը Պայմանագրում նշված ավանդի գումարի, իսկ Ավանդի երկարաձգման դեպքում՝ երկարաձգման պահի դրությամբ ավանդի գումարի 30 (երեսուն) տոկոսի չափով, ապա ավանդի գումարի, այդ թվում՝ ելքագրվող գումարի, ինչպես նաև ավանդի գումարի մնացորդի նկատմամբ հաշվարկվում է Պայմանագրով սահմանված տարեկան տոկոսադրույքը, եթե այլ բան նախատեսված չէ Սակագներով: Նշված կարգը չի գործում, եթե այլ հիմքերով և կարգով են ավանդային հաշվից ելքագրվում գումարներ, և ելքագրվող գումարները մեծ կամ հավասար են Պայմանագրում նշված ավանդի գումարի 30 (երեսուն) տոկոսին:

4.22.6. Բիզնես ավանդների դեպքում, երբ Ավանդատուն ընտրում է տոկոսների կուտակման տարբերակը, Ավանդատուին վճարվում է նաև բոնուս՝ Սակագներով սահմանված կարգով, չափով և պարբերականությամբ, եթե Սակագներով նախատեսված է բոնուս ստանալու հնարավորություն:

4.22.7. Բիզնես ավանդի դեպքում, երբ Ավանդատուն ընտրում է տոկոսների վճարման ամսական տարբերակը ավանդի գումարի նկատմամբ հաշվեգրված տոկոսները/բոնուսները փոխանցվում են յուրաքանչյուր ամիս, իսկ ավանդի գումարը՝ Պայմանագրի գործողության ժամկետի ավարտին՝ Ավանդատուի՝ իր կողմից ընտրված բանկային հաշվին/հաշիվներին:

4.22.8. Բիզնես ավանդի դեպքում, երբ Ավանդատուն ընտրում է տոկոսների ամսական վճարման, կուտակման տարբերակը, Ավանդատուի կողմից ավանդը Պայմանագրում նախատեսված ժամկետից շուտ պահանջելու դեպքում՝ Ավանդատուն պարտավորվում է նույն օրը վճարել ավանդի վաղաժամ դադարեցման վճար (եթե ավանդի գումարի նկատմամբ հաշվեգրված տոկոսագումար է մուտքագրվել ավանդային հաշվին կամ վճարվել Պայմանագրի համաձայն՝ նախքան ավանդը ժամկետից շուտ պահանջելը)՝ հաշվարկված Սակագներով սահմանված չափով և կարգով: *(սույն դրույթը չի վերաբերում ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց կողմից ներդրված ավանդներին)*

4.22.9. Բիզնես ավանդի դեպքում, երբ Ավանդատուն ընտրում է տոկոսների ամսական վճարման, կուտակման տարբերակը, Բանկն իրավունք ունի արտարժութային ավանդի վաղաժամ դադարեցման վճարը անակցեպտ գանձել Ավանդատուի արտարժութային որևէ հաշվից և փոխանցել Ավանդատուի որևէ դրամային հաշվի՝ փոխարկումը կատարելով ՀՀ ԿԲ կողմից հրապարակած արժութային շուկայում ձևավորված վերջին միջին շուկայական փոխարժեքով: *(սույն դրույթը չի վերաբերում ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց կողմից ներդրված ավանդներին)*

acba

Կարևոր իրավեկում

ԻՆՉ ԱՆԵԼ, ԵԹԵ ԲՈՂՈՔ ՈՒՆԵՔ

1 ԾԱՆՈԹԱՑԵՔ ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՆ

Կազմակերպության յուրաքանչյուր աշխատակից պարտավոր է.

- Ձեզ **ուղղորդել** բողոքների հարցերով զբաղվող աշխատակցի մոտ.
- **Տրամադրել** հաղորդակցման համար անհրաժեշտ տվյալներ (հեռախոսահամար, էլեկտրոնային հասցե):

Պատասխանատու աշխատակիցը պարտավոր է.

- **Տեղեկացնել** Ձեր իրավունքների և բողոքների քննության գործընթացի մասին.
- **Տրամադրել** կազմակերպությունում գործող համապատասխան կանոնները և Հայտի ձևը:

2 ԴԻՄԵՔ

10 օր անց

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերություն

Գրավոր բողոքը ներկայացրեք պատասխանատու աշխատակցին կամ ուղարկեք հետևյալ հասցեներով՝
@ acba@acba.am
✉ 0002, Երևան, Արամի 82-84
Ձեր բողոքը կարող եք ներկայացնել նաև Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:

- **Նշեք** Ձեր տվյալները՝ պատասխանը ստանալու համար:
- **Հավաստիացեք,** որ Ձեր բողոքն ընդունել են, **պահպանեք** ստացման փաստը հավաստող տեղեկատվությունը մինչև բողոքի վերջնական լուծումը:

3 ԾԱՆՈԹԱՑԵՔ ՊԱՏԱՍԽԱՆԻՆ

Բավարարված չեմ՞

Կազմակերպությունը բողոքի վերաբերյալ որոշում է կայացնում (բավարարել, մասանակի բավարարել, մերժել) 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Հարցեր ունենալու դեպքում կապվեք պատասխանատուի հետ

☎ +374 10 318 878

4 ԴԻՄԵՔ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՇՏԱՐԱՐԻՆ, եթե.

- Ֆիզիկական անձ եք, միկրոձեռնարկատեր հանդիսացող անհատ ձեռնարկատեր կամ իրավաբանական անձ, այդ թվում նաև՝ երաշխավոր, գրավատու կամ այլ անձ ով ապահովման միջոցի (օրինակ՝ գրավի) հետ կապված բողոք ունի,
- բողոքը վերաբերում է մատուցվող ծառայությանը և ունեք գումարային պահանջ (մինչև 10 մլն դրամ), կամ բողոքը առնչվում է վարկային պատմությանը,
- 10 աշխատանքային օրվա ընթացքում պատասխան չեք ստացել կամ պատասխանը Ձեզ չի բավարարում,
- բողոքը չի քննվում դատարանում կամ արբիտրաժային տրիբունալում կամ Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից,
- պատասխանից հետո չի անցել 6 ամիս,
- բողոքարկվող գործողությունը կամ անգործությունը տեղի է ունեցել 2008թ. օգոստոսի 2-ից հետո:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆՎՃԱՐ ԵՆ

(Երևան 0010, Մ. Խորենացի փողոց 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն, 7-րդ հարկ , +374 60 701 111, info@fsm.am):

ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՏՐԻԲՈՒՆԱԼ

- Եթե Ձեր և կազմակերպության միջև կնքվել է արբիտրաժային համաձայնություն, ապա ձեր միջև ծագող վեճերը ենթական են լուծման արբիտրաժային տրիբունալի կողմից:
- Պայմանագիր կնքելիս Դուք իրավունք ունեք հրաժարվելու արբիտրաժային համաձայնագրից. կազմակերպությունը պարտավոր է Ձեզ ծառայություն մատուցել:
- Հիշեք. նույնիսկ արբիտրաժային համաձայնության առկայության դեպքում Դուք կարող եք դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին , քանի դեռ բողոքը չի քննվել տրիբունալում:
- Հաշտարարը իրավասու չէ ընդունել բողոքը, եթե այն արդեն քննվում է տրիբունալում:

ԴԱՏԱՐԱՆ

- Դուք միշտ կարող եք դիմել դատարան.
- Դատարանի վճիռը ենթակա չէ վերանայման Ֆինասական հաշտարարի կողմից:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

- Դուք կարող եք նաև դիմել Կենտրոնական բանկ, և Ձեր բողոքին կպատասխանեն 15 աշխատանքային օրվա ընթացքում:

  (Երևան 0010, Վ. Սարգսյան 6, +374 10 592 697, consumerinfo@cba.am):

- Եթե Ձեր բողոքը այլ կառույցների իրավասության դաշտում է, ապա Կենտրոնական բանկը Ձեր հարցը կուղղորդի նրանց տիրույթ:
- Կենտրոնական բանկը խորհուրդ է տալիս Ձեր խնդրով նախևառաջ դիմել Ֆինանսական կազմակերպությանը (Քայլ 2):

Հարցերի դեպքում դիմեք

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ, 0002, Երևան, Արամի 82-84, +374 10 31 88 88, acba@acba.am

(կազմակերպության անվանումը, հասցեն, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն)

1. Կողմերը սույն արբիտրաժային համաձայնությամբ պայմանավորվում են միմյանց միջև կնքվող ցանկացած պայմանագրի կապակցությամբ ծագած բոլոր վեճերը հանձնել «Հայաստանի բանկերի միության ֆինանսական արբիտրաժ» հիմնարկի կամ «Հայաստանի Հանրապետության առևտրաարդյունաբերական պալատին կից մշտապես գործող արբիտրաժային հաստատություն» հիմնարկի կամ «ՕՊՏԻՄՈՒՍ ԼԵՔՍ» ՍՊԸ մշտապես գործող արբիտրաժային դատարանի կամ «Միջազգային արբիտրաժային դատարան» ՍՊԸ մշտապես գործող արբիտրաժային դատարանի կամ «Արբիտրաժ» ՍՊԸ կից մշտապես գործող «Արբիտրաժային դատարանի» (այսուհետ յուրաքանչյուրը նաև՝ Արբիտրաժային հաստատություն) լուծմանը: Կողմերի միջև վեճի առաջացման դեպքում այն լուծվում է այն Արբիտրաժային հաստատության կողմից, որին առաջինը հայց է ներկայացրել Վարկատուն և/կամ Վարկառուն: Ընդ որում, Պայմանագրի շրջանակներում ծագած բոլոր վեճերը լուծվում են նույն Արբիտրաժային հաստատության կողմից,

2. Արբիտրաժային հաստատությունում գործի քննությունը, այդ թվում՝ ցանկացած հաղորդակցություն և/կամ ծանուցում, ինչպես նաև արբիտրների կազմի ձևավորումը իրականացվելու է «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքին, ինչպես նաև գործը քննող Արբիտրաժային հաստատության կանոնադրությանը և կանոնակարգին (արբիտրաժային վարույթը սկսելու պահին գործող խմբագրությամբ) համապատասխան,

3. Կողմերը համաձայնում են, որ վեճերի քննությունն իրականացվում է միայն գրավոր նյութերի հիման վրա՝ առանց բանավոր քննության անցկացման, և ՀՀ նյութական իրավունքի նորմերին համապատասխան,

4. Արբիտրաժային դատավարության լեզուն հայերենն է, արբիտրաժի վայրը՝ ՀՀ, ք. Երևանը:

Անձնական տվյալների մշակման իրավական հիմքերը և ժամկետը.

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «ԱԿԲԱ ԽՈՒՄԲ» ֆինանսական խմբի (այսուհետ՝ Խումբ)[1] անդամները (ՀՀ, ք. Երևան, Արամի 82-84) Վարկառուի/Երաշխավորի/ Գրավատուի/Գնորդ-գրավատուի, իսկ Անշարժ գույքի առուվաճառքի և հիփոթեքի, Անշարժ գույք գնելու իրավունքի առուվաճառքի ու հիփոթեքի/Դրամական միջոցների գրավի և հաջորդող դրամական միջոցների գրավի խառը պայմանագրերի դեպքում՝ նաև Վաճառողի (այսուհետ բոլորը միասին կամ առանձին՝ Տվյալների սուբյեկտ) հետ գործարար հարաբերությունների (գործարքների) ողջ ընթացքում, ինչպես նաև դրանից հետո, եթե ՀՀ օրենսդրությամբ և/կամ Խմբի անդամների ստանձնած/Խմբի անդամների նկատմամբ կիրառելի այլ կարգավորումներով սահմանված է անձնական տվյալների մշակման պահանջ, կամ Խմբի անդամների մարքեթինգային նպատակներով կարող են ստանալ Տվյալների սուբյեկտի վերաբերյալ անձնական տվյալները և դրանք ներառել Խմբի անդամների համապատասխան տեղեկատվական բազաներում: Տվյալները կարող են տրամադրվել Տվյալների սուբյեկտի կողմից կամ ստացվել ստորև նշված անձանցից՝ վերջիններիս հարցում իրականացնելու միջոցով:

Մշակվող անձնական տվյալների ցանկը.

«Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ից (ԷԿԵՆԳ) ստացվող տվյալներն են.

Տրամադրող մարմին	Տվյալների ցանկ
ՀՀ Ոստիկանության բնակչության պետական ռեգիստր	• Անձը հաստատող փաստաթղթ(եր)ի տեսակ և տվյալներ (գործող և ոչ վավեր), կարգավիճակ, դրանցում առկա անձնական տվյալներ, ներառյալ՝ լուսանկար, անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան ամսաթիվ, սեռ, քաղաքացիություն, հաշվառման հասցե, կարգավիճակ՝ կենդանի/մահացած, • ՀԾՀ/հրաժարման տեղեկանք(ներ)ի տվյալներ (գործող և ոչ վավեր), կարգավիճակ,
ՀՀ Արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալություն	• Ամուսնության/ամուսնալուծության գրանցման տվյալներ, դրանում առկա ամուսնու/կնոջ տվյալներ, ներառյալ՝ անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան ամսաթիվ, սեռ, քաղաքացիություն, կարգավիճակ՝ կենդանի/մահացած, հասցե, անձը հաստատող փաստաթղթ(եր)ի տվյալներ (գործող և ոչ վավեր), ՀԾՀ/հրաժարման տեղեկանք(ներ)ի տվյալներ (գործող և ոչ վավեր), • Երեխայի տվյալներ, ներառյալ՝ անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան ամսաթիվ, սեռ, քաղաքացիություն, կարգավիճակ՝ կենդանի/մահացած, հասցե, անձը հաստատող փաստաթղթ(եր)ի տվյալներ (գործող և ոչ վավեր), ՀԾՀ/հրաժարման տեղեկանք(ներ)ի տվյալներ (գործող և ոչ վավեր),
ՀՀ ներքին գործերի նախարարություն	• Տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագրի, • Տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի վկայականի, • Տրանսպորտային միջոցի օտարման սահմանափակումների տեղեկանքի, • Գրավի և լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքների վկայականի տվյալներ
ՀՀ ԱՆ Իրավաբանական անձանց	ՀՀ ԱՆ ԻԱ պետական ռեգիստրի քաղվածքի տվյալներ,

[1] ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 28/04/2017թ.-ի թիվ 27 ԾՕՀ Ա որոշմամբ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն (հասցե՝ ք.Երևան, Արամի փողոց, 82-84), «ԱԳԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ-ն (հասցե՝ ք.Երևան, Վ.Սարգսյան փողոց, 10) և «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ-ն (հասցե՝ ք.Երևան, Վ.Սարգսյան փողոց, 10) (այսուհետ յուրաքանչյուրն առանձին՝ Խմբի անդամներ) որակվել (ճանաչվել) են բոլորը միասին որպես ֆինանսական խումբ՝ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԽՈՒՄԲ» անվանմամբ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի 14/08/2020թ.-ի որոշմամբ ֆինանսական խումբը վերանվանվել է «ԱԿԲԱ ԽՈՒՄԲ» ֆինանսական խումբ:

պետական ռեգիստր	ներառյալ՝ իրավաբանական անձանց • Ստեղծման, • Վերակազմակերպման, • Լուծարման պետական գրանցման, • Առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման տվյալներ
ՀՀ Արդարադատության նախարարության հարկադիր կատարման ծառայություն	• Անձնական տվյալներ, կազմակերպության տվյալներ, ցանկացած տեսակի սահմանափակումներ, դրանց ամբողջական պատմություն, ներառյալ՝ արգելանքի վերաբերյալ դատարանի որոշման, և կատարողական թերթի վերաբերյալ տվյալներ
ՀՀ Կադաստրի կոմիտե	• Գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ տվյալներ (նշված տվյալները մշակվում են անշարժ գույքի գրավի դեպքում)

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամից ստացվող տվյալներն են.

Տվյալների խումբ	Տվյալների ցանկ
Անձնական տվյալներ	Ներառյալ՝ անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան ամսաթիվ, սեռ, անձը հաստատող փաստաթղթի տեսակ և տվյալներ, ՀԾՀ, հաշվառման հասցե
Աշխատավայրի ընթացիկ տվյալներ	Ներառյալ՝ կազմակերպության անվանում, ՀՎՀՀ, աշխատանքային պայմանագրի սկիզբ և վերջ, հաստիք, աշխատավարձի չափ, ԱՎՈՒՄ (Աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցներ), հեռախոսահամար, հաշվառման հասցե
Աշխատավայր(եր)ի նախորդ տվյալներ	Ներառյալ՝ կազմակերպության անվանում, ՀՎՀՀ, աշխատանքային պայմանագրի սկիզբ և վերջ, հաստիք, աշխատավարձի չափ, ԱՎՈՒՄ (Աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցներ), հեռախոսահամար, հաշվառման հասցե

Անձնական տվյալների մշակումը.

Վերը նշված տվյալները կարող են օգտագործվել, ուսումնասիրվել և վերլուծվել Տվյալների սուբյեկտի ներգրավմամբ ցանկացած բիզնես գործընթացում հետևյալ նպատակներով՝ անձնական տվյալների վերաբերյալ ստույգ տվյալների ստացում, առավել պատշաճ նույնականացում և տվյալների բազայի ուղղումների իրականացում, սպասարկման ժամանակատարության կրճատում, տեխնիկական սխալների բացառում, գրավադրվող գույքերի վերաբերյալ արժանահավատ տեղեկատվության ստացում: Վերը նշված տվյալները, ինչպես նաև Տվյալների սուբյեկտի վերաբերյալ բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունները կարող են փոխանցվել «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ին, ՀՀ կենտրոնական բանկին, իրավասու պետական մարմիններին, Տվյալների սուբյեկտին դրամական փոխանցումներ կատարող անձանց, այն անձանց, որոնց կանոնադրական կապիտալում Խմբի անդամներն ունեն ուղղակի կամ անուղղակի մասնակցություն և/կամ այն անձանց, որոնք Խմբի անդամների կանոնադրական կապիտալում ունեն ուղղակի կամ անուղղակի մասնակցություն, ինչպես նաև այն անձանց, որոնց հետ Խմբի անդամներն իրենց կողմից մատուցվող ծառայությունների հետ կապված կնքել են համագործակցության/ծառայությունների մատուցման պայմանագրեր:

Համաձայնության/անձնական տվյալների հետկանչը.

Համաձայնությունը/անձնական տվյալները կարող են հետ կանչվել, ուղղվել, ոչնչացվել, իսկ տվյալների մշակումը՝ դադարեցվել ցանկացած ժամանակ Տվյալների սուբյեկտի, իսկ տվյալների այլ սուբյեկտների՝ Տվյալների սուբյեկտի սպասարկման նպատակով տրամադրված տվյալների դեպքում՝ այդ անձանց գրավոր դիմումի հիման վրա:

Հաստատված ստորագրությամբ կամ էլեկտրոնային եղանակով՝ հաստատված էլեկտրոնային թվային ստորագրությամբ հետ կանչվելու դեպքում Բանկը պարտավոր է դադարեցնել անձնական տվյալներ մշակելը և ոչնչացնել տվյալները հետկանչն ստանալու օրվան հաջորդող տասն աշխատանքային օրվա ընթացքում, եթե տվյալ պահին Տվյալների սուբյեկտը չի օգտվում, ինչպես նաև ներգրավված չէ Խմբի անդամների կողմից մատուցվող որևէ ծառայության գծով գործող գործարար հարաբերությունում (գործարքում), ինչի համար համաձայնությունը և/կամ անձնական և այլ տվյալների մշակումն անհրաժեշտ է, և եթե այլ բան նախատեսված չէ օրենսդրությամբ և Խմբի անդամների ստանձնած/Խմբի անդամների նկատմամբ կիրառելի այլ կարգավորումներով: Մարքեթինգային նպատակներով հարցումների համաձայնությունը կարող է ցանկացած դեպքում հետ կանչվել էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումի հիման վրա:

Համաձայնության հետկանչի դեպքում Խմբի անդամներն իրավունք ունեն դադարեցնել Տվյալների սուբյեկտի հետ գործարքը/գործարար հարաբերությունները:

ՀԱՐԳԵԼԻ ԱՎԱՆԴԱՏՈՒ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Խնդրում ենք մինչև Ընթացիկ հաշվի պայմանագիրը/Ավանդի պայմանագիրը ստորագրելը ծանոթանալ սույն փաստաթղթի դրույթներին:

Ձեր ավանդի հատուցման երաշխավորողն է **Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը** (այսուհետև՝ Հիմնադրամ):

Հիմնադրամի գտնվելու վայրը՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 6,

Հեռախոսը՝ 58-35-14,

Ինտերնետային կայքը՝ www.adgf.am,

Սույն ծանուցման մեջ կիրառվող սահմանումները համապատասխանում են «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի սահմանումներին:

Հատուցման դեպքը

Ձեր երաշխավորված ավանդը ենթակա է հատուցման հետևյալ դեպքերում.

1. եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բանկը ճանաչվում է անվճարունակ և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) խորհրդի որոշմամբ հաստատվում է բանկի կողմից օրենքով և պայմանագրերով սահմանված ժամկետներում ավանդները վերադարձնելն ի վիճակի չլինելու փաստը կամ
2. եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բանկը սնանկ է ճանաչվում (այսուհետ՝ անվճարունակ բանկ):

Երաշխավորված ավանդի առավելագույն չափը և հաշվարկման կարգը

Երաշխավորված ավանդների հաշվարկման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի օգոստոսի 26-ի թիվ 261-Ն որոշմամբ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Ձեր՝ նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ դրամային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների, և Ձեր՝ նույն բանկում ունեցած բոլոր արտարժութային ավանդները համարվում են մեկ արտարժութային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների:

Այն դեպքում, երբ բանկի նկատմամբ Ձեր բանկային ավանդը ձևավորվել է բանկի՝ մեկ կամ մի քանի բանկերի միացման արդյունքում, ապա յուրաքանչյուր միացող բանկում Ձեր ունեցած բանկային ավանդը դիտվում է որպես առանձին բանկային ավանդ՝ Օրենքով սահմանված կարգով:

Ավանդների երաշխավորվող սահմանաչափերը հետևյալն են՝

Ավանդի արժութային կառուցվածքը	**Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ**	**Եթե նույն բանկում ունեք միայն արտարժութային ավանդ**	**Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ**	
			Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից ավել է	**Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից պակաս է**
Ավանդի երաշխավորման	**16 միլիոն ՀՀ դրամ**	**7 միլիոն ՀՀ դրամ**	**մինչև 16 միլիոն ՀՀ դրամ** (երաշխավորվում է	երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժութային ավանդը՝ **7**

առավելագույն չափը			միայն դրամային ավանդը)	**միլիոն ՀՀ** դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով

Եթե Դուք անվճարունակ բանկում ունեք առանձին բանկային ավանդ և միևնույն ժամանակ նույն բանկում ներդրված համատեղ բանկային ավանդի սեփականատեր եք, ապա երաշխավորվում է Ձեր առանձին բանկային ավանդի և համատեղ բանկային ավանդում Ձեր մասնաբաժնի հանրագումարը՝ Օրենքով սահմանված կարգով և չափով:

Եթե դուք անվճարունակ բանկի նկատմամբ ունեք խնդրահարույց պարտավորություն, ապա հատուցման ենթակա գումարը կհաշվարկվի Ձեր բանկային ավանդի և խնդրահարույց պարտավորության դրական տարբերության հիման վրա: Խնդրահարույց պարտավորություն է համարվում Ձեր այն պարտավորությունը, որի հիմնական գումարի (կամ դրա մի մասի) մարումը կամ տոկոսների վճարումն ուշացրել եք պայմանագրում նշված ժամկետից 90 օրից ավելի:

Երկու կամ ավելի ավանդատուների համատեղ բանկային ավանդը համարվում է յուրաքանչյուր անձի առանձին բանկային ավանդ, ավանդատուի՝ պայմանագրով սահմանված մասնաբաժնի չափով: Եթե պայմանագրով սահմանված չեն համատեղ բանկային ավանդի ավանդատուների մասնաբաժինները, ապա համատեղ բանկային ավանդն ավանդատուների միջև բաժանվում է հավասարաչափ:

Բանկային ավանդի հատուցումը կատարվում է միայն հայկական դրամով: Արտարժութային բանկային ավանդի դրամական համարժեքությունը որոշվում է հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ Կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

Ձեր բանկային ավանդը չի հատուցվում, եթե հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ այդ ավանդը պակաս է 1000 հայկական դրամից:

Չերաշխավորված բանկային ավանդ

Ձեր բանկային ավանդը երաշխավորված չէ, եթե՝

ա) Դուք հանդիսանում եք տվյալ բանկի ղեկավար և (կամ) վերջինիս ընտանիքի անդամ,

բ) Դուք հանդիսանում եք տվյալ բանկում նշանակալից մասնակցություն ունեցող անձ և (կամ) վերջինիս ընտանիքի անդամ,

գ) Դուք, որպես ավանդի սեփականատեր (համասեփականատեր), հրաժարվել եք ավանդի՝ Ձեր մասի նկատմամբ սեփականության իրավունքից,

դ) Ձեր ավանդն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ճանաչվել է հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամական միջոց, քանի դեռ Դուք հակառակը չեք ապացուցել,

ե) Ձեր ավանդը տվյալ բանկում ներդրվել է բանկային ավանդի ներդրման պահին տվյալ բանկի կողմից հրապարակային պայմանագիր կնքելու առաջարկով նախատեսված նմանատիպ բանկային ավանդների տոկոսադրույքն առնվազն 1,5 անգամ գերազանցող տոկոսադրույքով,

զ) Ձեր ավանդը ներդրված է բանկի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ստեղծված մասնաճյուղերում:

Երաշխավորված ավանդների հատուցման կարգը և ժամկետները

Հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում Հիմնադրամը հայտարարություն է հրապարակում հատուցման դեպքի մասին: Հատուցման դեպքի օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրվանից սկսած Հիմնադրամը, անվճարունակ բանկի կամ

այլ բանկի միջոցով, սկսում է իրականացնել Ձեր ավանդների հատուցման գործընթացը: Դուք կարող եք գրավոր կամ էլեկտրոնային եղանակով պահանջ ներկայացնել ոչ ուշ, քան հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք տարվա ընթացքում: Նշված ժամկետում Ձեր կողմից գրավոր պահանջ չներկայացնելու դեպքում Հիմնադրամի կողմից Ձեր երաշխավորված ավանդի հատուցում չի իրականացվի: Հիմնադրամը պարտավոր է իրականացնել ավանդատուների պահանջներով հատուցումները՝ գրավոր կամ էլեկտրոնային եղանակով պահանջը ներկայացնելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:

Ձեր բանկային ավանդը ներդրման պահին հանդիսանում է Օրենքով սահմանված չափով և կարգով՝

երաշխավորված ավանդ	☐	*(այն համատեղ ավանդների դեպքում, որոնց համատեղ ավանդատուներից մեկի կամ մի քանիսի բանկային ավանդները երաշխավորված ավանդ չեն համարվում, նշել ավանդի ընդհանուր գումարի մեջ երաշխավորված մասը՝ տոկոսային արտահայտությամբ)*
չերաշխավորված ավանդ	☐	

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Ձեր ավանդի հատուցումն առավել սահուն իրականացնելու նպատակով առաջարկում ենք ավանդի ներդրման ժամանակ Ձեր կողմից բանկին տրամադրված տվյալների (անձը հաստատող փաստաթղթի տվյալներ, սոցիալական ապահովության քարտի տվյալներ, հասցե, հեռախոսահամար և այլն) ցանկացած փոփոխության դեպքում այդ մասին անմիջապես տեղեկացնել բանկին: